Ս. ՎԱՐԺԱՆՍԿԻ ԵՎ Լ. ՍԻՆԻՑԿԻ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՄԱՆ 6-ՐԴ ՏԱՐԻ

91(075)
Վ- 31

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1933

20803

Հաստատված ե ՌՍՖԽՀ Լ. Ժ. Կ. կոլլեգիայի կողմից

-5 OCT 2011

91(075)
Վ-31

Ս. ՎԱՐԺԱՆՍԿԻ ՅԵՎ Լ. ՍԻՆԻՑԿԻ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՄԱՆ 6-ՐԴ ՏԱՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

Гос. Публ. Библиотека ՀԽՍՀ - ССРА им. А. Мясникяна

- 9 AUG 2013

Պատ. և գեղ. խմբ.՝ Հ. Չոփուրյան
[redacted]
Տեխ. խմբ.՝ Գ. Զենյան
Թարգմանիչ՝ Համբ. Մազմանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Հանձնված է արտադրության 8 հուլիսի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 2 օգոստոսի 1933 թ.

Պատվեր № 1642, Գլավլիտ № 8239, Տիրաժ 20.000, Պետհրատի տպարան, Երևան

ԵՎՐՈՊԱ

I. ԱՆԳԼԻԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգլիան կղզիների վրա գտնվող պետություն է: Նա բոլոր կողմերից շրջապատված է ծովերով, վորոնց վրայով աշխույժ հարաբերություններ են պահպանվում մի կողմից Ամերիկայի և մյուս կողմից՝ Եվրոպայի ցամաքամասի հետ:

Գլխավոր կղզիները, վորտեղ գտնվում է Անգլիան, յերկուսն են—Մեծն-Բրիտանիա և Իրլանդիա: Անգլիային են պատկանում նաև Շոտլանդական և Օրկնեյան կղզիները, հյուսիս-արևմուտքում— Հեբրիդյան կղզիները, հարավում Ֆրանսիական ծովեզերքի մոտ— Նորմանդական կղզիները և մոտ 5 հազար առանձին, մանր կղզիներ:

Մեծ-Բրիտանիան արևելյան կողմից շրջապատված է Հյուսիսային (կամ Գերմանական) ծովով, հարավային կողմից—Լա-Մանշ և Պա-դե-Կալե նեղուցներով (վերջինիս լայնությունն ընդամենը 31 կ.մ. է): Մեծ-Բրիտանիայի արևմտյան ծովափի միջին մասի մոտ գտնվում է Իրլանդական ծովը: Մեծ-Բրիտանիայի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան կողմում անմիջականորեն գտնվում է Ատլանտյան ովկիանոսը:

Անգլիայի ափերը շատ են կտրատված: Մեծ-Բրիտանիա կղզու վրա և վոչ մի կետ 120 կ.մ.-ից ավել հեռու չէ ծովափից: Ծովը, շատ և շատ տեղերում խորանալով ցամաքի մեջ, կազմում է բազմաթիվ, հիանալի կերպով պաշտպանված, բնական նավահանգիստներ:

Գրեթե բոլոր գետերը ջրանցքներով միացված են իրար, ինչպես նաև ծովային նավահանգիստների և յերկաթուղիների հետ: Ծովի մակընթացությունները գետերի վրայով, տասնյակ կիլոմետրերով թափանցում են յերկրի խորքերը:

Անգլիայի նշանավոր տնտեսական զարգացման պայմաններից կարևորագույնը հենց այն է, վոր նա շնորհիվ իր աշխարհագրական նպաստավոր դիրքի, շնորհիվ իր տերրիտորիալ առանձնահատկությունների, պաշտպանվել է արտաքին հարձակումներից, զարգացրել է ծովագնացությունն ու առևտուրը:

Անգլիան իր պետական կառուցվածքով միապետություն է, թագավորի գլխավորությամբ: Ինքը, խոշոր կապիտալիստ թագավորը սահմանափակ իշխանություն ունի: Նա «թագավորում է և վոչ թե կառավարում»: Յերկիրը կառավարում են մինիստրները՝ առաջին մինիստրի (պրեմյերի) գլխավորությամբ: Նրանք առաջ են քաշվում անգլիական բուրժուազիայի այս կամ այն կուսակցության կողմից[1]):

Անգլիայի բնակչության ընդհանուր թիվը 47 միլիոն է: Իր 245 հազար քառ. կ.մ. տարածությամբ Անգլիան աշխարհիս ամենախիտ բնակչություն ունեցող յերկրներից մեկն է: Մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում է միջին թվով ավելի քան 150 մարդ: Գլխավոր կղզիների հյուսիսային մասերը համեմատաբար նոսր բնակչություն ունեն: Ամենախիտ բնակչություն ունի Մեծ-Բրիտանիայի միջին մասը:

Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914—1918 թ.), հետ-պատերազմյան ժամանակաշրջանում և մանավանդ վերջին տարիներում բնակչության բնական աճը խիստ կրճատվել է: Ներկայումս այնտեղ ծնվողների

1) Ներկայումս «ազգային կառավարության» անվան տակ իշխում է պահպանողականների կուսակցությունը:

թիվն ավելի քիչ է, քան բոլոր մյուս յեվրոպական յերկրներում:



Նկ. 1. Անգլիայի բնակչության խտության քարտեզը:

Ըստ իր պրոֆեսիոնալ կազմի, Անգլիան աչքի յե ընկնում բանվոր բնակչության խիստ բարձր տոկոսով: Ինքնուրույն յեկամուտով ապրող ամբողջ բնակչության մոտ 52 % զբաղված է արդյունաբերության մեջ, 22 % տրանսպորտում և առևտրում, ու միայն 8 %-ը—

գյուղատնտեսության մեջ: Զգալի մի թիվ՝ 18 % են կազմում այսպես կոչված՝ այլ զբաղմունքների ներկայացուցիչները (առևտրականներ, ծառայողներ, բանակ և նավատորմիղ, բժիշկներ, տերտերներ, փաստաբաններ և այլն): Սրանց մեջ մեծ թիվ են կազմում հարուստները, վորոնք ապրում են կապիտալի տոկոսներով: Վ. Ի. Լենինը դեռ 1916 թվականին գրում եր, վոր «Անգլիայում ռանտյե (յեկամտով անաշխատ ապրողների) խավը բաղկացած ե մոտ 1 միլիոն մարդուց»:

2. ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

Անգլիայի տերրիտորիան բաժանվում ե յերեք բաղկացուցիչ մասերի — 1) Անգլիա (Ուելսի հետ միասին), 2) Շոտլանդիա և 3) Հյուսիսային Իռլանդիա: Իռլանդիայի մնացած մասը կազմում ե ինքնավար գաղութ (դոմինիոն):

Անգլիան պետության կարևորագույն բաղկացուցիչ մասն ե: Հարավ-արևմտյան կողմից իրեն միացած Ուելս թերակղզու հետ միասին նա գրավում ե Մեծ-Բրիտանիա կղզու լավագույն տերրիտորիայի $^2/_3$ մասը:

Անգլիայում ապրում ե այս պետության բնակչության $^4/_5$ մասը: Մի քառակուսի մետրի վրա ապրում ե միջին թվով 252 մարդ: Ուելսի հետ միասին Անգլիայում քաղաքային բնակչությունը կազմում ե 80 տոկոս: Անգլիայի հարավ-արևելյան մասն իրենից ներկայացնում ե ամբողջ պետության պատմականորեն առաջացած կորիզը: Այստեղ գտնվում ե նրա մայրաքաղաք— Լոնդոնը:

Իր բռնած տարածությամբ (մոտ 300 քառ. կ.մ.) և բնակիչների թվով (մոտ 8 միլիոն) Լոնդոնը Յեվրոպայում առաջին և աշխարհում յերկրորդ (Նյու-Յորկից հետո) քաղաքն ե:

Լոնդոնը համաշխարհային նշանակություն ունեցող խոշորագույն նավահանգստային քաղաք ե: Այս-

տեղ ե գտնվում յերկրի բոլոր յերկաթուղիների կենտրոնական հանգույցը: Լոնդոնի քաղաքական և տնտեսական նշանակությունը հսկայական ե:

Լոնդոնում են գտնվում յերկրի բոլոր կարևորագույն կառավարական հիմնարկությունները և նրա գաղութների վարչությունները, ամենահարուստ բանկերն ու առևտրական ձեռնարկությունները: Լոնդոնը խոշոր, հին արդյունաբերական կենտրոն ե [1]):

Ծովափերին գտնվում են հսկայական, լավ սարքավորված նավահանգիստներ— Դուվր, Պորտսմուտ (ռազմական նավահանգիստ), Սոուտհեմպտոն (Յեվրոպայից Ամերիկա մեկնող շոգենավերի կայան) և Պլիմուտ:

Անգլիայի հյուսիս-արևմտյան մասն այն շրջանն ե, վորտեղ աշխարհումս առաջին անգամ սկսել ե զարգանալ կապիտալիստական (ֆաբրիկա-գործարանային) արդյունաբերությունը:

Անգլիայի արդյունաբերական մասի գլխավոր քաղաքները.—Բիրմինգամ (1,2 միլիոն բնակիչ)—ամենահին գործարանային կենտրոն ե: Նրա հիմնական արդյունաբերությունը մետաղագործությունն ե: Համաշխարհային պատերազմից հետո այստեղ շատ ե զարգացել ավտոմոբիլների արտադրությունը: Լիվերպուլ (մեկ միլիոն 300 հազար բնակիչ)— Լոնդոնից հետո իր նշանակությամբ յերկրորդ նավահանգստային քաղաքն ե: Նա ջրանցքով միացած ե տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոն Մանչեստրի հետ (750 հազար բնակիչ): Նյու-Քեստլ (300 հազ. բնակիչ)— ածխարդյունաբերության և նավաշինարարության կարևորագույն ռայոն ե, ածխային նավահանգիստ ե արևելքում: Լիդս (500 հազար բնակիչ)— բրդեղենի արտադրության խոշորագույն կենտրոն ե: Շեֆֆիլդ (550

[1]) Լոնդոնում 34 տարվա ընթացքում (1849-ից մինչև 1883 թիվը) ապրել ու աշխատել ե ամենահանճարեղ պրոլետարական մտածող և հեղափոխական Կարլ Մարքսը: Այնտեղ ե գտնվում նրա գերեզմանը:

հազ. բնակիչ)— պողպատի արտադրության կենտրոն: Բրիստոլ—նավահանգստային խոշոր քաղաք է:

Շոտլանդիան անգլիական պետության յերկրորդ բաղկացուցիչ մասն է: Նա գտնվում է Մեծ-Բրիտանիայի հյուսիսային մասում և գրավում է պետության գրեթե $^{1}/_{3}$ մասը: Ամբողջ Շոտլանդիայում կա մոտ 5 միլիոն բնակչություն, այսինքն ավելի պակաս, քան միայն Լոնդոնում: Բնակչության խտությունը մեծ չէ, մոտ 60 մարդ 1 քառ. կ. մ. վրա:

Շոտլանդիայում գերակշռում է գյուղատնտեսությունը: Արդյունաբերական տեսակետից Շոտլանդիան շատ ավելի աղքատ է Անգլիայից:

Բացառություն է կազմում Շոտլանդական դաշտավայրի շրջանը: Շնորհիվ քարածուխի, այրվող թերթաքարերի և յերկաթահանքերի գոյության, ինչպես նաև մոտիկ նավարկելի գետերի, այստեղ զարգացել է խոշոր արդյունաբերությունը: Արդյունաբերական ռայոնի կենտրոնն է Գլազգո քաղաքը (1,5 միլիոն բնակիչ),—Մեծ-Բրիտանիայի խոշոր նավահանգստային քաղաքներից մեկը: Շոտլանդիայի քաղաքական ու կուլտուրական կենտրոնն Եդինբուրգ քաղաքն է (450 հազար բնակիչ):

Շոտլանդական դաշտավայրի արգավանդ հովիտներում զարգացած է օրինակելի գյուղատնտեսությունը, քաղաքների շուրջը—բանջարաբուծությունը:

Շոտլանդական դաշտավայրից դեպի հյուսիս և դեպի հարավ արդյունաբերությունը գրեթե զարգացած չէ: Հյուսիսում գերակշռում են անասնաբուծությունն և ձկնորսությունը, իսկ դաշտերում վարսակ է մշակվում: Հարավում զարգացած է խիստ արդյունավետ ոչխարաբուծությունը:

Պետության յերրորդ բաղկացուցիչ մասը—Հյուսիսային Իռլանդիան —փոքր տարածություն է բռնում (Իռլանդիա կղզու հյուսիս-արևելքում): Արդյունաբերական տեսակետից սա Իռլանդիայի ամենազարգացած ռայոնն է: Առանձնապես զարգացած է նավաշինարարությունն ու վուշի արդյունաբերությունը: Գլխավոր քաղաքն է— Բելֆաստը (425 հազ. բնակիչ)՝ Իռլանդիայի արդյունաբերական կենտրոնն է և Իռլանդիայի խոշորագույն նավահանգիստը:

3. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մակերևույթ: Իր մակերևույթի կազմությամբ Մեծ-Բրիտանիա կղզին բաժանվում է մի քանի, իրենց բնույթով տարբեր մասերի:

Կղզու լայն, ամենամեծ մասը, այսպես կոչված՝ Լոնդոնի ավազանն իրենից ներկայացնում է մի հարթավայր, վորի վրա գտնվում են շարքաձև, ցածր բլուրներ:

Յերկու թերակղզիները—յերկրի հարավ-արևմտյան կծղմում գտնվող Կոռնուոլը և արևմտյան կողմում գտնվող Ուեյլսը—լեռնոտ են: Սակայն լեռները բարձր չեն (ամենաբարձր գագաթը գտնվում է ծովի մակերևույթից ընդամենը 1080 մետր վեր):

Յերկրի կարևորագույն լեռնային սիստեմը— Պենինյան լեռները գտնվում են կղզու կենտրոնական ամենանեղ տեղում: Այս լեռները նույնպես բարձր չեն (1 կ. մետրից ցածր են):

Շոտլանդիան լեռնային յերկիր է: Իր մակերևույթով նա ունի յերեք շրջան.—1) հարավային շրջան, վորտեղ գտնվում են վոչ բարձր Չեվիոտյան լեռները, 2) կենտրոնական շրջան, վորը դաշտավայր է և 3) հյուսիսային, ամենալեռնոտ շրջան: Հյուսիսային մասում գտնվում են կղզու ամենաբարձր լեռները, սակայն այստեղ ևս ամենաբարձր լեռնագագաթը (Բեն-Նեվիս) ունի ընդամենը 1343 մ. բարձրություն:

Ընդհանրապես Մեծ-Բրիտանիայի լեռներն այնքան բարձր չեն, վոր դժվարացնեն հաղորդակցությունն յերկրի առանձին մասերի միջև:

ՀԱՆԱԾՈՆԵՐ։ Գլխավոր հանածո հարստություններն են՝ քարածուխը և (ավելի սակավ չափով) երկաթահանքերը։ Անգլիան աղքատ է մյուս օգտակար հանածոներով։

Իր քարածուխի պաշարով (190 միլիարդ տոնն) Անգլիան հետ է մնում միայն Միացյալ Նահանգներից, ԽՍՀՄ-ից ու Գերմանիայից։ Քարածուխ պատահում է Անգլիայի շատ վայրերում։

Ամենահարուստը կենտրոնական հանքաշերտերն են։ Սրանք բաղկացած են մի շարք քարածխային ավազաններից, որոնք ձգված են Պենինյան լեռնախմբի արևելյան ու արևմտյան լանջերի երկարությամբ։

Անգլիայի երկրորդ հարուստ քարածխային շրջանը գտնվում է Հյուսիսային ծովի ափերին։ Շրջանի կենտրոնում է գտնվում Նյու-Քեսլ քաղաքը։

Ուելսի ավազանը գտնվում է Ուելս թերակղզու հարավային մասում։ Շրջանի ամենախոշոր քաղաքն է ածխային նավահանգիստ Կարդիֆը։

Շոտլանդական ավազանը գտնվում է Շոտլանդական դաշտավայրում։ Նրա կենտրոնումն է Գլազգո քաղաքը։

Անգլիայի ամենախոշոր քարածխահանքերը գտնվում են ծովափերի մոտ կամ նավարկելի գետերի ափերին։

Անգլիայում մշակվող երկաթահանքերի պաշարը կազմում է 1 միլիարդ տոնն—Եվրոպայի պաշարի 0,1 մասը։ Երկաթահանքերը շատ մոտիկ են քարածխային շրջաններին։

Շնորհիվ այն հանգամանքի, որ երկաթահանքերը մոտ են քարածխին և ծովին, բացառիկ նպաստավոր պայմաններ են ստեղծվել մետաղագործության զարգացման և մետաղագործական ու մետաղամշակման արդյունաբերության արտադրանքն արտածելու համար։

ԳԵՏԵՐԸ։ Մեծ-Բրիտանիայի գետերն աչքի չեն ընկնում իրենց երկարությամբ։ Նրանցից ամենամեծերն են՝ Սևեռնը (355 կ.մ. երկարությամբ) և Թայմզը (332 կ.մ.)։



Նկ. 2. Միջին Եվրոպայի հունվարյան իզոթերմերը

Գետերի մեծ մասը հոսում է դեպի արևելք և թափվում Լամանշ և Հյուսիսային ծովը։ Մեծ-Բրիտանիայի այդ կարճ գետերը ջրառատ են և հոսում են հանդարտ։ Նրանք նավարկելի յեն գետաբերաններից սկսած գրեթե մինչև ակունքները, երբեք չեն սառչում։ Գետերի դերը հեշտացրել է ջրանցքների կառուցումը նրանց միջև։

ԿԼԻՄԱ։ Անգլիան գտնվում է բարեխառն գոտում, հյուսիսային լայնության 50° և 60° միջև։ Սակայն նրա կլիման ավելի մեղմ է այդ գոտու միջին կլիմայից։ Ամառը հով է, ձմեռը տաք։ Տարվա ամենատաք և ամենացուրտ ամիսների միջև տարբերությունը 15°-ից պակաս է (տես իզոթերմերի քարտեզը)։

Անգլիայի կլիմայի մեղմությունը բացատրվում է ծովի, մանավանդ գոլֆշտրոմի ազդեցությամբ։

Բրիտանական ծովափերի մոտ գոլֆշտրոմի բարեխառնությունը երբեք 7°-ից ցածր չի լինում։ Քամիները ծովից դեպի կղզիներն են տանում հսկայական քա-

նակությամբ տեղումներ: Մեծ-Բրիտանիայի և Իռլանդիայի կղզիների ամբողջ արևմտյան մասում լինում են 100 ս.մ., տեղ-տեղ 200 ս.մ.-ից ավելի տեղումներ,



Նկ. 3. Միջին Ցեվրոպայի հուլիսյան իզոտերմերը:

իսկ Անգլիայի արևելքում ամենուրեք տեղումները 100 ս.մ.-ից ավելի չեն լինում:

Բնորոշ են հաճախակի, մի քանի օր անընդհատ տևող բարակ անձրևները, ինչպես նաև մեգերը՝ խառնված ֆաբրիկաների ծխնելույզների ծխին ու մրին: Լոնդոնում լինում է այնքան թանձր մշուշ, որ ցերեկը վառվում է էլեկտրական ուժեղ լույս և, չնայելով դրան, փողոցների շարժումը դժվարանում է:

ՀՈՂ ՑԵՎ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Անգլիայում գերակշռում են ճիմոտ-ավազային հողերը: Լեռնոտ շրջաններն իրենց քարքարուտներով, ինչպես նաև ավազապատ ծովամերձ շրջանները—սակավ պետքական են երկրագործության համար: Ընդհանրապես վարելու համար անպետք հողերն Անգլիայում կազմում են 25 տոկոս, իսկ Շոտլանդիայում—75 տոկ.:

Մեծ արգավանդությամբ աչքի ընկնող հողեր պատահում են դաշտավայրային շրջաններում, լայն գետահովիտներում: Ամենաարգավանդ հողերը, որոնք

պետքական են ցորենի ցանքի համար, գտնվում են Մեծ-Բրիտանիայի հարավ-արևելյան մասում: Շատ բերրի յեն Շոտլանդական դաշտավայրի այն հողերը, որոնք կազմվել են հեղեղների ու գետերի բերած նյութերից:

Անտառները, որոնցով մի ժամանակ ծածկված էր գրեթե ամբողջ Անգլիան, վաղուց արդեն կտրատված են: Անտառները (գլխավորապես կաղնու և հաճարենու) բռնում են յերկրի տարածության միայն 4 տոկոսը: Նրանցից շատերը վերածվել են պարկերի:

Ցերկրի փափուկ ու խոնավ կլիման նպաստում է խոտաբույսերի աճման, որոնք ձմեռն էլ կանաչ են լինում: Մարգագետինները բռնում են ամբողջ տարածության մոտ կեսը: Նրանք օգտագործվում են իբրև արոտավայրեր:

Ցերկրի ամենատաք շրջաններում պատահում են մշտականաչ ծառեր—դափնիներ, մրտիներ և այլն:

Բացի այմայի տեղերից, որոնք ծառայում են անգլիական արիստոկրատ բուրժուազիայի որսորդական զվարճալիքների համար, բացի բնական մարգագետնային արոտավայրերից և փոքրիկ անտառներից, յերկրի բուսականությունը կուլտուրական բնույթ ունի:

Բրիտանական կղզիները շրջապատող ծովերը հարուստ են ձկներով, մանավանդ տառեխով և բրաձուկով:

Անգլիայի բնակչության սննդի մեջ ձուկը շատ կարևոր տեղ է բռնում: Ձկնորսության գլխավոր շրջաններն են՝ 1) Շոտլանդիայի հյուսիսային ափերը, 2) Հյուսիսային ծովը (Դոգեր-բանկի ծանծաղուտներում ծովի խորությունը 25 մետրից ավելի չէ), 3) Կոռնուոլի ափերը:

4. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Անգլիան առաջին յերկիրն էր, որտեղ արդյունաբերական հեղաշրջում կատարվեց (XVIII դարի յերկրորդ կեսում և XIX դարի սկզբում): Այդ ասելով պետի հասկանալ ձեռքի մանր արտադրությունից փոխանցում դեպի խոշոր մեքենայական արտա-

դրություն: Դրա համար պահանջված կապիտալները գլխավորապես ձեռք էին բերվել գաղութները կողոպտելով, կոնտրաբանդով և ծովային առևտրով, մանավանդ ստրուկների առևտրով:

Դեռ XVI դարում անգլիական բուրժուազիան գրավեց մի շարք արևմտյան հնդկական կղզիներ, վորտեղ հիմնվեցին շաքարեղեգնի, ծխախոտի ու բամբակի պլանտացիաներ: Այդ կղզիները կարևոր էին նաև Ամերիկայում գտնված իսպանական գաղութների հետ կատարվող առևտրի տեսակետից: Անգլիական գաղութներ առաջ յեկան նաև Հյուսիսային Ամերիկայի ատլանտյան ափերում: Միևնույն ժամանակ գրավվեցին մի շարք ծովափնյա կետեր Գվինեյան ծոցի ափին, Աֆրիկայում, վորտեղից հարձակումներ էին կատարվում դեպի յերկրի խորքը՝ նեգրերին բռնելու համար: XVIII դարում անգլիական բուրժուազիան նեգրերի խոշոր առևտուր էր անում: Ամեն տարի Ամերիկային վաճառվում էր մինչև 30 հազար նեգր:

Գրավվեցին նաև Արևելյան Հնդկաստանում— թերակղզում և կղզիներում գտնված ծովափնյա կետեր: Այստեղից արտածվում էին գլխավորապես հյուսվածքներ և քաղցրեղեն:

XVIII դարի վերջին քառորդում սկսում են գրավվել վոչ միայն կղզիներն ու ծովափերը, այլև հսկայական ցամաքային տարածություններ— Կանադան (Հյուսիսային Ամերիկա), Հնդկաստանը (Ասիա), Հարավային Աֆրիկան, ամբողջ Ավստրալիան:

Ձգտելով ամրապնդել իր տիրապետությունը ծովերի վրա, անգլիական կառավարությունը դեռ XVII դարում հրատարակեց մի օրենք, վորի համաձայն Անգլիայից ապրանքներ կարող էին արտածվել միայն անգլիական նավերով, իսկ ոտար ապրանքները կարող էին Անգլիա ներմուծվել կամ անգլիական նավերով կամ այն յերկրների նավերով, վորոնք արտադրում էին այդ ապրանքները: Այս օրենքով վոչնչացվում էր Հոլլանդիայի մրցակցությունը, վորն այն ժամանակ ուներ խոշոր, համարյա անգլիականին հավասար նավատորմիղ և զբաղվում էր ոտար ապրանքների տեղափոխությամբ: Հաղթելով Հոլլանդիային և գրավելով նրա մի շարք գաղութները, Անգլիան ամրապնդեց իր տիրապետությունը ծովի վրա:

Անգլիական աճող առևտուրը շատ ապրանք էր պահանջում: Նրանք կարող էին պատրաստվել միայն մեքենայական արտա-

դրությամբ: Յեվ հենց Անգլիայում էլ առաջ յեկան (ամենից առաջ տեքստիլ արդյունաբերության մեջ) մեքենաներն ու շոգեշարժիչները: Անգլիայում նույնպես հեղաշրջում առաջ յեկավ մետաղագործական արտադրության մեջ, շնորհիվ այն յեղանակի հայտնաբերման, վորով հանքից մետաղ է ստացվում քարածուխի միջոցով[1]: Անգլիայի հարստությունն ածուխով և յերկաթով, ինչպես նաև քարածուխի և հանքերի մոտիկությունը նպաստեցին Անգլիային՝ մետաղագործական արտադրության մեջ առաջին տեղը բռնելու:

Ֆաբրիկաների համար բանվորական ուժ հավաքվում էր գլխավորապես հողից զրկված գյուղացիներից: Հողազրկման պրոցեսը հետզհետե ուժեղանալով, շարունակվում էր XVI, XVII և XVIII դարերում: XIX դարի սկզբում Անգլիայում գրեթե ամբողջովին վերացվեց գյուղացիների հողատիրությունը:

XIX դարի առաջին կեսի ընթացքում կապիտալիստական արդյունաբերությունն ուրիշ յերկրներում թույլ էր զարգանում: Անգլիան այդ ժամանակ միակ արդյունաբերական յերկիրն էր— «ամբողջ աշխարհի ֆաբրիկան»: Իր ֆաբրիկա-գործարանային ապրանքները նա մատակարարում էր բոլոր յերկրներին: Սակայն խոշոր ինդուստրիան սկսեց աստիճանաբար զարգանալ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հոլլանդիայում, Ֆրանսիայում և այլ յերկրներում:

XX դարի սկզբում Անգլիան, վորպես արդյունաբերական յերկիր, կորցրեց իր համաշխարհային առաջնությունը: Ածուխի, թուջի և մեքենակառուցման արտադրանքով նրանից անցան Միացյալ Նահանգներն ու հետագայում նաև Գերմանիան: Այնուամենայնիվ Անգլիան մինչև 1914 թիվը, այսինքն՝ մինչև համաշխարհային պատերազմը, շարունակում էր մնալ իբրև խոշորագույն արդյունաբերական յերկիր:

1913 թվականին նրա ածուխի արտադրությունը կազմում էր համաշխարհային արտադրության $1/4$ մասը, թուջի արտադրությունը—մոտ $1/8$ մասը, պողպատինը—մոտ $1/10$-ը: Անգլիական

[1]) Մինչև այդ յերկաթահանքը հալվում էր փայտածուխ վառելով: Շատ քիչ քանակությամբ մետաղ հալելու առաջին տեղերը պատկանում էին Ռուսաստանին ու Շվեդիային:

մեքենաշինարարությունը ընկնում էր համաշխարհային մեքենաշինարարության արժեքի գրեթե 1/5-ը: Անգլիայում մեքենայական-մանածագործական իլիկների թիվը կազմում էր աշխարհի բոլոր այդպիսի իլիկների 2/5 մասը:

XX դարում Եվրոպայում Անգլիայի ուժեղ մրցակիցը դարձավ Գերմանիան: Այս յերկու յերկրների միջև մղվող պայքարը 1914—1918 թ.թ. համաշխարհային պատերազմի կարևորագույն ողակներից մեկն էր: Թեպետ Անգլիան այս պատերազմում հաղթող հանդիսացավ, սակայն նրա միջազգային դրությունը խախտվեց:

Մինչև պատերազմն Անգլիան աշխարհի խոշորագույն բանկիրն էր, վորն իր կապիտալները ներմուծում էր ուրիշ յերկրների ձեռնարկությունների մեջ և այդ յերկրների կառավարություններին մեծ տոկոսներով փոխառություններ էր տալիս: Համաշխարհային առևտրի մեջ Անգլիային պատկանում էր առաջին տեղը, իսկ արդյունաբերության մեջ—առաջին տեղերից մեկը:

Համաշխարհային պատերազմից հետո Անգլիան արդեն աշխարհում առաջին բանկիրը չէր, մանավանդ Եվրոպայի և Ամերիկայի համար [1]: Այդ դիրքը գրավեցին Միացյալ Նահանգները: Համաշխարհային առևտրի մեջ Անգլիայի բաժինը 17 %-ից ընկավ 12 %-ի:

Առաջին տեղը գրավեցին Միացյալ Նահանգները, վորոնց առևտրի տեսակարար կշիռը հասավ 14 %-ի: Անգլիան այլևս «առաջին վաճառականը» չէր:

Այն ժամանակ, յերբ մյուս պետությունների արդյունաբերական մակարդակը հասավ և անցավ նախապատերազմյանից, Անգլիայի արդյունաբերությունը նույնիսկ «ամենաբարենպաստ» տարիներում (1928—1929) չհասավ 1913 թվականի մակարդակին:

Անգլիական գաղութներում կապիտալիզմի զարգացման և մյուս յերկրների ապրանքներն այնտեղ ներմուծվելու առնչու—

1) Սակայն շնորհիվ Անգլիայի մինչպատերազմյան խոշոր կապիտալ ներմուծումների, նրա այդ ներմուծումները մինչև այժմ ավելի յեն, քան ՄՆ-ինը:

թյամբ՝ սեղմվեցին Անգլիայի գաղութային շուկաները և թուլացավ կապը նրա, գաղութների ու կիսագաղութների միջև:

5. ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Անգլիան խիստ ինդուստրիալ յերկիր է: Նրա ժամանակակից էկոնոմիկայում դերակշռող նշանակություն ունեն բանկերը, արդյունաբերությունը և առևտուրը: Գյուղատնտեսությունը յերկրորդական տեղ է բռնում:

Յերկրի ինդուստրիալ բնույթն ապացուցվում է քաղաքային ազգաբնակության խիստ բարձր տոկոսով (միջին թվով 78 %), պրոլետարիատի հսկայական թվով և ներմուծվող ու արտածվող ապրանքների բնույթով: Պրոլետարիատը 15 միլիոնից ավելի յե, կամ յերկրի ամբողջ ազգաբնակության 32 %-ը:

Անգլիա ներմուծվող ապրանքների մեջ դերակշռում են պարենամթերքները— 46,5 % և հումքը— 31,5 %. արդյունաբերական ապրանքներ քիչ են ներմուծվում— 9 %: Ներմուծման մնացած 13 %-ը կազմում են այլ ապրանքները (կիսաֆաբրիկատներ, ճոխության իրեր, փոստի կապոցներ և այլն):

Արտածումը հակառակ պատկեր ունի: Առաջին տեղը բռնում է արդյունաբերական ապրանքների արտածումը—83 %, այնուհետև գալիս է հումքը—7 % (քարածուխ, բրդի նուրբ տեսակներ), գյուղատնտեսական մթերքներ—8 % (ցեղային, չմորթած անասուններ, ձուկ, ռոմ, պահածոներ, վերամշակված գաղութային ապրանքներ): Ներմուծման և արտածման այդպիսի բնույթը, ինչպես նաև բնակչության կազմը, ապացուցում են, վոր արդյունաբերությունը խիստ մեծ նշանակություն ունի Անգլիայի ժողովրդական տնտեսության համար և այս յերկիրը կախում ունի պարենի, հումքի և ապրանքների վաճառման արտաքին շուկաներից:

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна

ԲԱՆԿԵՐԸ: Հսկայական նշանակություն ունեն բանկերը և կապիտալների արտածումը դեպի արտասահման: Դեռ Վ. Ի. Լենինի մշակած տվյալների համաձայն, 1914 թվականին անգլիական կապիտալն արտասահմանում կազմում էր 75-ից մինչև 100 միլիարդ ֆրանկ, ֆրանսիականը—60 միլիարդ ֆրանկ և գերմանականը—44 միլիարդ [1]): Անգլիայից ամենից շատ կապիտալ արտածվում էր Ամերիկա—53 %, Ասիա, Աֆրիկա և Ավստրալիա— 41 % և ամենից քիչ դեպի Եվրոպա— 6 %: Կապիտալի այդպիսի տարածման առընչությամբ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ «կապիտալի հսկայական արտածումն ամենասերտ կերպով կապված է գաղութների հետ»: Անգլիայի վիթխարի գաղութներն ու կիսագաղութներն անգլիական կապիտալիզմի կարևորագույն բազան են հանդիսանում:

Կապիտալի արտածումը հսկայական կուտակումներ է տալիս վաշխառու բուրժուազիային: Վ. Ի. Լենինը նշում է, որ Անգլիայի, այսինքն՝ «աշխարհիս ամենալայն առևտրի երկրում ռանտյեների եկամուտը հինգ անգամ գերազանցում է արտաքին առևտրի եկամտին»:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Անգլիան խոշոր կապիտալիստական արտադրության անցավ 18-րդ դարում, առաջին հերթին հանքագործության, մետաղագործության և տեքստիլ արդյունաբերության, նավաշինարարության և հետագայում մեքենաշինարարության մեջ:

Եվ հենց այդ հին մասնաճյուղերը գլխավոր տեղ են բռնում ժամանակակից անգլիական արդյունաբերության մեջ, որ ամբողջ ժողովրդական տնտեսության ամենաբնորոշ առանձնահատկությունն է:

Արտադրության նոր ճյուղերը,—քիմիական, էլեկտրո-տեխնիկական, ավտոմոբիլային արդյունաբերու-

1) Տես հավելվածում կապիտալի ժամանակակից արտածման աղյուսակը

թյունը, մոտորաշինարարությունը, արհեստական մանվածքի արտադրությունը պատերազմից առաջ սաղմային դրության մեջ էին, իսկ այժմ ավելի ուժեղ են զարգացած:

Համեմատած մյուս կապիտալիստական երկրների, մանավանդ Միացյալ Նահանգների ու Գերմանիայի հետ, անգլիական արդյունաբերությունն ավելի քիչ է կենտրոնացված,—մանավանդ քարածխի արդյունաբերությունը (2500 հազար քարածխային հանքահորերը պատկանում են 1400 անհատ կապիտալիստների): Սակայն արդեն մինչև համաշխարհային պատերազմը տեքստիլ, մանավանդ մետաղագործական արդյունաբերության մեջ կազմակերպվեցին խոշոր միավորումներ: Պատերազմից հետո արդյունաբերությունն սկսեց ավելի և ավելի համախմբվել բանկերի հետ և միևնույն ժամանակ սկսեց ուժեղանալ արդյունաբերության կենտրոնացումը: Ամենից շատ համախմբված է քիմիական արդյունաբերությունը, ապա մեքենայականն և նավաշինարարությունը:

Անգլիական արդյունաբերությունը տեխնիկայի մակարդակով ևս հետ է մնացել Գերմանիայի, Միացյալ Նահանգների և մասամբ Ճապոնիայի արդյունաբերությունից, սակայն Անգլիայում ևս սկսվեց արդյունաբերության, մանավանդ նրա նոր ճյուղերի— քիմիական և այլ ճյուղերի ռացիոնալիզացիա:

Քարածխի արդյունաբերության մեջ ածուխի հանումը մեքենայացված է միայն 20 տոկոսով: Տեխնիկայի ո՛չ բավականաչափ բարձր մակարդակը նկատվում է նաև արդյունաբերության մյուս, հին ճյուղերում:

Ընդհանրապես մասսայական արտադրությունն ավելի դանդաղ է, քան թե մյուս, ավելի երիտասարդ ինդուստրիալ կապիտալիստական երկրներում—Միացյալ Նահանգներում ու Գերմանիայում: Անգլիական ապրանքների արժեքը բարձր է և այս պատճառով, չնա-

յած նրանց բարձր վորակին, չեն կարող մրցել մյուս, տեխնիկապես ավելի առաջավոր յերկրների արդյունաբերական ապրանքների հետ:

ԵՆԵՐԳԵՏԻԿԱ: Ենրգետիկ տնտեսության հիմքը քարածուխն է: Եներգիայի մյուս աղբյուրները (տորֆ, ջուր) աչքի ընկնող դեր չեն խաղում: Նավթը միայն ուրիշ յերկրներից է բերվում:

Բնակչության մեկ հոգու համար ծախսված եներգիայի քանակի հաշվով Անգլիան աշխարհում բռնում է յերկրորդ տեղը (Միացյալ Նահանգներից հետո, վորից չորս անգամ պակաս եներգիա յե ոգտագործում): Ելեկտրոկայանները խիստ շատ են, բայց նրանք սակավազոր են, բաժան-բաժան և կազմում են առանձին կապիտալիստների սեփականություն: Առանձին կայանների սպասարկած շրջանները սովորաբար մեծ չեն լինում և ելեկտրոեներգիան թանգ է: Խոշորագույն ելեկտրոկայանները միավորելու և մեկ ելեկտրոտնտեսություն կազմելու փորձերն առայժմ անհաջող են անցնում: Առանձին սեփականատերերի շահերի բախումը խոչընդոտ է հանդիսանում միացման:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՃՅՈՒՂԵՐԸ:

Հանքային արդյունաբերություն: Ածուխի հանույթը հանքային արդյունաբերության կարևորագույն ճյուղն է: Համաշխարհային պատերազմի նախորյակին Անգլիան ածուխի հանույթով յերկրորդ տեղն եր բռնում (ՀԱՄՆ-ից հետո): Անգլիայի ածխահանույթի տեսակարար կշիռն ամբողջ աշխարհի ածխահանույթի $^{1}/_{4}$-ն եր, այժմ մոտ $^{1}/_{5}$-ը:

Մեծ քանակությամբ ածուխ գործածելով յերկրի ներսում, արդյունաբերության և տների տաքացման համար (համարյա բոլոր տները քարածուխով են տաքացվում), Անգլիան միևնույն ժամանակ ածուխի խոշորագույն մատակարարն է համաշխարհային շուկայում: Սակայն պատերազմից հետո նա չհասավ ածխահանույթի նախապատերազմյան մակարդակին:

Բացի ածուխից, ստացվում է նաև յերկաթահանք: Սեփական հանքերն Անգլիային չեն բավականացնում: Պակասը լրացվում է Իսպանիայից ու Շվեդիայից յերկաթ ներմուծելով:

Բիրմինգամից հյուսիս-արևմուտք և Կորնուելում մշակվում են կավի և կաոլինի արժեքավոր տեսակներ, վորոնք գործ են ածվում սիլիկատների արդյունաբերության մեջ:

Հանքագործ պրոլետարիատի, մանավանդ ածխահատների թիվն առանձնապես մեծ է—մոտ 1,5 միլիոն մարդ. սակայն նրանց մեջ հարյուր հազարավոր գործազուրկներ կան:

Պատերազմից հետո քարածուխի պահանջը պակասեց, անգլիական հանքագործների մեջ այդ պատճառով աճեց մասսայական գործազրկությունը: Բուրժուազիան արշավանք սկսեց հանքագործների աշխատավարձի դեմ, միևնույն ժամանակ յերկարացնելով բանվորական որը:

Մետաղագործություն և մետաղամշակում: Պատերազմից հետո թուջի և պողպատի արտադրությամբ Անգլիան չորրորդ տեղը բռնեց համաշխարհային արտադրության մեջ (ՀԱՄՆ-ից, Գերմանիայից և Ֆրանսիայից հետո) [1]: Պատերազմից հետո թուջի արտադրության ամենաուժեղ վերելքի շրջանում նա տալիս եր 74 %, համեմատած 1913 թվականի հետ: Անգլիական մետաղագործության սարքավորումների խոշոր մասը հնացած է: Թուջի և պողպատի արտադրության համար ոգտագործվում է մեծ քանակությամբ ներմուծվող հումք: Այս պատճառով մետաղը թանգ է նստում և անկարող է մրցել ուրիշ յերկրների եժան արտադրանքի հետ: Նավաշինարարության և մի քանի այլ արտադրությունների համար Անգլիան նույնիսկ պողպատ է ներմուծել ուրիշ յերկրներից:

1) Տես աղյուսակը հավելվածում

Մետաղագործության կենտրոնները,— Բիրմինգամն ու Շեֆֆիլդն *իրենց շրջակա քաղաքներով կազմում են մետաղագործական արտադրության ընդարձակ մի շրջան: Այդպիսի մի յերկրորդ շրջան է փոքր քաղաքների մի խումբ, վորոնք գտնվում են* Նյու-Քեսլի *շուր-*



Նկ. 4. Անգլիայի հանածոների և արդյունաբերության քարտեզ:

ջը: Ավելի թույլ է զարգացած մետաղագործությունը Ուելսում, *Կարդիֆ քաղաքով և Շոտլանդական դաշտավայրում— Գլազգո քաղաքով: Այս քաղաքները նաև մեքենաշինարարության կենտրոններ են: Առանձնապես աչքի յե ընկնում այն մեքենաների արտադրությունը, վորոնք անհրաժեշտ են տեքստիլ արդյունաբերության համար, ինչպես նաև շոգետար մեքենաների և շոգետուրբինների արտադրությունը:*

Հետ-պատերազմյան տարիներում սկսեց զարգանալ ավտոմոբիլների և մոտոցիկլների արտադրությունը: Ավտոմոբիլների արտադրության գլխավոր կենտրոններն են Լոնդոնը և Բիրմինգամը:

Անգլիական մեքենաշինարարությունն, ինչպես նաև մետաղագործությունը, մեծ վնասներ են կրում ՀԱՄՆ և Գերմանիայի մրցության հետևանքով: Իր արտադրած մեքենաների արժեքով Անգլիան աշխարհումս յերկրորդ տեղն է բռնում (ՀԱՄՆ-ից հետո): Նավաշինարարության *մեջ Անգլիան աշխարհում առաջին տեղն է բռնում: Նավաշինարարության գլխավոր կենտրոններն են՝* Գլազգոն, Էդինբուրգը, Նյու-Քեսլը, *հյուսիս-արևելյան ծովեզերքի մի շարք ուրիշ քաղաքներ և Իռլանդիայում—* Բելֆաստ *քաղաքը:*

Արդյունաբերության քիմիական և էլեկտրո-տեխնիկական *ճյուղերը միայն պատերազմից հետո յեն սկսել զարգանալ: Միայն էլեկտրո պարանների (կաբել) և էլեկտրականության համար գործածվող մետաղալարերի արտադրությունն է, վոր մեծ ծավալ է ստացել:*

Տեքստիլ *արդյունաբերությունն ամենահինն է և ամենակարևորն Անգլիայում: Ճգնաժամին նախորդած տարիներում Անգլիայի տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատում եր 5 միլիոն վորակյալ բանվոր: Տեքստիլ արդյունաբերության արտածվող ապրանքների արժեքը հասնում է Անգլիայի արտածած բոլոր ապրանքների արժեքի* $^1/_3$*-ին: Առանձնապես կարևոր տեղ է բռնում բամբակեղենի արդյունաբերությունը:*

Անգլիայի տեքստիլ արդյունաբերությունն աշխատում է Ամերիկայից և անգլիական գաղութներից ներմուծվող հումքով: Նա ամբողջ բամբակն ստանում է ՀԱՄՆ-ից, Յեգիպտոսից և Հնդկաստանից: Բրդեղենի արդյունաբերության հումքի 75 %-ը ներմուծվում է Ավստրալիայից, Հարավ-Աֆրիկական միությունից և Արգենտինայից:

Բամբակյա գործվածքների արտադրության կենտ-

րոնը Մանչեստրն է՝ իրեն շրջապատող փոքրիկ քաղաքներով: Բրդեղենի արդյունաբերությունն առանձնապես զարգացած է Լիդս և Բրեդֆորդ քաղաքներում, վուշի արդյունաբերությունը— Շոտլանդիայի Դենդի և Իրլանդիայի Բելֆաստ քաղաքներում: Ջուտի արդյունաբերությունը—Էդինբուրգում:

Լոնդոնում զարգացած է ճոխության իրերի, հագուստի և կոշկեղենի արտադրությունը, թեյի, սուրճի և կակաոյի վերամշակումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Անգլիայում գոյություն ունի խոշոր հողատիրություն: Անգլիայում ու Շոտլանդիայում հողերի կեսից ավելին պատկանում է խոշոր կալվածատերերին—«լենդ-լորդերին» (նրանց պատկանում են այնպիսի հողեր, որտեղ քաղաքներ էլ են գտնվում): Անգլիայում գյուղացիություն չկա:

Խոշոր հողատերերն իրենք գրեթե չեն զբաղվում գյուղատնտեսությամբ: Նրանք հողը կապալով են տալիս խոշոր և միջակ ֆերմերներին: Կապալառու ֆերմերները գյուղատնտեսությունը վարում են զուտ կապիտալիստական հիմունքով, շահագործելով վարձու բանվորական ուժը—բատրակներին:

Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած Անգլիայում էժան հաց ներմուծելու առնչությամբ հողի կապալառությունն սկսեց նկատելի չափով կրճատվել, սկսեցին չքանալ մանր և մանրագույն տնտեսությունները(նրանց թիվը 1885 թվականին 350 հազար էր, պատերազմի նախօրյակին 500 հազար, իսկ պատերազմից հետո անցավ 1,5 միլիոնից):

Ոգտագործման տեսակետից հողը բաժանվում է այսպես՝ 55 $^0/_0$—մարգագետիններ և արոտավայրեր, 24 $^0/_0$—վարելահողեր և 21 $^0/_0$— անօգտագործելի հողեր և անտառներ:

Հացահատիկները (ցորեն, վարսակ, գարի, պատիճավորներ) բռնում են վարելահողերի $^2/_5$ մասը: Մնացած վարելահողերում մշակվում են ցանովի խոտեր,

արմատապտուղներ ու բանջարեղեն, որոնք ոգտագործվում են անասուններին պարարտացնելու համար:

Արոտավայրերն ու մարգագետինները բռնում են բոլոր հողերի կեսից ավելին:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղն անասնաբուծությունն է, որը բարձր որակ ունի:

Երկրի բնական պայմաններն առանձնապես նպաստավոր են ոչխարաբուծության համար: Ոչխարներն արածացվում են լեռնային շրջաններում, ամբողջ տարին կանաչ, հյութալի խոտով ծածկված արոտավայրերում:

Ամեն տարի Անգլիայից արտածվում են մեծ քանակությամբ ցեղային ոչխարներ: Մսատու և կաթնատու անասունների, ինչպես նաև ձիերի (նժույգների և բեռնատարների) ու խոզերի («իորկշիրներ», «բերկշիրներ») անգլիական տեսակները համաշխարհային հռչակ ունեն:

Անգլիական գյուղատնտեսությունը բնորոշվում է բազմադաշտյան, պտղափոխման սիստեմով, տրակտորների, հսկայական քանակությամբ պարարտանյութերի գործադրությամբ և շատ բարձր բերքով (մի հեկտարից ստացվում է 22—35 ց. բերք):

Անգլիան չի կարող կերակրվել իր գյուղատնտեսական մթերքներով: Ամեն տարի նա ներմուծում է իրեն անհրաժեշտ ցորենի $^3/_4$ մասը, ավելի քան կիսով չափ միս և հսկայական քանակությամբ կաթնամթերքներ:

Երկրի էկոնոմիկայի համար մեծ նշանակություն ունի ձկնորսությունը: Ամեն տարի 1 միլիոն տոննից ավելի ձուկ է որսվում:

Անգլիայի ժամանակակից գյուղատնտեսությունը (եթե չհաշվենք արտածման համար ցեղային անասունների բազմացումը) իրենից ներկայացնում է արդյունաբերական քաղաքների լրացուցիչ տնտեսություն, որոնց նա սպասարկում է իր բանջարանոցային մթերքներով, կաթով և այլն:

Իր ֆիզիկական ու տնտեսական առանձնահատկություններով Անգլիան բաժանվում է յերկու հիմնական շրջանների—«կանաչ» և «սև» Անգլիա:

«Կանաչ» Անգլիան բռնում է Մեծ-Բրիտանիայի հարավ-արևելյան մասը: Մայրաքաղաքը, Լոնդոնը, գտնվում է նրա կենտրոնում: Յերկրի այս մասում գերակշռում է կուլտուրական գյուղատնտեսական լանդշաֆտը: Օրինակելի կերպով մշակվող դաշտերում այստեղ ցանվում է ցորեն, գարի, գայլուկ, յերեքնուկ, շաքարի և կերի ճակնդեղ, ծաղիկներ: Յերբեմնի անտառների մնացորդները վերածվել են պարկերի: Զարգացած է այգեբուծությունը:

«Սև» Անգլիան բռնում է Անգլիայի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան մասը: Այստեղ են գտնվում յերկրի գրեթե ամբողջ արդյունաբերությունը և գրեթե նրա բոլոր արդյունաբերական քաղաքները: Գյուղատնտեսությունն այստեղ թույլ է զարգացած:

ՏՐԱՆՍՊՈՐՏ: Ժամանակակից Անգլիայի պատմության և էկոնոմիկայի համար հսկայական նշանակություն ունի ծովային նավատորմիղը: Իր ռազմական և առևտրական նավատորմիղի մեծությամբ Անգլիան այժմ էլ առաջին տեղն է բռնում աշխարհում: Առևտրական նավատորմիղն օգտագործվում է վոչ միայն սեփական ապրանքների տեղափոխության համար, այլև նա սպասարկում է ուրիշ յերկրների առևտրին:

Յերկրի ներքին տրանսպորտի համար օգտագործվում են՝ ծովեզերքին մոտիկ նավարկությունը, գետերն ու ջրանցքները, յերկաթուղիները և վերջին ժամանակներս՝ ավտոմոբիլային ճանապարհները:

Անգլիայի յերբեք չսառչող, համարյա բոլոր գետերը միացված են արհեստական ջրանցքներով, վորոնց յերկարությունը—մոտ 5000 կ.մ.—ավելի քան յերկու և կես անգամ ավելի յե գետերի ընդհանուր յերկարությունից: Ջրանցքներից աչքի յե ընկնում ծովային

Մանչեստերյան ջրանցքը (57 կ.մ.), վորը Մանչեստր քաղաքը միացնում է Լիվերպուլին:

Անգլիան շոգեշարժ յերկաթուղային տրանսպորտի հայրենիքն է: Առաջին յերկաթուղին կառուցվեց 1825 թվին:

Ներկայումս Անգլիայում գոյություն ունի յերկաթուղիների ամենախիտ մի ցանց: Յերկաթուղիների ընդհանուր յերկարությունը մոտ 40 հազար կ.մ. է:

Յերկաթուղիների կենտրոնական հանգույցը գտնվում է Լոնդոնում: Ամենախիտ ցանցը գտնվում է արդյունաբերական շրջանում Պեննինյան լեռնախմբի յերկարությամբ: Լիդսից և Հուլից սկսած յերկաթուղիների թիվը պակասում է:

Ճգնաժամից առաջ, վորն սկսվեց 1930 թ., Անգլիայի յերկաթուղիները բեռնաշրջանառությամբ յերրորդ տեղն եյին բռնում աշխարհում (ՀԱՄՆ-ից և Գերմանիայից հետո):

Անգլիայի շատ յերկաթուղիներ, լինելով բավական հին, աչքի յեն ընկնում հնացած սարքավորումով և բարձր տարիֆներով:

Վերջին տարիներս յերկաթուղիներով, գետերով ու ջրանցքներով բեռներ տեղափոխող շոգենավերի ուժեղ մրցակիցն են հանդիսանում ավտոմոբիլային ընկերությունները:

6. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Յերկրագնդի բոլոր մասերում գտնվող անգլիական գաղութները կազմում են բրիտանական կայսրություն: Վերջինիս տերրիտորիան 36 միլիոն քառակուսի կիլոմետրից ավելի յե և կազմում է յերկրագնդի ցամաքի մոտ $^{1}/_{4}$ մասը: Բրիտանական գաղութների բնակչությունը հասնում է 470 միլիոնի և կազմում է աշխարհիս ամբողջ բնակչության $^{1}/_{4}$ մասը:

Բրիտանական կայսրության մեջ առանձին գա-

ղութների տնտեսական ու քաղաքական դրությունը միատեսակ չէ։

ԴՈՄԻՆԻՈՆՆԵՐ։ Գաղութներից մի քանիսը, վորոնց բնակչությունը գլխավորապես բաղկանում է յեվրոպացիներից, կապիտալիստական զարգացման նշանակալից մակարդակի յե հասել և ձեռք է բերել քաղաքական իրավունքներ։ Այդ գաղութները կոչվում են դոմինիոններ։ Բրիտանական կայսրության մեջ մտնում են 6 դոմինիոններ․—Իռլանդիա (Յեվրոպայում), Կանադա, Նյու-Ֆաունդլենդ (Հյուսիսային Ամերիկայում), Հարավ-Աֆրիկական միություն (Աֆրիկայում), Ավստրալիական միություն (Ավստրալիայի ցամաքը) և Նոր-Զելանդիա (Ովկիանոսային յերկրներ)։ Դոմինիոններն ինքնավար են, ունեն իրենց կառավարությունը, պարլամենտը, որենքները, վոստիկանությունը, բանակն ու նավատորմիղը։ Դոմինիոններն անգլիական կապիտալի և ապրանքների ներմուծման վայրերն են։ Անգլիան դոմինիոններից ստանում է ցորեն (Կանադա, Ավստրալիա), միս և փայտեղեն (Կանադա), ձուկ (Նյու-Ֆաունդլենդ), յուղ (Նոր-Զելանդիա), բուրդ (Հարավ-Աֆրիկական միություն և Ավստրալիա)։

Համաշխարհային պատերազմի ժամանակ առանձին դոմինիոնների տնտեսական դրությունը խիստ ամրապնդվեց, նրանց կապիտալիստական զարգացումն առաջ գնաց։ Այս առնչությամբ թուլացան նրանց տնտեսական կապերն Անգլիայի հետ։

1913 թվի հետ համեմատած՝ Անգլիայից ներմուծվող ապրանքները պակասեցին հետևյալ չափով․— Ավստրալիայում— 52-ի փոխարեն 39 %, Կանադայում—20-ից մինչև 17 %, Հարավային Աֆրիկայում—58-ից 43 %։ Անգլիան ձգտում է վերականգնել նախկին դրությունը, այնպես, վոր գաղութները լինեն մետրոպոլիայի «լրացուցիչ մասը», նրան հումք մատակարարեն և գնեն նրա գործարանային ապրանքները։ Սակայն դոմինիոնները վոչ միայն այդպես չեն վարվում, այլ

իրենց մոտ զարգացող արդյունաբերությունը պաշտպանում են ներմուծման բարձր մաքսերով, սրանցից չազատելով նաև Անգլիային։ Այս բոլորը բրիտանական կայսրության քայքայման նախանշաններն են։ Անգլիան հույս եր դնում դոմինիոնների կոնֆերանսի վրա, վորը գումարվեց Ոտտավայում (Կանադա), 1932 թ. ամառը (դոմինիոնների յերբեմնակի գումարվող կոնֆերանսները գլխավոր միջոցներն են, վորոնք համախմբում են բրիտանական կայսրությունը)։ Սակայն կոնֆերանսը շատ չնչին չափով ամրապնդեց Անգլիայի դիրքը դոմինիոններում։ Ընդհակառակը, վերջիններս ձեռք բերին արտոնություններ Անգլիայում գյուղատնտեսական մթերքներ ներմուծելու և ուրիշ յերկրներից այդ մթերքների ներմուծումն սահմանափակելու ուղղությամբ։

Այն գաղութները, վորոնք կառավարվում են անգլիական կառավարության նշանակած պաշտոնյաներով, կոչվում են արքայական։ Անգլիական կապիտալիզմն առանձնապես դաժան կերպով է շահագործում նրանց։ Այնտեղ սպառվում են Անգլիայի արդյունաբերական ապրանքները, իսկ նույն գաղութներից Անգլիա յեն ուղարկվում սննդամթերքներ և գործարանային հումք։ Այդ գաղութներից կարևորագույնը Հնդկաստանն է, Մալակկայի և մերձակա կղզիների հետ միասին։ Այնուհետև գալիս են աֆրիկական գաղութները և Ովկիանոսային կղզիների վրա գտնվող գաղութները։

Կայսրության մեջ է մտնում նաև գաղութների մի յերրորդ խմբակ,— այսպես կոչված՝ մանդատային տերրիտորիաները։ Սրանցից ամենակարևորներն են՝ Պաղեստինը և Իրաքը (Միջագետք)։ Անգլիայից կատարյալ կախման մեջ է նրա կիսագաղութը դարձած Յեգիպտոսը։ Այդ յերկրների քաղաքական դրությունն ու Անգլիայի հետ նրանց ունեցած տնտեսական հարաբերությունները քիչ են տարբերվում Բրիտանական կայսրության արքայական գաղութների դրությունից։

ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐ: *Անգլիայի գաղութները ցրված են ամբողջ յերկրագնդի վրա և Անգլիան նրանց հետ կապ ե պահպանում ծովային ճանապարհներով:*

Պահպանելով իր տիրապետությունը գաղութների վրա, Անգլիան ունի ամենաուժեղ ռազմա-ծովային բազաներ: Անգլիայից դեպի Հնդկաստան տանող ճանապարհին նրան պատկանում են՝ Ջիբրալտարը*—անգլիական բերդ Միջերկրական ծովի մուտքի մոտ,* Մալթա *կղզին—Անգլիայի ռազմական նավատորմիղի խոշորագույն կայանը Միջերկրական ծովում,* Սուեզի ջրանցքի *գոտին—Միջերկրական ու Կարմիր ծովերի միջև.* Ադենը*—Կարմիր ծովից դեպի Հնդկական ովկիանոսը յելած յելքի մոտ: Բացի դրանից, Ասիայում Անգլիայի կարևորագույն ռազմա-ծովային բազաներ են հանդիսանում՝* Սինգապուրը, *Մալակա թերակղզու հարավային մասում և* Հոնկոնգը*—հարավային Չինաստանում:*

7. ԱՆԳԼԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1929 *թվականից սկսած՝ ամենախոր ճգնաժամը տարածվեց ամբողջ կապիտալիստական աշխարհում: Լինելով կապիտալիստական խոշորագույն յերկրներից մեկը, Անգլիան առանձնապես ծանր հարվածներ ստացավ ճգնաժամից:*

Ամբողջ աշխարհում ապրանքների գերարտադրություն յեղավ: Խիստ կրճատվեց անգլիական արդյունաբերության ապրանքների սպառումը, իսկ այդ արդյունաբերությունը խոշոր չափով ապրանքներ ե արտադրում արտաքին շուկաների համար: Անգլիայի հետ կապված ագրարային յերկրների ճգնաժամը, վորի շնորհիվ ընկան հումքի և պարենի գները, խիստ իջեցրեց այդ յերկրների բնակչության գնողական ունակությունը: Անգլիական առևտուրն սաստիկ կրճատվեց:

Բրիտանական գաղութներում գյուղացիության մասսայական քայքայումը, գործազուրկ բանվորների թշվառ դրությունն ուժեղացրին հեղափոխական շարժումն Անգլիայի դեմ: Դոմինիոններում ուժեղացավ Անգլիայից բոլորովին անջատվելու ձգտումը: Անգլիական բուրժուազիայի կապիտալները, վորոնք ներդրված եյին դոմինիոններում և գաղութներում, այլևս յեկամուտ չեյին տալիս:

Այս բոլոր պայմանների ազդեցությամբ Անգլիայի ներսում սկսեց անուղղելի կերպով քայքայվել նրա տընտեսությունը: Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ում արդյունաբերության արտադրանքը 1928 *թվականից մինչև* 1932 *թվ. վերջը աճել ե* 219 $^{0}/_{0}$*-ով, Անգլիայում այդ ժամանակամիջոցում այդ արտադրանքն իջել ե* 80 $^{0}/_{0}$*-ով:*

Ուժեղ անկում ե նկատվում թե՛ գյուղատնտեսության մեջ և թե՛ տրանսպորտում:

Գործազրկությունն ընդգրկեց մոտ 3 *միլիոն մարդ (չհաշված մասնակի գործազուրկներին, ինչպես նաև հաշվառքից հանված, նպաստից զրկված մոտ* 1 *միլիոն մարդկանց):*

Աշխատելով բարելավել իր դրությունը, բուրժուազիան ուժեղացնում ե իր հարձակումը բանվոր դասակարգի դեմ, իջեցնելով աշխատավարձը, գործազուրկներին զրկելով նպաստից, կրճատելով սոցիալական ապահովագրության առանձին մասերը:

Անգլիայում վերջին տարիներս ավելի և ավելի յե ծավալվում դասակարգային պայքարը՝ գործադուլների և ցույցերի ձևով: 1929 *և* 1931 *թվականներին գործադուլներին մասնակցել ե* 500 *հազարական մարդ,* 1930 *թվ.— ավելի քան* 300 *հազար: Գործազուրկների նպաստը կրճատելու հայտարարությունն առաջ բերեց բողոքի բուռն ցույց: Պատմության մեջ առաջին անգամ գործադուլ ծագեց ռազմական նավատորմիղում, յերբ փորձ յեղավ իջեցնել նավաստիների ռոճիկը: Ամենից*

շատ գործադուլներ յեղան հանքային և տեքստիլ արդյունաբերության մեջ: Ամենայերկարատև գործադուլն արին հանքագործները 1926 թվին: Միայն արհմիութենական բյուրոկրատների դավաճանությունը խանգարեց հսկայական ընդհանուր գործադուլին: Գործադուլը ճնշելիս և ցուցարարներին ցրելիս անգլիական վոստիկանությունն սկսեց գործածել վոչ միայն մտրակներ, ինչպես առաջ, այլև հրացաններ:

Արտաքին քաղաքականության մեջ Անգլիան խոշորագույն պարտություններ է կրում: ՀԱՄՆ-ը նրանից խլեց ֆինանսական և առևտրական համաշխարհային առաջնությունը: Անգլիայից կախումն ունեցող շատ յերկրներում, նույնիսկ դոմինիոն Կանադայում՝ թափանցում են ՀԱՄՆ կապիտալներն և ապրանքները և վտարում են անգլիական ազդեցությունը: Համաշխարհային առաջնության համար անգլո-ամերիկյան պայքարն այն հիմնական հակասությունն է, վորը հոշոտում է կապիտալիստական աշխարհը:

Նախատեսելով պատերազմի հնարավորությունը, Անգլիան ավելացնում և վերազինում է իր առանց այն ել հսկայական ռազմական-ծովային և ոդային նավատորմիղը և զինում է իր բանակը նորագույն մահացու միջոցներով:

ԽՍՀՄ-ում քաղաքացիական պատերազմի ժամանակ անգլիական բուրժուազիան, ոգնելով սպիտակգվարդիական բանակներին, ԽՍՀՄ Հյուսիսային մասում (Արխանգելսկ) և Կովկասում (Բաքու) ինտերվենցիա (զինված միջամտություն) կազմակերպեց: ԽՍՀՄ գոյության բոլոր տարիներում անգլիական բուրժուազիան ամենաակտիվ մասնակցություն է ունենում մեր դեմ պատերազմի պատրաստության:

ԽՍՀՄ հետ առևտուր անելը մեծ նշանակություն ունի անգլիական արդյունաբերության, մանավանդ մեքենաշինության ու մետաղագործության համար: Անգլիան իր արտածած բոլոր մեքենաների 25 տոկո-

սը 1932 թվականին վաճառել է Խորհրդային Միության: 1933 թվի ապրիլ ամսին, յերբ խորհրդային դատարանը պատժեց անգլիական լրտեսներին, անգլիական կառավարությունը (պահպանողականների կուսակցության) ծայրահեղ շտապողականությամբ և անմիտ կերպով արգելեց փայտեղենի, նավթի և այլ շատ ապրանքների ներմուծումը ԽՍՀՄ-ից: Պահպանողականների հակախորհրդային քաղաքականությունը, վորը կապված է Ոտտավայի կոնֆերանսի վորոշումների հետ, այդ քայլով խիստ ծանր հարված հասցրեց անգլո-խորհրդային առևտրին:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգլիայի դիրքը, ծովափնյա գծի կառուցվածքը և բնական պայմանները նպաստավոր են ծովային առևտրի և արդյունաբերության ուժեղ զարգացման համար: Կլիմայական պայմաններն ավելի նպաստավոր են անասնաբուծության, քան յերկրագործության զարգացման համար: Ծովն Անգլիայի համար խիստ մեծ նշանակություն ունի վոչ միայն իբրև հաղորդակցության ճանապարհ, այլև արհեստագործական տեսակետից:

Անգլիան մյուս պետություններից ավելի վաղ դարձավ արդյունաբերական պետություն և միակողմանիորեն զարգացավ արդյունաբերության ուղղությամբ: Արդյունաբերության շահերի հիման վրա վերակառուցվեց գյուղատնտեսությունը: Ածուխի ու յերկաթի հարուստ պաշարը և ծովի վրայով հումքը եժան տեղափոխելու հնարավորությունը հեշտացրին արդյունաբերության զարգացումը: Ապրանքների սպառումն ապահովվում եր ընդարձակ շուկաներ նվաճելով: Անգլիան առաջինն եր արդյունաբերության և առևտրի մեջ, մինչև վոր զարգացավ ուրիշ յերկրների արդյունաբերությունը: Այնուհետև, սակայն, արդյունաբերության շատ ճյուղերում ավելի համեստ տեղ գրավեց: Անգլիայի աչքի ընկնող համաշխարհային դիրքը պայմանավոր-

վում է նրա գաղութային կայսրության վիթխարի չափերով: Իմպերիալիստական պատերազմից հետո Անգլիայի դիրքը խիստ թուլացավ: Ծանր ճգնաժամն ընդգրկեց նրա ամբողջ արդյունաբերությունը:

Ստուգիչ հարցեր (*դասագրքի և նրան կից քարտեզների շուրջը*):

Անգլիան լայնության ու երկարության վո՞ր աստիճանների տակ է գտնվում: Ի՞նչ կղզիներից է նա բաղկացած: Ի՞նչ ծովեր կան նրա շուրջը: Ի՞նչ նեղուցներ կան Անգլիայի ծովերի մոտ: Հունվարի և հուլիսի ի՞նչ իզոթերմեր են անցնում Լոնդոնի, Շոտլանդական հարթավայրի միջով: Ի՞նչ տարեկան ամպլիտուդա գոյություն ունի Անգլիայի հարավ-արևելքում, Շոտլանդիայի հյուսիս-արևմուտքում: Անգլիայի վո՞ր մասում կլիման և հողն ավելի նպաստավոր են երկրագործության համար: Վորտե՞ղ են գտնվում քարածուխի և երկաթի հանքաշերտերը:

Վորո՞նք են Անգլիայի արդյունաբերության գլխավոր ճյուղերը: Վո՞ր. շրջաններին ու արդյունաբերական կենտրոններին են մոտիկ: Արդյունաբերության ու առևտրի զարգացման առնչությամբ ի՞նչպես է վերակառուցվել գյուղատնտեսությունը: Վո՞րտեղ են գտնվում գյուղատնտեսական գլխավոր ռայոնները: Անգլիայում հաղորդակցության ի՞նչ կարևորագույն միջոցներ կան: Գաղութները տնտեսական ու քաղաքական ի՞նչ նշանակություն ունեն Անգլիայի համար: Թվել և քարտեզի վրա ցույց տալ գաղութներից ամենախոշորները: Քարտեզի վրա ցույց տալ կարևորագույն ռազմա-ծովային բազաները:

II. ՖՐԱՆՍԻԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև պատերազմը Ֆրանսիան Արևմտյան Եվրոպայում իր տերրիտորիայով յերրորդ տեղն եր բռնում: Պատերազմից հետո, շնորհիվ Գերմանիային պատկանած Ելզաս-Լոթարինգիայի և Սաարի ավազանի գրավ-

ման, Ֆրանսիան առաջին տեղը բռնեց: Նրա տարածությունը (առանց Սաարի) 551 հազ. քառ. մետր է, բնակչությունը (ըստ 1931 թվի մարդահամարի)— 42 միլիոն:

Ֆրանսիայի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան սահմանները բնական են,—Պիրենյան լեռներով նա բաժանված է Իսպանիայից, Ալպյան լեռներով— Իտալիայից ու Շվեյցարիայից: Այնուհետև դեպի հյուսիս նա



Նկ. 5. Ֆրանսիայի բնակչության խտության քարտեզ:

Գերմանիայից բաժանված է Հռենոս գետով: Միայն հյուսիս-արևելյան սահմանը—Գերմանիայի ու Բելգիայի հետ,— անցնում է պայմանական գծով:

Արտաքին հարաբերությունների, սահմանների պաշտպանության տեսակետից Ֆրանսիայի դիրքն այնպես նպաստավոր չէ, ինչպես Անգլիայինը, վորը գտնվում է կղզիների վրա։ Սակայն Ֆրանսիան ունի վեցանկյունու ձև և այդ վեցանկյունու յերեք կողմերում գտնվում են ծովերը.—հյուսիս-արևմտյան և արևմըտյան կողմից—Ատլանտյան ովկիանոսը և նրա մասերը—Բիսկայան ծոցը և Լամանշ ու Պա-դե-Կալե նեղուցները, հարավ-արևելյան կողմից—Միջերկրական ծովը։ Ֆրանսիայում ամենահեռու արևելյան ծայրամասը ծովից 400 կ.մ. վրա չէ գտնվում։

Ծովափերն ավելի քիչ են կտրատված, քան Անգլիայում։ Ատլանտյան ովկիանոսի քիչ կտրտված ափերի նավահանգիստները գտնվում են գետաբերաններում։ Հավրը— Սենի գետաբերանում, Բորդոն—Գարոննի գետաբերանում։ Գետաբերանները ծածկվում են մակընթացություններով, այս պատճառով նրանք խորն են։ Միջերկրական ծովի վրա, ընդհակառակը, մակընթացություններ համարյա չկան, Ռոնի գետաբերանն ունի շատ ծանծաղուտներ և հարավային գլխավոր նավահանգիստը— Մարսելը գտնվում է Ռոն գետի գետաբերանից դեպի արևելք։ Ներկայումս այս նավահանգիստը ջրանցքով միացված է Ռոնի նավարկելի մասի հետ։

Ֆրանսիան կոչվում է դեմոկրատիկ հանրապետություն։ Իրականում, սակայն, նա բուրժուական հանրապետություն է, վորը կառավարվում է բյուրոկրատիկ ձևով, այսինքն՝ կենտրոնից նշանակված պաշտոնյաներով։

Ֆրանսիայի բնակչության (42 միլիոն) խտությունը 1 $^1/_2$ անգամ պակաս է Գերմանիայից։ Արդյունաբերական մարզերն ավելի խիտ բնակչություն ունեն (1 քառ. կ.մ. վրա 100-ից ավելի մարդ), իսկ գյուղատնտեսական մասերն ավելի նոսր են բնակված։

Ֆրանսիայի մայրաքաղաքը—Փարիզը— գտնվում է յերկրի խոշորագույն դաշտավայրի կենտրոնում, նա-

վարկելի գետի վրա։ Ֆրանսիայի կյանքում Փարիզի տեսակարար կշիռը չափազանց մեծ է։ Փարիզում և նրա արվարձաններում ապրում է ավելի քան 4,5 միլիոն մարդ— ամբողջ Ֆրանսիայի բնակչության 0,1 մասից ավելի (առանց արվարձանների—2,9 միլիոն)։ Փարիզն արդյունաբերական խոշոր կենտրոն է։

Փարիզի համեմատությամբ փոքրածավալ և սակավ աղմկոտ է Լիոնը,— մետաքսագործության կենտրոնը։ Առաջ նա իր բնակչության թվով յերկրորդ քաղաքն էր Ֆրանսիայում։ Այժմ իր 600 հազար բնակիչներով նա զիջում է Մարսելին (800 հազար), վորը խիստ աճել է պատերազմի ժամանակ և նրանից հետո։ Ստրասբուրգը— արդյունաբերական ու կուլտուրական խոշոր կենտրոն և կարևոր նավահանգիստ է Հռենոսի վրա։

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ։ Ֆրանսիայի մակերևույթը խիստ բազմազան ձևեր ունի։ Գերակշռում են դաշտավայրերը, վորոնք հարթ չեն, այլ ծածկված են բլուրներով։

Ֆրանսիայի ամբողջ հյուսիսային մասը համատարած դաշտավայր է,— Փարիզի ավազանը։ Այդ դաշտավայրն անմիջականորեն միանում է Հյուսիսային դաշտավայրի հետ, վորը շարունակվում է Բելգիայում, Հոլլանդիայում և Գերմանիայում։ Հյուսիսային Ֆրանսիայի դաշտավայրը հարավային կողմում սահմանավորվում է Կենտրոնական լեռնային մասսիվի—Ֆրանսիայի ներսում միակ լեռների հետ։ Ամենաբարձր կետը հասնում է համարյա մինչև 1900 մետրի։ Կենտրոնական մասսիվից դեպի զանազան կողմեր հոսող գետերի վերին հոսանքներն արագահոս են ու թափվում են բարձր տեղերից։

Կենտրոնական մասսիվը Հարավային Ֆրանսիայի դաշտավայրը բաժանում է յերկու մասի,— Ակվիտանյան մասը— Գարոնն գետի յերկարությամբ, արևմուտքում և Ռոնի մաս—արևելքում։ Այդ դաշտավայրերը

միանում են կենտրոնական մասսիվից դեպի հարավ գտնվող ցածրադիր տեղում։

Ֆրանսիայի միայն հարավային ծայրամասերում կան բարձր լեռնախմբեր—դրանք Ալպյան և Պիրենյան



Նկ. 6. Ֆրանսիայի ռելյեֆի քարտեզ։

լեռներն են։ Հյուսիս-արևելյան ծայրամասում գտնվում են ցածր լեռներ, յերբեմնի, հնադարյան բարձր մասսիվների մնացորդները։

ՀԱՆԱԾՈՆԵՐԸ։ Ֆրանսիայում, ինչպես նաև Անգլիայում, հնադարյան լեռները հանքեր են պարունակում։ Հյուսիս-արևելքում, Լոթարինգիայում գտնվում են Արևմտյան Յեվրոպայում ամենահարուստ յերկաթահանքերը, ֆոսֆորի խառնուրդով։ Շնորհիվ այն հանգամանքի, վոր Ֆրանսիան Գերմանիայից գրավեց Լոթարինգիայի հանքաշերտերը, (մինչև պատերազմը Ֆրանսիային պատկանում եր միայն նրանց արևմտյան կեսը), նա յերկաթահանքերի հարստությամբ առաջին տեղը բռնեց Արևմտյան Յեվրոպայում (Ֆրանսիայի յերկաթահանքերի պաշարը մոտ 6 միլիարդ տոնն ե, վորից 5 միլիարդը գտնվում ե Լոթարինգիայում)։

Քարածուխի հանքաշերտերը նույնպես գտնվում են Ֆրանսիայի հյուսիսում. այդ այն ավազանի արևմըտյան մասն ե, վորը տարածվում ե Բելգիայի ու Գերմանիայի միջով։ Ֆրանսիային ընկնում են համեմատաբար վոչ հարուստ հանքաշերտեր (Դոնբասսի պաշարից 10 անգամ պակաս)։ Ավելի աղքատ են իր նշանակությամբ յերկրորդ տեղ բռնող Լիոնի ավազանի պաշարները—Կենտրոնական մասսիվի արևելյան ծայրամասում։ Ընդհանրապես Ֆրանսիայում ածուխի պաշարներն անբավարար են մետաղագործական խոշոր արդյունաբերության համար։ Հյուսիսում գտնվող գլխավոր ավազանների դիրքը չափազանց անհարմար ե մյուս արդյունաբերական շրջանների մատակարարման համար,—մանավանդ հարավային և արևմտյան շրջանների, վորոնք ջրային ճանապարհներով միացված չեն հյուսիսի հետ։

Պատերազմից հետո Ֆրանսիային տրված Ելզասում գտնվում են կալիական աղերի հարուստ շերտեր։

ՀՈՂ։ Ֆրանսիայում մեծ մասամբ պատահում են արգավանդ, ավազոտ և թույս հողեր, վորոնք կազմվել են լեռնային տեսակների մնացորդներից և կավերից։ Անբերրի յեն միայն Բրետանյան թերակղզում, Կենտրոնական մասսիվում, Պիրենյան և Ալպյան լեռներում գտնվող հողերը, վորոնք քարքարոտ են և փոքր տարա-

ծություն են բռնում: Անբերրի հողերի թվին են պատկանում նաև ավազակույտերը, որոնք ընկած են Բիսկայան ծոցի յերկարությամբ: Հիմա այնտեղ աճել են սոճիների անտառները, որոնք լավագույնն են ամբողջ Ֆրանսիայում:

ԿԼԻՄԱ: Ֆրանսիայի կլիման ծովային է, մեղմ, անսառնամանիք ձմեռներով, չափավոր-տաք ամառով, առատ, բայց ոչ չափից դուրս շատ տեղումներով: Նույնիսկ Ատլանտյան ծովափում արևը չի ծածկվում մառախուղով և ամպերով, ինչպես Անգլիայում: Արևելյան ծայրամասում նկատվում է փոխանցում դեպի ցամաքային կլիման: Արևելքում ձմեռն ավելի ցուրտ է, լինում են սառնամանիքներ, ամառը շոգ է, տարեկան ամպլիտուդան մոտ 20° է: Միջերկրական ծովի ափերում ձմեռը տաք է լինում (հունվարին 8° ջերմություն), ամառը շատ շոգ է և չորային:

ԳԵՏԵՐ: Հյուսիսային Ֆրանսիայի գետերը ջրառատ են, աչքի յեն ընկնում մշտական մակարդակով և հանդարտ հոսանքով, որովհետև նրանք հոսում են փոքրիկ բարձրություններից և ամբողջ տարին բավականաչափ անձրևի ջուր են կլանում: Այդպես է Սենա գետը, որն իր վտակների հետ միասին ջրային հարմար ճանապարհ է հանդիսանում: Լուար, Ռոնա և Գարոննա գետերի մակարդակը փոփոխական է: Հիանալի ջրային ճանապարհ է նաև Հռենոսը:

Բարձր մասսիվներից հոսող գետերի-Լուարի (Կենտրոնական մասսիվից), Ռոնի (Ալպյան լեռներից), Գարոննի (Պիրենյան լեռներից) և բազմաթիվ մանր լեռնային գետակների լեռնային մասերն աչքի յեն ընկնում ուժգնաթափ հոսանքով: Այդպիսով գոյություն ունի ջրային էներգիայի մեծ պաշար: Արևմտյան Յեվրոպայում միայն Սկանդինավյան յերկրները և Իտալիան են, որ Ֆրանսիայից հարուստ են ջրային էներգիայով: Այդ «սպիտակ ածուխով» կառուցված են 350-ից ավելի հիդրո-էլեկտրոկայաններ, սակայն չնչին

բացառություններով դրանք մանր կայաններ են: Օգտագործված է ջրային էներգիայի ոչ ավելի, քան 1/4 մասը:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներքին խոչընդոտների բացակայությունը, որոնք խանգարում են հաղորդակցության, ինչպես նաև Ռոն-Սեն գետերի հարմար հաղորդակցությունը, որը կապում է հյուսիսը հարավի հետ, նպաստել են մեծ պետության կազմվելուն: Արդեն 1715 թվին Ֆրանսիան գրավում եր մոտավորապես այժմյան տերրիտորիան:

Իր տիրապետությունն ընդարձակելու համար Ֆրանսիան օգտագործել է նաև իր ծովամերձ դիրքը: Նա սկսել է տերրիտորիաներ գրավել նաև ծովերով ու օվկիանոսներով բաժանված յերկրներում—Հյուսիսային Ամերիկայում (Կանադա և Անտիլյան կղզիներ) և Հնդկաստանում: Ինչպես և Անգլիայում, առևտրական կապիտալը սաստիկ ուռճացել է գաղութները կողոպտելով, ստրուկներ վաճառելով և շաքարի, ռոմի, քաղցրավենիքի և մորթիների առևտրով:

XIX դարի սկզբին Ֆրանսիան Անգլիայի հետ պայքարելով, կորցրեց համարյա իր բոլոր գաղութները: Միայն XIX դարի յերկրորդ քառորդից Ֆրանսիան սկսում է նորից ստեղծել գաղութային կայսրություն—Աֆրիկայում և Հնդկաչինում:

Ֆրանսիան գլխավորապես մանր-գյուղացիական հողատիրության յերկիր է և դրանով տարբերվում է Անգլիայից: Գյուղացիությունը հողի սեփականատեր դարձավ 1789 թվի բուրժուական հեղափոխությունից հետո, որը հայտնի յե Ֆրանսիական մեծ հեղափոխություն անունով: Որովհետև հողերն ազատ կերպով վաճառվում եյին, շուտով մանր գյուղացիության հետ միասին առաջ յեկավ կուլակությունը, մանավանդ առևտրական յերկրագործության և գինեգործության շրջաններում:

Անգլիայում առևտրական կապիտալի հետ միասին շատ վաղ սկսեց խոշոր դեր խաղալ նաև արդյունաբերական կապիտալը: Ֆրանսիայում արդյունաբերական կապիտալն ավելի դանդաղ եր զարգանում:

Արդեն XVII դարում Ֆրանսիայում մանուֆակտուրան զգալի կատարելության հասավ։ Սկսվեցին պատրաստվել շքեղ ապրանքներ և ճոխության իրեր (շքեղ զարդեր, մետաքսե գործվածքներ, նուրբ մահուդ, հայելիներ)։ Սակայն շուտ կորցնելով իր առաջին գաղութային կայսրությունը և չստեղծելով միջազգային լայն առևտրական կապեր, Ֆրանսիան չուներ սպառման արտաքին լայն շուկա։ Նա չուներ նաև ածուխի խոշոր պաշար։ Գործարանային արդյունաբերությունը ծագում է, բայց դանդաղ է աճում և զարգանում է գլխավորապես նույն ուղղությամբ, ինչպես և մանուֆակտուրան (ճոխության և վոչ թե մասսայական գործածության առարկաներ)։

Ֆրանսիայում XIX դարում առաջին տեղը գրավեց վոչ թե արդյունաբերական, այլ ֆինանսական բուրժուազիան—բանկիրները, բորսայականները, յերկաթուղային «արքաները»։ Ֆինանսական բուրժուազիան կարողացավ պարտքեր տալ վոչ միայն Ֆրանսիային, այլև ուրիշ պետություններին։ Դրամը տրվում եր մեծ տոկոսներով։ Ֆրանսիան հանձինս իր ֆինանսական բուրժուազիայի, Անգլիայի հետ միասին դառնում է համաշխարհային վաշխառու։ «Իբր տարբերություն անգլիական իմպերիալիզմից, ֆրանսիականը կարելի յե անվանել վաշխառուական իմպերիալիզմ»—ասել է այս առթիվ Վ. Ի. Լենինը։

Ֆրանսիայի կողքին զարգանում եր նրա մրցակիցը՝ հանձինս Պրուսիայի,—գերմանական գլխավոր պետության։ 1870 թվականի ֆրանս-պրուսական պատերազմը վերջացավ Ֆրանսիայի պարտությամբ։ Նա կորցրեց Ելզասը և արևելյան Լոթարինգիան և պետք է վճարեր հինգ միլիարդ պատերազմական տուգանք։ Պատերազմն ուժեղացրեց Ֆրանսիայի հեղափոխական շարժումը։ Տեղի ունեցավ պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու փորձ (Փարիզի կոմունա)։

Պատերազմից հետո բուրժուազիան հրահրում է «ռևանշի» (վրեժ-հատուցման) գաղափարը։ Տեղի յե ունենում բանակի և ռազմական այլ ույժերի խիստ աճում, զինվորականությունը պաշտամունքի առարկա յե դառնում, պատերազմի պատրաստության ծախքերը հսկայական չափերի յեն հասնում։ Գերմանիայի դեմ, նրա թիկունքում թշնամի ստեղծելու համար հանրապետական Ֆրանսիան դաշն է կնքում ցարական Ռուսաստանի հետ։

Յերբ հնարավոր յեղավ Գերմանիայից ռևանշ վերցնել, Ֆրանսիան ամենագործունյա մասնակցություն ունեցավ համաշխարհային պատերազմին, դաշնակցած լինելով Ռուսաստանի և Անգլիայի հետ։ Նա դաժանորեն ճզմեց Գերմանիային։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ։ Մինչև պատերազմը Ֆրանսիան ագրարային—ինդուստրիալ յերկիր եր։ Թե՛ ընդհանուր և թե՛ արտածվող արտադրանքի մեջ գերակշռում եր գյուղատնտեսության բաժինը։ Ֆրանսիական ինդուստրիայի գլխավոր ճյուղը թեթև արդյունաբերությունն եր։ Պատերազմից հետո Ֆրանսիան Գերմանիայից ստացավ յերկաթե և կալիական աղերի խոշոր հանքավայրեր։ Շնորհիվ Սաարի ավազանի գրավման, ավելացավ ածուխի պաշարը։ Բացի դրանից, Ֆրանսիան Գերմանիայից ձրի ստանում եր ածուխ, իբրև պարտահատուցում։ Գերմանիայից այնտեղ հոսեցին հսկայական դրամական միջոցներ։ Այս բոլորը Ֆրանսիային թույլ տվեց ուժեղ չափով զարգացնել իր արդյունաբերությունը, մանավանդ մետաղագործությունը, մեքենաշինարարությունը, քիմիան և ռազմական արդյունաբերության բոլոր ճյուղերը։ Ֆրանսիան դարձավ ինդուստրիալ-ագրարային յերկիր։

Վերջին նախաճգնաժամային տարիներում ինդուստրիայի տարեկան արտադրանքը հասնում եր 180 միլիարդ ֆրանկի, գյուղատնտեսության արտադրանքի 150 միլիարդի դիմաց։ Ներմուծվող ապրանքների 60 %-ը գործարանային հումք եր— բուրդ, բամբակ, մետաքս, մետաղ, քարածուխ։ Արտածվող գործարանային ապրանքները կազմում եյին ընդհանուր արտածման 62 տոկոսը, իսկ մշակված սննդամթերքների (գինի, պանիր, պահածոներ և այլն) և կիսաֆաբրիկատների (թուջ, պողպատ) հետ միասին նույնիսկ 72 % (1929 թ.)։

Ըստ 1921 թվի պրոֆեսիոնալ մարդահամարի, 22

միլիոն ինքնաշխատ բնակչությունից գյուղատնտեսությամբ զբաղվում էր 9 միլիոն, արդյունաբերության մեջ և տրանսպորտում— մոտ 8 միլիոն: Այդ ժամանակից սկսած՝ արդյունաբերության մեջ մտան հարյուր հազարավոր օտարյերկրացի էմիգրանտներ և մեծ թվով ֆրանսիացիներ, վորոնք թողնում եյին գյուղատնտեսությունը և գնում քաղաքները—գործարանները: Այժմ գործարանների և տրանսպորտի բանվորների թիվը 9 միլիոնից ավելի յե: Գյուղատնտեսության մեջ աշխատողներն 9 միլիոնից պակաս են:

Պատերազմից հետո Ֆրանսիայի արդյունաբերությունը յենթարկվեց խոշոր վերակառուցման և մի քանի աշխարհագրական փոփոխությունների:

Հյուսիսային շրջաններում պատերազմի ժամանակ ավերված ֆաբրիկաները վերակառուցվեցին ի հաշիվ այն վճարների, վորոնք ստացվում եյին Գերմանիայից: Այստեղ ամերիկական ձևով կառուցվեցին նոր հալոցքներ և մարտեններ և դրանով խոշոր չափով բարձրացավ Ֆրանսիայի մետաղագործական ձեռնարկությունների արտադրական զորեղությունը: Թուջի և պողպատի արտադրությունը նախապատերազմյանի համեմատությամբ ավելի քան կրկնապատկվեց:

Ֆրանսիայի քարածուխի հանքերը, ինչպես և Գերմանիայինը, դարձան էներգո-քիմիական կոմբինատներ: Ալպյան, Պիրենյան լեռների և Կենտրոնական մասսիվի շրջաններում ուժեղ չափով զարգացան հիդրո-ելեկտրոկայանները և այս կապակցությամբ առաջադիմեց ելեկտրո-տեխնիկական արդյունաբերությունը, վորն արտադրում է մետաղյա ձուլվածքներ և քիմիական նյութեր—թե՛ պայթուցիկ և թե՛ պարարտացնող նյութեր: Ֆրանսիայի համար այժմ Ելզասում աշխատում են ներկերի և պարարտանյութերի հիանալի սարքավորված գործարանները:

Խոշոր չափով ծավալվեցին արդյունաբերության նոր ճյուղերը.—ավտոմոբիլների արտադրությունը,

մանավանդ Փարիզում և Լիոնում, արհեստական մետաքսի արտադրությունը Լիոնում, ռետինի (ավտոմոբիլների շիներ)— Կլերմոն-Ֆերրանում (Կենտրոնական մասսիվ): Ավտոմոբիլների արտադրությամբ Ֆրան-



Նկ. 7. Հիդրոելեկտրակայան Կենտրոնական մասսիվի ծայրամասում.

սիան հավասար է Անգլիային, արհեստական մետաքսի արտադրությամբ—Անգլիային և Իտալիային, վորոնք մինչ այդ առաջին տեղն եյին բռնում:

Շնորհիվ արդյունաբերության վերակառուցման, թեթև արդյունաբերության փոխարեն առաջին տեղը գրավեց ծանր արդյունաբերությունը—մետաղի, մեքենաշինարարական և քիմիական գործարանները: Մինչպատերազմյան շրջանի համեմատությամբ առանձնապես ուժեղ զարգացավ ռազմական արդյունաբերությունը: Կապիտալիստները, վորոնք գլխավորում են ծանր ինդուստրիան, այժմ առաջնակարգ դեր են խաղում Ֆրանսիայի քաղաքական կյանքում:

Պատերազմի ժամանակ գերմանական զորքերով գրավված հյուսիսային արդյունաբերական շրջանից մի

շարք մետաղագործական ու քիմիական ձեռնարկություններ տեղափոխվեցին դեպի հարավ-արևմուտք—Պիրենյան շրջանները և դեպի հարավ-արևելք—բարձր Ալպյան լեռների շրջանը: Այստեղ արդյունաբերությունը ոչ միայն պահպանվեց, այլև պատերազմից հետո զարգացավ, ստանալով էլեկտրո-մետաղագործական և էլեկտրո-քիմիական բնույթ, շնորհիվ էժան էլեկտրոէներգիայի օգտագործման:

Արդյունաբերության քարտեզից յերևում է, որ բոլոր կարևորագույն արդյունաբերական շրջանները, բացի Փարիզյան-կենտրոնականից, գտնվում են արևելյան կողմում, քարածուխի ու յերկաթի հանքերին մոտիկ:

Հյուսիս-արևելյան ծայրամասում աչքի յե ընկնում տեքստիլ, մասամբ մետաղագործական արդյունաբերության մեծ շրջանը: Այստեղ կենտրոնացված է կտավհատ-ջուտի արդյունաբերությունը, բրդեղենի արդյունաբերության $^{1}/_{5}$-ը և բամբակեղենի արդյունաբերության $^{1}/_{3}$-ը: Դեպի հարավ գտնվում է արդյունաբերական մի մեծ շրջան, վորն ընդգրկում է Լոթարինգիան,— յերկաթի յերկիրը և Էլզասը, վորտեղ գտնվում է Ֆրանսիայի բամբակեղենի արդյունաբերության կեսը: Լոթարինգիայում հանվում է Ֆրանսիայի յերկաթահանքների $95^{0}/_{0}$-ը և մշակվում ամբողջ թուջի $^{4}/_{5}$-ը, պողպատի $^{3}/_{4}$-ը:

Դեպի հարավ գտնվում է արդյունաբերական ընդարձակ մի շրջան: Նրա կենտրոնումն է գտնվում Լիոնի շրջանը, աշխարհումս ամենախոշոր՝ մետաքսի արտադրությամբ. դեպի հյուսիս գտնվում է Կրեզոն, վորը հրանոթներ և այլ զենքեր է մատակարարում վոչ միայն Ֆրանսիային, այլև նրա դաշնակիցներին[1]):

1) Շնեյդերի կոնցերնը, վորն իր ձեռքում է պահում Կրեզոյի մեքենաշինարարական և ռազմական գործարանները, ունի իր բաժանմունքները վոչ միայն Ֆրանսիայի շատ վայրերում, այլ և Փոքր Անտանտայի յերկրներում (Չեխո-Սլովակիա, Հարավ-Սլավիա, Ռումինիա) և Լեհաստանում

Դեպի արևելք գտնվում է էլեկտրոմետաղագործական և էլեկտրոքիմիական Ալպյան շրջանը:

Փարիզը հսկայական նշանակություն ունի նախ և առաջ վորպես Ֆրանսիայում խոշորագույն պրոլետա-



Նկ. 8. Ֆրանսիայի հանածոների և արդյունաբերության քարտեզ:

Քարտեզի վրա.—ТК—Տեքստիլ արդյունաբերություն. ав—ավտո և ավիա-շինարարություն. С—նավաշինարարություն. М մետաղագործություն. МО—մետաղամշակում. В—ռազմական արդ. МШ—մեքենաշինարարություն. ЭМ—էլեկտրո մետաղագործություն. ЭХ—էլեկտրո-քիմիական արդ. т—տանկերի շինարարություն. Ш—Մետաքսի արդյունաբերություն. рз—ռետինի արդյունաբերություն. ар—զինապահեստ. Пр—պարֆյումերիայի արդ., мл—օճառի արդ., пр—ճոխության իրերի արդյունաբերություն. ПЩ—սննդի արդյունաբերություն

րական կենտրոն: Ինչպես և Լիոնի շրջանը, սա հին-արդյունաբերական շրջան է, որն իր հին մասնագիտությանը (ճոխության իրեր և մոդաներ, ճշգրիտ գործիքներ և գեղարվեստական առարկաներ) միացնում է արդյունաբերության նոր ճյուղերը,—ռազմական, մետաղագործական, ավիացիոն և ավտոմոբիլային:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ֆրանսիայում խիստ նպաստավոր բնական պայմաններ կան գյուղատնտեսության համար, ուստի վերջինս միշտ կարևոր դեր է խաղացել նրա կյանքում:

Գյուղացիների ճնշող մեծամասնությունը տնտեսությունը վարում է մանր, թզուկային հողամասերում: Մանրիկ հողամասերի գոյությունը հնարավորություն չի տվել օգտագործելու մեքենայական մշակումը: Հացահատիկային տնտեսությունը թույլ է, բերքը սակավ:

Գյուղացին դժվար է ապրում մանր հողամասի արդյունքով: XIX դարի կեսից գյուղացիներն սկսեցին գյուղից փախչել քաղաք: Գյուղատնտեսական դեպարտամենտներում բնակչությունն անընդհատ պակասում է: Ֆրանսիայի գյուղատնտեսությանը շատ ծանր հարված հասցրեց համաշխարհային պատերազմը: Սպանվեցին միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ:

Մինչև պատերազմը մշակվող դաշտերը, այգիներն ու բանջարանոցներն ամբողջ հողատարածության 50 % էին կազմում, իսկ այժմ— 40 %: Առանձնապես կրճատվեց ցորենի,—Ֆրանսիայի գլխավոր հացաբույսի և շաքարի ճակնդեղի արտադրությունը:

Ինչպես և առաջ, սեփական ցորենը չի բավականանում Ֆրանսիային: Նա ցորեն է ներմուծում Ամերիկայի և Ալժիրից: Մինչև պատերազմը Ֆրանսիան ավելորդ շաքարն արտածում էր արտասահման. այժմ արտածելու շաքար չկա: Գինեգործությունն անկման շրջանումն է: Նախկին քանակությունից պակաս են անասունները, մանավանդ վոչխարներն ու խոզերը:

Պատերազմից հետո գյուղատնտեսության հացահատիկային հետամնաց ճյուղը տեղի յե տալիս ինտենսիվ անասնաբուծության: Առաջին տեղը բռնում է կաթնագործական և մսագործական տնտեսությունը: Հացի և գինու արտադրությունը յերկրորդական տեղ բռնեց:

Սևետրական հացահատիկային տնտեսության գլխավոր շրջանր Փարիզի ավազանն է (ցորեն) և հարավ-արևմուտքը (ցորեն և մայիս): Խաղողաբուծությունը տարածված է համարյա ամբողջ Ֆրանսիայում: Հյուսիս-արևմտյան Ֆրանսիայի կլիման անհարմար է խա-



Նկ. 9. Ֆրանսիայի յերկաթուղիների քարտեզ

ղողի հասունացման համար (ամառը շատ անձրևներ և քիչ ջերմություն է լինում): Ֆրանսիայի հենց այս մա-

ալը, շնորհիվ իր հյութալի մարգագետինների, հանդիսանում ե մսագործական ու կաթնագործական անասնաբուծության շրջան։ Ֆրանսիայում լայն տարածված ե այգեգործությունն ու բանջարաբուծությունը։ Միքանի հարավային դեպարտամենտներում բանջարեղենը գլխավոր կուլտուրա յե։

ՏՐԱՆՍՊՈՐՏ։ Ֆրանսիայի առանձին շրջաններ լավ կապված են իրար ջրային ճանապարհներով—գետերով ու ջրանցքներով և խճուղիներով ու յերկաթուղիներով։

Նավագնացության համար կարևոր Սեն գետի սիստեմը ջրանցքներով միացած ե Հռենոսի և Ռոնի հետ։ Հարավային Ֆրանսիայի համար կարևոր ե Հարավային ջրանցքը, վորը պիտի վերակառուցվի ու դառնա ծովային ջրանցք՝ Ատլանտյան ովկիանոսի և Միջերկրական ծովի միջև։ Կարևոր ե նաև Մարսելից դեպի Ռոն տանող ջրանցքը։ Գետային նավահանգիստներից ամենագլխավորը Փարիզն ե, ապա Ռուանը և Ստրասբուրգը։

Ֆրանսիան ունի մոտ 1·300 հազար ավտոմոբիլ [1])։ Յերկաթուղիների բոլոր գլխավոր գծերը միանում են Փարիզում, իբրև ընդհանուր կենտրոնում։ Ֆրանսիայի միջով անցնում են միջազգային մի շարք յերկաթուղային և օդային ճանապարհներ։

Իր առևտրական նավատորմիղի տարողությամբ Ֆրանսիան միայն վեցերորդ տեղն ե գրավում։ Ապրանքների 70 %-ից ավելին փոխադրվում ե ոտարերկրյա նավերով։ Ամենակարևոր նավակայանը Մարսելն ե, ապա Սենայի գետաբերանում գտնվող Ռուանն և Հավր նավակայանները։ Ռուանն ու Հավրը միասին վերցրած՝ իրենց բեռնաշրջանառությամբ գերազանցում են Մարսելին։

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ։ Արտածման մեջ գերակշռում են տեքստիլ ապրանքները (հյուսվածքներ, սպիտակեղեն, հագուստ), մեքենաները, ավտոմոբիլները, քիմիական ապրանքները։ Ներմուծման մեջ առաջին տեղն ե բռնում գործարանային հումքը (բուրդ, բամբակ, մետաքս, քարածուխ, նավթ), ապա սննդամթերքները (հաց, գինի, սուրճ, պտուղներ)։ 1928 թվականից սկսած, արտաքին առևտուրը դեֆիցիտ ե ունենում։ Ֆրանսիայի գլխավոր ապրանքամատակարարներն են՝ Գերմանիան, ՀԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիայի գաղութները. գլխավոր գնորդները—Ֆրանսիայի գաղութները, Անգլիան, Բելգիան Լյուքսեմբուրգի հետ միասին և Գերմանիան [1])։

1) Անգլիայում՝ $1^1/_2$ միլիոն, ՀԱՄՆ-ում 27 միլիոն։

5. ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Իր գաղութների մեծությամբ (12 միլիոն քառ. կ.մ.) Ֆրանսիան Անգլիայից հետո աշխարհում յերկրորդ տեղն ե բռնում։ Գաղութների բնակչությունը (60 միլիոն) մոտ մեկ ու կես անգամ ավելի յե Ֆրանսիայի բնակչությունից։ Պատերազմից հետո Ֆրանսիայի գաղութներն ավելացան, վորովհետև նա ստացավ Աֆրիկայի գերմանական գաղութների մի մասը և վերցրեց Սիրիայի և Լիբանանի մանդատը։ Գաղութների մեծ մասը գտնվում ե Աֆրիկայում (Ալժիր, Թունիս, Մարոկկո, Հասարակածային և Արևմտյան Աֆրիկա, Մադագասկար), ապա Ասիայում (Հնդկաչին, Սիրիա և Լիբանան)։ Փոքրիկ գաղութներ ունի Արևմտյան Հնդկաստանում, Հարավային Ամերիկայում և Ովկիանոսային յերկրներում։

Գաղութները Ֆրանսիայի համար խիստ կարևոր են, վորովհետև սպառում են նրա գործարանային ապրանքները և հումույթ են մատակարարում (կաուչուկ, բամբակ, նավթ, քաղցրավենիք)։ Պատերազմի ժամանակ

1) Պետությունները այդ կարգով են մասնակցում ներմուծման և արտածմանը։

Ֆրանսիան աֆրիկական գաղութներից վերցնում էր «սև լեգեոններ»: Արևադարձային յերկրների, մանավանդ Հասարակածային Աֆրիկայի բնակչությունը փաստորեն ստրկացված է: Ստիպում են աշխատել ծանր տանջանքներով, անհնազանդներին շղթայում են, սպանում: Բնակչությունը վոչնչանում է աշխատանքի ընթացքում, կամ ուղղակի կոտորվում:

6. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիան մյուս կապիտալիստական պետություններից ավելի ուշ յենթարկվեց ճգնաժամին,—1930 թվականի կեսից: Սակայն ճգնաժամն անմիջապես սկսեց ծավալվել և սուր բնույթ ստանալ: Ճգնաժամն ընդգրկել է արդյունաբերության մանավանդ ավտոմոբիլային, մետաղագործական և տեքստիլ ճյուղերը:

Բանվորների կեսից ավելին ամբողջովին կամ մասամբ կորցրեց աշխատանքը: Լրիվ և մասնակի գործազուրկների թիվը հասնում է 5 միլիոնի, վորոնցից ընդամենը մի հարյուր հազարն է նպաստ ստանում:

Ճգնաժամի ծանր հարվածներին յենթարկվեց նաև գյուղատնտեսությունը— հացահատիկների մշակումը, գինեգործությունը, անասնաբուծությունը: Ճգնաժամը քայքայում է նույնիսկ ունևոր գյուղացիությանը:

Ֆրանսիական բուրժուազիան պակասեցնում է բանվորների աշխատավարձը և փորձում է բանվորական օրը յերկարացնել 8-ից մինչև 9—10 ժամ: Պրոլետարիատը կապիտալի հարձակմանը պատասխանեց հակահարձակմամբ: 1928 թվից սկսած՝ հանքային և արդյունաբերական շրջաններում ուժեղ թափով ծավալվեց գործադուլային շարժումը: Ավելի և ավելի յե սրվում քաղաքական պայքարը: Մինիստրությունները գլխապտույտ արագությամբ հաջորդում են իրար: Պրոլետարիատի շահերի պաշտպանը միայն կոմունիստական կու-

սակցությունն է: Կոմկուսակցության ազդեցությունն առանձնապես ուժեղ է Փարիզում, հյուսիս-արևելյան արդյունաբերական շրջանում և Լոթարինգիայում:

Ֆրանսիական բուրժուազիան Յեվրոպայի ամենառեակցիոն բուրժուազիաներից մեկն է: Նրա միջավայրում ղեկավար դեր են խաղում ֆինանսիստներն ու ռազմական արդյունաբերողները, այսինքն այն տարրերը, վորոնք ուզում են հարստանալ նոր պատերազմից:

Ցարական Ռուսաստանում ֆրանսիական բուրժուազիան հարստանալու ասպարեզ ուներ: Մեծ կապիտալներ եյին ներդրվել արդյունաբերական ձեռնարկություններում ու փոխառություններում: Հույս ունենալով վերադարձնել կորցրած փողերը և նորից հարստահարել իրենց նախկին պարտապաններին, ֆրանսիական իմպերիալիստներն օգնում եյին այն հակահեղափոխական ուժերին, վորոնք գործում են Խորհրդային Միության դեմ:

Սակայն ֆրանսիական կառավարությունը չէր կարող հաշվի չառնել Խորհրդային Միության վիթխարի հզորությունը: Ջե՞ վոր ԽՍՀՄ-ը չորս տարվա ընթացքում դարձավ արդյունաբերական ուժեղ յերկիր: ԽՍՀՄ և Ֆրանսիայի մեջ կնքված է միմյանց վրա չհարձակվելու պայմանագիր, վորն իր ուժի մեջ մտավ 1933 թ. փետրվարից: Այդ ԽՍՀՄ խաղաղասիրական քաղաքականության մի հզոր հաղթանակն էր:

Ներկայումս ֆրանսիական իմպերիալիզմն ուղղված է մի ամբողջ շարք կապիտալիստական յերկրների դեմ, վորոնց մրցակցությունից վախենում է Ֆրանսիան,— մանավանդ Գերմանիայի և Իտալիայի դեմ, վորը շատ է ուժեղացել Միջերկրական ծովի վրա: Ֆրանսիական իմպերիալիստները միջոցներ չեն խնայում բանակի, օդային և ծովային նավատորմիղի պահպանման համար: Ֆրանսիայի օդային նավատորմիղը Յեվրոպայում ամենաուժեղ նավատորմիղներից մեկն է:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆրանսիայի դիրքը հարմար է մյուս պետությունների հետ հարաբերություններ պահպանելու համար: Բնական պայմանների շնորհիվ յերկրագործությունը խիստ ձեռնտու յե: Եներգիայի պաշարները, բացի «սպիտակ ածուխից», անբավարար են խոշոր արդյունաբերության համար: Յերկաթ շատ կա:

Անգլիայի հետ համեմատած, Ֆրանսիան իր զարգացմամբ ավելի հետամնաց կապիտալիզմի յերկիր է: Գյուղատնտեսությունը խաղում է աչքի ընկնող դեր, վորը մի փոքր նսեմացել է համաշխարհային պատերազմից հետո: Մինչև պատերազմը գերակշռում էր թեթև արդյունաբերությունը, իսկ վերջին ժամանակներս առաջին տեղը բռնեց ծանր արդյունաբերությունը: Առանձնահատուկ նշանակություն ունի Ֆրանսիայի միջազգային վաշխառությունը: Ֆրանսիայի գաղութները հսկայական տարածություն են բռնում, սակայն նրանց տնտեսական ու քաղաքական նշանակությունն անհամեմատ ավելի փոքր է, քան Անգլիայի գաղութներինը: Ֆրանսիայում ճգնաժամն ավելի ուշ ծավալվեց, քան ուրիշ յերկրներում, սակայն ծավալվեց մեծ թափով:

Ստուգիչ հարցեր:

Լայնության ո՞ր աստիճանի տակ են գտնվում Ֆրանսիայի հյուսիսային և հարավային ծայրերը: Ի՞նչ ծովեր, ծոցեր ու նեղուցներ կան նրա շուրջը: Ո՞ր պետություններին է նա սահմանակից: Ինչո՞ւմն է կայանում Ֆրանսիայի ավելի սակավ նպաստավոր դիրքն Անգլիայի համեմատությամբ: Ֆրանսիայի ատլանտյան նավահանգիստներից դեպի ո՞ւր են մեկնում նավերը: Դեպի ո՞ւր են մեկնում նրանք Միջերկրական ծովի Ֆրանսիական նավահանգիստներից:

Ի՞նչ գլխավոր ձևեր ունի հյուսիսային ու հարավային Ֆրանսիայի մակերևույթը: Ո՞րտեղ են գտնվում հանածոները: Ո՞րո՞նք են գլխավոր նավարկելի գետերը: Հունվարի և հուլիսի ի՞նչ

իզոտերմեր են անցնում Փարիզի, Լիոնի, Բրետանի միջով, Միջերկրական ծովի ափերով:

Ֆրանսիական հողատիրությունը, Ֆրանսիայի գյուղատնտեսությունն ինչո՞վ են տարբերվում Անգլիականից: Ֆրանսիայում գյուղատնտեսության ո՞ր ճյուղեր են ավելի շատ զարգացած և նրա ո՞ր մասերում: Ինչո՞վ է տարբերվում Ֆրանսիայի հետ-
պատերազմյան արդյունաբերությունը մինչպատերազմյանից:
Ինչո՞ւ հետ-պատերազմյան շրջանում առանձնապես զարգացել է
ծանր ինդուստրիան: Ո՞ր արդյունաբերական շրջաններն են հա-
մարվում գլխավոր և ո՞րտեղ են գտնվում: Քարտեզի վրա ցույց
տալ Ֆրանսիայի գլխավոր քաղաքները:

III. ԲԵԼԳԻԱ ՅԵՎ ՀՈԼԼԱՆԴԻԱ (ՆԻԴԵՐԼԱՆԴԻԱ)

ԲԵԼԳԻԱ: Տարածությունը 30 հազար քառ. կ.մ. է: Բնակչու-
թյունը մոտ 8 միլիոն. գաղութների հետ միասին տարածու-
թյունը—2,4 միլիոն քառ. կ.մ., բնակչությունը—25 միլիոն:
ՀՈԼԼԱՆԴԻԱ: Տարածությունը—23 հազար քառ. կ.մ., բնակ-
չությունը—մոտ 7,5 միլիոն: Գաղութների հետ տարածությու-
նը—2 միլիոն քառ. կ.մ., բնակչությունը—56 միլիոն:
Բելգիան և Հոլլանդիան յերկու փոքր, հարևան պետություն-
ներ են Հյուսիսային ծովի ափին: Յերկուսն էլ շատ նպաստավոր
դիրք ունեն: Բելգիայում խաչադրվում են այն ճանապարհները,
վորոնք Անգլիայից ցամաքի ու ծովի վրայով տանում են դեպի
Յեվրոպայի ցամաքը և այն ճանապարհները (յերկաթուղային),
վորոնք Ֆրանսիայից տանում են դեպի հյուսիս-արևմտյան և մի-
ջին Յեվրոպա: Հոլլանդիային պատկանում են կարևորագույն գե-
տերի գետաբերանները, վորոնք հանդիսանում են բնական յելք
հյուսիս-արևելյան Ֆրանսիայից, Բելգիայից և Արևմտյան Գեր-
մանիայից: Այդ գետերն են՝ Մաասը, Շելդը և Հռենոսը: Շնոր-
հիվ Բելգիայի և Հոլլանդիայի նպաստավոր դիրքի, նրանց միջով
անցել են Յեվրոպայի բոլոր կարևորագույն առևտրական ճանա-
պարհները: Յերկու յերկրներն էլ խիստ առաջադիմեցին և հարըս-
տացան ապրանքների գնումների և վերավաճառման շնորհիվ: Բել-
գիայում առանձնապես զարգացած է յերկաթուղային տրանսպոր-
տը, Հոլլանդիայում—ջրային տրանսպորտը (գետեր, ջրանցքներ,
ծով): Բելգիայի յերկաթուղացանցն ամենախիտն է աշխարհում.

այստեղ յուրաքանչյուր 1000 քառակուսի կիլոմետր տարածության վրա գոյություն ունի 365 կ. մ. յերկաթուղի, մինչդեռ Գերմանիա-յում և Անգլիայում—120-ական կ. մ.: Հոլլանդիան ունի խոշոր ծովային նավատորմիղ (աշխարհում բռնում է ութերորդ տեղը): Բելգիայի նավատորմիղը չնչին է:

Յերկու պետություններն էլ ընդարձակ գաղութներ ունեն: Այն ժամանակ, յերբ Յեվրոպայում նրանք իրենց տարածությամբ ամենավերջին տեղերից են բռնում, գաղութների հետ միասին իններորդ ու տասներորդ տեղն են բռնում աշխարհիս խոշորագույն պետությունների մեջ: Բելգիայի գաղութները գտնվում են Հասարակածային Աֆրիկայում, Հոլլանդիայինը— Ինդոնեզիայում (տես քաղաքական քարտեզը):

Գաղութների դաժան շահագործումը, յերկու պետություններում արտաքին խոշոր առևտուրը, մասնավորապես Բելգիայում խիստ զարգացած արդյունաբերությունն ու կապիտալների գործադրությունը՝ ոչ միայն բելգիական, այլև արտասահմանյան արդյունաբերության մեջ—շատ հարստացրեց բելգիական և հոլլանդական բուրժուազիային: Յերկու յերկրներն էլ բնակչության խտությամբ առաջին տեղն են բռնում Յեվրոպայում: Բելգիայում 1 քառ. կիլոմետրի վրա միջին թվով ապրում է 260 մարդ, Հոլանդիայում—230 մարդ: Բելգիայում ամենախիտ բնակչություն ունի յերկրի միջին, բլրոտ մասը, քարածուխի հարուստ ավազանով: Քարածուխին մոտիկ գտնվում են յերկաթի ու ցինկի հանքաշերտերը: Այստեղ գտնվում են բելգիական արդյունաբերության կարևորագույն ճյուղերի—մետաղագործության [1]), ապակեգործության և տեքստիլի գլխավոր օջախները: Նրանցից առանձնապես աչքի յե ընկնում ռազմական արդյունաբերության կենտրոնը—Լիեժը: Մայրաքաղաքը —Բրյուսսելը (200 հազար բնակիչ, արվարձանների հետ—մոտ 800 հազար) գտնվում է առևտրական ճանապարհների կենտրոնում:

Հոլլանդիայում ամենախիտ բնակչություն ունի ծովամերձ շրջանը: Այստեղ գտնվում են Հոլլանդիայի բոլոր կարևոր քաղաքները, վորոնց թվում նրա յերկու խոշորագույն նավահանգստային քաղաքները,—Ամստերդամ (720 հազար բնակիչ) և Ռոտերդամ (550 հազ. բնակիչ), ինչպես նաև մայրաքաղաք Հաագան (400 հազ. բնակիչ): Ծովափնյա քաղաքներում զարգացել է նավաշինարարությունը, ինչպես նաև ներմուծվող հումքի (կակաո, սուրճ, աղամանդների մշակում, կաուչուկի և բրնձի մաքրման արտադրություն) վերամշակումը:

1) Բելգիան թուջի և պողպատի արտադրությամբ աշխարհում վեցերորդ տեղն է բռնում:

Բելգիան ունի մեկ խոշոր նավահանգիստ—Անտվերպեն: Նա գտնվում է վոչ թե ծովի ափին, այլ գրեթե 90 կիլոմետր նրանից հեռու, Շելդ գետի գետաբերանում: Ներկայումս դա Յեվրոպայի յերրորդ նավահանգիստն է (Լոնդոնից և Համբուրգից հետո):

Յերկու յերկրների տնտեսության մեջ գերակշռում է արդյունաբերությունն և առևտուրը: Բելգիայում գյուղատնտեսությամբ զբաղվում է բնակչության 1/5-ը, Հոլլանդիայում—1/4-ը: Հողը շատ պարարտանյութեր է ստանում, բերքատվությունը խիստ բարձր է, ինչպես և այլ յեվրոպական յերկրներում: Գյուղացիական հողամասերը մեծ մասամբ շատ մանր են: Սակավահողությունը ստիպել է զարկ տալ տեխնիկական կուլտուրաների,—շաքարի ճակնդեղի, յեղեգի, կտավհատի մշակման, իսկ Հոլլանդիայում բացի դրանից, զարգացած է ծաղկաբուծությունը, գլխավորապես կոճղեզային ծաղիկների մշակությունը: Հոլլանդական գյուղատնտեսության գլխավոր ճյուղն անասնաբուծությունն է, վորն արտածման համար տալիս է խտացրած կաթ, յուղ, պանիր, միս:

Հոլլանդիայում մի առանձին արգավանդությամբ աչքի յեն ընկնում այն հողերը, վորոնք խլվել են ծովից: Նրանք ծովի մակերևույթից ցածր են (մակընթացության ժամանակ) և նրանից պաշտպանված են բարձր պատնեշներով: 1932 թվականին, տասներկու տարվա աշխատանքից հետո ավարտվել է մի պատնեշ, վորը ծովից բաժանում է Զյուդերզեե ծոցը: Այժմ նա դարձել է Իսսել անունով լիճ: Լճի ափերում ջրի տակից դուրս են յեկել մեծ հողատարածություններ: Առայժմ նրանց միայն մի մասն է չորացված:

Թե՛ Բելգիան և թե՛ Հոլլանդիան թագավորություններ են:

IV. ԳԵՐՄԱՆԻԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերմանիան բռնում է 469 հազար քառ. կիլոմ. տարածություն,—11%-ով պակաս, քան մինչ համաշխարհային պատերազմը: Բնակչությունը՝ 65 միլիոն: Գերմանիայի աշխարհագրական դիրքն ավելի քիչ նպաստավոր է, քան Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքը:

Գերմանիան Ատլանտյան օվկիանոսի հետ ուղղակի կապ չունի: Նա այդ օվկիանոսի վրայով հաղորդակցություն է պահում կիսափակ Բալտիկ ծովի վրայով, որից Յուտլանդական թերակղզու միջով դեպի Հյուսիսային *ծով է անցնում* Քիլի *արհեստական ջրանցքը: Հյուսիսային ծովի միայն մի չնչին, ցամաքամերձ մասն է նրան պատկանում: Բալտիկ և Հյուսիսային ծովերը Գերմանիայի միայն հյուսիսային կողմն են գտնվում: Գերմանիայի ցամաքային սահմանները շատ ավելի յերկար են ծովային սահմաններից: Բռնելով Յեվրոպայի միջին մասը, Գերմանիան ավելի շուտ ցամաքային, քան ծովային պետություն է:*

Արևմուտքից Գերմանիային սահմանակից է Ֆրանսիական խոշոր պետությունը: Մյուս կողմերից նրան սահմանակից են՝ Լյուքսեմբուրգը, Բելգիան, Հոլանդիան, Դանիան, Շվեյցարիան, Ավստրիան, Չեխո-Սլովակիան, Լեհաստանը, Դանցիգն ու Լիտվան:

Ժամանակակից սահմանները գծվել են այն պետությունների կամքով, որոնք Գերմանիային հաղթեցին 1914–1918 *թ.թ. պատերազմում:*

Այսպես կոչված՝ Վերսալյի հաշտության դաշնագրով Գերմանիայից գրավվեցին—

1) Ելզասն ու Լոթարինգիան,—*քարածուխով, յերկաթահանքերով հարուստ և բարձր, զարգացած արդյունաբերությամբ յերկու մարզ (հանձնվեցին Ֆրանսիային):*

2) *Բելգիային հանձնվեցին յերկու փոքրիկ սահմանամերձ շրջաններ:*

3) *Յուտլանդիայի թերակղզու վրա յեղած գերմանական տերրիտորիայի մի մասը,*—Հյուսիսային Շլեզվիգն *անցավ Դանիային:*

4) *Լեհաստանը շատ հողեր ստացավ— Պոզնանի մարզը, Վերին Սիլեզիայի մի մասը:* Արևելյան Պրուսիայի *մի մասից կազմվեց այսպես կոչված «Լեհական միջանցքը», որը կտրեց Գերմանիայի տերրիտորիան:*

5) *Լիտվային անցավ* Մեմելի *շրջանը (Լիտվայի կողմից գրավվեց* 1923 *թվին):*

6) *Առանձին պետություն դարձավ մեծ, հարուստ նավահանգստային քաղաք* Դանցիգը:

7) *Ֆրանսիային տրվեց նաև քարածուխով հարուստ* Սաարի *շրջանը: Վերջինիս վարչությունը* 15 *տարով հանձնվեց Ազգերի Լիգային: Այդ ժամկետից հետո այն հարցը, թե ում պետք է պատկանի Սաարի շրջանը (Ֆրանսիայի՞ն թե Գերմանիային)—պետք է վճռվի համաժողովրդական քվեարկությամբ (պլեբիսցիտով):*

Իր պետական կառուցվածքով Գերմանիան դաշնակցային բուրժուական հանրապետություն է: Մինչև 1918 *թվականի հեղափոխությունը Գերմանիան միացյալ կայսրություն էր, բաղկացած առանձին թագավորություններից, իշխանություններից և այլն: Այժմ այդ պետությունները վերանվանվել են «յերկրներ»: Այդ «յերկրներից» ամենամեծը* Պրուսիան *է* (292 *հազար քառ. կ.մ. տարածություն և* 39 *միլիոն բնակչություն): Այնուհետև գալիս են* Բավարիան, Սաքսոնիան, Թյուրինգիան, Վյուրտեմբերգը, Բադենը *և այլն:*

Գերմանիայի հանրապետության գլուխ է կանգնած նախագահը, որն ընտրվում է ընդհանուր քվեարկությամբ,—և համապետական պառլամենտը— ռայխստագը: Գերմանիայի կառավարությունը բաղկացած է կանցլերից և մինիստրներից, որոնց նշանակում է նախագահը: «Յերկրներն» ունեն իրենց կառավարություն-

ները, սակայն 1933 թվականին Հիտլերի ֆաշիստական կուսակցության կողմից կազմված համագերմանական կառավարությունն իր կողմից լիազորներ նշանակեց «յերկրներում»:



Նկ. 10. Գերմանիայի բաժանումը համաշխարհային պատերազմից հետո

Բնակչության մեծ մասը, յերկու յերրորդից ավելին, ապրում է քաղաքներում:

Պրուսիայի խոշորագույն քաղաքները: Մայրաքաղաքն է Բեռլինը, վորն ունի 4 միլիոն բնակիչ և հանդիսանում է ամբողջ պետության ֆինանսական ու քաղաքական կենտրոնը: Ունի զգալի չափով զարգացած արդյունաբերություն, պետության յերկաթուղիների գլխավոր հանգույցն է: Համբուրգ (1,2 միլիոն բնակիչ)— գտնվում է Ելբա գետի վրա, համաշխարհային նշանակություն ունեցող վիթխարի ծովային նավահան-

գիստ է: Դուիսբուրգ (300 հազ. բնակիչ)—գետային խոշորագույն նավահանգիստ է Հռենոս գետի վրա, մետաղագործական ու քիմիական արդյունաբերության կարևոր շրջան է: Բրեսլավլ (600 հազ. բնակիչ) Օդեր գետի վրա, առևտրական խոշոր կետ է գետային ու յերկաթուղային ճանապարհների հանգույցում: Այստեղ զարգացած է մետաղագործական, մեքենաշինարարական, տրանսպորտային, տեքստիլ և սննդի արդյունաբերությունը: Քյոլն (700 հազարից ավելի բնակիչ)— խոշոր նավահանգիստ է Հռենոս գետի վրա, աշխարհագրական հարմար դիրք ունի, գտնվելով միջազգային յերկաթուղային ու գետային ճանապարհների խաչաձևման կետում: Քյոլնում խիստ զարգացած է մեքենաշինարարական և տեքստիլ արդյունաբերությունը: Քյոնիգսբերգ (300 հազար բնակիչ)—Արևելյան Պրուսիայի խոշորագույն քաղաքն է, գյուղատնտեսական մթերքների առևտրի կենտրոնը: Եսսեն (650 հազար բնակիչ)— ածխահանուրդի, մետաղագործության և մեքենաշինարարության խոշորագույն կենտրոն է: Բրեմեն (300 հազար բնակիչ)— նավահանգստային քաղաք է Վեզեր գետի վրա, համաշխարհային առևտրի խոշոր կենտրոն է, ունի նավաշինարարական ու մեքենաշինարարական խոշոր ձեռնարկություններ: Բավարիայի գլխավոր քաղաքն է Մյունխենը (700 հազ. բնակիչ), յերկրի կարևորագույն տնտեսական կենտրոններից մեկն է: Այստեղ զարգացած է մեքենաշինարարությունը, գյուղատնտեսական հումույթի (կաշի, գարեջուր) մշակումը և գրքերի տպագրությունը: Սաքսոնիայի խոշորագույն քաղաքը Լայպցիգն է (700 հազ. բնակիչ): Սա գրքերի տպագրության և մորթիների առևտրի համաշխարհային կենտրոն է:

Գերմանիայում ընդամենը կան 40-ից ավելի խոշոր քաղաքներ, վորոնցից 10-ը 500 հազարից ավելի բնակչություն ունեն:

Բնակչությունը շատ խիտ է: Մեկ քառ. կիլոմետրի

վրա ապրում է 137 մարդ: Կան շրջաններ, վորոնք նույնպիսի խիտ բնակչություն ունեն, ինչպես Անգլիայի արդյունաբերական մասը: Արդյունաբերական պրոլետարիատը կազմում է ինքնուրույն յեկամտով ապրող բնակչության 40 տոկոսը: Պրոլետարիատի թվով (16 միլիոն) Գերմանիան աշխարհում յերկրորդ տեղն է բռնում: Գերմանական պրոլետարիատն ունի ուժեղ արհեստակցական միություններ, վորոնց անդամների թիվը հասնում է 6,6 միլիոնի:

Բնակչության մեկ յերրորդ մասը զբաղված է գյուղատնտեսությամբ, մեկ ութերորդը—առևտրով:

Գերմանիայի աշխատավորների դրությունը վերին աստիճանի ծանր է: Նրանց ուսերին է ընկած համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտության ծանրությունը: Գործազրկությունը հսկայական չափերի յէ հասել: 1932 թվականի վերջում ցուցակագրված եր 5,6 միլիոն գործազուրկ: Իրականում նրանց թիվն ավելի մեծ է: Պրոլետարական ռայոններում,—Էսսենում, Բոխումում և այլ տեղերում բացված են խանութներ, վորտեղ շան միս է ծախվում:

Պատերազմը վերջանալուց հետո բուրժուազիան շարունակում է իր հարձակումը բանվորների աշխատավարձի դեմ: Սակայն Գերմանիայի պրոլետարիատն անպաշտպան չէ, նա կարողացել է ստեղծել իր ուժեղ, մարտական կոմունիստական կուսակցությունը, վորը չլսված տեռորի պայմաններում պայքարում է բուրժուազիայի դեմ:

Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը կապիտալիստական յերկրների կոմկուսակցություններից ամենամեծն է: Նա ունի մի քանի հարյուր հազար անդամ: Գերմանական կոմյերիտմիությունն ունի մի քանի տասնյակ հազար անդամ: Կոմկուսակցությանը հարում է ընդհատակյա վիճակում գտնվող «կարմիր ճակատայինների միությունը», վորն ունի 100 հազար անդամ: Գերմանիայի կոմունիստական կուսակցու-

թյունը շատ մեծ ազդեցություն ունի աշխատավոր մասսաների վրա: 1932 թվին, ռայխստագի ընտրությունների ժամանակ, կոմունիստական կուսակցությունն ստացավ 5,3 միլիոն քվե:



Նկ. 11. Գերմանիայի բնակչության խտության քարտեզ:

Պայմանական նշաններ. 1.—1 ք. կ. մ. վրա 50 մարդուց պակաս. 2.—50—100 մարդ. 3.—100—200 մարդ. 4.—200 մարդուց ավելի. 5.—1 միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքներ. 6.—400 հազարից մինչև 1 միլիոն բնակչություն ունեցող քաղաքներ. 7.—մյուս քաղաքները:

Ֆաշիստներն անցնելով իշխանության գլուխ, ավազակաբար հարձակվում են կոմկուսակցության վրա: Շատ առաջնորդներ և հազարավոր հեղափոխական բանվորներ նետված են բանտերը, կոմունիստական լրագրերը փակվել են: Կոմկուսակցությունը մտնվել է ընդհատակյա վիճակի, սակայն նրա աշխատանքը չի դադարել:

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մակերևույթ: Իր մակերևույթի կազմությամբ Գերմանիան բաժանվում ե յերեք աստիճանի, վորոնք բարձրանում են հյուսիսից դեպի հարավ: Առաջին աստիճանը Հյուսիսային-գերմանական դաշտավայրն ե: Նա բռնում ե Գերմանիայի մեծ մասը և ձգվում ե ծովի ափերից մինչև Միջին-գերմանական լեռները: Բալտիկ ծովի ցածրադիր ափերը գլխավորապես ջրաբեր հողերից են կազմվել: Այնտեղ առաջացել են մեծ ծովախորշեր:

Յերկրորդ աստիճանը Միջին-գերմանական լեռներն են, վորոնք անցնում են ամբողջ յերկրի լայնությամբ: Նրանք բաղկացած են մի շարք վոչ բարձր լեռնախմբերից:

Յերրորդ աստիճանը, վոր ամենաբարձրն ե, բռնում ե Գերմանիայի հարավային մասը: Այստեղ գտնվում ե Հարավ-գերմանական սարահարթը և Ալպյան սիստեմի լեռների մի մասը (Գերմանիայում— 3 կիլոմետրից վոչ բարձր):

ԳԵՏԵՐԸ: Գերմանիայի գետերի մեծ մասը սկիզբ ե առնում Կենտրոնական Յեվրոպայի բարձրունքներից: Գերմանիայի մակերևույթից կախումն ունենալով, նրանք հոսում են դեպի Բալտիկ և Հյուսիսային ծովը: Միայն մի խոշոր գետ,—Դանուբը, վորի վերին մասը գտնվում ե հարավային Գերմանիայում, դուրս գալով նրա սահմաններից, հոսում ե դեպի Սև ծով: Գերմանիայում շատ գետեր կան: Բացի Դանուբից, համարյա բոլոր գետերը հանդարտ հոսանք ունեն և հարմար են նավարկության համար:

Գերմանիայի կարևորագույն գետը,— Հռենոսը (1125 կ.մ.) —հոսում ե յերկրի արևմտյան սահմանի յերկարությամբ: Հռենոսի ստորին հոսանքը և գետաբերանը գտնվում են Հոլլանդիայի տերրիտորիայի վրա: Գերմանիայի մյուս, տնտեսական մեծ նշանակու-

թյուն ունեցող գետերն են՝ Վեզերը, Ելբան, Ոդերը, վորոնք գերմանական տերրիտորիայում թափվում են ծով,— առաջին յերկուսը— Հյուսիսային ծովը, յերրորդը— Բալտիկ ծովը:

ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Հանածոների պաշարն ընդհանրապես մեծ չե, բայց նա ծառայել ե և ծառայում ե իբրև կայուն բազա գերմանական զորեղ ինդուստրիայի համար:

Գերմանիան ամենից շատ հարուստ ե քարածուխով, վորի պաշարը հասնում ե 251 միլիարդ տոննի (Արևմտյան Յեվրոպայում առաջին տեղն ե բռնում): Քարածուխի գլխավոր շերտերը գտնվում են Հռենոսյան թերթաքարային լեռների հյուսիսային ու հարավային լանջերում, Ռուրի և Սաարի ավազաններում, Սիլեզիայում և Սաքսոնիայում: Այսպես կոչված՝ թուխ ածուխի հսկայական շերտեր են գտնվում միջին Գերմանիայում:

Յերկաթահանքերի պաշարները մեծ չեն, նրանց ընդհանուր քանակությունը հասնում ե 700 միլիոն տոննի: Յերկաթահանքերի ամենախոշոր շերտերը գտնվում են քարածխի ավազանների մոտ: Գունավոր մետաղների (պղինձ, արծաթ, արճիճ) պաշարները գրեթե սպառված են:

Մեծ են կալիական աղերի պաշարները: Մինչև ԽՍՀՄ-ում Սոլիկամսկի կալիական աղերի հայտնաբերումը և մինչև Ելզասը (վորն ունի կալիական աղերի հարուստ շերտեր) Ֆրանսիային հանձնելը, գերմանական այս հանքերն ամենախոշորն եյին աշխարհում:

ԿԼԻՄԱ: Չնայելով Գերմանիայի տերրիտորիայի համեմատաբար չնչին չափին, նրա կլիման աչքի յե ընկնում մեծ բազմազանությամբ: Գերմանիայի հյուսիս-արևմուտքում կլիման ծովային ե, ոդի միջին ջերմությունը՝ ձմեռը 1° զերոյից վեր, իսկ ամառը— 17°: Արևելյան Գերմանիայում կլիման յենթակա յե մայր-ցամաքի ազդեցության: Միջին ջերմությունը—

ձմեռը 2—3° զերոյից ցածր, ամառը—19 աստիճանից բարձր:

Վորովհետև հարավային Գերմանիան ծովի մակերևույթից բավական բարձր է, այստեղ ավելի ցուրտ է, քան Հյուսիսային-գերմանական դաշտավայրում:

Տեղումների տարեկան միջին քանակը 70 ս.մ. է: Ավելի շատ տեղումներ լինում են լեռների արևմտյան լանջերում (մինչև 140 ս.մ.): Հյուսիսային-գերմանական դաշտավայրի արևելքում տեղումները քիչ են,— 50—60 ս.մ.:

Արևմուտքի ու արևելքի կլիմաների տարբերությունն անդրադառնում է գյուղատնտեսության բնույթի վրա: Արևմուտքում, ուր ավելի խոնավ է, գոյություն ունեն ճահիճներ ու մարգագետիններ: Այստեղ տնտեսությունները մանր են, յերկրագործությունից բացի գոյություն ունի կաթնամսագործական անասնաբուծությունը: Արևելյան Գերմանիան հացահատիկային խոշոր տնտեսության յերկիր է:

Տեղումների առատությունը նպաստում է արևմտյան գետերի (մանավանդ Հռենոսի) ջրառատության և նրանց մակարդակի մշտականության: Արևելքի գետերը՝ Ելբան և մանավանդ Ոդերը՝ ամառը ջրառատ չեն:

ՀՈՂ ՅԵՎ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Ընդհանուր առմամբ Գերմանիայի հողն աղքատ է: Գերակշռում են սակավ արգավանդ ավազահողերը, բայց կան նաև այնպիսի շրջաններ, վորտեղ հողի արգավանդությունը խիստ բարձր է: Ծովեզերքների յերկարությամբ գտնվում են ծովից նվաճած (պատնեշների միջոցով) պարարտ, բերրի հողեր, այսպես կոչված՝ մարշեր: Հյուսիս-գերմանական դաշտավայրում Հռենոս, Ելբա և Ոդեր գետերի հովիտներն ունեն հիանալի ջրաբեր հողեր:

Այն հողերը, վորոնք կազմվել են կարմիր ավազաքարերից և վորոնք պատահում են հարավային Գերմանիայում, արգավանդ են և առանձնապես հարմար են այգեգործության և խաղողագործության համար: Գերմանիայում գերակշռում է կուլտուրական լանդշաֆտը: Անտառների (փշատերև, կաղնու, հաճարենու) մեծ մասն արհեստական է:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գերմանիայում ուշ սկսվեց կապիտալիստական զարգացումը, վորը սակայն տեղի ունեցավ խիստ արագ:

XIX դարի սկզբում Գերմանիան մի հետամնաց գյուղատնտեսական յերկիր եր: Գերմանիան, վորպես միասնական պետություն, այն ժամանակ գոյություն չուներ: Նա բաժանված եր տասնյակ առանձին պետությունների (թագավորությունների, հերցոգությունների, իշխանությունների և այլն), վորոնք անջատված եյին մաքսային խոչընդոտներով և քաղաքականապես: Գերմանական առանձին պետություններում վաղուց զարգացել է խոշոր առևտուրը և կուտակվել առևտրական խոշոր կապիտալ: Զարգանում եր մանուֆակտուրայի արտադրությունը: Սակայն չկար քաղաքական ու տնտեսական միասնականություն, վորն անհրաժեշտ եր ամբողջ Գերմանիայի ժողովրդական տնտեսության զարգացման համար:

Ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին այն ժամանակ, յերբ 1834 թվականին գերմանական խոշորագույն պետությունները մաքսային դաշն կնքեցին: Այդ մի կարևոր քայլ եր, վորը նպաստեց հետագա համախմբման: Այդ համախմբմանը խոշոր չափով նպաստեց նաև յերկաթուղային շինարարությունը: Վերջինս սկսվեց 1835 թվից, Գերմանիայի այն ժամանակվա ամենաարդյունաբերական մասում—Սաքսոնիայում: Շուտով յերկաթուղիները շաղկապեցին Գերմանիայի մինչ այդ բաժան-բաժան պետությունները: Աճեց ներքին և արտաքին առևտուրը: Առանձին պետություններում, մանավանդ Պրուսիայում և Սաքսոնիայում, սկսեց զարգանալ գործարանային արդյունաբերությունը: Այդ աճումը դանդաղ եր կատարվում մինչև Գերմանիայի քաղաքական համախմբումը, վորը տեղի ունեցավ 1870—1871 թ.թ. Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ: Այս համախմբումը և Ֆրանսիայից ստացած հսկայական պատերազմական տուգանքն ուժեղ

թափ տվին գերմանական խոշոր, մեքենայական ինդուստրիայի զարգացման։ Համաշխարհային պատերազմի նախօրյակին նրա արդյունաբերությունը, բացի ածուխի հանույթից, նավաշինարարությունից և տեքստիլից, անցավ անգլիական արդյունաբերությունից և յերկրորդ տեղը բռնեց աշխարհում։ Գերմանական գործարանային ապրանքները, լինելով եժան, հեղեղեցին շուկաները և սկսեցին յերևան գալ նույնիսկ Անգլիայում։

Գերմանիայի կապիտալներն ու ապրանքները մուտք գործեցին անգլիական ու ֆրանսիական գաղութները, Չինաստան, Ռուսաստան, Հարավային Յեվրոպայի յերկրները, Փոքր-Ասիա։

Ուշ սկսելով իր կապիտալիստական զարգացումը, Գերմանիան չկարողացավ իր ժամանակին գրավել կարևոր գաղութներ։ Նա փոքրիկ հողամասեր յուրացրեց միայն Աֆրիկայում և Ովկիանոսային յերկրների կղզիներում։ Գերմանական բուրժուազիան չեր հաշտվում այս դրության հետ։ Նա ձգտում եր Աֆրիկայում ընդլայնել իր գաղութներն ի հաշիվ Անգլիայի և Ֆրանսիայի, ամբողջովին իրեն յենթարկել Բալկանյան թերակղզու և Փոքր-Ասիայի յերկրները, իրեն միացնել Լյուքսեմբուրգի և Լոթարինգիայի ֆրանսիական մասի հարուստ յերկաթահանքերը։

Տեղի յեր ունենում պատերազմի ուժեղ պատրաստություն։ Գերմանիայի բանակն ամենաուժեղն եր համարվում աշխարհում, ռազմական նավատորմիղը յերրորդ տեղն եր բռնում (Անգլիայից և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո)։

1914—18 թվականների պատերազմում Գերմանիան պարտվեց։ Հաղթող յերկրները զրկեցին նրան գաղութներից ու Յեվրոպայում ևս ահագին տերրիտորիայից։ Այդ տերրիտորիաների հետ միասին Գերմանիան կորցրեց քարածուխի պաշարի ¼-ը, յերկաթահանքերի ¾-ը, ցինկի հանքերի $^{2}/_{3}$-ը, արճճի—¼-ը, կալիական աղերի մոտ ½-ը, հաճարի և կարտոֆիլի դաշտերի $^{1}/_{5}$-ը, ցորենի դաշտերի $^{1}/_{7}$-ը։ Ըստ Վերսալյի հաշտության դաշնագրի, Գերմանիայից գրավվեցին՝ գրեթե ամբողջ առևտրական նավատորմիղը (մնաց միայն 8%-ը), 10 հազար շոգեքարշ, 200 հազար վագոն, հարյուր հազարավոր գլուխ անասուն, ամբողջ ռազմական գույքը։ Պատերազմի հետևանքով Գերմանիայի նյութական կորուստները հասան 135 միլիարդ մարկի, վոր կազմում եր յերկրի ամբողջ

գույքի 45%-ը։ Գերմանիայի վրա դրվեց հսկայական պատերազմական տուգանք—132 միլիարդ վոսկի մարկ։

Ուժից բոլորովին վեր վճարները, վորոնք ամբողջովին բարձվեցին աշխատավորների ուսերին, ուժեղացրին հեղափոխական շարժումը։ Վախենալով Գերմանիայի թե՛ լիակատար տնտեսական սնանկությունից և թե՛ պրոլետարական հեղափոխության բռնկումից, միջազգային բուրժուազիան Միացյալ Նահանգների կապիտալիստների ճնշմամբ մի փոքր կարգավորեց այսպես կոչված՝ պարտահատուցումների (ռեպարացիաների) տարեկան մուծումների պայմանները։

1924 թվականին մտցվեց «Դաուեսի պլանը»։ Այդ պլանի համաձայն, Գերմանիան պետք է վճարեր առաջին տարում 1 միլիարդ, ապա 1 ¾-ական միլիարդ, իսկ 1928 թվականից սկսած—2 ½-ական միլիարդ վոսկի մարկ (տարեկան)։ Չեր սահմանվել այն տարիների թիվը, վորոնց ընթացքում պիտի վճարվեյին պարտահատուցումները։ 1928 թվականից մտցվեց «Յունգի պլանը»։ Պատերազմական տուգանքի ընդհանուր չափը վորոշվեց 127 միլիարդ մարկ, վճարման ժամանակամիջոցը— 59 տարի։ Սակայն գերմանական տնտեսության խոր ճգնաժամն անհնարին դարձրեց վճարումներն ըստ Յունգի պլանի և 1932 թվականից Գերմանիան դադարեցրեց պարտահատուցումների վճարումը։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի ժողովրդական տնտեսության գլխավոր հատկանիշն ինդուստրիայի բարձր զարգացումն է։ Սակայն գյուղատնտեսության նշանակությունն ևս բավական մեծ է։ Գյուղական և քաղաքամերձ վայրերում ապրում է ամբողջ բնակչության $^{1}/_{3}$-ը։ Յերկրին անհրաժեշտ պարենի $^{4}/_{5}$-ը ստացվում է սեփական գյուղատնտեսական արտադրությունից։

Արդյունաբերություն։ Գերմանական արդյունաբերության համար առանձնապես բնորոշ են՝ 1) արդյունաբերական միությունների (կարտելների, կոնցերնների) սաստիկ զարգացումը, մանավանդ քիմիական, մետաղագործական և մեքենաշինարարական արդյունա-

բերության մեջ, 2) խոշոր արդյունաբերության սերտ կապը բանկերի հետ:

Համաշխարհային պատերազմից հետո խոշոր ձեռնարկություններում կիրարկված է «ռացիոնալիզացիա», տեխնիկական վերակառուցման հետ կապված: Աշխատանքի լարվածությունն ուժեղացավ: Նրա արտադրողականությունը քարածխի արդյունաբերության մեջ բարձրացավ 25 %-ով, ավտոմոբիլային արդյունաբերության մեջ—160 %-ով: Սակայն դրա ամբողջ օգուտն ստացան միայն գործարանատերերը: Բանվորների ռեալ աշխատավարձը վոչ թե բարձրացավ, այլ իջավ:

Գերմանիայում քարածուխի (նաև թուխ քարածուխի) պաշարները շատ մեծ են: Հիդրոէներգիայի պաշարներն ավելի քիչ են, բայց և այնպես, նրանք կազմում են համաշխարհային պաշարների 1,5 %-ը: Տորֆի ճահիճները կազմում են 1,7 միլիոն հեկտար: Ամենից շատ օգտագործվում է քարածուխը, ապա հիդրոէներգիան (պաշարների 10,5 %-ը): Տորֆը քիչ է օգտագործվում:

Ժամանակակից Գերմանիան իր ելեկտրոկայանների ընդհանուր զորեղությամբ առաջինն է կապիտալիստական Յեվրոպայում և յերկրորդն է աշխարհում (ՀԱՄՆ-ից հետո): Ամենից շատ ելեկտրավորված է Միջին Գերմանիայի կենտրոնական մասը:

Արդյունաբերությունն ունի մեխանիկական շարժիչների վիթխարի զորեղություն: Գերմանական արդյունաբերության տեխնիկան շատ բարձր է, հանքերի մեծամասնությունը մեքենայացված է, լայն կերպով տարածված է ներգործարանային տրանսպորտը (կոնվեյերները): Խոշոր ձեռնարկությունների մեծամասնությունն ունի ավտոմատ սարքավորանք: Վերջին տարիներս զարգացել է հեղուկ վառելիքի հանուրդը ստորատեսակ, թուխ ածուխից: Մեծ զարգացում է ստացել արհեստական միջոցներով ազոտի (օդից), կամֆարայի և

այլ նյութերի հանուրդը: Տեխնիկական տեսակետից գերմանական արդյունաբերությունն անհամեմատ բարձր է անգլիականից, իսկ մի քանի արտադրություններով բարձր է նաև ՀԱՄՆ-ից:

Գերմանական արդյունաբերության գլխավոր ճյուղերն են՝ մետաղագործական, մեքենաշինարարական, ելեկտրոտեխնիկական, քիմիական և տեքստիլ ճյուղերը, ապա սննդահամի, փայտագործական ճյուղերը:

Նկ. 12. Գերմանիայի հանածոների և արդյունաբերության քարտեզ:

Քարտեզի վրա—T—Տեքստիլ արդյունաբերություն. X—քիմիական. M—մետաղագործական. MO—մետաղամշակում և մեքենաշինարարություն. ЭМ—ելեքտրոմետաղագործություն:

Մետաղագործություն և մեքենաշինարարություն: Բանվորների թվով առաջին տեղն են բռնում արդյունաբերության մետաղագործական և մեքենաշինարարական ճյուղերը (2,5 միլիոն մարդ): Մեքենաշինարարության չափով և վորակով Գերմանիան աշխարհում առաջին տեղերից մեկն է բռնում, հաջողությամբ մրցելով Անգլիայի հետ: Թուջի և պողպատի արտադրությամբ Գերմանիան մինչև ճգնաժամն աշխարհում յերկրորդ տեղն եր բռնում (ՀԱՄՆ-ից հետո): Պատերազմից առաջ Գերմանիան Անգլիայից յերկու անգամ ավելի թուջ և պողպատ եր տալիս: Մետաղագործարաններն աշխատում են սեփական ածուխով, սակայն յերկաթահանքերը չեն բավականացնում: Դեռ պատերազմից առաջ այդ հանքերը ներմուծվում եյին Ֆրանսիայից, Լյուքսեմբուրգից և Շվեդիայից:

Մետաղագործության և մեքենաշինարարության բնագավառում ամենից աչքի ընկնողը **Ռուրի** շրջանն է, Գերմանիայում ամենահարուստ քարածուխի շերտերով, վորոնք գտնվում են Ստորին Հռենոսի մերձակայքում: Այստեղ առանձնապես աչքի յե ընկնում **Եսսեն** քաղաքը, Կրուպպի հռչակավոր գործարաններով: Մինչև Գերմանիայի պարտությունը նա պատրաստում եր հրանոթներ, տանկեր և այլ ռազմական մահացու միջոցներ: Այնուհետև նշանավոր են **Բոխումն** ու **Զոլինգենը**:

Մեքենաշինարարական խոշոր ձեռնարկություններ են գտնվում նաև **Զոլինգենում**, **Քյոլնում**, Սաքսոնիայի քաղաքներում—**Լայպցիգում** ու Դրեզդենում, Սիլեզիայի շրջանում (Բրեսլավլում) և **Բերլինում**:

Լեռնային արդյունաբերությունը, վորտեղ մինչև ճգնաժամն աշխատում եր 1,5 միլիոն բանվոր, մետաղագործությանը տալիս է վառելիք և հումույթի մի մասը: Քարածուխի հանույթով Գերմանիան աշխարհում յերրորդ տեղն եր բռնում: Ածխահանույթի տեխնիկայով և ածուխի ռացիոնալ ոգտագործումով Գերմանիան առաջին տեղն է բռնում:

Լավ, կոկսացող ածուխի ամենագլխավոր շրջաններն են՝ Ռուրի ավազանը, թուխ ածուխի նույնպիսի շրջանը—Միջին Գերմանիան (**Թյուրինգիա-Սաքսոնական շրջանը**):

Ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը, վորը հսկայական զարգացման է հասել, կենտրոնանում է մեքենաշինարարության վերև հիշված կենտրոններում:

Գերմանիայի **քիմիական արդյունաբերությունն** արտադրանքի վորակով առաջին տեղն է բռնում աշխարհում, իսկ քանակով—յերկրորդ տեղը, զիջելով միայն ՀԱՄՆ-ին:

Քիմիական արտադրությունը կապված է ջրային ույժի և ջրի լայն ոգտագործման հետ: Աշխարհում ամենախոշոր քիմիական գործարանը—Բադենի սոդայի և անիլինի գործարանը— ստեղծվել է Միջին-Հռենոսյան շրջանում: Քիմիական խոշոր արտադրության մի այլ շրջանն է հանդիսանում Միջին Գերմանիայի այն մասը, վորտեղ գտնվում են կալիական աղերի և թուխ ածուխի շերտերը, այսինքն՝ Թյուրինգիա-Սաքսոնական շրջանը:

Տեքստիլ արդյունաբերությունը Գերմանիայում ամենազարգացածն է: Տեքստիլի կարևորագույն ռայոնները Միջին Գերմանիայում են գտնվում (Թյուրինգիա-Սաքսոնական և Սիլեզիայի շրջաններ): Սակայն տեքստիլ ֆաբրիկաներ կան նաև հյուսիսային Գերմանիայի խոշոր քաղաքներում: Իր սարքավորանքով տեքստիլ արդյունաբերությունը հետ է մնում միայն Անգլիայի և ՀԱՄՆ նույն արդյունաբերությունից:

Սննդի արդյունաբերությունը, մանավանդ ճակնդեղի և կարտոֆիլ մշակող արդյունաբերությունը, գտնվում է հումույթի արտադրության վայրերի մոտ (ճակնդեղի—շաքարի արդյունաբերությունն իր ծավալով առաջինն է Յեվրոպայում. առանձնապես նա զարգացած է Սաքսոնիայում, Միջին Ելբայում), իսկ գինեգործությունը—Հյուսիս-Գերմանական դաշտավայրի արևելյան մասում:

1642—4

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Չնայելով անբարենպաստ բնական պայմաններին, Գերմանիան գտնվում է գյուղատնտեսության զարգացման շատ բարձր աստիճանի վրա: Գերակշռում է պտղափոխության բազմադաշտյան սիստեմը: Իր գործածած հանքային պարարտանյութերի քանակությամբ Գերմանիան աշխարհում առաջին տեղն է բռնում: Հացահատիկային կուլտուրաների, արմատապտուղների և տեխնիկական բույսերի բերքատվությունը շատ բարձր է:

Գերմանիայի գյուղատնտեսությունը տիպիկ կապիտալիստական է: Գերմանիայի արևմուտքում, մանավանդ հարավ-արևմուտքում գերակշռում է գյուղացիական մանր հողատիրությունը, արևելքում— խոշոր հողատիրությունը (100 հեկտարից ավելի կալվածքները կազմում են ամբողջ հողերի 45 %-ը): Այստեղ կենտրոնացել է խոշոր, կալվածատիրական տնտեսությունների $^3/_4$-ը: Արևելյան Գերմանիայում շատ են նաև կուլակների հողերը, միևնույն ժամանակ այստեղ շատ է հողազուրկ բատրակությունը:

Արևելյան Գերմանիայի կալվածատիրական խոշոր տնտեսություններում ցանքադաշտերը բռնում են ամբողջ գյուղատնտեսական հողատարածության $^3/_4$ մասը: Լայն չափով օգտագործվում է վարձու բանվորական ույժը: Գյուղատնտեսությունը մեքենայացված և քիմիացված է (հանքային պարարտացումներ): Նույնը զգալի չափով նկատվում է նաև կուլակային տնտեսություններում: Կուլակային այն տնտեսություններում, վորոնք ունեն կաթնատնտեսական և առհասարակ անասնաբուծական թեքում, կան շատ կիսարդյունաբերական ձեռնարկություններ: Կալվածատերերն ու կուլակները մեծ դեր են խաղում այս յերկրի կյանքում, լինելով ամենասև ռեակցիայի, հոգևորականության նեցուկը և ուժեղացնելով ֆաշիզմի կադրերը: Գյուղատնտեսության մեջ կալվածատիրական-կուլակային ճնշման դեմ կանգնած են գյուղատնտեսական պրոլետարիատի հինգ

միլիոն մասսան, չքավոր ու միջակ գյուղացիությունը:

Գյուղատնտեսական բնակչությունից գանձվող տուրքերը (պարտահատուցումները վճարելու համար) քայքայեցին գերմանական մանր ու միջակ հողատերերին, հնարավորություն չտվին նրանց բարձրացնելու իրենց տնտեսությունը:

Հացահատիկային տնտեսության հետ միասին շատ զարգացած է խոտացանը և կերի արմատապտուղների մշակումը, վոր կապված է անասնաբուծության խոշոր նշանակության հետ: Հացահատիկներից գլխավորներն են՝ հաճարը և վարսակը: Նրանք ցանվում են գլխավորապես Գերմանիայի հյուսիսային և արևելյան մասերում: Հարավ-արևմուտքում, գետահովիտների ջրաբեր հողերում ցորեն են ցանում: Ապա պետք հիշատակել ամենուրեք կատարվող կարտոֆիլի և վերջապես՝ շաքարի ճակնդեղի, ծխախոտի, գայլուկի ցանքերը: Ճակնդեղը ցանվում է գլխավորապես յերկրի հարավ-արևելյան անկյունում և Միջին-Գերմանական սարահարթի հյուսիսային ծայրամասի յերկարությամբ: Ծխախոտը ցանվում է հարավում:

Բացի հացահատիկային կուլտուրաներից, կարտոֆիլից ու ճակնդեղից, մեծ տեղ է տրվում նաև բանջարաբուծության,— գլխավորապես արդյունաբերական շրջաններում, խոշոր քաղաքների մոտ: Զարգացած է այգեբուծությունը, իսկ հարավ-արևմտյան Գերմանիայում—նաև խաղողաբուծությունը: Դրանք տեղ ունեն փոքրիկ հողամասերում, բայց ավելի շատ յեկամուտ են տալիս քան արևելքում միջին չափի հողամասերի վրա գոյություն ունեցող յերկրագործությունը:

Անասնաբուծությունը հասել է բարձր մակարդակի: Իրենց քանակությամբ առաջին տեղն են բռնում խոզերն և խոշոր յեղջյուրավոր անասունները: Սակայն Գերմանիային չեն բավականանում սեփական միսն ու յուղը և նա ստիպված է դրանք ներմուծել բավական զգալի քանակությամբ:

Անտառը բաժանված է կտրատվելիք մասերի, վորոնք իրենց հերթին բաժանված են ճանապարհներով: Բացի Բոհեմյան անտառներից, մնացած բոլոր անտառները տնկված են: Գերմանիայի անտառների յերկու յերրորդը փշատերև է: Սաղարթավոր անտառներից գերակշռում են կաղնու և հաճարենու անտառները:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ: Արդյունաբերության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը յեղել է ճանապարհների հաղորդակցության զարգացումը: Կառուցվել են բազմաթիվ յերկաթուղիներ ու խճուղիներ, ոգտագործվել են թե՛ բնական և թե՛ արհեստական ջրային ճանապարհները:

Գերմանիայի յերկաթուղային ցանցը խոշորագույնն է Յեվրոպայում (60 հազար կ.մ., բացի դրանից, ավելի քան 10 հազար կ.մ. յերկարությամբ տորյերկրյա ճանապարհներ): Յերկաթուղային ցանցի խտությամբ Գերմանիան մեկն է առաջիններից (12 կ.մ. յերկաթուղի՝ 100 քառ. կ.մ. տարածության վրա): Յերկաթուղային ցանցի խտությունն ուղղակի կախումն ունի այս կամ այն շրջանի արդյունաբերական զարգացումից:

Շնորհիվ Գերմանիայի կենտրոնական դիրքի, նրա միջով անցնում են մեծ քանակությամբ միջազգային յերկաթուղիներ և այլ ճանապարհներ:

Գերմանիայում հաղորդակցության կարևոր միջոցներ են նաև գետերը, բոլոր արևելյան գետերը միացված են ջրանցքներով: Արևմտյան Գերմանիայում գտնվում է ջրանցքներից խոշորագույնը՝ Դորտմունդ—Եմս անունով (200 կ.մ. յերկարությամբ), վորը Վեստֆալիայի հանքագործարանային— արդյունաբերական շրջանը միացնում է Եմս գետի հետ և սրա միջոցով—Հյուսիսային ծովի հետ: Այս ջրանցքը կազմում է Գերմանիայում Հռենոս գետի արհեստական գետաբերան: Գետերը նավարկելիության տեսակետից բարելավելու և ջրանցքների վրա շատ խոշոր գումարներ են ծախսվում: Նվա-

ճումները խիստ են: Գերմանիայի գետային նավահանգիստները բեռնաշրջանառությամբ ամենակարևորներից են Յեվրոպայում: Առանձնապես աչքի յեն ընկնում Բեռլինի, Համբուրգի և Դուիսբուրգի գետային նավահանգիստները:



Նկ. 13. Գերմանիայի յերկաթուղիների քարտեզ

Գերմանական առևտրի արագ զարգացումը պահանջում եր նաև ծովային նավատորմիղի զարգացում: Վերջինս տեղի ունեցավ վիթխարի արագությամբ: 1914 թվին գերմանական նավատորմիղն անգլիականից հետո առաջին տեղն եր բռնում: Իր տոննաժով գերմանական նավատորմիղը կազմում եր համաշխարհային նավատորմիղի 11 %-ը: Պատերազմից հետո Գերմանիայի առևտրական նավատորմիղը գրավվեց, բայց նրան հաջողվեց 10 տարվա ընթացքում վերականգնել այդ նավատորմիղը և նորից բռնել առաջին տեղերից մեկը: Նավա-

հանգստային քաղաքներից առանձնապես աչքի յեն ընկնում Համբուրգն ու Բրեմենը:

5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Մյուս կապիտալիստական պետությունների մեջ Գերմանիան, վորը պարտվեց համաշխարհային պատերազմում, ամենաթույլ ողակն ե: Նա ուժասպառ ե լինում փոխառությունների վճարման ծանրությունից:

Գերմանական արդյունաբերությունն արտածման համար ավելի շատ ե աշխատում, քան մի վորևե այլ խոշոր պետության արդյունաբերությունը: Ահա թե ինչու համաշխարհային տնտեսական ճգնաժամն առանձնապես ուժեղ յեղավ հենց Գերմանիայում: Մինչև ճգնաժամը գերմանական բուրժուազիան, չափազանց քիչ աշխատավարձ վճարելով բանվորներին, իջեցրեց գերմանական ապրանքների գները և սկսեց այդ ապրանքներն սպառել աշխարհիս բոլոր կարևորագույն շուկաներում: Գերմանական ապրանքները մուտք գործեցին նույնիսկ այնպիսի յերկրներ, ինչպիսին են՝ Չինաստանը, Ավստրալիան, Ինդոնեզիան և այլն:

Սակայն յերկրի ներսում, ռացիոնալիզացիայի, պատերազմից քայքայված արդյունաբերական ապարատի վերասարքավորման առնչությամբ տեղի յեր ունենում բանվորների մասսայական կրճատում: Հսկայական չափերով աճում եյին գործազրկությունն ու աղքատությունը: Ներքին շուկայի ծավալը կրճատվեց ծայրահեղ չափով:

Յերկրի տնտեսական կյանքում հսկայական նշանակություն ունեցան ոտարյերկրյա փոխառությունները (գլխավորապես ՀԱՄՆ-ից):

Գերարտադրության համաշխարհային ճգնաժամն ամենակարճ ժամանակամիջոցում Գերմանիային զրկեց վոչ միայն շուկաներից, այլև արտասահմանյան վարկե-

րից: 1929 թվականից սկսած՝ ճգնաժամն այստեղ ծավալվեց գլխապտույտ արագությամբ: Արդյունաբերության ամենակարևոր ճյուղերի արտադրությունը կրճատվեց ավելի քան կիսով չափ:

1933 թվականին գործազուրկների բանակը մասնակի գործազուրկների հետ միասին կազմում եր մինչև 10 միլլիոն մարդ:

Աղտաջրերի փոսերում գտնված կերակրային մնացորդներով սնվելը, սովամահությունն և ինքնասպանությունը բանվորների միջավայրում ամենօրյա յերևույթներ դարձան:

Փակվում են վիթխարի, տեխնիկայի վերջին խոսքով կառուցված գործարանները, նրանց բակերում խոտ ե բսնում, սքանչելի մեքենաները ծածկվում են ժանգով ու փչանում: Տրանսպորտի բոլոր տեսակները կարծես կաթվածահար են լինում: Բեռնաշրջանառությունն ավելի քան կիսով չափ կրճատվում ե: Մեռա՛ծ են հիանալի նավահանգիստներն ու նավակայանները: Ծովային ու գետային նավատորմիղը քայքայվում ե կայաններում:

Գերմանիան ԽՍՀՄ հետ պահպանում ե աշխույժ առևտրական հարաբերություններ: 1932 թվականին ԽՍՀՄ-ն յերկրորդ տեղը բռնեց Գերմանիայից գնած իր ապրանքներով: Մեր գնած մեքենաների արժեքը հասնում եր Գերմանիայի արտածած մեքենաների արժեքի ավելի քան 50 %-ին: Սակայն 1933 թվին, Գերմանիայում ֆաշիստական հեղաշրջման կապակցությամբ տեղի ունեցան դեպքեր, վորոնք վատ են անդրադառնում խորհրդային-գերմանական առևտրի վրա: Նախ՝ ավելացավ ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների մաքսը, յերկրորդ՝ տեղի ունեցան հարձակումներ Գերմանիայում գտնվող խորհրդային առևտրական հիմնարկների վրա:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերմանիան ավելի շատ կապված է Յեվրոպայի մայր-ցամաքի, քան ծովի հետ, սակայն նրա ծովային հաղորդակցությունն ևս զգալի չափով զարգացել է: Բնական հարստությունները մեծ են և բազմատեսակ, սակայն անհավասարաչափ են բաշխված: Բնակչությունը խիտ է և կենտրոնացված է գլխավորապես քաղաքներում:

Գերմանիայում կապիտալիզմի զարգացումը բարձր մակարդակի հասավ: Այդ զարգացումը տեղի ունեցավ կարճ ժամանակամիջոցում: Նա խիստ տուժեց համաշխարհային պատերազմի հասցրած ծանր կորուստներից: Բարձր զարգացման հասան թե՛ գյուղատնտեսությունը և թե՛ արդյունաբերությունը: Արդյունաբերության մեջ հսկայական կապիտալ կուտակվեց: Ամենից շատ է զարգացած ծանր արդյունաբերությունը, ուժեղ չափով զարգացել են նաև թեթև ինդուստրիայի զանազան ճյուղերը: Գերմանիայում ճգնաժամը շատ ծանր յեղավ:

Ստուգիչ հարցեր

Գերմանիայի հյուսիսային ու հարավային սահմանները լայնության ո՞ր աստիճանների տակ են գտնվում: Ի՞նչ ծովեր կան Գերմանիայի սահմանների մոտ: Ու՞ր են տանում Համբուրգի ծովային ճանապարհները: Գերմանիան ո՞ր պետություններին է սահմանակից: Ֆրանսիայի համեմատությամբ Գերմանիայի դիրքն ինչո՞վ է աննպաստ կամ նպաստավոր:

Ինչո՞ւմ է կայանում Հյուսիսային, Միջին ու Հարավային Գերմանիայի մակերևույթների տարբերությունը: Ի՞նչպես են զետեղված հանածոները: Թվեցեք գլխավոր նավարկելի գետերը: Հունվարի և հուլիսի ի՞նչ իզոթերմեր են անցնում Բեռլինի, Համբուրգի, Քյոնիգսբերգի միջով:

Գերմանիայում գյուղատնտեսության ի՞նչ ճյուղեր կան և այդ ճյուղերն ամենից շատ ո՞րտեղ են տարածված: Սեփական անդամթերքները բավարարո՞ւմ են Գերմանիային: Հետ-պատե-

րազմյան ի՞նչ հանգամանքներ առանձնապես ծանր ազդեցին արդյունաբերության զարգացման վրա: Վորո՞նք են արդյունաբերության գլխավոր ճյուղերը: Վորո՞նք են արդյունաբերական գլխավոր շրջաններն և արդյունաբերական կենտրոնները: Վորտե՞ղ են գտնվում նրանք:

V. Շ Վ Ե Ց Ա Ր Ի Ա

Շվեցարիայի հանրապետությունը (41,3 հազ. քառ. կ.մ. 4 միլիոն բնակիչ) գտնվում է Կենտրոնական Յեվրոպայում, Գերմանիայի, Ավստրիայի, Իտալիայի և Ֆրանսիայի միջև:

Շվեցարիան լեռնոտ յերկիր է: Նրա հարավ-արևելյան մասում գտնվում են Շվեցարական բարձր Ալպյան լեռները, վորոնք բաղկացած են գլխավորապես բյուրեղային տեսակներից (գրանիտից և գղձաքարից) և ձգվում են զուգահեռ շղթաներով (Բեռնի Ալպեր, Պեննինյան Ալպեր, Սեն-Գոտարդ): Ալպյան լեռների գագաթները (գլխավորները—Մոնտե-Ռոզա, Մատտերհորն, Յունգֆրաու) ծածկված են հավերժական ձյունով: Նրանցից իջնում են մեծ սառցադաշտեր: Շվեցարական Ալպերից դեպի հյուսիս գտնվում է բլրոտ մի հարթավայր՝ Միջին-շվեցարական բլրոտ գոտին, վորի հյուսիս-արևմտյան ծայրում բարձրանում է Յուրա կոչված լեռնախումբը:

Շվեցարիայի կլիման միատեսակ չէ: Հովիտներում նա մեղմ է, լեռներում—ցուրտ:

Լեռներից հոսում են շատ գետեր, վորոնք հիդրոէներգիայի խոշոր աղբյուրներ են: Այս հանգամանքի շնորհիվ Շվեցարիայի բոլոր գյուղերի 90 տոկոսն էլեկտրավորված է: Ամենանշանավոր գետերն են Հռենոսը, Ռոնը, Ռեյսը: Հովիտներում կան լճեր, վորոնցից ամենախոշորներն են Ժնևի, Բոդենի և Ֆիրվալդշտետի լճերը: Շվեցարիան արժեքավոր հանածոներ չունի:

Նա ունի բավական զարգացած արդյունաբերություն: Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են տեքստիլը (մետաքս և բամբակեղեն), ժամացույցների արտադրությունը, մեքենաշինարարությունը, ալյումինի արդյունաբերությունը, շոկոլադի արտադրությունը: Մեծ նշանակություն ունի տնայնագործական արդյունաբերությունը: Շվեցարական գործարանային արդյունաբե-

րությունն աշխատում է գլխավորապես ներմուծվող հումքով և լայն չափով ոգտագործում է սպիտակ ածուխի տեղական աղբյուրները:

Գյուղատնտեսության գերակշռող ճյուղն անասնաբուծությունն է—յեղջյուրավոր անասունների բազմացումը, վորը կապված է կաթնատնտեսության հետ (պանրի ու յուղի արտադրություն): Յերկրագործությունը տարածված է միայն հարթավայրերում, դրված է բարձր հիմքերի վրա, բայց բավականաչափ հաց չի տալիս յերկրին: Ցանվում է ցորեն, հաճար, վարսակ, կարտոֆիլ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ: Բեռն—մայրաքաղաքն է, տեքստիլ և շոկոլադի արդյունաբերության կենտրոն: Բազել—տեքստիլ արդյունաբերության կենտրոն: Ցյուրիխ—յերկրի խոշորագույն քաղաքն է, մեքենաշինարարության և տեքստիլ արդյունաբերության կենտրոն: Ժընև—ժամացույցների արտադրության և գինեգործության կենտրոն. այստեղ գտնվում են Ազգերի Լիգայի որգանները: Լոզան—տեքստիլ և թղթի արդյունաբերության կենտրոն:

VI. ԱՎՍՏՐԻԱ

Ավստրիան (84 հազ. քառ. կ.մ. տարածություն, 7 միլիոն բնակիչ) իրենից ներկայացնում է մինչև համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող ավստրո-հունգարական ընդարձակ կայսրության մի մասը: Այդ կայսրության մեջ մտնում եյին՝ այժմյան Ավստրիան, Հունգարիան, Չեխո-Սլովակիան, Լեհաստանի, Ռումինիայի և Հարավ-Սլավիայի մի մասը:

Ավստրիան լեռնոտ է: Այստեղ գտնվում են ավստրիական կամ Արևելյան Ալպերը (վորոնք շվեյցարական բյուրեղային Ալպերից տարբերվում են նրանով, վոր բաղկացած են գլխավորապես կրային տեսակներից): Ավստրիայի միջով հոսում է Դանուբ գետը:

Ավստրիայում կան ոգտակար հանածոներ—յերկաթահանքեր և թուխ ածուխ:

Արդյունաբերության ամենազարգացած ճյուղերն են՝ մեքենաշինարարությունը, մետաղյա ապրանքների արտադրությունը, փայտամշակման և թղթի արդյունաբերությունը:

Գյուղատնտեսության ճյուղերից լեռներում զարգացած է ա-

նասնաբուծությունը՝ կաթնատնտեսական թեքումով, իսկ հարթավայրերում—յերկրագործությունը (հաճարի, ցորենի, վարսակի ու կարտոֆիլի ցանքեր): Զարգացած է նաև անտառային տնտեսությունը:

Վերջին ժամանակներս ավստրիական հանրապետությունն արագությամբ գնում է ֆաշիզացիայի ճանապարհով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ: Վիեննա (2 միլիոն բնակիչ)—մայրաքաղաքն է, մեքենաշինարարության և արդյունաբերական զանազան ճյուղերի կենտրոնը: Գրաց—մետաղամշակման, մեքենաշինարարության և տեքստիլ արդյունաբերության կենտրոն: Ինսբուրգ—տեքստիլ արդյունաբերության կենտրոն:

VII. ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարիան (93 հազար քառ. կ.մ. տարածություն, 8,5 միլիոն բնակիչ) իբրև անկախ պետություն, կազմվեց 1918 թվականին, Ավստրո-Հունգարիայի քայքայումից հետո:

Հունգարական դաշտավայրում հոսում է ջրառատ Դանուբ գետը և նրա Տիսսա կոչված վտակը:

Ժողովրդական տնտեսության մեջ գերակշռում է գյուղատնտեսությունը,—մշակվում է յեգիպտացորեն, ցորեն, ինչպես նաև ծխախոտ, շաքարի ճակնդեղ և խաղող: Կալվածատիրական ու կուլակային հողերը Հունգարիայում գերակշռում են—70 %: Բացի յերկրագործությունից, բավական զարգացած է անասնաբուծությունը, մանավանդ խոզաբուծությունը:

Արդյունաբերական ճյուղերից հիշատակելի յեն աղորիքային, [illegible] շաքարի, գարեջրի և գինու արդյունաբերությունը:

Գլխավոր քաղաքներն են՝ Բուդապեշտը (մայրաքաղաք) և Սեգեդինը:

1919 թվականին Հունգարիայում կազմակերպվեց խորհրդային հանրապետություն, վորը գոյություն ունեցավ մոտ 3 ամիս. այնուհետև տապալվեց ոտարերկրյա (ռումինական) զորքերի ոգնությամբ: Այն ժամանակից սկսած՝ Հունգարիայում տիրում է ֆաշիստական դիկտատուրան և դաժան տեռորը:

VIII. ՉԵԽՈ-ՍԼՈՎԱԿԻԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեխո-սլովակյան պետությունը կազմվել է համաշխարհային պատերազմից հետո, 1918 թվականին, նախկին Ավստրո-Հունգարական կայսրության մասերից: Չեխո-Սլովակիան գտնվում է Կենտրոնական Յեվրոպայում, Դանուբի ավազանում: Նրա տերիտորիան նման է մի նեղ գոտու, վորը ձգվում է արևմուտքից արևելք: Նրա հարևաններն են՝ արևմուտքից—Գերմանիան, հյուսիսից—Գերմանիան և Լեհաստանը, արևելքից—Ռումինիան, հարավից—Հունգարիան և Ավստրիան: Չեխո-Սլովակիան դեպի ծով յելք չունի:

Չեխո-Սլովակիայի ընդհանուր տարածությունը 140,4 հազար քառ. կ.մ. է, բնակչությունը—մոտ 15 միլիոն: Բնակչության ազգային կազմը բավական խայտաբղետ է. բացի չեխերից, վորոնք ամբողջ բնակչության մոտ 47 տոկոսն են կազմում, այստեղ ապրում են գերմանացիներ,—բնակչության 26 %-ը, սլովակներ—մոտ 16 %, հունգարացիներ— 6 %, ռուսիններ (ուկրաինացիներ)—4 %, ինչպես նաև հրեաներ և լեհեր:

Չեխո-Սլովակիան բաժանվում է հետևյալ մասերի—արևմտյան մաս, վորը յերեք կողմերով մտնում է գերմանական տերիտորիայի մեջ և վորը կոչվում է Չեխիա կամ Բոհեմիա: Արևելյան կողմից նրան կից են՝ հյուսիսից, գերմանական սահմանի յերկարությամբ Սիլեզիան, կենտրոնում, հարավից, ավստրիական սահմանի յերկարությամբ— Մորավիան: Այնուհետև դեպի արևելք, Լեհաստանի և Հունգարիայի միջև գտնվում է Սլովակիան և դեպի ավելի արևելք, Ռումինիայի տերիտորիայի մեջ խորացած, գտնվում է Մերձկարպատյան Ռուսիան (կամ Մերձ-Կարպատյան Ուկրաինան):

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ. Չեխիայում—Պրագա (մայրաքաղաք), Պիլզեն: Մորավիայում— Բռնո: Սլովակիայում— Բրատիսլավա:

.2 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Չեխո-Սլովակիայի մակերևույթը բազմազան է: Արևմտյան մասը—Չեխիան—իրենից ներկայացնում է Բոհեմյան բարձր սա-

րահարթը, վորը յերեք կողմից շրջապատված է միջին բարձրության լեռնախմբերով (Բոհեմյան անտառ, Հանքային և Հսկա կոչված լեռներ): Մորավիան հարթավայր է, ծագել է ջրաբեր նյութերից, տեղ-տեղ ցածրադիր է: Սիլեզիան լեռնային ռայոն է: Սլովակիայի մեծ մասը բռնում են Տատրա կոչված բարձր սարահարթը և Կարպատյան լեռների ճյուղավորումները, իսկ հարավում միանում է Հունգարական դաշտավայրին: Մերձ-Կարպատյան Ռուսիան լեռնային շրջան է:

Չեխո-Սլովակիայի կլիման ցամաքային է, Չեխիայում չափավոր է, իսկ Սլովակիայում և Մերձ-Կարպատյան Ռուսիայում ավելի ցուրտ:

Յերկրի մեծ մասում հողը արգավանդ է:

Գետերը հոսում են զանազան ուղղությամբ.—Ելբան դեպի հյուսիս, Մորավան—դեպի հարավ: Նրանք արագահոս են և հանդիսանում են հիդրո-էներգիայի մի հզոր աղբյուր:

Չեխո-Սլովակիան ունի հանածոների մեծ պաշար: Չեխիայում, Մորավիայում և Սիլեզիայում գտնվում են քարածուխի հանքերը: Չեխո-Սլովակիայի քարածուխի վորակը բարձր չէ: Կա նաև մեծ քանակությամբ թուխ ածուխ: Բացի ածուխից, կան նաև զգալի քանակությամբ յերկաթի, պղնձի և մարգանեցի հանքեր, վոլֆրամ և ծարիր, ինչպես նաև կաոլինի և հրատոկուն կավեր:

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Չեխո-Սլովակիան ինդուստրիալ-ագրարային յերկիր է: Նրա արդյունաբերությունը, ունենալով վոչ միայն թեթև ճյուղեր, այլև մետաղագործություն և մեքենաշինարարություն, գտնվում է զարգացման բարձր մակարդակի վրա: Սակայն ինդուստրացումը միաչափ չի ընդգրկել յերկրի տարբեր մասերը: Սլովակիայում և Մերձ-Կարպատյան Ռուսիայում արդյունաբերությունը թույլ է զարգացած և այստեղ խիստ գերակշռում է գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության ճյուղերից առաջին տեղն են բռնում մետաղագործությունը (սև մետաղներ) և մեքենաշինարարությունը: Մետաղագործությունը (թուջի և պողպատի արտադրությունը) զարգացած է Չեխիայում, Մորավիայում և Սիլեզիայում:

Խոշորագույն գործարանները գտնվում են Վիտկովիցում (20 հազար բանվոր) և Կլադնոյում (10 հազար բանվոր):

Մեքենաշինարարության զանազան ճյուղերը կենտրոնացված են Պրագայում, Պիլզենում, Բռնոյում, Մորավում, Ոստրավում: Այդ ճյուղերն արտադրում են շաքարի, գարեջրի և գինու գործարանների սարքավորանք, շոգեկաթսաներ, ամեն տեսակ շարժիչներ, տուրբիններ, պոմպեր, շոգետարներ ու վագոններ: Առանձնակի դեր է խաղում գյուղատնտեսական մեքենաշինարարությունը, վորը վաղուց զարգացած է Չեխիայում և Մորավիայում: Պատերազմից հետո բավական զարգացել է ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը: Հատկապես պետք է հիշել Շկոդի խոշորագույն ռազմա-արդյունաբերական գործարանները (Բռնոյում), վորոնք պատերազմից հետո անցան ֆրանսիական և մասամբ անգլիական կապիտալիստների ձեռքը: Այս գործարանները մասամբ տալիս են լոկոմոտիվներ, տրակտորներ, լոկոմոբիլներ և աերոպլաններ, բայց նրանց գլխավոր արտադրանքը կազմում են հրանոթները, արկերը, գնդացիրները, տանկերը, ռազմագրահ և այլն, վորոնք մատակարարվում են զանազան յերկրների իմպերիալիստներին:

Չեխո-Սլովակիայում զարգացած է նաև ճակնդեղի— շաքարի արդյունաբերությունը, վորով նա յերկրորդ տեղն է բռնում աշխարհում, ապա գարեջրի (կենտրոնը Պիլզեն քաղաքն է), բամբակեղենի, բրդյա գործվածքների, ապակու, հախճապակու, փայտամշակման, գրենական պիտույքների արտադրությունը:

Չեխո-Սլովակիայի արդյունաբերության մեջ կապիտալի կենտրոնացումը բարձր մակարդակի յե հասել:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը 1929 թվին հարվածեց Չեխո-Սլովակիայի տեքստիլ արդյունաբերության և թեթև ինդուստրիայի այլ ճյուղերին, իսկ 1931—32 թ.թ. ընդգրկեց նաև ծանր ինդուստրիայի ճյուղերը, առաջ բերելով յերկրի ամբողջ պրոլետարիատի 35—40 %-ի գործազրկություն:

Չեխո-Սլովակիայի գյուղատնտեսությունը բնորոշվում է նրանով, վոր գերակշռող է կալվածատիրական ու կուլակային հողատիրությունը, վորը կազմում է բոլոր տնտեսությունների 13 %-ը և բռնում է ամբողջ գյուղատնտեսական տարածության

60 %-ը: Չքավոր տնտեսությունները կազմում են բոլոր տնտեսությունների 71 %-ը. նրանց $^1/_3$-ը թզուկային և ունի 1 հեկտարից պակաս հող: Կալվածատիրական ու կուլակային խոշոր տնտեսությունները կազմակերպված են կապիտալիստական հիմունքներով: Այնտեղ լայն չափով գործադրվում է բատրակների վարձու աշխատանքը (վերջինից ոգտվում են նաև միջակ տնտեսությունները), բազմադաշտյան սիստեմը, գյուղատնտեսական մեքենաներն և արհեստական պարարտացումները: Այդ տնտեսություններում յերկրագործության ընդհանուր մակարդակը և բերքատվությունը բարձր են: Չքավոր տնտեսությունները, վորոնք առանձնապես գերակշռող թիվ են կազմում Մերձ-Կարպատյան Ռուսիայում և Սլովակիայում, քարշ են տալիս իրենց խղճուկ գոյությունը, չկարողանալով գործադրել վոչ բազմադաշտյան սիստեմը, վոչ մեքենաները և վոչ ել արհեստական պարարտացումները:

Գյուղատնտեսական գլխավոր հացահատիկային կուլտուրաներն են՝ հաճարը, վարսակը, ապա գարին ու ցորենը: Տարածված են նաև շաքարի ճակնդեղի և գայլուկի ցանքերը:

Մարգագետինների մշակության և կերաբույսերի ցանքերի շնորհիվ զարգացած է անասնաբուծությունը: Բազմացվում են խոշոր յեղջյուրավոր անասուններ և խոզեր: Մեծ դեր է խաղում անտառային տնտեսությունը: Անտառները բռնում են յերկրի ամբողջ տարածության ավելի քան 30 %-ը:

Չեխո-Սլովակիայի արտաքին առևտուրը բնորոշ է նրանով, վոր նա ներմուծում է գյուղատնտեսական արտադրանք—բամբակ, բուրդ, հաց, վորոնք չեն բավականանում յերկրի ներսում, և արտածում է ածուխ ու գործարանային ապրանքներ,—բամբակյա և բրդյա գործվածքներ, մեքենաներ, ապակի, հախճապակի, գարեջուր և այլն: Ապրանքները ներմուծվում են գլխավորապես Գերմանիայից, Ավստրիայից, ՀԱՄՆ-ից: Արտածվում են Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Անգլիա:

4. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Չեխո-Սլովակիան ծագեց 1918 թվին, Ավստրո-Հունգարիայի ավերակների վրա, իբրև բուրժուական հանրապետություն: Նա ստեղծեց բուրժուազիայի ուժեղ դիկտատուրա, վորը հնարավո-

ություն ստացավ մտցնել կապիտալիստական «ռացիոնալիզացիա», հիմնված բանվորների սաստիկ շահագործման վրա: Համաշխարհային ճգնաժամի հետևանքները—գործազրկությունը, աշխատավարձի իջեցումը, բանվորական օրվա յերկարացումը, գյուղատնտեսական մթերքների գների անկումը—այս բոլորն առաջ բերեց դասակարգային հակասությունների սրում և հեղափոխական շարժման վերելք թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Չեխո-Սլովակիայի կոմունիստական կուսակցությունն իր բազմամարդությամբ յերկրորդ տեղն է բռնում կապիտալիստական յերկրների կոմկուսակցությունների մեջ և ընտրությունների ժամանակ 1 միլիոն քվե յե ստանում:

Լինելով Ֆրանսիայի վասսալը, Չեխո-Սլովակիան մտնում է այսպես կոչված՝ Փոքր Անտանտայի մեջ, այսինքն դաշնակից է Հարավ-Սլավիային ու Ռումինիային: Այդ դաշնակցությունը նպատակ ունի Յեվրոպայում տարածել ֆրանսիական ազդեցությունը, օգնել Ֆրանսիային՝ Գերմանիայի և Իտալիայի դեմ նրա մղած պայքարում և ռազմական ինտերվենցիա պատրաստել Խորհրդային Միության դեմ (իզուր չէ, վոր Չեխո-Սլովակիայում ապաստան են գտել բազմաթիվ ռուս և ուկրաինացի սպիտակգվարդիական էմիգրանտներ): Չեխո-Սլովակիան, ինչպես և Փոքր Անտանտայի մյուս յերկրները, մեզ հետ նորմալ դիվանագիտական հարաբերություններ չեն սկսել:

IX. ԻՍՊԱՆԻԱ

Իսպանիան (505 հազար քառ. կ. մ. տարածություն, 22 միլիոն բնակիչ) գտնվում է Պիրենյան թերակղզու վրա:

Իսպանիայի մեծ մասը սարահարթ է, վորը ցածրանում է դեպի արևմուտք: Այդ սարահարթից դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է Եմբրո գետի հովիտը, իսկ սրա մի կողմում—Պիրենյան բարձր լեռները, վորոնք Իսպանիան բաժանում են Յեվրոպայի մայր-ցամաքից: Սարահարթից դեպի հարավ գտնվում է Գվադալկվիվեր գետի հովիտը, վորի մի կողմում— Սիերրա-Նեվադա լեռները, վորոնք տարածվում են մինչև Միջերկրական ծովի ափերը:

Սարահարթի կլիման ցամաքային է, ցուրտ ձմեռով և շոգ

ամառով: Արևելյան և արևմտյան ծայրամասերի կլիման յենթակա յե Միջերկրական ծովի ազդեցության, մեղմ է: Թե՛ մեկ և թե՛ մյուս տեղում մթնոլորտային տեղումները քիչ են: Յերկրի հյուսիս-արևմտյան մասն ունի ովկիանոսային խոնավ կլիմա և այստեղ տարվա բոլոր յեղանակներին անձրևներ են գալիս:

Գետերը,—Դուերո, Տախո, Գվադիանա, Գվադալկիվեր, Եբրո,—ջրառատ չեն:

Իսպանիան հարուստ է յերկաթահանքերով, քարածուխով, սնդիկով, պղնձով, արճիճով, արծաթով, անագով, ցինկով:

Իսպանիայի արդյունաբերությունը չնչին է: Ամենազարգացածը հանքահանման արդյունաբերությունն է, վորտեղ գործադրվում է նաև օտար, գլխավորապես անգլիական կապիտալը (հանվում է պղինձ, յերկաթահանք, արճիճ, սնդիկ, վորոնք արտածվում են ուրիշ յերկրներ) և վերամշակող ճյուղերից—տեքստիլ, մետաղամշակման, շաքարի, ծխախոտի և կաշվի արտադրությունը:

Գյուղատնտեսությունը, վորը հանդիսանում է Իսպանիայի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը, ունի գլխավորապես խաղողաբուծական և գինեգործական (մանավանդ հարավում—Խերես, Մալագա), ձիթապտղի բազմացման (ձիթենի ծառեր) և հարավային պտուղների,—նարնջի, նշի և թուզի ճյուղերը: Գինեգործությամբ Իսպանիան յերրորդ տեղն է բռնում Ֆրանսիայից և Իտալիայից հետո: Գյուղատնտեսության մեջ գոյություն ունի կալվածատիրական խոշոր հողատիրություն, գյուղացիների հողազրկություն և հողի կապալառություն՝ ստրկական պայմաններով: Բատրակությունն ստվար թիվ է կազմում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ: Մադրիդ (800 հազար բնակիչ)—մայրաքաղաքն է, տեքստիլ արդյունաբերության կենտրոնը: Բարցելոնա (800 հազ. բնակիչ)—նավահանգիստ, տեքստիլ և մետաղամշակման արդյունաբերության կենտրոն: Գրենադա—տեքստիլ արդյունաբերության կենտրոն: Սեվիլիա—ծխախոտի, տեքստիլ, կաշվի արդյունաբերության կենտրոն: Վալենսիա—նավահանգիստ, տեքստիլ և մետաղամշակման արդյունաբերության կենտրոն: Մալագա—նավահանգիստ. այստեղից արտածվում է գինի և պտուղներ:

Աֆրիկայում Իսպանիային պատկանում են մի շարք գաղութներ—Իսպանական Մարոկկո, Արևմտյան Սահարա, Իսպանական Գվինեա և Կանարյան կղզիներ:

1931 թվականի ապրիլին Իսպանիայում տեղի ունեցավ հեղափոխություն, վորով տապալվեց միապետությունն և հաստատվեց բուրժուական հանրապետություն: Սակայն Իսպանիայի պրոլետարիատն ու գյուղացիությունը հեղափոխականացան և չեն բավարարվում ռեֆորմների խոստումներով, վորոնք տալիս է հանրապետական, եյապես հակահեղափոխական կառավարությունը:

X. ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Պորտուգալիան (92 հազար քառ. կ.մ., 6,2 միլլիոն բնակիչ) գրավում է Պիրենյան թերակղզու արևմտյան մասը: Պորտուգալիան սարահարթ է: Այստեղ կլիման ովկիանոսային է, մեղմ, մթնոլորտային առատ տեղումներով:

Կան բավական շատ հանածո հարստություններ.— պղինձ, անագ, արճիճ, յերկաթ, վոլֆրամ, մարգանեց:

Ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Մշակվում են հարավային պտուղներ—ձիթապտուղ, նարինջ, թուզ, անանաս և այլն, ինչպես նաև խաղող (գլխավոր կենտրոնները—Օպորտո և Մադերա): Մեծ դեր է խաղում խցանատու կաղնու մշակումը և խցանատու կեղևի հավաքումը: Հողային հարաբերություններում, ինչպես և Իսպանիայում, պահպանվում են ֆեոդալիզմի մնացորդները: Շատ մեծ նշանակություն ունի ձկնորսությունը (հրճուկ և թյունիկ):

Արդյունաբերությունը թույլ է զարգացած: Բացի լեռնային արդյունաբերությունից, զարգացած է բամբակյա գործվածքների, սննդի (ձիթենու յուղ, պահածոներ) և կղմինդրի արտադրությունը:

Պորտուգալիայի տնտեսությունն ամբողջովին յենթարկված է անգլիական կապիտալին:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ: Լիսսաբոն (500 հազ. բնակիչ) — մայրաքաղաքն է, նավահանգիստ: Օպորտո— նավահանգիստ, տեքստիլ արդյունաբերության և գինեգործության կենտրոն:

Պորտուգալիան գաղութներ ունի Աֆրիկայում—Պորտուգալական Գվինեա, Անգոլա, Մոզամբիկ և մի քանի կղզիներ: Ասիայում—մի քանի գյուղեր Հնդկաստանի արևմտյան ափին և Խաղաղ ովկիանոսի կղզիներում:

XI. ԻՏԱԼԻԱ

Յեվրոպայում— 312 ½ հազար քառ. կ.մ., բնակչությունը—41 միլլիոն, գաղութները (Աֆրիկայում)—2 միլլիոն քառ. կ.մ., բնակչությունը—2 միլլիոն:

1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Իտալիան մնացած Յեվրոպայից բաժանված է Ալպյան լեռներով, վորոնք աղեղաձև սահմանագծում են նրան հյուսիսից: Մյուս կողմերից նա շրջապատված է Միջերկրական ծովի մասերով և այդ ծովի մեջ կենտրոնական դիրք ունի: Այդ դիրքն առանձնապես նպաստավոր եր Հռոմեական կայսրության ժամանակ, յերբ համաշխարհային առևտուրը կենտրոնացած եր Միջերկրական ծովի շուրջը: Նպաստավոր եր նաև XII—XV դարերում, յերբ Հյուսիսային Իտալիայում առաջ յեկան մի քանի քաղաքներ, վորոնք հարստացան Մերձավոր Արևելքի հետ կատարվող առևտրի շնորհիվ: Ատլանտյան ովկիանոսի վրա առևտրի ծաղկման շրջանում Միջերկրական ծովի վրա կատարվող առևտուրն ընկավ: Սուեզի ջրանցքի փորելը,—վորով Միջերկրական ծովը դարձավ հաղորդակցության աշխույժ ճանապարհ, խիստ բարելավեց Իտալիայի դրությունը:

Իտալիայի ծովափնյա գիծն ավելի շատ կտրտված է արևմուտքում, քան արևելքում: Արևմտյան կողմում Իտալիայի գլխավոր նավահանգիստներն են Ջենովան և Նեապոլը: Շնորհիվ Ալպյան լեռներով անցկացրած յերկաթուղու, Ջենովան նավահանգիստ դարձավ նաև Միջին Յեվրոպայի համար: Արևելյան կողմում, Ադրիատիկ ծովի հյուսիսում կա յերկու նավահանգիստ—

Վենետիկ և Տրիեստ (վերջինս Իտալիային անցել եր Ավստրիայից)։

Իտալիան բաղկացած է յերկու տարբեր մասերից․— ցամաքային լայն մասը, վորը բռնում է Ալպյան լեռների հարավային լանջերը,— և Լոմբարդական դաշտավայր, ինչպես և Ապենինյան թերակղզու նեղ մասը։ Թերակղզու մասին են պատկանում նաև վոչ հեռու գտնվող կղզիները— Սիցիլիան, Սարդինիան և այլն։ Ցամաքային մասն ունի միջին-յեվրոպական, ցամաքային կլիմա (ձմեռվա բարեխառնությունը 0-ից մինչև +2°, ամառվա— մինչև +25°) և միջին յեվրոպական բուսականություն (բացի բրնձից)։ Բացառություն է կազմում միայն լճերի շրջանը, վորը գտնվում է Ալպյան լեռների աղեղի ներսում։ Այդ լեռները պաշտպանում են նրան սառը քամիներից, այս պատճառով ձմեռն այստեղ տաք է (սա կուրորտների վայր է), բուսականությունը հարավային է (ձիթենու և կիտրոնի ծառեր, ցածր արմավենիներ)։ Իտալիայի թերակղզին ու կղզիները ցածրադիր մասերում ունեն յենթա-արևադարձային կլիմա։

Թերակղզու վրա մշակվում են կիտրոնի, նարնջի, ձիթենու ծառեր և խաղող։ Սիցիլիայում բռնում են արմավենիներ, կակտուսներ, բանաններ, շաքարյեղեգն, բամբակ։

Տարբեր են նաև ցամաքային մասի և թերակղզու հողերը։ Լոմբարդական դաշտավայրում հողերը կազմված են ջրաբեր նյութերից և շատ արգավանդ են։ Ապենինյան թերակղզու մեծ մասը բռնում են Ապենինյան կրային լեռները։ Այստեղի հողերը չոր են և սակավաբերրի, վոչ փարթամ մարգագետիններն ոգտագործվում են վոչխարաբուծության համար։ Դաշտավայրերում կան արգավանդ, կարմրավուն հողեր, նաև այնպիսի հողեր, վորոնք առաջացել են հրաբխային տեսակների քայքայումից (Իտալիայում կան շատ հրաբուխներ, վորոնցից գործում են՝ Վեզուվը՝ Նեապոլիսի մոտ և Ետնան— Սիցիլիա կղզու վրա)։

ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Սրանք Իտալիայում չնչին են։ Քարածուխ գրեթե բոլորովին չկա։ Արդյունաբերությունը կարող եր զարգանալ միայն ներմուծվող քարածուխով (վորը շատ եժան բերվում եր անգլիական նավերով, վորոնցով փոխադրվում եր իբրև բալլաստ)։ Հետագայում արդյունաբերության համար ոգտագործվեց լեռնային գետակների ուժն իբրև ելեկտրո-եներգիա։ Լոմբարդիայում զարգացավ տեքստիլ արդյունաբերությունը շնորհիվ այն հիդրոեներգիայի, վորը ստացվում եր Ալպյան լանջերում և այստեղից ելեկտրոլարերով փոխադրվում եր տեղերը։

Իտալիայի միակ հանածո հարստությունը ծծումբն է, վորը գտնվում է Հարավային Սիցիլիայում։ Վաղուց չեր, յերբ Սիցիլիայի ծծումբը բավարարում եր ամբողջ աշխարհի պահանջի 4/5-ը․ այժմ Սիցիլիան Միացյալ Նահանգներից հետո յերկրորդական տեղ է բռնում։

2․ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մինչև համաշխարհային պատերազմն Իտալիան ագրարային յերկիր եր, վորտեղ ոտար (գլխավորապես գերմանական) կապիտալի ոգնությամբ զարգացնում եր արդյունաբերաթյունը։ 1914—1918 և 1923—1925 թվականների ընթացքում իտալական արդյունաբերությունը մեծ հաջողություններ ունեցավ։

Իտալիայում զարգանում են արդյունաբերական նոր ճյուղեր,— ելեկտրոմետաղագործություն, քիմիական արդյունաբերություն, ավտոմոբիլների շինարարություն, ավիաշինարարություն։ Իտալական արդյունաբերության հին ճյուղերը,— մետաքսագործությունը, բամբակյա ու բրդյա գործվածքների, ինչպես նաև սննդի արդյունաբերությունը,— նույնպես աճել են։

Իտալիայի ինդուստրացմանը նպաստել է հետևյալը․— Պատերազմի ժամանակ անհրաժեշտ եր սպասարկել ռազմական կարիքներին, իսկ դա ստիպում եր արագացնել ռազմական արդյունաբերության զարգացումը․

հետ պատերազմյան տարիներում իտալական ֆաշիզմը պատրաստվում էր նոր իմպերիալիստական պատերազմի և դա կապված էր ռազմական արդյունաբերության հետագա զարգացման հետ։ Բացի դրանից, չափազանց բարձր մաքսեր սահմանվեցին արտասահմանից ներմուծվող ապրանքների վրա։ Իտալիայում վառելիքի ու յերկաթահանքի բացակայությունը, վորը արգելակում էր ծանր արդյունաբերության զարգացումը, լրացվեց նրանով, վոր այնտեղ լայնորեն ոգտագործվեց ջրի եներգիան,—կառուցվեցին հիդրո-ելեկտրոկայաններ, ինչպես նաև հանքեր ներմուծվեցին արտասահմանից։

Արդյունաբերության հիմնական մասը կենտրոնացված է Հյուսիսային Իտալիայում (Լոմբարդիայում)։ Այստեղ են գտնվում հին տեքստիլ ճյուղերը,—մետաքսե, բամբակե, բրդե, վուշի և ջուտի առարկաների արտադրությունը։ Այստեղ է կառուցված նաև հիդրոելեկտրոկայանների մեծ մասը և ստեղծվել են մետաղագործական, մեքենաշինարարական (ավտո և ավիացիոն) և քիմիական գործարանները։ Այստեղ արդյունաբերական գլխավոր կենտրոններն են՝ Միլանը և Թուրինը։ Տրիեստում զարգացած է նավաշինարարությունը։

Արդյունաբերության նոր ճյուղերը, հների համեմատությամբ, ունեն շատ ավելի բարձր տեխնիկական մակարդակ։ Կապիտալի կենտրոնացումը տեղի յե ունենում բոլոր ճյուղերում. խոշոր ձեռնարկությունների մեծ մասը միացել է սինդիկատներում ու կոնցերններում և յենթարկվում է բանկային կապիտալին։

Իտալական արդյունաբերության աճումը դադարեց 1925 թվից։ Շնորհիվ ներքին շուկայի թույլ ծավալման և Իտալիայի արտաքին շուկաների բացակայության, արդեն 1925 թվականին կրճատվեց արդյունաբերության արտադրանքի քանակը։ Համաշխարհային ճգնաժամը 1928 թվից սկսած՝ բոլորովին սեղմեց իտալական արդյունաբերությունը, բացի նրա ռազմական ճյուղերից։

Իտալիան նպաստավոր պայմաններ ունի գյուղատնտեսության զարգացման համար։ Սակայն այնտեղ գյուղատնտեսության մակարդակը բարձր չէ, մեքենաները և արհեստական պարարտացումները լայն չափով չեն գործադրվում և բերքատվությունը ցածր է։ Այս հետամնացությունը բացատրվում է գլխավորապես հողատիրության ձևով և տնտեսավարման պայմաններով։ Իտալիայում խիստ գերակշռում է խոշոր կալվածատիրական հողատիրությունը, սակայն կալվածատերերը հաճախ չեն վարում իրենց տնտեսությունը, այլ հողը կապալով տալիս են գյուղացիներին։ Գյուղացիական հողատիրությունը զարգացած է միայն հյուսիսում, Լոմբարդիայում։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը հողազուրկ է, կամ ունի մանր ու մանրագույն հողամասեր և իր տնտեսությունը վարում է կապալով վերցրած հողի վրա։ Գյուղական տնտեսությունների վարողների ընդհանուր թվի հանդեպ կապալառու գյուղացիները կազմում են 77 %։ Կապալվարձը կազմում է բերքի 22-ից մինչև 38 %-ը, իսկ հարավում—ավելի բարձր։ Շատ հողազուրկ գյուղացիներ դառնում են բատրակներ, ստանալով ամենաչնչին վարձատրություն։ Իտալական բատրակների թիվը հասնում է 5—6 միլիոնի։ Իտալական շատ գյուղացիներ (մինչև պատերազմը տարեկան 600—700 հազար, այժմ—250 հազար) գոյության աղբյուր չեն գտնում իրենց հայրենիքում և գաղթում են արտասահման—Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Ֆրանսիա, Թունիս (Աֆրիկա)։

Հասկանալի յե, վոր այս պայմաններում գյուղացին իր թզուկային տնտեսությունը չի կարող դնել ժամանակակից տեխնիկայի մակարդակի վրա։ Իսկ կալվածատերերն ել, յեթե նույնիսկ իրենց հողը կապալով չեն տալիս, գերադասում են ոգտագործել բատրակների եժան աշխատանքը, քան թե կապիտալ ծախսել կատարելագործված մեքենաներ, տրակտորներ և այլն ձեռք բերելու համար։

Ցանքերի տարածության կեսը կազմում են հացահատիկային կուլտուրաները, վորոնցից գլխավորն է ցորենը, իսկ յերկրորդականները — յեգիպտացորենն ու բրինձը, հացահատիկային կուլտուրաները ցանվում են հյուսիսային Իտալիայում, Լոմբարդիայի դաշտավայրի արգավանդ, ջրաբեր հողերում: Բրինձը, վորը մեծ քանակությամբ խոնավություն է պահանջում, մշակվում է ամենացածրադիր տեղերում, Պո գետի յերկարությամբ: Լոմբարդիայում մշակվում է նաև շաքարի ճակընդեղ, խաղող և թթենի: Վերջինս մշակումը կապված է մետաքսագործության զարգացման հետ: Այս նույն վայրում, Ալպյան լեռնալանջերում և Պո գետի ափերում զարգացած է կաթնագործական անասնաբուծությունը:

Ապենինյան թերակղզու վրա, վորն ավելի քիչ խոնավություն ունի, քան Լոմբարդիան, գլխավոր կուլտուրաներն են՝ ձիթապտուղը (ձիթենի ծառ), խաղողը, դեղձը, թուզը, նուշը, իսկ Նեապոլիսից դեպի հարավ— նարինջն ու կիտրոնը: Այստեղ, հարթավայրերում ցանվում է աշնանացան ցորեն, վորը յերկրորդական դեր է խաղում: Ապենինյան լեռներում բազմացվում են վոչխարներ, այծեր ու էշեր:

Իտալական գյուղատնտեսության հացահատիկային կուլտուրաները միայն 75 %-ով են բավարարում յերկրի կարիքը: Վերջինս լիովին բավարարելու համար Իտալիան ցորեն է ներմուծում արտասահմանից: Պտուղներից նա արտածում է: Սակայն գյուղատնտեսության ցածր մակարդակն այն հետևանքն է ունենում, վոր Իտալիան իր խաղողի այգիների տարածությամբ առաջին տեղը բռնելով աշխարհում, իր հավաքած խաղողով և գինու արտադրությամբ յերկրորդ տեղն է բռնում Ֆրանսիայից հետո, իսկ իտալական գինու, ինչպես նաև ձիթայուղի ցածր վորակը խանգարում է դրանց սպառմանը համաշխարհային շուկայում և դրանք չեն կարողանում մրցել մյուս յերկրների գինու և ձիթենու յուղի հետ:

Համաշխարհային ճգնաժամը, վորը խիստ պակասեցրեց գյուղատնտեսական արտադրանքի պահանջը և գցեց նրա գները, հսկայական չափով քայքայեց առանց այն ել աղքատ իտալական գյուղացիներին, կրճատեց ցանքերի տարածությունները, թուլացրեց կուլտուրաների մշակման և բերքատվության բարձրացման աշխատանքը:

Իտալիան ունի յերկաթուղիների և խճուղիների լավ ցանց, մանավանդ արդյունաբերական ռայոններում: Իտալիայում նավարկելի գետերը քիչ են: Ծովային տրանսպորտը մեծ դեր է խաղում: Իր ծովային առևտրական նավատորմիղով Իտալիան պատերազմից հետո հինգերորդ տեղը բռնեց իմպերիալիստական պետությունների մեջ: Ամենանշանավոր ծովային նավահանգիստներն են՝ Ջենովա, Տրիեստ, Ֆիումե, Նեապոլիս, Լիվորնո:

Իտալիայի արտաքին առևտուրը բնորոշվում է նրանով, վոր ներմուծումը գերակշռում է արտածման: Իտալիան ներմուծում է ցորեն և արդյունաբերության համար հումք,— բամբակ, բուրդ, ածուխ, յերկաթ և այլ մետաղներ, նավթ, մեքենաներ: Արտածում է մետաքս, բամբակյա գործվածքներ, ավտոմոբիլներ, գինի, պտուղներ, բանջարեղեն, ներմուծում է գլխավորապես ՀԱՄՆ-ից, Գերմանիայից, Անգլիայից, Ֆրանսիայից և Արգենտինայից: Արտածում է Գերմանիա, Ֆրանսիա, ՀԱՄՆ, Շվեյցարիա, Անգլիա և Բալկանյան յերկրները:

Ճգնաժամը խիստ կրճատեց Իտալիայի արտաքին առևտուրը:

3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո առաջին տարիներում դասակարգային սրված հակասու-

թյունները, տնտեսական քայքայումը և աշխատավորների դրության վատթարացումն առաջ բերին հեղափոխական շարժման բուռն վերելք՝ պրոլետարիատի և գյուղացիության մեջ։ 1921 թվականին բանվորներն սկսեցին գրավել ֆաբրիկաներն ու գործարանները, գյուղացիներն ու բատրակները—կալվածատերերի հողերը։ Այն ժամանակ իտալական կոմկուսակցությունը շատ թույլ էր և այդ շարժումը մնաց առանց պատշաճ կազմակերպության և ղեկավարության։ 1922 թվականին Իտալիայում ամբողջ իշխանությունը գրավեց ֆաշիստների հակահեղափոխական կուսակցությունը, որը խաբելով աշխատավոր մասսաների սակավ գիտակից խավերին կեղծ խոստումներով, խաբելով, որ իբր թե պիտի պայքարի աշխատավարձն ավելացնելու, հողը գյուղացիներին տալու համար և փքուն ֆրազներ տարածելով Իտալիայի և նրա ժողովրդի վեհության մասին,—իրականում կապիտալի շահերն է պաշտպանում։ Գրավելով իշխանությունը, ֆաշիստները հաստատեցին իրենց լիակատար և անսահմանափակ դիկտատուրան, իրենց պարագլխի — Մուսոլինու ղեկավարությամբ։ Բոլոր մյուս կուսակցությունները, բացի ֆաշիստականից, արգելված են։ Կառավարության դեմ որևէ հեղափոխականություն կամ ոպոզիցիա դաժան հալածանքի յե յենթարկվում։ Այնուամենայնիվ, 1929 թվականից սկսած՝ համաշխարհային ճգնաժամի հարվածներն առաջ են բերում գյուղացիության և բատրակության մի շարք հեղափոխական յելույթներ և գործարանային պրոլետարիատի գործադուլներ, չնայած դաժան տեռորին։

Ինչպես մենք տեսանք, համաշխարհային ճգնաժամը, հարվածելով Իտալիայի ժողովրդական տնտեսության, 1932 թվին նրա արդյունաբերական արտադրանքն իջեցրեց 78 %-ով, համեմատած նախաճգնաժամային (1928 թ.) արտադրանքի հետ։ Կառավարությունը ֆա-

շիստական արհմիությունների միջոցով կատարեց աշխատավարձի «կամավոր» իջեցում։

Ներքին շուկայի ծայրահեղ սահմանափակությունն ստիպեց իտալական բուրժուազիային փնտրել թե՛ սպառման և թե՛ հումքի արտաքին շուկաներ, ինչպես նաև պայքարել այն ճանապարհները տիրապետելու համար, որոնցով գնում են իտալական ապրանքները և նրա ներմուծած հումքը։ Մինչև 1914 թվականի պատերազմն աշխարհի իմպերիալիստական բաժանման ժամանակ գրավելով յերկրորդական գաղութներ Աֆրիկայում,—Երիտրեյը և Սոմալին՝ Կարմիր ծովի ափին ու Տրիպոլիտանիան (Լիվիա) Միջերկրական ծովի ափին,—իտալական բուրժուազիան իրեն «տուժած» համարեց 1919 թ., յերբ բաժանվում եյին գերմանական և թուրքական գաղութները (որոնք ամբողջովին անցան Անգլիային ու Ֆրանսիային)։ Իտալիայի ու Ֆրանսիայի հիմնական հակասությունները հետևյալով են արտահայտվում.— 1) պայքար Միջերկրական ծովին տիրելու համար, 2) պայքար Թունիսի համար, որի բնակիչները գլխավորապես իտալական էմիգրանտներ են և որին տիրանալ է ուզում իտալական իմպերիալիզմը, 3) պայքար հարավային Յեվրոպայում, մանավորապես Բալկանյան թերակղզում իշխելու համար, որտեղ ֆրանսիական վասալների— Հարավ-Սլավիայի, Ռումինիայի ու Չեխո-Սլովակիայի խմբակցությանն Իտալիան հակադրում է իր վասալներին,— Բուլղարիային ու Ալբանիային։

Պատրաստվելով իմպերիալիստական նոր պատերազմին, Իտալիան իր բանակը խաղաղ ժամանակ հասցրեց 700 հազար մարդու, իսկ ռեզերվը— մինչև 3,5 միլիոնի։ Բացի դրանից, ռազմականացվում է յերկու սեռի ամբողջ բնակչությունը։ Ծովային ռազմական նավատորմիղն ունի ավելի քան 200 ռազմանավեր, իսկ օդանավատորմիղը—2000-ից ավելի ինքնաթիռ։

Իտալիան Խորհրդային Միության հետ ավելի շատ

վերսկսեց դիվանագիտական ու առևտրական հարաբերությունները, քան մյուս կապիտալիստական յերկրները: Այդ հարաբերությունները բոլոր տարիներում նորմալ են ընթանում: Մենք Իտալիա յենք արտահանում նավթ, մարգանեց, փայտեղեն, քարածուխ, ցորեն, իսկ այնտեղից ներմուծում ենք մոտորներ, էլեկտրոսարքավորանք, ավտոմոբիլներ:

XII· ԲԱԼԿԱՆՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

ՀԱՐԱՎ–ՍԼԱՎԻԱ: Տարածությունը—250 հ. ք. կ. մ., բնակչությունը— 13,5 միլիոն, մայրաքաղաքը—Բելգրադ (225 հազ.):

ԲՈՒԼՂԱՐԻԱ: Տարածությունը— 193 հազ. ք. կ.մ., բնակչությունը—5;5 միլիոն, մայրաքաղաքը—Սոֆիա (155 հազ. բնակիչ):

ՀՈՒՆԱՍՏԱՆ: Տարածությունը—108 հազ. ք. կ.մ., բնակչությունը—7 միլիոն, մայրաքաղաքը—Աթենք (300,000 բնակիչ):

ԱԼԲԱՆԻԱ: Տարածությունը—45 հազ. քառ. կ.մ., բնակչությունը—0,9 միլիոն, մայրաքաղաքը—Տիրանա:

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԹՅՈՒՐՔԻԱ: Տարածությունը — 21 հազար քառ. կ.մ., բնակչությունը—1,1 միլիոն:

XVI դարից մինչև XIX դարի սկիզբն ամբողջ Բալկանյան թերակղզին պատկանում էր Թյուրքիային: Այնուհետև նա մեկը մյուսի հետևից կորցրեց թերակղզու առանձին մասերը: Համաշխարհային պատերազմի սկզբին Յեվրոպայում Թյուրքիայի ձեռքում մնաց միայն մի փոքրիկ հողամաս՝ Մարմարյա ծովի ափերում: Բալկանյան թերակղզու մնացած մասը գրավում էին՝ Ավստրո – Հունգարիան, Սերբիան, Չերնոգորիան, Ալբանիան, Բուլղարիան և Հունաստանը: Համաշխարհային պատերազմից հետո Սերբիայից, Չերնոգորիայից և հյուսիս-բալկանյան ավստրո-հունգարական հողերից կազմվեց Հարավ-Սլավիան, բավական ընդարձակվեց Հունաստանը, մասամբ ընդարձակվեց Ալբանիան: Բուլղարիան մի քիչ փոքրացավ: Ալբանիան դարձավ Իտալիայի կիսագաղութը: Յեվրոպական Թյուրքիան կազմում է միայն մի չնչին մասն ամբողջ Թյուրքիայի, վորը գտնվում է գլխավորապես

Ասիայում: Հունաստանը հանրապետություն է, Բուլղարիան և Հարավ-Սլավիան— միապետություններ:

Բալկանյան թերակղզին, վորը շրջապատված է Ադրիատիկ, Եգեյան, Մարմարյա և Սև ծովերով և Դարդանել ու Բոսֆոր նեղուցներով,—նպաստավոր դիրք ունի: Նրա միջով յերկաթուղիներ են անցնում Միջին Յեվրոպայից դեպի Բոսֆոր, Սև ծով և դեպի Ասիա: Նրա շուրջը գտնվում են Արևմտյան Յեվրոպայից դեպի Ասիա և ԽՍՀՄ տանող ծովային ճանապարհները: Այս ցամաքային ու ծովային ճանապարհներն առևտրական և ռազմագիտական մեծ նշանակություն ունեն:

Բալկանյան թերակղզին բաժանվում է յերկու մասի. հյուսիսային լայն, մայր-ցամաքային և հարավային նեղ մասեր: Հյուսիսային մասը վոռոգվում է նշանավոր նավարկելի գետով — Դանուբով և նրա վտակներով: Մայր-ցամաքային արևմտյան մասում գտնվում են Դինարյան կրային լեռների զուգահեռ շղթաները: Սա դժվարամատչելի, վատ վոռոգվող և անբերրի մի շրջան է: Բալկանյան թերակղզու մայր-ցամաքային արևելյան մասն իրենից ներկայացնում է լավ վոռոգվող, բերրի մի յերկիր, վորտեղ հողն առաջացել է լեռնային տեսակների մնացորդներից: Արևելյան մասի միջով, նրա լայնությամբ անցնում են Բալկանյան և Ռոդոպյան լեռնախմբերը:

Մայր-ցամաքային մասի արևմուտքում գտնվում են Հարավ-Սլավիան (նրա արևմտյան հողերը) և Ալբանիան, արևելքում—Հարավ-Սլավիայի արևելյան հողերն ու Բուլղարիան: Բալկանյան թերակղզու հարավային նեղ մասն ամբողջովին գրավում է Հունաստանը, վորը շարունակվում է դեպի հյուսիս, թերակղզու մայր ցամաքային մասում: Հարավային մասը գրեթե ամբողջովին լեռնոտ յերկիր է: Լեռները ձգվում են յերկրի թե՛ յերկարությամբ և թե՛ լայնությամբ և ծածկում են ամբողջ Հունաստանը:

Բալկանյան լեռները կլիմայական սահման են կազմում: Նրանցից դեպի հյուսիս—Միջին Յեվրոպայի կլիման է, դեպի հարավ—Միջերկրական ծովի կլիման:

Բալկանյան լեռների հյուսիսային լանջերում աճում են կաղնու, հաճարենու և փշատերև անտառները: Այդ լեռներից դեպի հարավ—խաղող, բամբակ, բրինձ, վարդի պլանտացիաներ: Հունաստանում—թերակղզիներում և կղզիներում (Հոնիական, Կոր-

ֆու, Կրետե)—կլիման ու բուսականությունը յենթա-արևադարձային են։ Այստեղ նարնջի, կիտրոնի, թզենու և ձիթենու ծառերը կազմում են ամբողջ անտառներ։ Մեծ տարածություններ են բռնում խաղողի այգիները։

Բուլղարիան, Հունաստանն ու Հարավ-Սլավիան գյուղատընտեսությամբ հետամնաց յերկրներ են։ Գյուղատնտեսությամբ ապրում է բնակչության ¾-ը։ Այդ յերկրների տնտեսությունն իր ձեռքն է վերցրել ոտարյերկրյա կապիտալը։ Վերջինս մուծվում է բանկերը, իսկ այդ բանկերն իրենց են յենթարկում թե՛ առևտուրն ու արդյունաբերությունը և թե՛ գյուղատնտեսությունը։

Բուլղարիայում գլխավորապես իշխում է ֆրանս-բելգիական կապիտալը, Հունաստանում—անգլո-ամերիկական և ֆրանս-բելգիական, Հարավ-Սլավիայում—ֆրանսիական, անգլիական և իտալական կապիտալը։

Բուլղարիայում ոտարյերկրյա կապիտալներն իր ձեռքն է վերցրել գրեթե ամբողջ հանույթի արդյունաբերությունը (աղ և պղինձ), քիմիական արդյունաբերության (լուցկի և պայթուցիկ նյութեր) կեսից ավելին, ծխախոտի արդյունաբերության մոտ կեսը և շաքարի արդյունաբերության ավելի քան 90 %-ը։ Ոտարյերկրյա կապիտալը Բուլղարիայում և Հունաստանում բանկերի միջոցով մուտք գործեց գյուղատնտեսության մեջ։ Վերջինս վերակառուցվեց, վորովհետև բանկերն ոգնում են միայն տնտեսության արտածող ճյուղերին,—Հունաստանում—ծխախոտի ու խաղողի մշակման, Բուլղարիայում—ծխախոտի և յուղային (արևածաղիկ և ռապս) կուլտուրաների մշակման։ Հունաստանից ծխախոտի և կորնթյան չամիչի արտածումն ուժեղացնելու համար բանկերն իրենց ձեռքն են վերցրել հացի ներմուծումը։

Հարավ-Սլավիայում ոտարյերկրյա կապիտալն իր ձեռքն է առել լեռնային և վերամշակող արդյունաբերությունը։

Իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուր մեկը, վորը կապիտալ է ներդրել Բալկանյան յերկրներում, աշխատում է նրանց ամբողջովին յենթարկել իրեն։ Հարավ-Սլավիայի համար առանձնապես ուժեղ պայքար տեղի ունի Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի միջև։ Հարավ-Սլավիան ծագեց 1918 թվին, ըստ Սերբիայի, Խորվատիայի և Սլավոնիայի կառավարու-

թյունների միջև կնքված պայմանագրի, վորպես հարավ-սլավոնական յերկրների միութենական (ֆեդերատիվ) միավորություն։ Սկզբում նոր կազմված պետությունը կոչվում էր «սերբերի, խորվատների և սլովենների թագավորություն»։ Սակայն 1929 թվականին հարավ-սլավիական թագավորն ոտարյերկրյա կապիտալի ոգնությամբ հեղաշրջում կատարեց։ Դրանից հետո սկսվեց սերբական մեծապետական տենդենցների կոպիտ կիրառումը։ Հին անունը, վորը հիշեցնում էր ֆեդերացիան, փոխվեց նոր անվան,—Հարավ-Սլավիա։ Պետության ամբողջ ղեկավարությունը և բանակի հրամանատարությունը կենտրոնացավ սերբական բուրժուազիայի ձեռքում։ Բանկերն ոժանդակում են միայն սերբական արդյունաբերության և սերբական կուլակային տնտեսություններին։ Հարկերի մեծ մասն ընկնում է այն հողերի վրա, վորոնց բնակչության մեծամասնությունը սերբեր չեն։ Ալբանացիք, մակեդոնցիք, թուրքերը վտարվում եյին իրենց տեղերից, հրդեհվում եյին ամբողջ գյուղեր և հողերը տրվում եյին սերբ գյուղացիներին։

Բնակչության ազգային կազմն աչքի յե ընկնում մեծ խայտաբղետությամբ։ Բնակչության $^4/_5$-ը հարավ-սլավոններ են, բայց սլավոնական բնակչության միայն կեսն են սերբեր։ Մյուս կեսը կազմում են խորվատները, սլովենները, չերնոգորցիները և բոսնիական մուսուլմանները։ Բնակչության $^1/_5$-ը կազմում են վոչ սլավոնները—մակեդոնացիները, ալբանացիները, գերմանացիները, հունգարացիները, ռումինները, հրեաները և այլն։

Հարավ-Սլավիայի հյուսիսում և հարավում բնակչության մեծամասնությունը սերբեր չեն։

Հարավ-Սլավիայի առանձին մասերը խիստ տարբերվում են իրարից նաև տնտեսական իմաստով։ Հյուսիսային վայրերում, վորոնք առաջ մտնում եյին Ավստրո-Հունգարիայի մեջ, ժողովրդական յեկամտի գերակշռող մասը տալիս են արդյունաբերությունն և առևտուրը, մնացած Հարավ-Սլավիայում— գյուղատնտեսությունը։ Հարավ-Սլավիայի մեծ մասում գյուղատնտեսությունը հետամնաց բնույթ ունի։ Նա հետ է մնացել մանավանդ ծայրագույն հարավ-արևմուտքում, Մակեդոնիայում, վորտեղ մինչև այժմ պահպանվել է քոչվորական անասնապահությունը։ Գյուղատնտեսությունն ավելի առաջավոր է հյուսիս-արևելքում։

Այստեղ դաշտերը մշակվում են մեքենաներով: Դալմացիայում (Ադրիատիկ ծովի ափերում) առաջին տեղը բռնում է այգեգործությունը:

Բերքատվությունը, բացի հյուսիսային վայրերից, շատ ցածր է: Ցորենն ու եգիպտացորենն արտադրվում են, սակայն նրանց արտադրումը տարեց-տարի կրճատվում է: Արտադրման մեջ առաջին տեղն են բռնում անասնապահության մթերքները (արտադրված բոլոր ապրանքների մոտ ⅓ մասը) և փայտեղենը (ամբողջ արտադրվող ապրանքների ¼-ից ավելին):

Հարավ-Սլավիան ունի նշանավոր հանքային հարստություններ,—քարածուխ, մանավանդ թուխ ածուխ, բոկսիդ (ալյումինի արդյունաբերության համար), կրակավեր (ցեմենտի արդյունաբերության համար), երկաթ, պղինձ, արճիճ և ցինկ: Շատ եժան է բանվորական ուժը: Սակայն արդյունաբերությունը բավականաչափ հաստատուն զարգացման չի հասել, չնայելով այն հանգամանքին, որ սկզբնական ժամանակներում նրա մեջ օտարերկրյա կապիտալ էր ներդրվում: Արտասահմանյան կապիտալիստներն սկսեցին հանքային հումքի մեծ մասն անմշակ վիճակում տանել արտասահման: Ամենամեծ չափով զարգացավ այն արդյունաբերությունը, որը գյուղատնտեսական մթերքներ է վերամշակում (ալրաղացային, շաքարի, գինու, ծխախոտի, փայտամշակման արդյունաբերությունը), ինչպես նաև ցեմենտի և քիմիական արդյունաբերությունը:

Բանվոր դասակարգի դրությունը շատ ծանր է: Ավելի ևս ծանրացել է ֆաշիստական հեղաշրջումից հետո: Աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 1 ½ անգամ, իսկ աշխատավարձը (մթերքներով հաշված) կրճատվել է 2 ½ անգամ: Պետական ձեռնարկություններում գործադուլ անելու համար տրվում է մինչև 25 տարի տաժանակրություն, բայց և այնպես, գործադուլները չեն դադարում:

Սերբիային կցված երկրների բուրժուազիան սերբ բուրժուազիայի հետ միասին համախմբվեց ֆաշիստական կառավարության շուրջը: Գյուղացիության կուլակային փոքրամասնությունը ֆաշիստների կողմն է: Մանր ու միջակ գյուղացիությունն ազատագրվում է կուլակների ազդեցությունից: Սերբիային կցված մյուս

երկրներում — Խորվատիայում, Սլովենիայում, Դալմացիայում, Վոյեվոդինում, Չերնոգորիայում, Մակեդոնիայում—գյուղացիները չեն դադարեցնում պարտիզանական կռիվները հողի համար և ազգային ճնշման, ուժից վեր հարկերի դեմ: Հարավ-Սլավիայի գյուղացիությունն արդեն ձգտում է միանալ բանվոր դասակարգին: Պրոլետարիատի առաջավոր ջոկատը՝ Հարավ-Սլավիայի կոմունիստական կուսակցությունը՝ այժմ գլխավորում է ազգային-հեղափոխական և դասակարգային պայքարը:

XIII. ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐՎԵԳԻԱ: Տարածությունը—324 հազար քառ. կ.մ., բնակչությունը—2,8 միլիոն:

ՇՎԵԴԻԱ: Տարածությունը—448 հազ. քառ. կ.մ., բնակչությունը—6,0 միլիոն:

ԴԱՆԻԱ: Տարածությունը—43 հազ. քառ. կ.մ., բնակչությունը—3,4 միլիոն:

Սկանդինավյան պետությունները գտնվում են Եվրոպայի հյուսիս-արևմտյան մասում: Նորվեգիան ու Շվեդիան գտնվում են Սկանդինավյան թերակղզու վրա, Դանիան—Յուտլանդիա թերակղզու և մերձակա կղզիների վրա:

Նորվեգիայի ամբողջ ներքին մասը (երկրի 0,7-ը) ունի տնտեսության համար անպետք հողեր: Դա լերկ, քարքարոտ սարահարթ է, ուր տեղ-տեղ կան հսկայական սառցադաշտեր: Ծովափերը կտրատված են դեպի երկրի ներսը խորացած, վոլորուն ծոցերով, այսպես կոչված՝ ֆիորդներով: Բնակչության գլխավոր մասը կենտրոնացած է ծովափնյա նեղ գոտում, ապրում է ձկնորսությամբ և նավարկությամբ[1]): Ոչ մի երկրում ձկնորսությունը (բրածուկ, սալմոն, տառեխ, և այլն) և ձկան օգտագործումն աղելու, ապխտելու և պահածոներ պատրաստելու միջոցով՝ չեն տալիս այնքան ժողովրդական եկամուտ, որքան Նորվեգիայում: Իր առևտրական նավատորմիղի մեծությամբ Նորվեգիան աշխարհում յոթերորդ տեղն է բռնում: Այդ նավատորմիղը տեղափոխում

1) Գոլֆստրիմի շնորհիվ չի սառչում Ատլանտյան օվկիանոսի նույնիսկ հյուսիսային մասը, որը մտնում է հեռավոր բևեռային շրջան:

է մասամբ Նորվեգիայի և գլխավորապես ուրիշ յերկրների ապրանքները։

Բացի ձկնեղեն ապրանքներից, Նորվեգիան արտածում է փայտեղեն և թուղթ։ Անտառները բռնում են յերկրի մոտ $^{1}/_{4}$-ը (24 %), մինչդեռ մարգագետինները կազմում են 2 %, դաշտերինը— 3 %։ Սղոցագործարանների և թղթի Փաբրիկաների համար օգտագործվում են արագահոս, ժայռոտ հատակ ունեցող գետերը, վորոնք թափվում են ֆիորդները։ Գետերի այդ էներգիան օգտագործվում է ելեկտրականություն ստանալու համար։

10 հազարից ավելի բնակչություն ունեցող բոլոր քաղաքները գտնվում են ծովի ափին։ Նրանցից ամենախոշորն է Ոսլո—Նորվեգիայի մայրաքաղաքը (260 հազար բնակիչ)։

Շվեդիան ու Դանիան իրենց տնտեսությամբ հանդիսանում են մայր-ցամաքային յերկրներ, դրանով տարբերվելով Նորվեգիայից։ Շվեդիայի հյուսիսային մասը ծածկված է տունդրաներով, միջին մասը՝ անտառներով, հարավային մասը՝ մարգագետիններով ու դաշտերով։ Շվեդիան շատ հարուստ է յերկաթահանքերով, բայց քարածուխ չունի։ Յերկաթահանքն արտածվում է այն յերկրները, վորտեղ նրա քանակը պակաս է, մանավանդ Անգլիա և Գերմանիա։ Շվեդիայում բարձրորակ հանքերից, ելեկտրոեներգիայի միջոցով, արտադրվում են մետաղի բարձր տեսակներ (ելեկտրոպողպատ)։ Շվեդիայի տնտեսության մեջ մեծ տեղ է գրավում փայտեղենի մշակությունը (թղթի և լուցկու արտադրություն)։Զգալի չափով զարգացել են ելեկտրոտեխնիկական և տեքստիլ արդյունաբերությունը։ Ֆաբրիկաների համար լայնորեն օգտագործվում է սպիտակ ածուխը։

Բնակչության գլխավոր մասը կենտրոնացած է Շվեդիայի հարավում։ Բալտիկ ծովի ափին գտնվում է յերկրի մայրաքաղաքը—Ստոկհոլմը (400 հազ. բնակիչ)։ Բալտիկ և Հյուսիսային ծովերը միացնող նեղուցում գտնվում է գլխավոր նավահանգիստ Հետեբորգը։

Դանիան, մանավանդ նրա կղզիները, գլխավորապես կաթնագործական անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության յերկիր է։ Դանիան այս բնագավառում աշխատում է գլխավորապես Մեծ-Բրիտանիայի համար, վորին մատակարարում

է յուղ, խոզեղեն և ձու։ Դանիայի կյանքում մեծ դեր են խաղում կաթնամթերքներ արտադրող կապիտալիստական կոոպերատիվները և կոոպերատիվ սպանդանոցները։ Խոշոր կապիտալն այդ կոոպերատիվների օգնությամբ իրեն յենթարկեց Դանիայի ամբողջ գյուղատնտեսությունը։

Դանիայի մայրաքաղաքն է Կոպենհագենը, վորն իր արվարձանների հետ միասին ունի մոտ 900 հազար բնակիչ, այսինքն Դանիայի ամբողջ բնակչության $^{1}/_{4}$-ից ավելի։ Բոլոր յերեք յերկրներում, մանավանդ Նորվեգիայում ու Դանիայում, տնտեսական ձեռնարկությունները զարգացել են օտարյերկրյա, մանավանդ անգլիական կապիտալի միջոցով։

Նորվեգիան ու Դանիան շատ մեծ պարտք ունեն Անգլիային, այս պատճառով վերջինիս ազդեցությունն այնտեղ մեծ է։ Այդ ազդեցությանը խոշոր չափով յենթակա յե նաև Շվեդիան։

Բոլոր յերեք յերկրներն ել թագավորություններ են։ Դանիայի հետ մի ընդհանուր թագավոր ունի Իսլանդիան, վորը համարվում է առանձին թագավորություն։ Վորպես գաղութ, Դանիային պատկանում է Գրենլանդիան։ Նորվեգիայի գաղութն է Շպիցբերգեն կղզին։

XIV. ԽՍՀՄ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

ԽՍՀՄ արևմտյան սահմանը ձգվում է 3800 կ. մ., Հյուսիսային Բևեռային շրջանից մինչև Սև ծովը։ Նա ավելի ուղիղ է, քան նախկին Ռուսաստանի նույն սահմանը և նրանից դեպի արևելք է գտնվում։ Հին և նոր սահմանների մեջ յեղած տարածությունը գրավում են Ֆինլանդիան, Մերձ-Բալտյան փոքր պետությունները— լիմիտրոֆները և արևելյան ու կենտրոնական Լեհաստանը։ Լեհաստանի արևմտյան և հարավային մասերը կազմվել են Գերմանիայից ու Ավստրիայից առնված հողերից։

ԽՍՀՄ արևմտյան հարևաններն ունեն մի շարք ընդհանուր գծեր, այն է, այդ բոլոր յերկրներում կապիտալիզմի զարգացումը միջին մակարդակի վրա յե, իսկ

Մերձ-Բալտյան պետություններն ու Ռումինիան նույնիսկ մի փոքր ցած են միջին մակարդակից:

ՖԻՆԼԱՆԴԻԱ—388 հազ. ք. կ. մ., բնակչությունը՝ 3,6 միլիոն:

ՄԵՐՁ-ԲԱԼՏՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էստոնիա	—48 հազ.քառ. կմ, բնակչությունը—1 միլիոն,								
Լատվիա	—66	»	»	»	»	»	»	» 1,9	»
Լիտվա	—56	»	»	»	»	»	»	» 2,3	»
ԼԵՀԱՍՏԱՆ	—288	»	»	»	»	»	»	» 30,5	»
ՌՈՒՄԻՆԻԱ	—295	»	»	»	»	»	»	» 18	»

Այս պետությունները, վորոնք ամբողջովին կամ մեծ մասամբ (Լեհաստանը) կազմվել են նախկին Ռուսաստանի հողերից, առաջ են յեկել համաշխարհային պատերազմից հետո (բացի Ռումինիայից):

Բոլոր այս պետությունները գտնվում են յերկու սիստեմների սահմաններում՝ կապիտալիստական և սոցիալիստական: Անգլիայի ու Ֆրանսիայի իմպերիալիստներն աշխատել են նրանցով ցանկապատել Արևմուտքը «բոլշևիկյան վարակից»: Անգլիայի կապիտալիստները հատկապես մուտք են գործել հյուսիսային պետություններում, Ֆրանսիան—հարավային պետություններում—Լեհաստան և Ռումինիա: Նրանք տեղական բուրժուազիայի օգնությամբ այդ բոլոր յերկրները դարձրել են ԽՍՀՄ վրա հարձակվելու հենակետեր: ԽՍՀՄ սահմանների յերկարությամբ կառուցված են ամրություններ, ռազմական այերոկայաններ, ռազմագիտական նշանակություն ունեցող յերկաթուղիներ: Ծովերի ափին կառուցված են ամրոցներ և ռազմա-ծովային բազաներ:

1. ՖԻՆԼԱՆԴԻԱ

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Ֆինլանդիան գտնվում է 70-րդ և 60-րդ զուգահեռականների միջև, տայգաների գոտում: Նա ընկած է Բալտյան հնագարյան բյուրեղյա մասսիվի սահմաններում: Սառցադաշտերի ժամանա-

կաշրջանում նրա տերրիտորիան գտնվում էր դեպի հարավ շարժվող սառցադաշտերի տակ: Այստեղից են առաջացել նրա ժամանակակից բնության առանձնահատկությունները.— Ֆինլանդիան քարի ու անտառի, բլուրների, սրանց արանքներում գտնվող հազարավոր լճերի և ժայռոտ հուներով գետերի յերկիր է:

Սառցադաշտը, նահանջելով, թողել է մորենայի մնացորդներ: Սրանցից կազմվել են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ ձգված ցածր բլուրների շարքերը: Իբրև սառցադաշտի նահանջման յերկու փազերի հետքեր, մնացել են վերջին մորենայի յերկու պայտաձև թմբերը: Այդ թմբերի միջով անցնող գետերի հուները խիստ ժայռոտ են (Վուոկսա, Իմատրա ջրվեժով):

Մորենայի մնացորդներից առաջ են յեկել Ֆինլանդիայի ներքին մասերի հողերը: Այդ հողերից լավագույնները համարվում են ավազոտ կավերը: Սակայն հարկավոր է հսկայական աշխատանք թափել, վորպեսզի զատել հողն աղտեղող գլաքարերից: Ավելի բերրի յեն այն կավերը, վորոնք նստել են ծովի հատակին և այժմ ծածկում են Բալտիկ ծովի ափերի մի լայն շերտ: Այդ ծովափը դուրս է յեկել ջրի տակից, յերբ յերկիրն ազատվել է սառցադաշտի ծանր բեռից:

Ֆինլանդիայի լճերը սառցադաշտերից են ծագել: Նրանց թիվը 35 հազար է, 45 հազ. քառ. կ.մ. ընդհանուր տարածությամբ: Նրանցից ամենախոշորներն են՝ Ինարի, Սայմա, Պայենն: Լճերը գտնվում են տարբեր մակերևույթի վրա և նրանց միացնող գետերն աղմկալի հոսանք ունեն, թափվելով քարաժայռերի վրայից: Գետերի այդպիսի հոսանքի և ջրառատության շնորհիվ, Ֆինլանդիայում բավական մեծ են սպիտակ ածուխի պաշարները (2,3 միլ. ձիու ույժ):

ԿԼԻՄԱ: Կլիման ցուրտ է, մի փոքր մեղմանում է Բալտիկ ծովի քամիներից: Բոտնիկյան ծոցի ֆիննական ափին ավելի տաք է, քան շվեդական ափը: Շատ վնասակար են վերադարձող ցրտերը, վորոնք հաճախ լինում են

հունիսի սկզբին: Ընդհանրապես, յերկրագործության համար պետքական է յերկրի միայն հարավային կեսը: Դեպի հյուսիս յերկրագործությունը գոյություն ունի Բոտնիկյան ծոցի յերկարությամբ: Հաճարը մշակվում է մինչև 66°, վարսակը—մինչև 65°:



Նկ. 15. Ֆինլանդիայի սառցադաշտերի հետքերը:

Լճեր, նրանց մեջ յերկարաձև բլուրներ, վերջին մորենայի յերկու պայտաձև թմբերը:

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: Մինչև XIX դարի սկիզբը Ֆինլանդիան գտնվում էր Շվեդիայի իշխանության տակ: Ներկայումս Ֆինլանդիայի բնակչության 10 տոկոսը շվեդներ են:

Ռուսաստանը Շվեդիայից նվաճեց Ֆինլանդիան, վորն սկզբում ինքնավար ծայրամաս էր, սակայն XIX դարի 80-ական թվականներից սկսվեց Ֆինլանդիայի «ռուսացումը», նա վերածվեց ռուսական նահանգի, վորտեղ ռուսական կառավարությունը նշանակում էր իր պաշտոնյաները:



Նկ. 16. Լճերը միացնող ջրանցք Ֆինլանդիայում:

Կոպիտ կերպով խախտվում եյին ֆիննական քաղաքացիների իրավունքները: 1917 թվականի փետրվարյան հեղաշրջումից հետո ֆիննական սեյմը Ֆինլանդիան անկախ հայտարարեց:

Ռուսաստանի բուրժուական ժամանակավոր կառավարությունը գործում էր ընդդեմ Ֆինլանդիայի անկախության: Յերբ բոլշևիկները վերցրին իշխանությունը, առանց այլևայլության ճանաչեցին Ֆինլանդիայի անկախությունը, յելակետ ունենալով ազգերի ինքնորոշման սկզբունքը: Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ ֆիննական պրոլետարիատն այնտեղ գրավեց իշխանությունը: Սակայն Ֆինլանդիայի հակահեղափոխական

բուրժուազիան գերմանական զորքերի և շվեդական կամավորների օգնությամբ հաղթահարեց պրոլետարիատին: Դասակարգային թշնամին, վորը վորոշել եր բոլորովին վոչնչացնել պրոլետարիատի ավանգարդը, պատմության մեջ չտեսնված կատաղություն ցուցաբերեց: Գլխովին վոչնչացվում եյին բոլոր գերված կոմունիստները և բոլշևիզմի մեջ կասկածվողները: Գաղտնի աշխատող կոմունիստական կուսակցությունը չոչափելի ուժ դարձավ, սակայն 1919 թվի սպանդը մինչև այժմ զգալ և տալիս իրեն:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ֆինլանդիան գյուղատնտեսության յերկիր ե: Բնական պայմանները, վորոնք նպաստավոր են անտառների և խոտաբույսերի աճման համար, հացահատիկային տնտեսության նկատմամբ այնքանել նպաստավոր չեն: Ֆինլանդիայում առաջին տեղն ե բռնում անտառաբուծությունն ու փայտեղենի վերամշակումը: Յերկրորդ տեղը բռնում ե կաթնային անասնաբուծությունը: Հողագործությունը միայն յերրորդ տեղն ե բռնում:

Անտառները բռնում են Ֆինլանդիայի տարածության $^{3}/_{4}$–ը: Փայտեղենը տեղափոխելու համար օգտագործվում են բազմաթիվ գետերը: Սրանց ափերին կան սղոցագործարաններ, իսկ գետաբերանները փայտ արտածող նավահանգիստներ են, վորտեղ փայտի արտածման հետ միաժամանակ տեղի յե ունենում նրա վերամշակումը (պատրաստվում ե կահ-կարասի, ցելյուլոզ, թուղթ): Արտածվող ապրանքների $^{4}/_{6}$–ից ավելին կազմում են փայտեղենը, թուղթն ու ցելյուլոզը:

Մշակվող դաշտերն ու մարգագետինները կազմում են յերկրի տարածության $_{01}/^{1}$–ը. մարգագետիններն ավելի շատ տարածություն են բռնում, քան մշակելի դաշտերը: Միայն իր սեփական կարտոֆիլը, վարսակն ու գարին են բավականանում Ֆինլանդիային: Հաճար ներմուծվում ե գործածվածի կեսից ավելի, իսկ ցորեն ներմուծվում ե ամբողջովին: Հացի ներմուծումը ընդհանուր ներմուծման $^{1}/_{4}$ մասն ե կազմում և ներմուծման մեջ նա առաջին տեղն ե բռնում:

Կալվածատերերի ու կուլակների տնտեսություններում կաթնատնտեսությունը հավելյալ արտադրանք ե տալիս, իսկ չքավորությունը զուրկ ե կաթնամթերքներից: Յուղի ու պանրի արժեքը կազմում ե արտածվող ապրանքների ամբողջ արժեքի $^{1}/_{10}$–ը:

Հողատիրությունը գլխավորապես խոշոր կալվածատիրական և կուլակային ե: Կան 10 հազար հեկտարից ավելի տարածությամբ կալվածքներ: Միևնույն ժամանակ բոլոր գյուղական տնտեսությունների միայն $^{1}/_{4}$–ն ունի սեփական հող: Մնացած գյուղացիները կամ մանր կապալառուներ են, կամ բատրակներ: Կապալառուները սովորաբար կապալավարձը հատուցում են սեփական աշխատանքով,— վորոշ թվով որեր աշխատում են կալվածատիրոջ համար: Բատրակների և մանր կապալառուների դրությունը շատ ծանր ե:

Արդյունաբերության գլխավոր ճյուղը հանդիսանում ե սեփական հումքով աշխատող փայտամշակումը՝ ցելյուլոզի և թղթի արդյունաբերության հետ միասին: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի կեսն ընկնում ե այդ ճյուղին: Մյուս կեսը տալիս են սննդի, տեքստիլ, լուցկու, մետաղագործական և մեքենայական ճյուղերը, վորոնք աշխատում են ներմուծվող հումույթով և տարերկրյա,— ամերիկական, անգլիական, շվեդական կապիտալի օգնությամբ:

Վորպես եներգիայի աղբյուր, գործարանների համար լայն չափով օգտագործվում ե սպիտակ ածուխը: Ամենամեծ զորեղություն ունեն Հելսինկիում և Տամպերում գտնվող հիդրո-ելեկտրո-կայանները: Տամպերը տեքստիլ արդյունաբերության կենտրոնն ե:

Ֆինլանդիայի ծովափը յերկար ե և շատ կտրատված: Այստեղ կան մի շարք յերկրորդական նավահանգիստներ, վորոնց միջոցով մշտական հարաբերություններ են պահպանվում Շվեդիայի, Դանիայի, Գերմանիայի բալթյան նավահանգիստների և Անգլիայի հետ: Ֆինլանդիայի համար առանձնապես կարևոր են Անգլիայի

հետ պահպանվող հարաբերությունները: Այնտեղ նա ուղարկում է իր արտադրած նյութերի $^2/_5$ մասը: Առևտրին սպասարկում է Ֆինլանդիայի սեփական նավատորմիղը, վորը բավական մեծ է այդ սակավաբնակ յերկրի համար:

ՌԱՅՈՆՆԵՐ: Բնական պաշարներն օգտագործելու և բնակչության խտության տեսակետից Ֆինլանդիան կարելի յե բաժանել 3 ռայոնի:

Բևեռային շրջանից դեպի հյուսիս գտնվում է տունդրաների ռայոնը, վորտեղ բնակչություն գրեթե չկա: Այստեղ ապրում են 2 հազարից մի քիչ ավելի լոպարներ,—յեղջերուապահներ և ձկնորսներ:

Միջին գոտին գրեթե բացառապես անտառային տնտեսության և փայտամշակման արդյունաբերության ռայոն է: Բնակչության խտությունը—1-ից մինչև 10 մարդ (1 քառ. կ.մ. վրա):

Միայն մի նեղ շերտ,—Բոտնիկյան ծոցի ափերը և ավելի լայն տարածություն դեպի հարավ (Ֆիննական ծոցից մինչև Պայենե, Սայմա և Լադոգա լճերի հյուսիսային կողմը) հանդիսանում է գյուղատնտեսության և բազմազան արդյունաբերության ուժեղ զարգացման ռայոն: Այստեղ են գտնվում Ֆինլանդիայի խոշորագույն քաղաքները,—մայրաքաղաքը և ներմուծման առաջին նավահանգիստը,— Հելսինկի (230 հազար բնակիչ) և 50 հազարից ավելի բնակչություն ունեցող 3 քաղաքներ,— Տուրկու—ներմուծման յերկրորդ նավահանգիստ, Վիպուրի— արտածման առաջին նավահանգիստ և Տամպերե—արդյունաբերական կենտրոն:

Մինչև պատերազմը Ֆինլանդիան առևտուր եր անում գրեթե բացառապես Ռուսաստանի հետ: Պատերազմից հետո նա առևտուր է անում Անգլիայի հետ, արտածելով փայտեղեն և կաթնամթերքներ: Արտաքին առևտրի այդ միակողմանիության վնասն զգացվեց ճգնաժամի շրջանում: Արտածումն սաստիկ կրճատվեց, նրան սպասարկող արդյունաբերությունը

նույնպես կրճատվեց: Բանվորների կեսը շպրտվեց փողոց: Տորպարների և բատրակների դրությունը դարձավ միանգամայն անտանելի: Սկսվեցին լուրջ խռովություններ: Հեղափոխությունը ճզմելու համար կազմակերպվեց ֆաշիստական հեղաշրջում (1930 թվի ամառը), սկսվեց տեռորը: Բանվորական և բատրակական ձախ կազմակերպությունները ջախջախվեցին: Հենվելով օտարերկրյա կապիտալիստների աջակցության վրա, ֆաշիստական պարագլուխները սպառնական դիրք բռնեցին ԽՍՀՄ հանդեպ: Իրենց յելույթների ժամանակ նրանք պահանջում են ԽՍՀՄ-ից գրավել ամբողջ հյուսիսային մասը—Լենինգրադից մինչև Ուրալ:

2. ԵՍՏՈՆԻԱ, ԼԱՏՎԻԱ, ԼԻՏՎԱ

Եստոնիան, Լատվիան և Լիտվան գրավում են արևելա-յեվրոպական ցածրադիր հարթավայրի արևմտյան մասը: Միայն Եստոնիայի արևելքում և Լատվիայի հյուսիս-արևելքում պատահում են բլուրներ, վորոնք մի քիչ բարձր են 300 մետրից:

Մերձ-Բալտյան շրջաններում լանդշաֆտը մորենային է: Ամենուրեք պատահում են մորենային բլուրներ, լճեր, ճահիճներ և տորֆի տարածություններ: Հողը մեծ մասամբ ավազոտ է, կազմվել է մորենայի կուտակումներից: Ինչպես և Ֆինլանդիայում, լավագույն հողերը համարվում են կավահողերը, վորոնք գտնվում են ծովափնյա շրջաններում և առաջացել են ծովային նյութերի կուտակումներից: Մերձ-Բալտյան գոտու սակավաքանակ օգտակար հանածոների թվին են պատկանում՝ շինարարական քարը (ավազաքար, կրաքար), այրվող թերթաքարերն ու ֆոսֆորիտները (Եստոնիայում), ինչպես նաև գիպսը, վորը գործ է ածվում շինարարության և պարարտացման համար:

Հարթավայրի Ֆիննական ծոցի կողմում պատահում են ժայռեր: Սրանցից թափվող գետերը ջրվեժներ

ունեն: Ամենազորեղը Նարվյան ջրվեժն է (մինչև 100 հազար ձիու ուժ. օգտագործված է 15 հազարը):

Բալթիկ ծովի ափերը տարբեր բնույթ ունեն. Էստոնիայի ափերը ժայռոտ են և կտրատված, Լատվիայի ու Լիտվայի ափերը բաղկացած են ջրաբեր ավազից, լիմաններից և˜ ավազաթմբերից: Բալթյան ծովափի հարավային մասում Լիբավայի և այլ նավահանգիստները համարյա չեն սառչում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Մերձ-Բալթյան հանրապետությունների տնտեսությունները շատ ընդհանուր գծեր ունեն: Բոլոր յերեք հանրապետություններում էլ գերակշռում է գյուղատնտեսությունը: Մինչև պատերազմն Էստոնիայում և Լատվիայում կար բավական զարգացած արդյունաբերություն, վորն աշխատում եր գլխավորապես ռուսական շուկայի համար: Մերձ-Բալթյան շրջանները նոր սահմաններով կտրվեցին հին շուկայից, իսկ նոր շուկաներ ձեռք չբերին: Արդյունաբերությունը մեռավ: Լիտվան առաջվա պես մնաց հետամնաց, յետադաշտ հացահատիկային տընտեսության յերկիր, մինչդեռ Էստոնիայում և Լատվիայում գոյություն ունի յերկրագործության ավելի կատարելագործված սիստեմ—պտղափոխությունը և բազմադաշտ սիստեմը:

Մերձ-Բալթյան յերկրներում զարգացած է կալվածատիրական հողատիրությունը, որինակ, Լատվիայում ամբողջ հողի համարյա կեսը պատկանում եր կալվածատերերին: Մանավանդ գերմանական բարոնների կալվածքները շատ խոշոր եյին: Մյուս կողմից բազմաթիվ գյուղացիներ տառապում են հողազրկությունից: Դեռ մինչև իմպերիալիստական պատերազմը հողի պակասությունն այստեղ առաջ եր բերում ագրարային ուժեղ շարժում: Պատերազմից և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո գյուղացիների հեղափոխական տրամադրություններն ավելի՛ ուժեղացան:

Մերձ-Բալթյան յերկրների մի մասն ստիպված եր,

հայտարարել, թե պետք է հողային ռեֆորմներ (բարենորոգումներ) մտցվեն: Գյուղացիներին խոստացան տալ կալվածատերերի հողերը, բայց խաբեցին: Խոշոր կալվածատերերի հողերի մի մասն իսկապես գրավվեց: Էստոնիայում ու Լատվիայում հողային ռեֆորմը խիստ ազգայնական բնույթ եր կրում. նա ուղղված եր գերմանացիների դեմ: Հողազուրկ և սակավահող գյուղացիները չնչին քանակությամբ հող ստացան. նրանց տնտեսությունն ամրապնդվել չեր կարող: Գրավված հողերի մեծ մասն անցավ սպաների («պատերազմի հերոսների»), չինովնիկների, կուլակների և սպեկուլյանտների ձեռքը:

Արտածումը միակողմանի բնույթ ունի: Բոլոր յերեք յերկրներում արտածման մեջ խոշոր տեղ է բռնում փայտեղենը, ապա յուղը—Էստոնիայից ու Լատվիայից և կտավհատը— Լատվիայից ու Լիտվայից: Արտածվող ապրանքների կեսից ավելին ուղարկվում է Գերմանիա և Անգլիա: Այս յերկրների ճգնաժամն իհարկե, անդրադարձավ նաև նրանց մատակարարների վրա: Փայտամշակման ձեռնարկություններն սկսեցին փակվել մեկը մյուսի հետևից: Ծայրահեղորեն կրճատվեց նավահանգիստների աշխատանքը: Գյուղատնտեսությունը, վորը հումք է տրամադրում գործարաններին, ավելի ևս տուժեց. բանկերին ու վաշխառուներին տալիք պարտքի մեջ խեղդված գյուղացիների ագարակները ծախվում են ջրի գնով: Գյուղերն ամայանում են:

Նախկին Ռուսաստանի արտաքին առևտրի համար Էստոնիան ու Լատվիան հսկայական նշանակություն ունեյին: Լատվիայում, նավահանգիստներում սարքավորվեցին ելեվատորներ և սառցարաններ (շուտ փչացող մթերքների—յուղի, ձվերի համար): Էստոնիան ու Լատվիան շատ են շահագրգռված, վորպեսզի ԽՍՀՄ հետ առևտուրը կատարվի նրանց վրայով:

Մերձ-Բալթյան հանրապետությունների ֆինանսական դրությունը շատ վատ է: Արտաքին առևտուրը

դեֆիցիտ է ունենում: Աղքատացած բնակչությունից առաջվող հարկերը չնչին են: Սակայն զորքի, ոդանավատորմիղի և արտասահմանյան թանգ նստող ներկայացուցչությունների ծախքերը հսկայական են: Ծախսերը յեկամուտներով ծածկել չի հաջողվում: Պարտքերը վճարելու համար այդ յերկրներն արտասահմանյան փոխառություններ են կնքում: Այսպիսով նրանք ամբողջովին կախումն ունեն ոտարերկրյա— անգլիական, վերջերս նաև ֆրանսիական ու ամերիկական կապիտալից:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ լատվիական ու եստոնական պրոլետարիատը ռուսական պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված, պայքարեց և կարճ ժամանակով գրավեց իշխանությունը:

Սակայն 1919 թվականի գարնանը բուրժուազիան գերմանական զորքերի ոգնությամբ հակահեղափոխական հեղաշրջում կատարեց և դաժանությամբ ջախջախեց հեղափոխական բանվորներին ու կոմունիստական կուսակցությանը:

Լիտվայում նույնպես իշխանությունը պրոլետարիատի ձեռքին եր, սակայն ագրարային Լիտվայի սակավաթիվ պրոլետարիատն ուժ չուներ խորհուրդները պաշտպանելու համար: 1919 թվականից Լիտվան ռազմական դրությունից չեր դուրս գալիս, դեմոկրատական սահմանադրությունը մնում եր թղթի վրա, իսկ 1926 թվականի սկզբին կատարվեց ֆաշիստական հեղաշրջում: Բանվորների բոլոր արհեստակցական ու կուլտուրական կազմակերպությունները ցրվեցին, կոմունիստներն ամենադաժան հալածանքի յեն յենթարկվում:

Իր արտաքին քաղաքական հարաբերությունների մեջ Լիտվան լարված է Լեհաստանի հետ: 1922 թվականին Լեհաստանը զինված ուժով գրավեց Լիտվայից Վիլնոն և Վիլենշչինան: Լիտվան չի ուզում հաշտվել դրա հետ և թե հին, թե նոր ֆաշիստական «սահմանադրությամբ» Լիտվայի մայրաքաղաքը համարվում է

Վիլնոն: Յերկու կողմերն ել վոչ մի զիջում չեն անում և այս է պատճառը, վոր ֆաշիստական Լիտվան չի մտնում այն խմբավորումների մեջ, վորոնց մասնակցում է Լեհաստանը:

Բուրժուազիայի ու զինվորականության ազդեցությամբ, վորն Անգլիայի ու Ֆրանսիայի միջոցներով է պահվում, Եստոնիան ու Լատվիան մտան այն բոլոր «խմբակցությունների» մեջ, վորոնք գործում են Խորհրդային Միության դեմ: Սերտ կապ հաստատվեց այդ յերկրների զինվորական շտաբների և լեհական ու ֆրանսիական շտաբների միջև:

Մերձ-Բալթյան յերկրների քաղաքները. Եստոնիայի մայրաքաղաքն է Տալլինը (նախկին Ռևել). ունի նավահանգիստ: Լատվիայի մայրաքաղաքը— Ռիգա. նավահանգիստ է Ռիգայի ծոցի վրա, Արևմտյան Դվինայի գետաբերանում. Լեպայա (Լիբավա) և Վենտսպիլս (Վինդավա)— նավահանգստային քաղաքներ են Բալտյան ծովափում: Վիլնոն գրավելուց հետո Լիտվայի մայրաքաղաքն է Կաունաս քաղաքը (նախկին Կովնո):

3. ԼԵՀԱՍՏԱՆ

Լեհական հանրապետությունը հռչակվեց համաշխարհային պատերազմից հետո: Նա կազմվեց այն հողերից, վորոնք պատկանում եյին լեհական թագավորության և XVIII դարում բաժանվեցին Ռուսաստանի, Ավստրիայի ու Գերմանիայի միջև: Լեհաստանին անցան այնպիսի շրջաններ, վորոնք չունեյին լեհ բնակիչների մեծամասնություն—արևելքում Վիլենշչինան, լիտվական բնակչությամբ, Լեհաստանի կողմից գրավված, անտառային շրջանը—բելոռուս բնակչությամբ և Վոլինիայի արևմտյան մասը— ուկրաինական բնակչությամբ. արևմուտքում—Պրուսիայի մի մասը և հանքերով հարուստ Վերին-Սիլեզիայի շրջանը, գերմանացիների մեծամասնությամբ—մանավանդ Սիլեզիայում: Պրուսիայի մի մասը հանձնվեց Լեհաստանին այն

պատրվակով, թե նրան հարկավոր է Վիսլա գետի վրայով յելք դեպի ծով: Վիսլայի գետաբերանի նավահանգստում—Դանցիգում Լեհաստանին տրվեցին զանազան արտոնություններ, այս նավահանգիստն էլ դարձավ Լեհաստանի գլխավոր նավահանգիստը, սակայն նա հանդիսանում է առանձին պետություն,— «ազատ քաղաք»: Լեհաստանի անմիջական տիրապետության տակ գտնվում է յերրորդական նշանակություն ունեցող մի նավահանգիստ–քաղաք—Գդինը:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ ՅԵՎ ՀԱՆԱՇՈՆԵՐ: Լեհաստանում գերակշռում է հարթ և վոչ բարձր մակերևույթը: Յերկրի համարյա $^9/_{10}$ մասը 300 մետրով ցածր է ծովի մակերևույթից: Սարերը (500 մ.) բռնում են ամբողջ տարածության միայն 4 $^0/_0$-ը:

Մակերևույթի կազմությունը, ինչպես Գերմանիայում, ունի յերեք աստիճաններ, վորոնք ցածրանում են հարավից դեպի հյուսիս:

Հարավում գտնվում են Կարպատյան լեռները: Լեհաստանում մտնում է նրանց միայն հյուսիսային, վոչ բարձր մասը: Լեռներից հոսում են Վիսլ ավազանի բոլոր գետերը: Նրանց լեռնային հոսանքն ունի սպիտակ ածուխի մեծ պաշար: Լեռների արևելյան մասում, Դնեստրի վերին հոսանքի և նրա Ստրի վտակի միջև գտնվում են նավթի խիստ քայքայված հանքեր (Բորիսլավի մոտ): Հյուսիսից Կարպատներին կից է Մերձ-Կարպատյան փոքրիկ բարձրությունը: Վերջինս իր բաղադրությամբ հանդիսանում է Գերմանիայի հնադարյան մասսիվների արևելյան, ցածրացած շարունակությունը: Այդ հնադարյան գոտու հետ կապված են հետևյալ քարածխային ավազանները,—Սիլեզիայի, (վորը տալիս է Լեհաստանում հանվող ածուխի ¾-ը), Կրակովի և Դոմբրովի ավազանները: Կան ցինկի ու արճիճի հանքեր, յերկաթի վոչ կարևոր հանքեր և աղաքարի շերտեր:

Լեհաստանի ամբողջ հյուսիսը (նրա տերրիտորիայի կեսից ավելին) դաշտավայր է: Սա ամբողջովին

ծածկված է մորենայի մնացորդներով: Կան շատ լճեր (մանավանդ հյուսիս-արևմուտքում և հյուսիս-արևելքում), ճահիճներ և տորֆային տարածություններ: Տորֆն այստեղ գլխավոր հարստությունն է:

Առանձնապես ճահճային է ցածրադիր անտառային



Նկ. 17. Լեհաստանի քարտեզը:

Պայմանական նշաններ.—1. Կարպատներ. 2. բարձրություն 3 դաշտավայր. 4. Լեհաստանի բաժանումը պատերազմից առաջ. 5. քարածուխի շրջան 6. նավթ. 7. յերկաթ. 8. Լոձի տեքստիլ շրջան. 9. ցինկ և արճիճ:

շրջանը,—Պրիպյատ գետի և նրա վտակների հովիտը: Այստեղ են գտնվում Պինսկի հսկայական, անսառուածածկ ճահիճները: Նրանք խիստ դժվարացնում են հաղորդակցությունները, վոչ պակաս չափով դժվարացնում են նաև ռազմական բանակների տեղափոխությունը, վորոնք անծա-

նոթ են ճահճային անտառների շավիղներին։ Այստեղից է բղխում Պինսկի ճահիճների ռազմագիտական խոշոր նշանակությունը։

ԳԵՏԵՐԸ։ Լեհաստանի գետերը պետք է մեծ դեր խաղային ծանր բեռները (ածուխ, փայտեղեն) փոխադրելու համար, բայց այդ նպատակով հարկավոր եր մաքրել գետերի հուները, իսկ այդ բանը չի արված նույնիսկ գլխավոր զարկերակ Վիսլայում։ Վիսլան և նրա վտակները—Նարևն ու Արևմտյան Բուգը պետքական են միայն մանր նավերի յերթևեկության համար և ծառայում են գլխավորապես իբրև փայտեղենի փոխադրության (առանց նավերի) ճանապարհներ։ Նույն կերպ են օգտագործվում նաև այն ջրանցքները, վորոնք միացնում են Բուգն ու Նեմանը Պրիպյատի հետ և Նեմանը Վիսլայի հետ։

ԿԼԻՄԱ։ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։ Լեհաստանի կլիման ցամաքային է։ Կլիմայի այդ բնույթն ավելի ուժեղանում է դեպի արևելք։ Ձմեռն ավելի մեղմ է, քան ԽՍՀՄ-ում միևնույն լայնության տակ, բայց դարձյալ բավական յերկարատև է։ Վիսլան սառչում է 100 որով։ Ամառը բավական շոգ է։ Տարեկան ամպլիտուդան— 20° արևմուտքում, 20° արևելքում։

Լեհաստանը գտնվում է խառն անտառների գոտում։ Գերակշռում են փշատերև անտառները (անտառների 80 %), ինչպես և սոճիների անտառները (65 %)։ Յերկրի մոտ 1/4 մասը ծածկված է անտառներով։ Անտառային գլխավոր տարածությունները գտնվում են Կարպատներում, արևմուտքում և անտառային շրջանի ճահճոտ, ցածրադիր վայրերում։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԲՆՈՒՅԹԸ։ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։ Լեհական հանրապետությունը կազմվել է տարբեր բնույթ ունեցող մասերից։

Գրեթե հարյուր հիսուն տարվա ընթացքում այդ մասերը պատկանել են տարբեր պետությունների, վորոնք ունեցել են տարբեր իրավակարգ և տարբեր կուլտուրական մակարդակ։

Ռուսական Լեհաստանն անկոնտրոլ կերպով կառավարում եյին ռուսական չինովնիկները։ Լեհաստանի այդ մասը դաժանորեն ռուսացվում եր։ Գերակշռում եր խոշոր հողատիրությունը։ Գյուղացիությունն աղքատ եր, նա մշակում եր իր փոքրիկ և կապալով վերցրած հողամասերը։ Հողագործությունը հետամնաց բնույթ ուներ (յեռադաշտ)։ Սակայն ագրարային աղքատ յերկրում առաջ յեկան մի քանի արդյունաբերական ռայոններ։ Սրանցից գլխավորներն են Դոմբրովի հանքագործական և Լոձի մանածագործական ռայոնները։ Այստեղ կային և՛ պրոլետարական խոշոր կենտրոններ և՛ լեհական ու գերմանական հարուստ բուրժուազիա։

Ավստրիական Լեհաստանն ավելի՛ ևս ագրարային յերկիր եր, քան ռուսականն իր խոշոր հողատիրությամբ։ Լեհական ազնվականությունն օգտվում եր մեծ արտոնություններով։ Գյուղացիությունը, մանավանդ արևելյան Գալիցիայում բնակվող ուկրաինական գյուղացիությունը,—եյապես ճորտատիրական շահագործման առարկա յեր։ Արդյունաբերությունը, բացի աղի հանույթից, սակավ եր զարգացած։

Գերմանական կամ պրուսական Լեհաստանն ավելի դաժան ու սիստեմատիկ կերպով եր գերմանացվում, քան թե ռուսացվում եր ռուսական Լեհաստանը։ Այդ մասն ևս խոշոր հողատիրության յերկիր եր, գլխավորապես գերմանական հողատիրության։ Հողը պարարտացվում եր, մտցվել եր բազմադաշտյան սիստեմ, բերքը շատ ավելի բարձր եր, քան հարավում ու արևելքում։ Քաղաքներն արևմտա-յեվրոպական դեմք ունեյին։ Գոյություն ուներ յերկաթուղիների և խճուղիների խիտ ցանց։ Սիլեզիայում բարձր զարգացման հասավ քարածուխի և մետաղի արդյունաբերությունը, Պոզնանում—սննդի արդյունաբերությունը։

Խիստ տարբեր եր նաև ազգային մասերի կուլտու-

րական մակարդակը: Արևմուտքում անգրագետները կազմում էին 4—5 տոկոս, իսկ արևելքում (Վոլին, անտառային շրջան)—70:

Բնակչության խտությունը շատ անհամաչափ է: Նրա միջին խտությունը—80 մարդ՝ 1 քառ. կ.մ. վրա: Ավելի շատ է բնակչության միջին խտությունն արդյունաբերական շրջաններում,—Սիլեզիայում (270 մարդ) և Լոձի շրջանում (190): Միջին խտությունից մի քիչ ավելի յե հարավում: Արևելքում, մանավանդ անտառային շրջանում, բնակչությունը շատ նոսր է,— ընդամենը 20 մարդ 1 քառ. կ.մ. վրա:

Լեհաստանում բացի լեհերից, վորոնք կազմում են ամբողջ բնակչության մոտ 69 $^0/_0$-ը, կան նաև ուրիշ շատ ազգություններ, մանավանդ ուկրաինացիներ (14 տոկ.) — հարավ-արևելքում, հրեաներ, բելոռուսներ — արևելքում, գերմանացիներ— արևմուտքում: Վերցնելով իշխանությունը, լեհական բուրժուազիան ազգային փոքրամասնությունների նկատմամբ սկսեց վարել ճնշման հենց այն քաղաքականությունը, վորից առաջ տառապում էին իրենք, լեհերը: Իշխանությունների քթի տակ կազմակերպվում են արյունոտ ջարդեր,—հրեական, բելոռուսական, ուկրաինական:

Ցրվում են այն կազմակերպությունները, վորոնք լուսավորության աշխատանք են կատարում ազգային փոքրամասնությունների մեջ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Լեհաստանն իր տնտեսական կառուցվածքով ագրարային— ինդուստրիալ յերկիր է, կապիտալիզմի զարգացման միջին մակարդակով: Գյուղատնտեսությամբ ապրում է բնակչության 65 $^0/_0$, արդյունաբերությամբ— միայն 15 $^0/_0$-ը: Գյուղատնտեսական բնույթ ունի ամբողջ յերկիրը, իսկ արդյունաբերությունը, բացի սննդի արդյունաբերությունից, կենտրոնացված է արևմտյան մի քանի շրջաններում: Այստեղ Սիլեզիան և Լոձի շրջանը գրեթե ամբողջովին արդյունաբերական են:

Լեհաստանի նախապատերազմյան արդյունաբերությունն ավելի լայն ծավալ ուներ, քան այժմյանը. նա աշխատում եր վոչ թե տեղական, այլ այն պետությունների շուկաների համար, վորոնց մեջ մտնում եր Լեհաստանը: Այդ առանձնապես վերաբերում է Լոձի ռայոնի տեքստիլ արդյունաբերության, վորն աշխատում եր Ռուսաստանի համար և հանքագործական Սիլեզիային, վորն ածուխ ու մետաղ եր մատակարարում Գերմանիային: Այժմ վերացել են այդ շուկաները, վորոնց համար աշխատում եր լեհական արդյունաբերությունը, իսկ նոր շուկաներ չեն ստեղծվել: Լեհաստանի ներքին շուկան անկարող է սպառել նրա արդյունաբերական ապրանքները: Բնակչության $^3/_4$-ը գյուղական է: Նրա մեծամասնությունը չափազանց աղքատ է, չունի գործարանային ապրանքներ գնելու հնարավորություն:

Արդյունաբերության բոլոր հին ճյուղերը— տեքստիլ, մետաղագործական և սննդի,—անկման վիճակում են գտնվում: Տեքստիլ արդյունաբերության մեջ առաջին տեղը բռնում է բամբակյա գործվածքների արտադրությունը, վորը կենտրոնացված է գլխավորապես Լոձի շրջանում, քարածուխի ավազանին մոտ: Մետաղագործական արդյունաբերությունը կենտրոնացված է Սիլեզիայում:

Արդյունաբերության միակ ծաղկած ճյուղը ռազմականն է: 1928 թվականին ստանալով ամերիկական մի խոշոր փոխառություն, լեհական կառավարությունը ծախսեց գլխավորապես ռազմական ձեռնարկությունների վրա: Վերջին ժամանակներս կառուցված են 15 ռազմական նոր գործարաններ, վորոնց թվին պատկանում է Տարնովում գտնվող քիմիական խոշոր գործարանը:

Միայն տեքստիլ և մասամբ սննդի արդյունաբերությունն է գտնվում լեհական կապիտալի ձեռքում: Հանքային, մետաղագործական և ռազմական արդյունաբերության մեջ ներդրված է արտասահմանյան կապիտալը, նավթարդյունաբերության մեջ— ֆրանսիականը,

Սիլեզիայի քարածխային արդյունաբերության մեջ— անգլիական ու ֆրանսիական, Թուջի ու պողպատաձուլման արդյունաբերության մեջ— ամերիկական, ռազմական արդյունաբերության մեջ—ամերիկական, անգլիական ու ֆրանսիական կապիտալը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Լեհաստանը խոշոր կալվածատիրական և կուլակային հողատիրության յերկիր է: Գյուղացիության հիմնական մասսան տնտեսությունը վարում է մանր և մանրագույն հողամասերում: Հաճախակի գրավվում են սակավահող գյուղացիների արտատեղերը և այդ գյուղացիներին տալիս են ավելի վատ հողամասեր, նրանց հողը տալով կուլակներին: Պետությունը վարկեր տալիս է միայն կալվածատերերին ու կուլակներին, իսկ չքավորությունն ստիպված է դիմել վաշխառուներին, վճարելով նրանց ամսական 10—15 %: Գյուղացիների վրա յե ընկնում նաև հարկերի գլխավոր ծանրությունը: Այս բոլորը կատարյալ աղքատության է հասցնում գյուղացիական մասսաներին:

1919 թվին կատարվեց ագրարային թերի ռեֆորմ: Վորոշված եր վերցնել խոշոր կալվածքների ավելորդ հողը, բաժանել մանր հողամասերի և դրամով վաճառել հողագործներին: Սակայն այդ նպատակին հատկացվեց խոշոր կալվածատերերի հողի 30 %-ից ել պակաս, այն ել միայն արևելյան Լեհաստանում: Յեվ նույնիսկ այդ չնչին հողերն ել չհասան չքավորներին: Նոր հողամասերը գնեցին սպեկուլյանտները, իսկ ԽՍՀՄ-ին սահմանակից շրջաններում կառուցվեցին զինվորական ավաններ, հողը բաժանվեց կառավարությանը հավատարիմ սպաների և յենթասպաների միջև:

Յերկրագործությունը կատարվում է առաջվա պես: Նա արևմուտքում ինտենսիվ է, Լեհաստանի մնացյալ մասերում— հետամնաց: Գլխավոր հացաբույսը հաճարն է: Վերջինս ավելցուկ է տալիս միայն արևմուտքի խոշոր կալվածքներում: Ցորենը մշակվում է գլխավորապես Մերձկարպատյան բարձրության վրա, մեծ մա-

սամբ շաքարի ճակնդեղի հետ միասին և չի բավարարում յերկրի կարիքներին: Կարևոր տեղ է բռնում կարտոֆիլի մշակումը:

Անտառները պատկանում են գլխավորապես կալվածատերերին, մասամբ պետության: Անտառներն անխնա կտրատվում են պարտքերի վճարման համար: Կտրատվածն ավելի շատ է, քան տարեկան աճը, այս պատճառով անտառների տարածությունն արագ պակասում է:

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ: Լեհաստանի հարավում և արևելքում յերկաթուղիների ցանցն ավելի նոսր է, նա լարված չի աշխատում: Տրանսպորտը խիստ լարված է աշխատում արևմուտքում, վորտեղ Սիլեզիայից գնում է բեռների յերկու մեծ հեղեղ,—մեկ կողմից դեպի Լոձի տեքստիլ շրջանը, իսկ մյուս կողմից, արևմտյան սահմանների յերկարությամբ, դեպի Բալթիկ ծովի նավահանգիստները: Բավական մեծաքանակ են նաև այն բեռները, վորոնք փոխադրվում են դեպի խոշոր քաղաքները—Վարշավա— 1 միլիոն բնակիչ, Լոձ—600 հազարից ավելի, Լվով, Պոզնան, Վիլնո, Կրակով—200 հազար: Դեպի արևելք փոխադրվող բեռները քիչ են:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ: Լեհաստանի արտաքին առևտրի բնույթը ցույց է տալիս, վոր նրա տնտեսության զարգացումը հետ է մնում: Արտածվում է գլխավորապես հումք— ածուխ, փայտեղեն, փոքր քանակությամբ հաճար և խոզի միս: Լեհաստանն ավելի շատ տեքստիլ ապրանքներ ու մեքենաներ է ներմուծում, քան արտածում է: Գյուղատնտեսական մթերքներ ել ավելի շատ է ներմուծում, մի հանգամանք, վոր բոլորովին նորմալ չե առավելապես գյուղատնտեսական յերկրի համար: Ներմուծվող ապրանքների մեջ գերակշռում են ֆաբրիկատներն ու կիսաֆաբրիկատները,— տեքստիլ ապրանքներ, մեքենաներ, սննդամթերքներ: Ներմուծումն ավելի յե արտածումից: Ոտար պետությունների հետ հաշիվ տեսնելիս դեֆիցիտը ծածկվելու աղբյուր չի

լինում, ընդհակառակը, նրա վրա ավելանում է հին պարտքը։ Լեհաստանն ստիպված է խոշոր գումարներ վճարել արտասահմանյան փոխառությունների դիմաց։

Պարզ է, վոր պետական ծախսերի ու մուտքերի նախահաշիվը (պետական բյուջե) մեծ դեֆիցիտ է տալիս։ Յեկամուտներ ստացվում են ծխախոտի և ողու մենաշնորհից, ուղղակի և անուղղակի հարկերից։ Այդ բոլորը գանձվում է գլխավորապես չքավորությունից և չի բավականանում ծախսերը ծածկելու համար։ Պետության ծախքերի յերկու հինգերորդը կատարվում է յերեք հարյուր հազարանոց բանակի վրա։ Բնակչությունից գանձվող հարկերն աճում են ու աճում, գործարանների բանվորության աշխատավարձը շատ ավելի ցածր է, քան Յեվրոպայի կապիտալիստական խոշոր յերկրներում։ Ժամանակակից ճգնաժամը տնտեսական քայքայումը ծայրահեղ աստիճանի յե հասցրել։

Ժամանակակից Լեհաստանն իրենից ներկայացնում է սոցիալական ու ազգային հակասությունների մի կծիկ։ Ճնշված դասակարգերն և ազգություններն անցնում են պայքարի ավելի ակտիվ ձևերին։ Կառավարությունն ու բուրժուազիան դրան պատասխանում են ֆաշիստական տեռրորով։ Կառավարությունը կառավարում է հանրապետությունը, հաշվի չառնելով պարլամենտը—սեյմը։ Չնայելով ֆաշիստական տեռրորին, Լեհաստանում չեն դադարում վոչ բանվորների գործադուլային պայքարը, վոչ էլ գյուղացիական խռովությունները։

Լեհաստանի կոմունիստական կուսակցությունը համախմբում է լեհական պրոլետարիատի առավել ակտիվ ու գիտակից մասը և մեծ ազդեցություն ունի բոլոր արդյունաբերական շրջաններում, ինչպես այդ ցույց տվին 1928 թվականի ընտրությունները։

Համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո Լեհաստանը դարձավ Ֆրանսիայի հլու գործակիցը, յերբ վերջինս ագրեսիվ պլաններ եր գծում ԽՍՀՄ դեմ։

Լեհական իմպերիալիստները յերազում են «ծովից—ծով Լեհաստանի» մասին, այսինքն՝ Բալտիկ ծովից մինչև Սև ծովը։

Այդ ակտիվ թշնամական քաղաքականությունն այժմ փոխարինվում է ավելի նորմալ հարաբերություններով։ Շնորհիվ իր հաստատուն խաղաղասիրական քաղաքականության, ԽՍՀՄ-ը Լեհաստանի հետ կնքեց միմյանց վրա չհարձակվելու պայմանագիր։ Վերջինս ավելի մեծ նշանակություն է ստանում նրանով, վոր միաժամանակ նույնպիսի պայմանագրեր կնքվեցին Մերձ-Բալտյան պետությունների և վերջապես, Ֆրանսիայի հետ։

4. ՌՈՒՄԻՆԻԱ

Մինչև պատերազմը Ռումինիայի սահմանները բնական եյին,—Պրուտ գետը, Դանուբի ստորին հոսանքը և Սև ծովը—արևելքում, Դանուբը—հարավում, Կարպատները—արևմուտքում և հյուսիսում։ Միայն հյուսիս-արևելքում սահմանն անցնում եր պայմանական գծով։ Պատերազմից հետո, վորի ժամանակ Ռումինիան Անտանտայի կողմն եր, նա ստացավ նոր տերրիտորիաներ։ Ավստրիայից նրան անցավ Բուկովինան, Հունգարիայից—Տրանսիլվանիան կամ Սեմիգրադը, և Բանատը. Բուլղարիայից—արևմտյան Դոբրուջան։ Բացի դրանից, Ռումինիան ԽՍՀՄ-ից ավազակաբար գրավեց Բեսարաբիան, իր սահմանները լայնացնելով դեպի արևելք, մինչև Դնեստր։ ԽՍՀՄ, իհարկե, չեր կարող հաշտվել այդ գրավման հետ և առաջադրեց իր իրավունքը։ Կարպատները, վոր առաջ սահմանագիծ եյին, դարձան Ռումինիայի ներքին լեռներ։

Հետպատերազմյան գրավումների շնորհիվ տերրիտորիան և բնակչության թիվն ավելացավ յերկու անգամ։ Միևնույն ժամանակ ավելացավ բնակչության կազմի ցեղային բազմատեսակությունը։ Հին Ռումի-

նիայում բնակչության 9/10-ը ռումիններ էին: Նոր Ռումինիայում նրանք բնակչության միայն կեսն են կազմում: Ռումինիայում կան հետևյալ ազգային փոքրամասնությունները.—Բեսարաբիայի 2 1/2 միլիոն մոլդավանները, վորոնք միայն լեզվով են հիշեցնում ռումիններին, բայց իրականում հանդիսանում են ուրիշ



Նկ. 18. Ռումինիայի քարտեզը:

Պայմանական նշաններ. 1. լեռներ. 2. բարձրություններ. 3. դաշտավայրեր. 4. քարածուխ. 5. քարածխային ավազան. 6. նավթ. 7. գազ. 8. յերկաթ. 9. պղինձ. 10. Ռումինիայի հին սահմանը:

Քարտեզի վրայի թվերը. 1. Բիգոր լեռներ. 2. Բանատյան լեռներ. 3. Տրանսիլվանյան լեռներ. 4. Կարպատներ:

ազգություն, մոտ 2 միլիոն մադյարներ (հունգարացիներ), 1 միլիոնից ավելի ուկրաինցիներ, 900 հազարից ավելի բուլղարներ և սերբեր, 800 հազարից ավելի գերմանացիներ, մոտ 600 հազար հրեաներ:

Ազգային փոքրամասնությունների վերաբերմամբ բացարձակ ճնշման քաղաքականություն է վարվում: Կազմակերպվում են արյունոտ ջարդեր: Պետական լեզու ճանաչվում է միայն ռումիներենը:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Ռումինիայի մակերևույթը բազմազան ձևեր ունի: Նրա 1/5-ը լեռներ են, 2/5 բլուրներով ծածկված հայթավայրեր և դաշտավայրեր:

Ռումինիայի սահմաններում է գտնվում Կարպատյան լեռների արևելյան կողմի հարավային մասը, այսպես կոչված՝ Բուկովինյան-Մոլդավյան Կարպատները և հարավային ամբողջ սեպաձև մասը, վորը կոչվում է Տրանսիլվանյան Ալպեր: Այստեղ մի քանի գագաթներ ունեն մինչև 2 1/2 կ.մ. բարձրություն: Արևմտյան Տրանսիլվանյան Ալպերից ձորով (վորի միջով յերկաթուղի յե գնում դեպի Դանուբ) բաժանվում է Բանատյան հանքային լեռների մասսիվը: Կարպատյան աղեղի ներսում գտնվում է բլրոտ Տրանսիլվանյան հարթավայրը: Վերջինս արևմուտքից շրջապատված է Հունգարական դաշտավայրով, վորի արևելյան մասն այժմ պատկանում է Ռումինիային: Տրանսիլվանյան Ալպերի հարավից գտնվում է «յենթալեռների» մի նեղ գոտի, վորն աստիճանաբար ցածրանում է մինչև Դանուբի դաշտավայրը: Նա գրավում է Ռումինիայի ամբողջ հարավը և արևելքում միանում է Սև-ծովյան դաշտավայրին: Մոլդավիայի և Բեսարաբիայի միջին և հյուսիսային մասերը կազմում են բլրոտ հարթավայրեր:

Յենթալեռների մոտ է գտնվում Ռումինիայի կարևորագույն հանածոն — նավթը: Վերջինս ամենից շատ հանվում է Պլոյեշտի շրջանում: Բանատյան հանքային լեռներում կան յերկաթի ու պղնձի հանքեր: Այդ լեռներից դեպի արևելք կա քարածուխի մի փոքրիկ ավազան: Յերկաթի և ածուխի հանքերի մոտ, Ռեշիցում գտնվում է Հունգարիայից Ռումինիային անցած պողպատաձուլական, վագոնաշինարարական և զենքի (հրանոթներ, հրացաններ) գործարանը:

Ռումինիայի տրամադրության տակ է գտնվում ջրային կարևոր մի ճանապարհ, Դանուբը, վորը Կենտրոնական Յեվրոպան միացնում է Սև ծովին: Դանուբի վրայով է փոխադրվում Ռումինիայի արտածած ապ-

րանքների մեծ մասը: Դանուբի գետաբերանից քիչ հեռու նրա մեջ թափվում է Պրուտ կոչված նավարկելի գետը:

Կլիման և հողը նպաստավոր են գյուղատնտեսության համար: Ամառը շոգ է ու յերկարատև: Անձրևներ գալիս են գլխավորապես ամառվա սկզբին: Տեղումները լեռներում ավելի շատ են: Կլիման չորային է միայն Սև-ծովյան դաշտավայրում և Տրանսիլվանյան հարթավայրի ներքին մասերում: Բացի լեռնային աղեղի շրջաններից, մնացած Ռումինիան ունի տափաստանային հոչեր—թուխ, շագանակագույն հողեր, իսկ Մոլդավիայում ու Բեսսարաբիայում—սևահողեր:

Բլրոտ հարթավայրերն ու դաշտավայրերը մշակվելուց առաջ ունեցել են տափաստանային բուսականություն: Լեռներն անտառոտ են: Ռումինիային նոր միացված յերկրներում—Բուկովինայում և Տրանսիլվանիայում անտառները բռնում են ընդհանուր մակերևույթի $^1/_4$-ը: Այստեղի անտառները մեծ մասամբ սաղարթային են (կաղնի, հաճարենի):

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ռումինիան պատերազմից հետո էլ մնաց ագրարային յերկիր, թույլ սաղմնավորված արդյունաբերությամբ: Բնակչության 80 %-ն զբաղված է գյուղատնտեսությամբ: Ռումինիան արտածում է համարյա բացառապես սննդի և գործարանային հումք (արտածման 50 տոկոսից ավելին նավթ ու հաց է, մոտ 20 %-ը—փայտեղեն): Ներմուծման $^2/_3$ մասը պատրաստի ապրանքներ են:

Թե՛ հին և թե՛ նոր միացված շրջաններում գերակշռում է խոշոր հողատիրությունը: Աղքատությունը հողազուրկ և սակավահող գյուղացիների մեջ հսկայական դժգոհություն է ստեղծել:

Հայտարարվել եր ագրարային (հողային) ռեֆորմ, վորով խոշոր կալվածքները պիտի բաժանվեյին մանր հողամասերի և վերջիններս բարձր գներով պիտի տրվե-

յին պատերազմին մասնակցողներին: Ռումինիայում, ինչպես նաև Մերձ-Բալթյան յերկրներում, ագրարային ռեֆորմն ազգայնական բնույթ ուներ և այստեղ նա ուղղված եր հունգարացիների դեմ: Սակայն գյուղացիության մեծամասնությունը մնաց նախկին դրության մեջ—հողազուրկ կամ սակավահող:

Բացի Տրանսիլվանիայից ու Բանատից, մնացած վայրերում դաշտերը մշակվում են պրիմիտիվ յեղանակներով: Նույնիսկ արգավանդ հողերի բերքը ցածր է:

Դաշտագործության մեջ գերակշռում են հացահատիկային կուլտուրաները, մանավանդ ցորենն ու մայիսը: Ցորեն մշակվում է գլխավորապես Ռումինիայի արևմուտքում, թե՛ նախկին հունգարական դաշտերում և թե՛ Դանուբի դաշտավայրի արևմուտքում, վորը Ռումինիայի հացի գլխավոր աղբյուրն է: Յերկրի մնացած մասերում գերակշռում է յեգիպտացորենը, իսկ Բեսսարաբիայի հարավում և Դոբրուջայում—գարին: Մայրաքաղաքի բնակչության կարիքները հոգալու համար զարգացավ բանջարանոցային տնտեսությունը: Բլրոտ հարթավայրերում զարգացան այգեգործությունը (գլխավորապես սալոր) և խաղողի մշակումը:

Անասնապահության մեջ գլխավոր դեր է խաղում վոչխարաբուծությունը, վորն առանձնապես զարգացած է Դանուբի դաշտավայրի արևելյան մասում և Դոբրուջայում: Ժողովրդական սննդի մեջ մեծ դեր է խաղում ձուկը: Ձկնորսությունը զարգացած է մանավանդ Դանուբի գետաբերանի մոտ:

Արդյունաբերությունը թույլ է զարգացած: Ռումինիայի կառավարությունը փորձում եր արհեստականորեն ստեղծել արդյունաբերություն, բարձր մաքս նշանակելով ներմուծվող ապրանքների վրա: Խոշոր կապիտալիստական բնույթ ստացան միայն նավթի հանուրդն ու մշակումը, մանավանդ Պլոյեշտի շրջանում, մասամբ մետաղագործական ու մետաղամշակման արդյունաբերությունը—Ռեշիցում: Շատ կան ավելի

մանր ձեռնարկություններ,— Բուկովինայում— փայտամշակման գործարաններ, Բուխարեստում և Դանուբին մոտ վայրերում— շոգեաղորիքներ: Մեդիաշում, շնորհիվ բնական գազի, զարգացել է քիմիական արդյունաբերությունը:

Արդյունաբերության կարևորագույն տեսակները,—նավթային, մետաղագործական, փայտագործական, ռազմական ճյուղերը, ինչպես և Դանուբի նավագնացությունն ու նավահանգստային կառուցումները գտնվում են ոտարյերկրյա,—ֆրանսիական, անգլիական և իտալական կապիտալի ձեռքում:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: Այժմյան տնտեսական ճգնաժամը սարսափելի ուժով հարվածեց Ռումինիային: Գյուղացիությունը բոլորովին քայքայված է: Գյուղատնտեսական մթերքների գները չափից դուրս ընկան: Պլոյեշտում նավթի ամբողջ ցիստերններ թափում են գետին, վորպեսզի նրա գինը չընկնի: Ցորենի, ալրանքային հացահատիկների մշակությունը կրճատվեց: Ավելացավ միայն յեգիպտացորենի քանակը, վորը սոսկ սպառողական նշանակություն ունի: Արդյունաբերությունը կրճատվեց, բանվորների աշխատավարձը պակասեց ավելի, քան մի վորևէ այլ յեվրոպական յերկրում: Պայքարելով բանվորների մեջ առաջացած դժգոհության դեմ, կառավարությունն սկսեց բանվորների մասսայական ձերբակալություններ, մեղադրելով նրանց կոմունիզմի համար: Սակայն այդ չկասեցրեց հեղափոխական շարժումը: 1933 թվի սկզբին հեղափոխության ալիքը տարածվեց նախ և առաջ նավթարդյունաբերության շրջանները, ապա Բուքարեստ, Կոստանցա, Ռեշիցա և այլ արդյունաբերական կենտրոններ:

Ռումինիան մինչև վերջին ժամանակներս Ֆրանսիայի նույնպիսի վասալն էր, ինչպես և Լեհաստանը: Վերջինիս հետ դաշնակցած՝ նա շարունակ պատրաստվում էր ԽՍՀՄ դեմ պատերազմելու:

Ռազմական գործարաններին տրամադրվում եյին լավ պատրաստված ֆրանսիական բանվորներ: Արտասահմանում կառուցվում եյին ականակիր նավեր, սուրաջրյա նավակներ և սավառնակներ: Անգլիական կապիտալի և ֆրանսիական հրահանգիչների օգնությամբ Կոնստանցայում կառուցված է ռազմա-ծովային բազա: Ոտարերկրյա դրամով կառուցվում են ռազմագիտական նշանակություն ունեցող յերկաթուղիներ և ավտոուղիներ: Բանակում կան ֆրանսիական հրահանգիչներ:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՍՀՄ արևմտյան հարևանների բնական պայմանները շատ տարբեր են: Հյուսիսում (Ֆինլանդիա) նրանք ավելի պետքական են անտառագործության և մարգագետինների մշակման համար, հարավում (Ռումինիա)—հացահատիկային տնտեսության համար (ցորեն, յեգիպտացորեն): Հանածոների պաշարը, բացի Լեհաստանի քարածուխից և Ռումինիայի նավթից, չնչին են: Ֆինլանդիան հարուստ է սպիտակ ածուխով:

Արդյունաբերության զարգացմամբ ԽՍՀՄ արևմտյան հարևանները շատ են հետ մնացել առաջավոր կապիտալիստական յերկրներից,—մանավանդ Լիտվան և Ռումինիան: Տնտեսությունն ընկած է, վորովհետև այս պետությունները կտրվել են նախապատերազմյան շուկաներից և այժմյան իրենց շուկան չեն կարգավորել ԽՍՀՄ հետ: ԽՍՀՄ բոլոր արևմտյան հարևանները տնտեսապես և քաղաքականապես միանգամայն կախված են Անգլիայի ու Ֆրանսիայի իմպերիալիստներից, վորոնք նրանց դարձրել են իրենց վասալները: Տնտեսության քայքայումն ուժեղացավ այն հսկայական ծախքերով, վորոնք կատարվում են պատերազմի պատրաստության համար: Ճգնաժամը խիստ ծանր ձևեր ընդունեց:

Ստուգիչ հարցեր

Որո՞նք են նախկին Ռուսաստանի մինչպատերազմյան սահմանները։ Որո՞նք են ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր հարևանի սահմանները։ Ո՞ր գծով են ընթանում ռազմական այերոկայանները։ Որտե՞ղ են գտնվում ռազմա-ծովային բազաները։ Ի՞նչ բնույթ և նպատակ է ունեցել ագրարային ռեֆորմը ԽՍՀՄ հարևան յերկրներում։ Պատերազմից հետո տնտեսության զարգացումն ի՞նչ դժվարությունների հանդիպեց։ ԽՍՀՄ յուրաքանչյուր հարևանի տնտեսությունն ի՞նչ ուղղություն ունի։ Եստոնիայում և Լատվիայում արդյունաբերության վո՞ր ճյուղերն են գլխավոր։ Լեհաստանն ու Ռումինիան արդյունաբերական ի՞նչ շրջաններ ունեն։ Ցույց տվեք ԽՍՀՄ հարևանների գլխավոր նավահանգստային քաղաքները։ Ինչո՞վ է արտահայտվում ճգնաժամը։

ԱՄԵՐԻԿԱ

I. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (ՀԱՄՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄՆ-ը «կապիտալիզմի գլխավոր յերկիրն է, նրա ամրոցը» (Ստալին)։ Կապիտալիստական աշխարհում նա առաջին տեղն է բռնում իր բնական և կուտակած հարստություններով, արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքի չափով, համաշխարհային առևտրին մասնակցելով և կապիտալի արտածմամբ։ Միևնույն ժամանակ ՀԱՄՆ-ը մի կողմից «ճոխության մեջ հղփացած մի քանի միլիարդատերերի և մյուս կողմից աղքատության մեջ ապրող միլիոնավոր աշխատավորների յերկիր է» (Լենին)։ Ճգնաժամն ամենաուժեղ թափով վնասեց «ՀԱՄՆ-ին, վորն իր ձեռքում կենտրոնացրել է աշխարհիս բոլոր յերկրների արտադրության ու սպառման վոչ պակաս, քան կեսը» (Ստալին)։

ՀԱՄՆ-ը գրավում է ընդարձակ տերրիտորիա Հյուսիսային լայնության 49° և 25° տակ, Հյուսիսային Ամերիկայի միջին, կլիմայական և այլ բնական պայմանների տեսակետից ամենանպաստավոր մասում։

Յերկրի արևելյան կողմում գտնվում է Ատլանտյան ովկիանոսը, վորի վրայով հաղորդակցություն է կատարվում Յեվրոպայի հետ։ Ատլանտյան ովկիանոսի ափերում, վորոնք խիստ կտրտված են մանավանդ

հյուսիսային մասում, կան շատ բնական նավահանգիստներ, վորոնք հարմար են նավահանգստային քաղաքներ կառուցելու համար:

Արևմտյան կողմից գտնվում է Մեծ օվկիանոսը, վորի ափերն ավելի քիչ հարմարություններ ունեն հաղորդակցության տեսակետից:

ՀԱՄՆ-ը, գտնվելով յերկու օվկիանոսների մեջ, տնտեսական տեսակետից շատ հարմար դիրք ունի: Նա եժան, հարմար ծովային ճանապարհներով կապվում է Ամերիկայի մյուս յերկրների հետ, յենթարկում է նրանց իր տնտեսական ազդեցության: Ատլանտյան օվկիանոսի վրայով ՀԱՄՆ-ը կապվում է Յեվրոպայի հետ, Մեծ օվկիանոսի վրայով—ասիական յերկրների և Ավստրալիայի հետ:

Ռազմական ու քաղաքական տեսակետից ևս ՀԱՄՆ-ի դրությունը շատ նպաստավոր է. օվկիանոսները բաժանում են նրան ամենաուժեղ կապիտալիստական յերկրներից:

ՀԱՄՆ-ի աշխարհագրական դիրքի նպաստավորությունն ավելի ուժեղացավ, յերբ յերկու օվկիանոսները միացան Պանամայի ջրանցքով:

Ցամաքի վրա ՀԱՄՆ-ին սահմանակից են՝ հյուսիսից—Կանադան, հարավից— Մեկսիկան: Այդ սահմանների վրա չկա վոչ մի բնական արգելք,—լեռնախմբեր, անապատներ և այլն: Տնտեսական տեսակետից այդ յերկու յերկրներն ամբողջովին կախված են ՀԱՄՆ-ից:

ՀԱՄՆ տարածությունը բավական մեծ է: Նրա տերրիտորիան մոտ 8 միլլիոն քառ. կ.մ. է, բնակչությունը—123 միլիոն: Առանձին գաղութներից ամենախոշորն է Ալյասկան,—1,5 միլլիոն ք. կ.մ., բայց այնտեղի բնակչությունն ընդամենը 60 հազար է: Բոլոր մնացած գաղութների տարածությունը 300 հազ. քառ. կ.մ. մի փոքր ավելի է, բնակչությունը— 14 միլլիոն:

Այսպիսով իր գաղութների հետ ՀԱՄՆ-ն ունի 9.8 միլլիոն քառ. կ.մ. տարածություն և 137 միլլիոն բնակիչ[1]):

ՀԱՄՆ-ը բուրժուական ֆեդերատիվ (միութենական) հանրապետություն է: Նա բաղկացած է 48 «նահանգներից», մեկ շրջանից—Կոլումբիա, Վաշինգտոն մայրաքաղաքով— և յերկու այլ տերրիտորիաներից (գաղութներից)— Ալյասկա և Հավայի: Յուրաքանչյուր նահանգ ունի ինքնավարություն: Ամբողջ ֆեդերացիայի գլուխն է կանգնած նախագահը, վորն ընտրվում է 4 տարով, և պարլամենտը— կոնգրեսը, վորի նիստերը տեղի յեն ունենում Վաշինգտոնում:

Յերկրում գլխավորող դեր են խաղում խոշորագույն կապիտալիստները: Նրանց նշանակած մարդը՝ նախագահն օժտված է խիստ լայն լիազորություններով, վորպեսզի անարգել կատարի բուրժուազիայի կամքը: Մյուս բուրժուական յերկրներում կառավարությունը գեթ ձևականորեն պատասխանատու յե պարլամենտի առաջ, իսկ ՀԱՄՆ նախագահը ինքն է նշանակում առանձին հաստատությունների (վորոնք համապատասխանում են մինիստրություններին) պետերին:

Այժմ ՀԱՄՆ քաղաքներում ապրում է նրա բնակչության կեսից ավելին: Ամենախոշոր քաղաքները գտնվում են Ատլանտյան ափի հյուսիս-արևելքում և Մեծ լճերի յերկարությամբ, վորոնք կարծես օվկիանոսի շարունակությունը լինեն յերկրի ներսում: Քաղաքներից 5-ը միլլիոնավոր բնակչություն ունեն,—Նյու-Յորկ (8 մի-

---

1) Համեմատության համար. ԽՍՀՄ—21·350 հազար ք. կ. մ., բնակչությունը—165 միլլիոն: Բրիտանական կայսրություն—34 միլլիոն ք. կ. մ., բնակչությունը—470 միլլիոն: Միայն Անգլիան—228 հազ. ք. կ. մ., բնակչությունը—45 միլլիոն: Գերմանիա—471 հազ. ք. կ. մ., բնակչությունը—65 միլլիոն: Ֆրանսիա—551 հազ. ք. կ. մ., բնակչությունը—42 միլլիոն, գաղութներով—12 միլլիոն քառ. կ. մ., բնակչությունը—100 միլլիոն:

լիոն բն.), Չիկագո, Ֆիլադելֆիա, Բոստոն յեվ Դետրոյտ: Մեկսիկյան ծոցի ափին խոշորագույն քաղաքն է Նոր-Օռլեանը (400 հազ.): Մեծ օվկիանոսի ափին նոր քաղաք Սան-Ֆրանցիսկոն իր արվարձաններով ունի 900 հազար բնակիչ:

ՀԱՄՆ մայրաքաղաքն է Վաշինգտոնը, կես միլիոն բնակչությամբ:

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՄԱԿԵՐՎՈՒՅԹ: ՀԱՄՆ-ի մակերևույթն իր կազմությամբ բաժանվում է 3 մասի. 1) Ապպալաչյան սիստեմի լեռներն արևելքում, 2) ընդարձակ, այսպես կոչված՝ կենտրոնական հարթավայրը մեջտեղում և 3) Կորդիլեր սիստեմի լեռներն արևմուտքում:

Ապպալաչյան լեռներ— Դրանք հնադարյան, այժմ վոչ բարձր լեռներ են: Նրանք հարթավայրի նմանություն ունեն, վորովհետև գագաթները տափարակ են և բարձրությունը չնչին: Միայն ծայրագույն հյուսիս - արևելքն է լեռնոտ: Ցերկարությամբ ձգված վայրէջքներով արևելքից բաժանվում է Պյեդմոնտ կոչված բլրոտ հարթավայրը (այդ բառը նշանակում է ստորոտ կամ նախալեռներ), արևմուտքից— Ապպալաչյան բլրոտ տարածությունը: Պյեդմոնտից դեպի արևելք ձգվում է Մերձ-Ատլանտյան դաշտավայրը: Նրա կողմում Պյեդմոնտն իջնում է սեպաձև: Այստեղ գետերը ջրվեժներ են կազմում:



Նկ. 19. Հ. Ամերիկայի պրոֆիլը 40-րդ զուգահեռականով.

Կենտրոնական հարթավայրը գրավում է արևելքի ու արևմուտքի բարձրությունների միջև գտնվող ամբողջ տարածությունը: Հարթավայրի միջև գտնվող մասը Միսսիսիպիի դաշտավայրն է: Միսսիսիպիի դաշտավայրի յեզրին, 100-րդ միջօրեականից դեպի արևմուտք, հարթության վրա կան բարձունքներ:

Հարթավայրի հյուսիսային մասում հողն ավազային է, հարավային մասում—լեռնային տեսակների մնացորդների հողեր, կամ սևահողեր:

100-րդ միջօրեականից դեպի արևմուտք կենտրոնական հարթավայրի մակերևույթը բարձրանում է մինչև 1 1/2 —2 կ.մ.: Այս գոտում, վորտեղ միշտ չոր տափաստաններ են յեղել, գոյություն ունեն շագանակագույն և գորշ հողեր:

Հարթավայրի արևմտյան կողմից գտնվում են համեմատաբար նոր, վոչ այնքան բարձր (3,5.—4 կ.մ.) Ժայռոտ լեռները: Լայնության ու յերկարության հովիտներով նրանք բաժանված են առանձին մասերի: Հովիտների բուսականությունն անտառային—տափաստանային է: Հովիտները կոչվում են «պարկեր»: Շատ տեղերում, ճեղքվածքներում առաջացել են հրաբխային տեսակներ: Շնորհիվ մեծ թվով «պարկերի», վորոնք դանազան ուղղություններով կտրատում են լեռները, այստեղ հեշտանում է հաղորդակցությունը[1]):

[1]) Ժայռոտ լեռների հյուսիս-արևելքում գտնվում է Յելոուստոնի պարկը: Տուրիստները հաճույքով են այցելում նրան: Պարկն ունի խորը կիրճեր, գետեր, հեյզերներ և տերրասներ, վորոնց վրայով ջուր է հոսում, հսկայական փշատերև ծառեր, կիսաընտելացրած արջեր և բիզոնների (վայրի ցուլեր) պահպանվող հոտեր:

Ժայռոտ լեռներից դեպի արևմուտք գտնվում է Հյուսիս—Ամերիկական Մեծ, չոր սարահարթը․ Նրա միջին բարձրությունը $1\frac{1}{2}$ կ․մ․ է:

Արևմուտքից այդ սարահարթը շրջապատող լեռները բաժանվում են յերկու մասի—Կասկադյան լեռներ (այսինքն ջրվեժներով լեռներ) հյուսիսային կողմում և Սիերրա Նեվադա (այսինքն ձյունապատ) լեռներ,—հարավային կողմում: Գագաթների բարձրությունը հասնում է մինչև 4—4,5 կ․մ․, ձյան գիծն սկսվում է 3,5 կ․մ․ բարձրությունից:

Ծովափի յերկարությամբ դեպի արևմուտք գտնվող մի նեղ դաշտավայրային գոտու մոտով անցնում են ծովափնյա Կորդիլյերները, վորոնց բարձրությունը մինչև 2,5 կիլոմետր է, հարավում նույնիսկ մինչև 3,5 կ․մ․: Նրանց և Սիյերա–Նեվադայի միջև գտնվում է Կալիֆորնիայի չոր հովիտը:

ԳԵՏԵՐ ՅԵՎ ԼՃԵՐ: ՀԱՄՆ–ի հյուսիս–արևելքում գտնվում են 5 մեծ լճեր (Վերին, Հուրոն, Միչիգան, Երի և Ոնտարիո): Նրանք միջանկյալ գետերով միանում և կազմում են աշխարհումս մեծագույն (240 հազ․ քառ․ կ․մ․) լիճը: Այդ գետերի վրա կան ջրվեժներ: Սրանցից խոշորագույնը Նիագարա գետի ջրվեժն է: Ջրվեժների շուրջը կառուցված են ջրանցքներ, վորոնք նավարկելի յեն ծովային նավերի համար: Լճերից սկսվում է Լավրենտիոս գետը, վորը Կանադայի սահմաններում թափվում է ովկիանոս: ՀԱՄՆ–ը սեփական ծովային ճանապարհ է կառուցել Նյու–Յորկից, Հուդզոն գետի վրայով, ապա ջրանցքով դեպի Երի լիճը: Նրա յերկարությունը մինչև Վերին լճի արևմտյան ափն ավելի քան 3 հազ․ կ․ մ․ է:

Ամբողջ կենտրոնական հարթավայրը գրավում է Միսսիսիպի գետի ավազանը: Հաշվելով նրա վտակ Միսսուրիի ակունքից, Միսսիսիպին աշխարհիս ամենաերկար գետն է—«հնդիկների ջրերի հայրը»: Նա կարող եր հսկայական դեր խաղալ տրանսպորտում, վորովհետև իր

վտակների հետ նա անցնում է ՀԱՄՆ ամբողջ տերրիտորիայով, մինչև 110–րդ միջօրեականը: Սակայն յերկաթուղային ընկերությունները, պայքարելով գե-



Նկ․ 20․ Հ․ Ամերիկայի մակերևույթի քարտեզ:

Պայմանական նշաններ.—1. բարձրություններ. 2. լեռներ. 3. դաշտավայրեր. 4. գլխավոր յերկաթուղիներ. 5. նավթային շրջաններ. 6. շահագործվող ածխային շերտեր. 7. լեռնախմբեր:

Քարտեզի վրայի թվերը.—1. Պյեդմոնտ, Ապալաչյան բարձրություններ. 2. Սիերրա-Նեվադա. 4 ծովափնյա Կորդիլյերներ. 5. Կասկադյան լեռներ:

տային եժան տրանսպորտի կոնկուրենցիայի դեմ, փչացրին այդ հիանալի բնական ճանապարհը (գնեցին և հողով լցրին ջրանցքները, չվոչնչացրին գետերի վերին հոսանքների հատակներում յեղած ժայռերն ու անհարթությունները, ստորին հոսանքներում—ծանծաղուտները): Նավարկության համար Միսսիսիպիի կարևորագույն վտակներն են Իլլինոյս գետը, մանավանդ Ոգայոն, վորոնք ջրանցքներով միացած են Մեծ լճերի հետ:

Արևմուտքի գետերը սակավ նավարկելի յեն: Նույնիսկ նրանցից ամենախոշորները,—Կոլումբիան և Կոլո-

բաղոն, վորոնք հոսում են խորն ու նեղ կիրճերով, միայն վերին հոսանքում են հարմար նավարկության համար:

Բայց Արևմուտքի լեռնային գետերը ջրային էներգիայի հարուստ աղբյուրներ են: Խիստ կարևոր են նրանք նաև վոռոգման համար: ՀԱՄՆ-ում ջրային էներգիան հասնում է մինչև 60 միլիոն ձիու ուժի, վորից ոգտագործվում է 12 միլիոնը, այսինքն $^1/_5$ մասը: Էներգիայի պաշարի $^2/_3$-ը գտնվում է արևմուտքում, նախ և առաջ Կասկադյան լեռներում, ապա Ժայռոտ լեռներում: Արևելքում սպիտակ ածուխի գլխավոր աղբյուրն են կազմում Մեծ լճերի միջև յեղած, ժայռոտ հուներով գետերը, մանավանդ Նիագարայի ջրվեժը, ինչպես նաև լեռնոտ հյուսիս-արևելքի գետերի, Պյեդմոնտի լեռնային գետերի, Միսսիսիպիի և Միսսուրիի վերին հոսանքներում յեղած ջրվեժները[1]:

ԿԼԻՄԱ: ՀԱՄՆ-ում լեռները ձգվում են հյուսիսից հարավ: Հակադիր ուղղության բարձրություններ չկան, վոր արգելք լինեյին քամիներին: Սրանով է բացատրվում այն, վոր ոդի ցուրտ զանգվածներն ազատ անցնում են դեպի հարավ և տաք զանգվածները— դեպի հյուսիս, վորով բարեխառնությունը տարեկան և օրական մեծ տատանումներ ունի: Նույնիսկ Մեկսիկական ծոցի յենթա-արևադարձային դաշտավայրում յերբեմն հասնում են հյուսիսի ցուրտ հոսանքները: Ընդհանրապես, բացի Խաղաղ օվկիանոսի ափերից, ՀԱՄՆ-ի կլիման ցամաքային է: Ծովային հոսանքներից ՀԱՄՆ-ի կլիմայի վրա ազդեցություն ունի լաբրադորյան հոսանքը Ատլանտյան օվկիանոսում և տաք կալիֆորնյան հոսանքը Մեծ օվկիանոսում: Վերջինի ազդեցությունը

[1]) Նիագարայի ջրվեժի կանադական կողմում գտնվող խոշորագույն հիդրոկայանը տալիս է ընդամենը 650 հազար ձիու ուժ, վորը քիչ է մեր Դնեպրոգեսից: Արևմտյան չոր վայրերում հիդրոկայանների պատնեշների կառուցման հետ սովորաբար կառուցվում են նաև լճեր, արհեստական վոռոգման համար:

սահմանափակվում է միայն ծովափերով: Համեմատած Արևմտյան Յեվրոպայի հետ, ՀԱՄՆ տարեկան միջին բարեխառնությունը 5 աստիճան ցածր է:



Նկ. 21. ՀԱՄՆ տեղումների քարտեզ:

Ամբողջ արևելյան մասն ունենում է բավականաչափ մթնոլորտային տեղումներ: Արևմտյան մասը, բացի Խաղաղ օվկիանոսի ափերում մի նեղ գոտուց, չորային է:

Ատլանտյան օվկիանոսի և 95-րդ միջորեականի (Միսսիսիպիից մի փոքր դեպի արևմուտք) միջև գտնվող տարածությունը բաժանվում է յերկու կլիմայական գոտիների,—խառն անտառների գոտի, վորտեղ ավելի շատ են սոճիներն ու յեղևնիները (40-րդ զուգահեռականից դեպի հյուսիս) և սաղարթային անտառների գոտի, վորտեղ ավելի շատ է կաղնին (40-րդ զու-

գահեռականից դեպի հարավ)։ Մեքսիկայի ծոցի ափը և Ֆլորիդա թերակղզին ունեն յենթաարևադարձային կլիմա։ Բուսականությունը հարավային բնույթ ունի։ Այստեղ աճում են՝ բամբակը, բրինձը, բանանները, անանասները, նարինջները, կիտրոնները։

95-րդ միջօրեականի և Ժայռոտ լեռների միջև, հյուսիսից հարավ ձգված ե չոր տափաստանների շրջանը, վորը հասնում ե մինչև հեռու հյուսիս, Կանադա և սեպաձև բաժանում ե արևելյան կողմից հյուսիսային անտառային գոտին արևմուտքի Ժայռոտ լեռների անտառային գոտուց։

Մեծ սարահարթն ունի կիսաանապատային, իսկ հարավային մասում—անապատային կլիմա։ Խաղաղ ովկիանոսի ափը, վորտեղ շատ մթնոլորտային տեղումներ են լինում, Կասկադյան լեռների շրջանում ծածկված ե անտառներով, իսկ Սիերրա-Նեվադայի շրջանում-կոշտասաղարթ, մշտականաչ բույսերի (սրատերև և այլն) թփուտներով։ Այստեղ կան նարնջի ու կիտրոնի ծառերի անտառներ, հարավում—արմավենիներ։

Անտառները մի ժամանակ ծածկել են ամբողջ արևելքը և արևմուտքի լեռները։ Այժմ ել անտառների տարածությունը կազմում ե ընդհանուր տարածության 40 %-ը, սակայն իրականում անտառները հազիվ թե 25 %-ից ավելի լինեն, քանի վոր նրանք անխնա վոչնչացվում են։ Լավ են պահպանվել փշատերև անտառները հյուսիս-արևելքում, մանավանդ արևմուտքում, Ժայռոտ և Կասկադյան լեռներում։

Հանածո հարստությունները իրենց քանակությամբ պակաս են միայն ԽՍՀՄ-ից։ Նրանցից կարևորագույններն են՝ քարածուխը, նավթը, յերկաթն ու պղինձը, ապա արծաթը, արճիճը, վոսկին ու ցինկը։

Քարածուխի պաշարը հասնում ե 2 հազար միլիարդ տոննի։ Համարյա նույնչափ մեծ են նաև թուխ ածուխի պաշարները։ Քարածխի գլխավոր ավազանը գտնվում

ե հնադարյան Ապալաչյան լեռների շրջանում։ Այնուհետև պիտի հիշատակել այն ավազանները, վորոնք գտնվում են Կենտրոնական հարթավայրում և Ժայռոտ լեռների յերկարությամբ ձգվող բարձունքներում։

Նավթի պաշարը մի քանի անգամ պակաս ե ԽՍՀՄ նավթի պաշարից և արագությամբ սպառվում ե։ Բոլորովին քայքայված են Ապալաչյան նավթաշերտերը։ Հիմա ամենամեծ քանակությամբ նավթ տալիս են հարավային ու արևմտյան նավթահանքերը։ Նավթահանքերի հետ կապված են մեծ չափով ոգտագործվող բնական գազերը։

Յերկաթի գլխավոր հանքավայրը գտնվում ե Վերին լճի մոտ։ Այստեղ ստացվում ե ՀԱՄՆ-ի յերկաթի 0,9-ը։

Պղնձի, վոսկու, արծաթի և արճիճի հանույթը կախված ե հրաբխային տեսակների հանույթից։ Նրանք առանձնապես շատ են արևմուտքում, Ժայռոտ լեռներում, Մեծ սարահարթում և Սիերրա-Նեվադայում։ Վոսկի կա նաև Ալյասկայում։

Ցինկը մեծ քանակությամբ պատահում ե Ապալաչյան բարձրությունների հյուսիսում։

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ։ ՀԱՄՆ բնակչությունը պատկանում ե գլխավորապես յերկու ցեղի—սպիտակ, մոտ 0,9 և սև—մոտ 0,1։ Կես տոկոսից պակաս են կարմրամորթները՝ բնիկները և ասիական, դեղին ցեղին պատկանողները՝ ճապոնացիներն ու չինացիները։ Ամբողջ սպիտակ բնակչությունը կազմվել ե Ամերիկա գաղթածներից. սրանց թվին են պատկանում տեղական ամերիկացիները (սպիտակների $^2/_3$-ը), ոտարերկրացիները, վորոնք ծնվել են արտասահմանում և կիսաոտարերկրացիները, վորոնք ծնվել են Ամերիկայում, բայց այնպիսի ծնողներից, վորոնցից թեկուզ մեկը ծնվել ե վոչ ՀԱՄՆ-ում։

Գաղթածները բնիկներին—ամերիկական հնդիկներին քշեցին իրենց հողերից և նրանց անխնա վոչնչացրին։ Այսպիսով առաջ յեկավ ազատ հողերի մի հսկայա-

կան ֆոնդ: Քանի դեռ այդ ֆոնդն անսպառ էր, գաղթածներն օգտվում էին նրանից լայն չափով և ձրի: Դրանք էին անգլիացիները, իռլանդացիները, գերմանացիները, շվեդները, նորվեգացիները: Ավելի ուշ Ամերիկա գաղթեցին արևելյան ու հարավային Եվրոպայից սլավոնները, հրեաները, իտալացիները:

Սակայն 80-ական թվականներից հողային ֆոնդը սաստիկ կրճատվեց: Հիմա արդեն հարկավոր էր գնել ագարակները, իսկ նոր գաղթածները միջոցներ չունեյին վոչ ագարակներ գնելու, վոչ էլ նրանց սարքավորելու: Նոր յեկածները մասամբ բատրակներ էին դառնում, մասամբ գնում էին քաղաքներն և աշխատանք փնտրում իբրև վոչ վորակյալ բանվորներ:

Համաշխարհային պատերազմից հետո օրենքը խիստ սահմանափակեց չքավորության ներգաղթը և բոլորովին արգելեց բուրժուազիայի համար վոչ ցանկալի իդեոլոգիայով «վարակվածների», մանավանդ կոմունիստների մուտքը:

Նեգրերն առանձնապես շատ են հարավային նահանգներում: Սրանցից մի քանիսում նրանք կազմում են բնակչության կեսից ավելին: Նրանց մեծամասնությունը ստրկական պայմաններով աշխատում է կալվածատերերի հողի վրա: Նեգրերի իրավահավասարությունը թղթի վրա յե մնացել: Վոչ միայն հարավային, այլև հյուսիսային նահանգներում նեգրը համարվում է ցածր արարած: ՀԱՄՆ-ում նեգրերի վերաբերմամբ լայնորեն կիրարկվում են մահապատիժն ու գազանային ինքնադատաստանը (Լինչի դատարանը):

Հնդիկներ մնացել են 300 հազարից պակաս: XIX դարի վերջից նրանց սկսեցին հատկացնել առանձին հողամասեր: Այժմ հնդիկների տրամադրության տակ յեղած հողերը բոլորովին չոր են և անպտուղ: Հնդիկների մեծ մասն ապրում է Օկլահոմա նահանգում, վորպես մանր ֆերմերներ և աղքատներ:

ՀԱՄՆ-ի բնակչության միջին խտությունը 1 քառ.

կ.մ. վրա 15 մարդուց մի քիչ ավելի յե: Ամենախիտ բնակչություն ունի հյուսիսային, արդյունաբերական մասը: Այստեղ բնակչության միջին խտությունը 25 մարդուց ավելի յե, հյուսիս-արևելքում նույնիսկ 100 մարդուց ավելի:

Հարավային, յերկրագործական մասում միջին խտությունը 10-ից մինչև 25 մարդ է մեկ քառ. կ.մ. վրա:

Արևմտյան մասը, վորտեղ դեռ վերջացած չէ գաղութաշինարարությունը, ունի 10 մարդուց պակաս միջի խտություն, Մեծ սարահարթի մեծ մասում— 1 մարդուց պակաս, բայց Խաղաղ օվկիանոսի ափերում բնակչության միջին խտությունը 25 մարդուց ավելի յե:

Քաղաքային բնակչությունը ՀԱՄՆ-ում աճում է, գյուղական բնակչությունը պակասում: Միմիայն խոշոր քաղաքներում ապրում է բնակչության $^1/_4$-ը (ընդհանրապես բոլոր քաղաքներում—$^1/_2$-ից ավելին): Խոշոր քաղաքներն ավելի շատ են և քաղաքային բնակչության տոկոսն էլ ավելի բարձր է (60-ից ավելի) արդյունաբերական հյուսիսում:

Պրոֆեսիոնալ կազմ: Ըստ 1920 թվականի մարդահամարի, ինքնագործարար բնակչության պրոֆեսիաների բաժանումը ցույց է տալիս ինդուստրիայի գերակշռություն—26 % (1900 թվականին— 36 %), արդյունաբերություն և հանքագործություն— 33 % (1900 թվականին— 24 %), առևտուր և տրանսպորտ— 18 % (1900 թ.—15 %):

Դասակարգային կազմ: Վարձու բանվորների թիվը 1899 թվականից մինչև 1925 թ. ավելացել է, 17,2 միլիոնից հասել է 23 միլիոնի: Մասնավորապես գործարանային բանվորների, հանքագործների և տրանսպորտի բանվորների թիվը 6,7 միլիոնից հասել է 12,6 միլիոնի: Բատրակները կազմում են ֆերմաների հա-

սակավոր բնակչության $^{2}/_{3}$ մասը, գյուղական բուրժուազիան—$^{1}/_{3}$-ը: Քաղաքներում պրոլետարներն իրենց ընտանիքներով կազմում են բնակչության $^{2}/_{3}$-ը:

Խոշոր բուրժուազիան ընդամենը մի քանի տասնյակ հազար է, բայց իր ձեռքերում պահում է բանկերը, արդյունաբերությունը, առևտուրն ու տրանսպորտը և իր կամքով կառավարում է հարյուր միլիոնանոց ժողովուրդը: 1920 թվականին բնակչության 9 %-ի ձեռքում կենտրոնացված եր ամբողջ ժողովրդական հարստության 71 %-ը, վորն այն ժամանակ կազմում եր 700 միլիարդ ռուբլի:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Այն կորիզը, վորից զարգացավ ժամանակակից ՀԱՄՆ-ը, անգլիական գաղութներն եյին, վորոնք գտնվում եյին Հյուսիսային Ամերիկայի ատլանտյան ափերին: Նրանք գտնվում են յերեք տեղում—հյուսիսում, հարավում և սրանց մեջտեղը:

Հյուսիսում (Նոր Անգլիայում) 1620 թվականից հաստատվեցին այն գաղթողները, վորոնք իրենց սոցիալական դրությամբ պատկանում եյին մանր բուրժուազիային,—արհեստավորներ, մանր ֆերմերներ, առևտրականներ: Նրանց մի զգալի մասը պատկանում եր պուրիտանների աղանդին, վորն Անգլիայում կրոնական հալածանքների յեր յենթարկվում տիրող դասակարգերի կողմից: Նրանք պարապում եյին սպառողական տիպի գյուղատնտեսությամբ, ձկնորսությամբ, անտառահատությամբ, հնդիկներից մորթիներ գնելով, ինչպես նաև ծովային առևտրով և կոնտրաբանդով (մաքսանենգությամբ): Այստեղից դեպի Յեվրոպա արտածվում եր գլխավորապես ձուկ, փայտեղեն և մորթիներ:

Ովկիանոսի ափի հարավային մասում տիրող դասակարգ եյին հանդիսանում անգլիական արիստոկրատիայից դուրս յեկածները: Լինելով միանգամայն ապահովված, նրանք ատլանտյան ափի հարավային մասում հիմնեցին պլանտացիաներ,— սկզբում ծխախոտի, ապա բամբակի: Նրանք ոգտվում եյին Յեվրոպայից բերած չքավորության կիսաճորտատիրական աշխատանքով, այնու-

հետև Աֆրիկայից բերված նեգրերի ստրկական աշխատանքով: Այստեղից դեպի Յեվրոպա յեր արտածվում գլխավորապես ծխախոտ և բամբակ:

Ատլանտյան ափի միջին մասում առաջ յեկավ գյուղատնտեսական ռայոն, վորը յերկրի թե՛ հյուսիսային և թե՛ հարավային մասերին հաց և անասուններ եր մատակարարում:

XVII և XVIII դարերում բոլոր յերեք գաղթավայրերն իրենցից ներկայացնում եյին հումքի գաղութային ծայրամաս: Անգլիան աշխատում եր ամեն կերպ շահագործել նրան, թույլ չտալով, վոր այնտեղ զարգանա արդյունաբերությունը և առևտուրը:



Նկ. 22. ՀԱՄՆ-ի տերրիտորիայի լայնացման քարտեզ:

Այդ հարստահարման հետևանքով գաղութներն ապստամբեցին Անգլիայի դեմ և համառ պայքարից հետո (1776—1783 թ. թ.), Անգլիայի մրցակիցների (Ֆրանսիայի և Իսպանիայի) աջակցու-

թյամբ կատարյալ ինքնուրույնություն, անկախություն ձեռք բերին։

Իր ծագման շրջանում նոր պետությունը զբաղվում եր միայն Ատլանտյան ափը։ Տերրիտորիայի ընդլայնումը կատարվեց այնպես, ինչպես ցույց ե տրված № 22 նկարի քարտեզում։ Մինչև 1853 թվականը ՀԱՄՆ-ը արդեն գրավեց ամբողջ տերրիտորիան, մինչև Խաղաղ օվկիանոսը։ 1848 թվին Կալիֆորնիայում գտնվեց ոսկի, վորից հետո սկսվեց հեռավոր արևմուտքի ուժեղ գաղութաշինարարությունը։

Հյուսիսի և հարավի զարգացումը տարբեր ճանապարհներով եր գնում։ Յեվրոպայից գաղթողները գնում եյին գլխավորապես հյուսիս, վորտեղ թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության մեջ գոյության աղբյուր եյին գտնում։ Հյուսիսում ճորտություն չկար։ Այստեղ աճում եր խոշոր արդյունաբերությունը,—տեքստիլը, մետաղագործությունը, սննդամթերքների արտադրությունը։ Նա աշխատում եր տեղական եներգետիկական պաշարով,—ածուխով ու նավթով, տեղական հանքերով և սննդամթերքների հումքով ու հարավից բերված բամբակով։ Զարգացավ արդյունաբերական ապրանքների առևտուրը։ Արագությամբ ծավալվեց յերկաթուղային շինարարությունը։ Հարավը մնաց գյուղատնտեսական և ճորտատիրական յերկիր։ Այստեղ կալվածատերերը հսկայական կապիտալներ եյին վաստակում բամբակի առևտրից, վորը տեքստիլ հումքի գլխավոր աղբյուրը դարձավ 1793 թվականին բամբակազտիչ մեքենա հնարելուց հետո։

Կապիտալիստական հյուսիսի և ճորտատիրական հարավի միջև հակասությունները հետզհետե սրվում եյին և, վերջապես, դրա հետևանքը յեղավ 1861—1865 թ.թ. քաղաքացիական պատերազմը։

Հյուսիսը հաղթող դուրս յեկավ այդ պատերազմից։ Հարավում ճորտությունը վոչնչացնելուց հետո կապիտալիզմն սկսեց անարգել զարգանալ ՀԱՄՆ ամբողջ տերրիտորիայում։ Այդ տերրիտորիայի առանձին մասերը միացվեցին հարմար ճանապարհներով։ Յերբ ամբողջ ցամաքի վրայով ճանապարհներ կառուցվեցին և այդպիսով հաղորդակցություն ստեղծվեց Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև, ՀԱՄՆ-ի համար ստեղծվեցին բացա-

ռիկ, նպաստավոր պայմաններ։ Տնտեսական շրջանառությամբ ընդգրկվեցին հսկայական տարածություններ՝ բնական անսպառ հարստություններով։

Տնտեսությունը զարգացավ կապիտալիզմի պայմաններում չտեսնված արագ թափերով։ XIX դարի վերջից սկսեցին յերևան գալ կապիտալիստների հսկայական, մոնոպոլիստական միությունները,— տրեստներ, վորոնք արդյունաբերության ամբողջ ճյուղեր մեկը մյուսի հետևից վերցնում եյին իրենց ձեռքը։ Տրեստների համար արդեն նեղ եյին իրենց տերրիտորիայի սահմանները։ ՀԱՄՆ կառավարությունն այդ տրեստների շահերի համար սկսեց արտաքին գրավումներ անել։ 1898 թվականին ՀԱՄՆ-ը վերջնականապես իրեն միացրեց Հավայան կղզիները և պատերազմելով Իսպանիայի հետ, գրավեց Կուբան և Ֆիլիպպյան կղզիները։ ՀԱՄՆ-ի իմպերիալիզմի կարևորագույն նվաճումը Պանամայի պարանոցի գրավումն եր և Պանամայի ջրանցքի կառուցումը, վորը կարճ ու եժան ճանապարհ ստեղծեց յերկու օվկիանոսների ափերի միջև և ՀԱՄՆ հյուսիս-արևելյան արդյունաբերական շրջանները կապեց Հարավային Ամերիկայի արևմտյան ափին, Ավստրալիային և Արևելյան Ասիային։ Պանամայի ջրանցքը ՀԱՄՆ-ի համար վիթխարի ռազմագիտական նշանակություն ունեցավ, վորովհետև նա հնարավորություն եր տալիս ռազմական նավատորմիղն արագությամբ տեղափոխել մեկ օվկիանոսից մյուսը։

ՀԱՄՆ-ը համաշխարհային պատերազմը նախ և առաջ օգտագործեց «առևտրական» նպատակով։ Ռազմական մատակարարումներից ստացված յեկամուտով նա ծածկեց Յեվրոպային տալիք իր ամբողջ պարտքը և ապա ինքը դարձավ համաշխարհային պարտատեր ու բանկիր։ Պատերազմի մեջ մտնելով այն ժամանակ, յերբ նա արդեն վերջանալու վրա յեր, ՀԱՄՆ-ը առանց վորևե զոհողության ապահովեց «Արևմտյան Յեվրոպայի բաղդը տնորինողի» իր դերը։ Համաշխարհային պատերազմը քայքայեց ու ավերեց Արևմտյան Յեվրոպայի յերկրների մեծ մասը, իսկ Միացյալ Նահանգներին տվեց համաշխարհային տնտեսական առաջնություն։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄՆ էկոնոմիկայի բնորոշ առանձնահատկությունը կապիտալիզմի բարձր մակարդակն է թե՛ ինդուստրիայում ու տրանսպորտում և թե՛ գյուղատնտեսության մեջ: Անհրաժեշտ է առանձնապես շեշտել հսկայական կապիտալների կենտրոնացումը մոնոպոլիստական, ձեռնարկատիրական միություններում կամ տրեստներում:

Ամենազորեղ տրեստները, վորոնց մեջ կենտրոնացված է համապատասխան արտադրության և առևտրի 70 %—80 %-ը, դրանք պողպատի, նավթի, պղնձի, բերքահավաքման մեքենաների, կաշու, մսի, շաքարի, ծխախոտի, պտուղների, աղորիքային տրեստներն են:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱ: Ինդուստրիայում լայնորեն կիրառված է արտադրության բոլոր ճյուղերի մեքենայացումը: Կոնվեյեր սիստեմի շնորհիվ բանվորների աշխատանքի լարվածությունը ծայրահեղ չափերի յե հասնում: Բանվորն արագությամբ քայքայվում ու անաշխատունակ է դառնում, իսկ կապիտալիստը հարստանում է հսկայական չափով: Համառ ու հաջող պրոպագանդ է մղում, վոր բոլոր ամերիկացիք պահանջեն միայն վորոշ ձևի կամ «ստանդարտ» իրեր, վորոնք պատրաստվում են ֆաբրիկաներում: Ստանդարտիզացիան հնարավորություն է տալիս ամեն ինչ պատրաստել մեքենայական յեղանակով և մեծ քանակությամբ, հաշվի առնելով մասսայական պահանջը:

ՀԱՄՆ արտադրական ապարատի զորեղությունն ամենախոշորն է աշխարհում: Մեքենաների զորեղությունն առանձնապես սկսեց աճել 1919 թվականից և միաժամանակ կրճատվեց բանվորների թիվը: Գործարաններում մեքենաների մինչև 80 %-ը գործում է ելեկտրոշարժիչներով:

ՀԱՄՆ արդյունաբերության գլխավոր ճյուղերն են՝ մեքենակառուցում, մանավանդ ավտոմոբիլների կա-

ռուցում, ելեկտրոտեխնիկական և հանքային արդյունաբերություն, սև և գունավոր մետաղների մշակում, այսինքն՝ թուջի, պողպատի, պղնձի, ալյումինի, ցինկի և արճիճի արտադրություն:

Մեքենաշինարարություն, մետաղագործություն, ելեկտրոտեխնիկական արդյունաբերության գլխավոր ճյուղերով ՀԱՄՆ առաջին տեղն է գրավում կապիտալիստական աշխարհում: 1928 թվի համաշխարհային արտադրության մեջ ՀԱՄՆ-ը տվել է 90 % ավտոմոբիլներ, մոտ 60 % մեքենաներ և 50-տոկոս պղինձ ու պողպատ:

Այնուհետև գալիս են սննդի, մանավանդ մսի ու աղորիքային արդյունաբերությունը, տեքստիլ-հագուստեղենի, գրենական պիտույքների, թղթի ու տպագրական արտադրությունը:

Գլխավոր արդյունաբերական բնագավառը հյուսիսն է, իր հարստություններով—ածուխով ու հանքաքարով, ապա հարավն ու արևելքը, վորը հասնում է հյուսիսին, շնորհիվ այն հանգամանքի, վոր արևմուտքում աճում է լեռնային արդյունաբերությունը:

XX դարի ընթացքում արդյունաբերությունը մի փոքր փոխադրվեց դեպի արևմուտք ու հարավ,—դեպի հումքի աղբյուրները և ավելի եժան բանվորական ույժի վայրերը (հարավ):

Վերին լճի յերկաթահանքերի մոտ զարգացան մետաղագործությունն ու մեքենաշինարարությունը՝ Մեծ լճերի մոտ գտնվող քաղաքներում (Չիկագո, Հարի—պողպատի քաղաք, Դետրոյտ—Ֆորդի ավտոմոբիլների արտադրության կենտրոն և այլն): Մերձավոր արևմուտքում, վորտեղ զարգացած է յերկրագործությունն ու անասնապահությունը, գտնվում են աղորիքային և մսի արդյունաբերության գլխավոր կենտրոնները (Միննեապոլիս, Չիկագո և Կանզաս): Հյուսիսարևելքից դեպի ժայռոտ լեռների անտառները չարժ-

վեց դրենական պիտույքների ու թղթի արտադրությունը։

Հարավում սկսեցին զարգանալ մետաղագործական և տեքստիլ ճյուղերը, վորովհետև այստեղ բանվորական ույժն եժան եր և լրացվում եր նեգրերով։ Բիրմինգհեմում, վորը գտնվում ե Ապալաչյան լեռների հարավային մասի քարածուխի ու յերկաթի հանքերի մոտ, զարգացավ մետաղագործությունն ու մեքենաշինարարությունը։ Առաջ բամբակի մեծ մասը հարավից ուղարկվում եր հյուսիսի գործարանները, իսկ 1928 թվականին հարավի ֆաբրիկաներում արդեն վերամշակվում եր ՀԱՄՆ բոլոր ֆաբրիկաներում ստացվող ամբողջ բամբակի $^{3}/_{4}$ մասը։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Հակառակ Անգլիայի, վորը բացառապես արդյունաբերական յերկիր ե, ՀԱՄՆ-ը Գերմանիայի նման թե՛ արդյունաբերական և թե՛ գյուղատնտեսական յերկիր ե։ Ինչպես և Գերմանիայում, գյուղատնտեսության նշանակությունը նվազում ե, արդյունաբերության դերն աճում։

70 տարվա ընթացքում (1850 թվից մինչև 1920 թ.) ցանքերի տարածությունն ավելացել ե 3 $^{1}/_{2}$ անգամ,—35 միլիոն հեկտարից մինչև 130 միլիոն հեկտար։ Այդ արագ հավելումը կատարվել ե շնորհիվ այն հանգամանքի, վոր հնդիկներից գրաված հողը բաժանվել ե հարյուր հազարավոր վերաբնակվածներին, վորոնք ամեն տարի գալիս եյին Յեվրոպայից։ 1862 թվականից հողը բաշխվում եր 64 հեկտարանոց հողամասերով— յերկրագործական շրջաններում և 128 հեկտ.—անասնաբուծական շրջաններում։ Յերկաթուղային, անտառային, անասնաբուծական և այլ խոշոր կապիտալիստական ընկերություններին տասնյակ հազար հեկտարներով հողամասեր եյին տրվում։

ՀԱՄՆ գյուղատնտեսությունը մեքենայացված ե, սակայն միայն խոշոր ֆերմաներում, քանի վոր մանր ֆերմաներում տրակտորների ու կոմբայնների գործա-

ծությունը ձեռնտու չե։ Բանկերը հաճախ այդ ֆերմաները գրավում են պարտքի փոխարեն։

Կապիտալիստներն աշխատում են վորքան կարելի յե շատ յեկամուտ կորզել ֆերմաներից և տնտեսությունը վարում են գիշակեր յեղանակով։ Հողը սոսկալի քայքայվում ե։ Պարարտացվում են գլխավորապես բամբակի, ծխախոտի, բանջարանոցային բույսերի հողերը։ Հողի վրա խիստ վատ ե անդրադառնում նաև այն հանգամանքը, վոր ՀԱՄՆ-ում, վորոշ շրջաններում շարունակ միևնույն մթերքն ե արտադրվում։ Բերքատվությունը համեմատաբար ցածր ե, իսկ հավաքվող բերքը, շնորհիվ ցանքերի հսկայական տարածության, շատ մեծ ե և համաշխարհային բերքի մի խոշոր բաժինն ե կազմում։ ՀԱՄՆ-ը տալիս ե յեգիպտացորենի համաշխարհային բերքի $^{2}/_{3}$-ը, բամբակի $^{3}/_{5}$ -ը, ծխախոտի $^{1}/_{2}$-ը։

ՀԱՄՆ- արևելյան կողմում, մի քանի շրջաններում գերակշռում են գյուղատնտեսության վորոշ ճյուղերը։ Արդյունաբերական հյուսիսում, նրա հյուսիսային կեսում գյուղատնտեսությունը զարգացած ե ըստ քաղաքային բնակչության պահանջների, կաթնային ու բանջարանոցային տնտեսությունների ուղղությամբ։ Կաթնատու անասուններին կերակրելու համար դաշտերի մեծ մասը բռնված ե ցանովի խոտերով և կերի հացաբույսերով (վարսակ, գարի)։ Հյուսիսի մյուս—հարավային գոտում մշակվում ե յեգիպտացորենը։

Հարավի հյուսիսային կիսում մշակվում ե յեգիպտացորեն, աշնանացան ցորեն, տեղ-տեղ—համատարած ծխախոտի պլանտացիաներ։ Հարավային կեսում բամբակ ե մշակվում։ Հարավային ծայրամասում—պտղատու ծառեր, շաքարեղեգն, բրինձ, բամբակ, յեգիպտացորեն։

Կենտրոնական հարթավայրի ամբողջ արևմտյան մասում, հյուսիսից մինչև հարավ տարածված ե անասնաբուծությունը։ Այստեղ շատ կան բնական արոտա-

տեղիներ, վորոնք պատած են կանաչ փետրախոտով: Սա բրդատու ոչխարաբուծության և խոշոր անասունների աճեցման (բայց վոչ չաղացման) շրջան է: Անասունները չաղացվում են ցորենի և յեգիպտացորենի մշակման վայրերում, վորոնք նաև խոզաբուծության գլխավոր վայրերն են: Մեծ Սարահարթում, ջրովի հողերում զարգացած է յերկրագործությունը, իսկ չոր տափաստաններում— բրդատու ոչխարաբուծությունը:

Շնորհիվ առատ բերքի և բնակչության փոքր թվի, ստացվում եր խոշոր ավելցուկ արտահանության համար: Մինչև պատերազմը ՀԱՄՆ-ը բամբակի համաշխարհային պահանջը բավարարում եր $^2/_3$ մասով, այժմ— $^2/_5$ (բամբակի մոտ կեսը մշակվում է յերկրի ներսում): Ցորենի բերքի $_5/^1$ մասն արտածվում է: Յեգիպտացորեն քիչ է արտածվում: Նրա բերքի 98 % գործ է ածվում իբրև անասունների, մանավանդ խոզերի կեր և միայն 1 % է հանվում համաշխարհային շուկա:

ՀԱՄՆ-ում գյուղատնտեսական հողամասերը կոչվում են ֆերմաներ: Ֆերմաների $_5/^3$-ը սեփական հող է, իսկ $^2/_5$-ը կապալով վերցրած: Կան շատ խոշոր և շատ մանր, կապալով վերցրած ֆերմաներ: Մանր ու մանրագույն հողամասերի կապալը առանձնապես տարածված է Հարավում:

Հարավի խոշոր հողատերերը, տեսնելով, վոր համաշխարհային շուկայում բամբակի մեծ պահանջ կա և բամբակի հողերի գինը բարձրանում է, սկսեցին մաս-մաս ծախել իրենց հողերը և ավելի հաճախ կապալով տալ: Յերկրագործ-նեգրերը ճորտատիրական կախումն ունեցան կալվածատերերից: Աշխատավարձը չնչին է, նույնիսկ լավ տարիներին—400—500 ռուբլի՝ 5 և ավելի հոգուց բաղկացած ընտանիքին: Մանր ֆերմերները, մանավանդ նրանք, վորոնք վոչ հող ունեն և վոչ ինվենտար,—այսպես կոչված՝ կրոպպերները,— դաժան կերպով շահագործվում են կապիտալիստների կողմից:

Նախաճգնաժամային տարիներում բոլորովին հա-

կառակ վիճակում եյին միջակ, մանավանդ խոշոր ֆերմերները: Դրանք սպեկուլյանտ-կապիտալիստներ եյին, վորոնք լայն չափով ոգտվում եյին վարձու աշխատանքով, իրենց տնտեսության մեջ ոգտագործում եյին տրակտորներ ու կոմբայններ [1]: Ֆերմերական տնտեսությունը դարձավ կապիտալիստական խոշոր ձեռնարկություն:

Գյուղատնտեսության մեքենայացումը, վորը շատ ձեռնտու յեր խոշոր կալվածքների համար, քայքայեց միջակ ու մանր տնտեսությունները, վորոնց յուրաքանչյուր մեքենայի գնումն ու ոգտագործումն ավելի եժան չե, քան խոշոր տնտեսության մեջ, մինչդեռ այդ մեքենան ավելի քիչ յեկամուտ է տալիս, վորովհետև փոքրիկ հողատարածության վրա նրա համար չկա բավականաչափ աշխատանք:

Ծախսերի վրա ավելանում եյին նաև այն փոխառությունների տոկոսները, վորոնք վոչ հարուստ ֆերմերները կնքում եյին բանկերում, մեքենաներ գնելու համար: Վերջ ի վերջո շատ ֆերմերներ սնանկացան: Նրանց ֆերմաներն անցան բանկերին: Ամերիկական բանկերը դարձան հողի խոշորագույն սեփականատերեր: Սաստիկ աճեց ֆերմեր-կապալառուների,—նախկին հողատերերի թիվը: Շատ ֆերմերներ բոլորովին հրաժարվեցին գյուղատնտեսությունից և տեղափոխվեցին քաղաքները:

ՌԱՅՈՆՆԵՐ: Իր տնտեսության բնույթով ՀԱՄՆ կարող է բաժանվել 3 ռայոնի.— արդյունաբերական կապիտալիստական Հյուսիս, նախկին ճորտատիրական Հարավ և գաղութացող Արևմուտք:

---

1) Հացն ուղղակի դաշտից, հատուկ ելեկտրոտրակտորային գնացքներով ուղարկում եյին յերկաթուղային ելեվատորները: Ֆերմերը հեռախոսով կապված եր հացի բորսայի հետ, վորով հնարավորություն ուներ հետևելու գների տատանումներին: Կապիտալիստ-ֆերմերները կազմակերպեցին անունով աշխատավորական, եյապես կապիտալիստական առևտրական միություններ, հացի գները բարձրացնելու նպատակով:

Արդյունաբերական Հյուսիսը—այդ ՀԱՄՆ հիմնական մասն է: Այստեղ է գտնվում ՀԱՄՆ-ի արդյունաբերության մեծագույն մասը և այստեղ է կատարվում նրա բեռնաշրջանառության խոշոր տոկոսը: Այստեղ տրեստային արդյունաբերությունը կապակցվում է ինտենսիվ գյուղատնտեսության հետ:

Հյուսիսային ռայոնը բաժանվում է յերկու յենթառայոնի,— հյուսիս-արևելք, հին արդյունաբերական ռայոն և հյուսիս-արևմուտք,—ավելի նոր, բայց կապիտալիստական նույն ուղղությամբ զարգացող ռայոն:

Հյուսիս-արևելքում կենտրոնացված են տրեստներն ու բանկերը: Առանձնապես զարգացած է տեքստիլ-կարի, կաշու-կոշկեղենի արդյունաբերությունը, մեքենաշինարարությունը, քարածուխի և սև մետաղների (յերկաթ, պողպատ) արդյունաբերությունը:

Հսկայական տարածություններ ծածկված են գործարանների ծխանների համատարած անտառով: Շատ են խոշոր, համարյա իրար կպած քաղաքները: Սրանց կաթնամթերքներ և բանջարեղեն մատակարարելու համար գյուղատնտեսությունը վերակառուցվել ու դարձել է քաղաքամերձ տնտեսություն:

Քաղաքներ. Նյու-Յորկ, Բոստոն, Ֆիլադելֆիա, Պիտսբուրգ:

Հյուսիս-արևմուտքում բարձր-ապրանքային հացահատիկային տնտեսությունը (յեգիպտացորեն, ցորեն), ինչպես և մսա-կաթնային տնտեսությունը հարմարեցված է արդյունաբերության, վորը կամ վերամշակում է գյուղատնտեսական հումքը (աղորիքներ, սպանդներ), կամ գյուղատնտեսությանը մեքենաներ է մատակարարում:

Քաղաքներ. Չիկագո, Դետրոյտ, Կլիվլենդ, Միննեապոլիս:

Նախկին ճորտատիրական հարավը մի այնպիսի ռայոն է, վորտեղ գերակշռում է գյուղատնտեսու-

թյունը, վորտեղ խիստ զգալի յեն ճորտատիրության մնացորդները,—«ազատագրված ճորտերի բանտ», ինչպես ասել է Վ. Ի. Լենինը: Շնորհիվ հյուսիսային ռա-



Նկ. 23. Յերկնամբարձներ Չիկագոյու

յոնի կապիտալի, վորն այստեղ է հոսել բանվորական էժան ույժն ոգտագործելու նպատակով, սկսել է զարգանալ տեքստիլ և մետաղագործական արդյունաբերությունը:

Քաղաքներ. Վաշինգտոն, Նոր Որլեան, Բիրմինգեմ:

Գաղութացող արևմուտքը դեռևս նոր ռայոն է, վորտեղ չի վերջացել գաղութաշինարարությունը, վորտեղ զգալիորեն զարգացել է կապիտալիզմը թե՛ հանքային

արդյունաբերության մեջ (գունավոր մետաղներ և նավթ) և թե՛ անասնաբուծության (անասունները պահվում են արոտավայրերի կերով), հացահատիկային տնտեսության բնագավառում (ավելի խոնավ հյուսիսարևմուտքում և վոռոգելի հողերում), ինչպես նաև այգեգործության բնագավառում (հարավ-արևելք):

Քաղաքներ· Սան-Ֆրանցիսկո, Լոս-Անջելոս:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ: ՀԱՄՆ բնական պաշարները շատ բազմատեսակ են և ցրված են վիթխարի տերրիտորիայի զանազան տեղերում: Արդյունաբերական հումքը մասամբ վերամշակվում է հենց հանուրդի տեղում, մասամբ էլ ուղարկվում է հեռավոր տարածություններ, արդյունաբերական կետերը: Արտադրությունը խիստ մասնագիտացված է: Ապրանքները փոխադրվում են հեռավոր վայրեր, առանց հանդիպելու մաքսային խոչընդոտների, ինչպես այդ լինում է Արևմտյան Յեվրոպայում:

Այս բոլորով է բացատրվում տրանսպորտի ավելի լայն զարգացումը, քան Յեվրոպայում:

Մինչև XIX դարի կեսը ապրանքները փոխադրվում էյին գլխավորապես ջրային ճանապարհներով, այնուհետև նրանց տեղը բռնում են յերկաթուղիները: Յերկաթուղային ընկերությունները գնում էյին բոլոր ջրանցքները և փչացնում:

Ներքին գլխավոր ջրային ճանապարհը հանդիսանում են Մեծ լճերը և այն ջրանցքը, վորն սկսվում է Էրի լճի ափին գտնվող Բեֆֆլո քաղաքից և շարունակվում է մինչև Հուդզոն գետի գետաբերանը, վորտեղ գտնվում է Նյու-Յորկը:

ՀԱՄՆ-ի յերկաթուղիների յերկարությունը 420 հազար կ. մ. է, վոր ամբողջ աշխարհի յերկաթուղիների յերկարության $1/3$-ից ավելի յե: Յերկաթուղիներից ամենակարևորները գտնվում են Նյու-Յորկի և Չիկագոյի միջև: Նրանք կատարում են ամբողջ բեռնաշրջանառության 50 %-ը: Կարևոր են նաև Խաղաղ ովկիանոսյան 10 մագիստրալները, վորոնք սկսվում են Չիկագոյի մոտ

և վերջանում Խաղաղ ովկիանոսի ափերին, մասամբ նրա հյուսիսային, մասամբ և գլխավորապես հարավային նավահանգիստների մոտ,—Սան-Ֆրանցիսկոյի և Լոս-Անջելոսի մոտ:

Յերկար ժամանակ յերկաթուղիները մնում էյին իբրև կարևորագույն ճանապարհներ: Այժմ դրությունը խիստ փոխվել է՝ շնորհիվ ավտոմոբիլային հաղորդակցության զարգացման: ՀԱՄՆ-ում ավտոմոբիլների քանակն ավելացել է ապշեցուցիչ արագությամբ: 1912 թվին նրանց քանակը 1 միլիոն էր, 1928 թ.—25 միլիոն, այսինքն համաշխարհային ամբողջ քանակության $6/5$-ը: Սկսվեց ճանապարհների շտապ շինարարություն՝ ավտոմոբիլների յերթևեկության համար: Ավտոմոբիլներն սկսեցին ուժեղ կերպով մրցել յերկաթուղիների հետ՝ ճանապարհորդների փոխադրության գործում:

Մեծ զարգացման հասավ ոդային հաղորդակցությունը:

ՀԱՄՆ-ի արտաքին առևտուրը 94 %-ով կատարվում է ծովային ճանապարհներով: Մինչև համաշխարհային պատերազմը ՀԱՄՆ-ի նավատորմիղը համեմատաբար փոքր էր: Նա ոգտվում էր ոտար նավատորմիղով: Պատերազմից հետո ՀԱՄՆ-ը բավական մեծացրեց իր նավատորմիղը, գլխավորապես ի հաշիվ Գերմանիայից գրաված նավերի: 1927 թվին ՀԱՄՆ-ի առևտրական նավատորմիղն արդեն հավասար էր համաշխարհային առևտրական նավատորմիղի 27 %-ին (մինչև պատերազմն ընդամենը 9,5 %): Անգլիայից հետո ՀԱՄՆ անմիջականորեն յերկրորդ տեղը բռնեց: Աշխուժացան ծովային հարաբերությունները Մեծ Բրիտանիայի և Հարավային Ամերիկայի հետ: Դրա համար մեծ դեր խաղաց Պանամայի ջրանցքը: Արտաքին առևտրի չափով ՀԱՄՆ-ը հասավ Անգլիային:

Ընդամենը 60 տարի առաջ ՀԱՄ-ի առևտուրը միանգամայն գաղութային բնույթ էր կրում,— արտածման $2/3$ մասը հումք էր, ներմուծման $2/3$-ը—պատրաստի ապ-

րանքներ: Ներկայումս ՀԱՄՆ–ը տիպիկ ինդուստրիալ
պետություն է: 1927 թվականին հումքի արտածումը
կրճատվեց ամբողջ արտածման $^1/_3$–ի չափ և շատ աճեց
հումքի ներմուծումը: Պատրաստի ապրանքների արտա-
ծումը 1914 թվին կազմում էր 30 %, իսկ 1927 թվին—
42 %:

Այնուամենայնիվ թե՛ արտադրության և թե՛ առև-
տրի մեջ ՀԱՄՆ–ը յերկդեմ է,—ինդուստրիալ և հում-
քային: Նա արևմտյան Յեվրոպա յե արտածում գլխա-
վորապես հումք,—բամբակ, նավթ, սննդամթերքներ
(ցորեն, մսեղեն ապրանքներ): Ճիշտ է, նա արտածում
է նաև շատ մեքենաներ, բայց սրանք ստանդարտային են,
—Ֆորդի էժան ավտոմոբիլներ, գրամեքենաներ, դրա-
մարկղային ապարատներ: Ընդհակառակը, մնացած յեր-
կրներին,—Կանադային, Կուբային, Մեքսիկային, Հա-
րավային Ամերիկային, Ասիային,—նա գլխավորապես
մատակարարում է գործարանային ապրանքներ:

Ներմուծման մեջ առանձնապես բնորոշ է այն, որ
առաջին տեղը բռնում է ճոխության առարկան,—մե-
տաքսը: Այնուհետև գալիս է կաուչուկը, որն անհրա-
ժեշտ է ավտոմոբիլային արդյունաբերության համար
(շիներ)—ՀԱՄՆ–ին պակասող գլխավոր հումքը:

Ամերիկական կապիտալիստները հսկայական կապի-
տալներ կուտակեցին՝ կողոպտելով թե՛ ՀԱՄՆ և թե՛
նրանցից կախումն ունեցող ու նրանց յենթարկվող յեր-
կրների աշխատավորներին: ՀԱՄՆ–ի կապիտալիստնե-
րի ձեռքում հավաքվեց ոսկու համաշխարհային պաշա-
րի մոտ կեսը: ՀԱՄՆ–ը Ֆրանսիայի նման համաշխար-
հային վաշխառու լինելու հնարավորություն ստացավ:
1914–ից մինչև 1930 թվականը ՀԱՄՆ–ը 33 միլիարդ
ռուբլուց ավելի փոխատվություններ տվեց ուրիշ յեր-
կրների ձեռնարկություններին: Այդ կապիտալի $^3/_5$
մասից ավելին ուղարկվել է Հյուսիսային, Կենտրոնա-
կան և Հարավային Ամերիկայի յերկրները: Շնորհիվ է-



Նկ. 24. ՀԱՄՆ երկաթուղային ցանցի քարտեզ:

րենց կապիտալների, ՀԱՄՆ-ի իմպերիալիստներն ավելի և ավելի են հաստատվում այդ յերկրներում:

ՃԳՆԱԺԱՄ: Ամերիկյան բուրժուազիան յերկար տարիների ընթացքում համառ կերպով կոկորդ եր պատռում «ազատ ընտրյալ յերկրի» «անխախտ» բարեկեցության մասին:

Բարձր վորակավորում ունեցող բանվորների հսկայական հոսանքը Յեվրոպայից՝ միաժամանակ ստեղծեց թե՛ արտադրական խոշոր ապարատ և թե՛ ներքին խոշոր շուկա, վորը մեծ թվով ապրանքներ եր կլանում: Արտասահման գնում եր գյուղատնտեսության և ինդուստրիայի արտադրանքի ընդամենը մեկ տասներկուերրորդ մասը: Սակայն ամբողջ կապիտալիստական սիստեմի հետպատերազմյան ճգնաժամը նախ և առաջ հարվածեց ՀԱՄՆ-ին, «ծաղկած վիճակը» փուլ յեկավ: «Կապիտալիզմի ամրոցը» դարձավ ժամանակակից արդյունաբերական, ագրարային, ֆինանսական ճգնաժամի կենտրոն: ՀԱՄՆ-ում համաշխարհային ճգնաժամը պայթեց սարսափելի ուժով և ապա ընդգրկեց ամբողջ կապիտալիստական աշխարհը:

«Ծաղկման» վերջին տարիներում ՀԱՄՆ սկսեց ավելի շատ աշխատել արտաքին, քան ներքին շուկայի համար: Իսկ արտաքին շուկան, մանավանդ աղքատացած Արևմտյան Յեվրոպայի շուկան, այլևս բավականաչափ ապրանքներ չեր կլանում: Ստեղծվեցին ապրանքների հսկայական պաշարներ: Գներն սկսեցին ընկնել սարսափելի արագությամբ. գյուղատնտեսության մեջ նրանք արտադրության ինքնարժեքից պակաս են: Ցորենի ու բամբակի գինը բարձրացնելու համար սկսեցին վոչնչացնել նրանց պաշարները, 15—20 %-ով կրճատվեցին ցանքերի տարածությունները: Ամբողջ արտադրությունը սեղմվեց: 1928 թվականի հետ համեմատած՝ 1932 թվի վերջում արդյունաբերական արտադրանքը կրճատվեց 56 %-ով: Սոսկալի չափերով ծավալվեց գործազրկությունը. 1932 թվի վերջում կար վոչ պակաս, քան 13 մի-

լիոն գործազուրկ, 1933 թվի սկզբին արդեն կար 15 միլիոն. ընտանիքների հետ դա կազմում ե ՀԱՄՆ բնակչության 5/8 մասը:

Մեծ քաղաքները լիքն են միլիոնավոր գործազուրկներով, անապաստաններով, քաղցածներով, վորոնք հեղեղում են քաղաքների ծայրամասերը, հաճախ կերակրվում են աղտաղբերի փոսերից և փողոցներում մեռնում են քաղցից: ՀԱՄՆ-ի նույնիսկ բուրժուական մամուլը գրում ե այն մասին, թե վոչ միայն արդյունաբերական կենտրոնների բանվոր բնակչությունը, այլ և ֆերմերները փաստորեն աղքատացել են ապրանքների գների անվերջ անկման հետևանքով: Տասնյակ և հարյուր հազարավոր մարդիկ դառնում են անապաստան թափառաշրջիկներ, վորոնք անցնում են յերկրի այս կամ այն մասերը, վորոնելով աշխատանք, սնունդ և ապաստան: Հուսալքման հասած ֆերմերները քաղաքների հրապարակներում այրում եյին ցորենն ու բամբակը:

«Ծաղկման» ժամանակաշրջանում բուրժուազիան իր հսկայական յեկամուտների ավելցուկներով կաշառում եր բանվոր դասակարգի վերնախավին և նրա ոգնությամբ բանվորներին մոլորեցնող հեքյաթներ եր տարածում ՀԱՄՆ պայմանների բացառիկ բնույթի մասին: Նա պնդում եր, վոր իբր թե այնտեղ ընմիշտ ապահովված ե աշխատանքի ու կապիտալի խաղաղ համակեցությունը, իբր թե բանվոր դասակարգը կարող ե լիակատար բարեկեցության հասնել կապիտալիզմի շրջանակներում:

Ժամանակակից դաժան իրականությունը վերջ տվեց վոմանց խաբվելուն և վոմանց ինքնախաբեյության: Ամերիկյան պրոլետարիատն արագությամբ հեղափոխականանում ե: Աճում ե կոմունիստական կուսակցության ազդեցությունը: Կոմկուսի կոչով, 1930 թ. մարտ ամսից սկսած, Ամերիկայի խոշոր քաղաքների փողոցներով անցել են բանվորների մասսայական շատ ցույցեր, կոմկուսի լոզունգներով, կազմակերպվել ե սովյալ-

ների յերթ, ինչպես և պատերազմի վետերանների յերթ դեպի Վաշինգտոն: Չնայելով գործազրկության, խիստ աճել է գործադուլների և գործադուլավոր բանվորների թիվը:

Բուրժուազիան փորձում է զորքերի և ֆաշիստական կազմակերպությունների օգնությամբ պայքարել պրոլետարական աճող շարժման դեմ: Ցրվում ու հալածվում են վոչ միայն բանվորների ցույցերն և գործադուլավորների պահակները, այլ և պատերազմի վետերանցուցարարները:

5. ՀԱՄՆ-Ը ՎՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բացի ուղղակի գաղութներից,—Ալյասկայից, Պորտո-Ռիկոյից, Պանամայի ջրանցքի գոտուց, Հավայից, Ֆիլիպպյան կղզիներից,— ՀԱՄՆ-ը տիրապետում է նաև կիսագաղութների հսկայական տարածության: Նա, ինչպես իր յերկրում, տեր ու տնօրեն է Մեքսիկայում, Կուբա և Հայիթի կղզիներում, Կենտրոնական Ամերիկայում, Հարավային Ամերիկայի հարավում և արևմուտքում (բացի Չիլիից), թեև այնտեղ ձևականորեն գոյություն ունեն անկախ հանրապետություններ:

Հյուսիսային Ամերիկայում ՀԱՄՆ-ից առայժմ քաղաքականապես անկախ է մնում Կանադան,— անգլիական դոմինիոնը: Սակայն Կանադան տնտեսապես ավելի շատ ՀԱՄՆ-ի հետ է կապված: Կանադայի շատ արդյունաբերական ձեռնարկություններ ուրիշ բան չեն, բայց յեթե ՀԱՄՆ ձեռնարկությունների բաժինները: ՀԱՄՆ ավելի և ավելի յե ընդգրկում Կանադայի արտաքին առևտուրը, հետզհետե վտարելով Անգլիային:

Ամերիկական իմպերիալիստներն ուրիշ յերկրների իմպերիալիստների հետ յեռանդով մասնակցում են Չինաստանի կողոպուտին: Այստեղ ՀԱՄՆ իմպերիալիստների շահերը բախվում են Անգլիայի ու Ֆրանսիայի, մանավանդ Ճապոնիայի շահերին: Պայքարն ավելի շատ է

սրված ՀԱՄՆ-ի և Անգլիայի—հին «ծովերի թագուհու» միջև, առաջնություն ձեռք բերելու համար: Նրանց մրցակցությունը հանդիսանում է ժամանակակից միջազգային հակասությունների հիմնական առանցքը:

ՀԱՄՆ-ի և Անգլիայի շահերը բախվում են անգլիական դոմինիոններում—Կանադայում և Ավստրալիայում, նավթի յերկրներում—Մեքսիկայում և Պարսկաստանում, սուրճի յերկրում—Բրազիլիայում և հացի ու մսի յերկրում—Արգենտինայում: Այստեղ տիրանալու համար պայքարում են անգլիական ու ամերիկական կապիտալները: Անգլիայի և ՀԱՄՆ շահերը հակասական են նաև թե՛ Արևմտյան Յեվրոպայում, թե՛ Հեռավոր Արևելքում, Չինաստանում և Ճապոնիայում: Հեռավոր Արևելքում (Հոնկոնգ, Սինգապուր) անգլիական ռազմական բազաներին ՀԱՄՆ-ը հակադրում է Ֆիլիպպյան կղզիներում գտնվող իր ծովային բազան: Զգտելով թուլացնել իր գլխավոր մրցակցին, Անգլիան աջակցում է Ճապոնիային,—Խաղաղ ովկիանոսի համար մղվող պայքարում ՀԱՄՆ-ի մրցակցին:

Պատրաստվելով մասնակցելու համաշխարհային սպանդին, ՀԱՄՆ-ը հսկայական միջոցներ է ծախսում ռազմական ուժերի, մանավանդ ծովային ու օդային նավատորմիղների վրա: Ամերիկական յերիտասարդ ռազմական նավատորմիղն իր մարտական միավորների կազմով և սպառազինման տեխնիկայով վորոշ տեսակետից ավելի ուժեղ է, քան անգլիական հին նավատորմիղը: Օդանավատորմիղն աշխարհումս ամենաուժեղն է, ունի ավելի քան 3000 մարտական միավոր: Մեքսիկական ծոցի շուրջը, Կարաիբյան ծովի և յերկու ովկիանոսների ափերին, Հավայան և Ֆիլիպպյան կղզիների վրա կառուցված են ռազմա-ծովային ուժեղ բազաներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄՆ-ն ունի առանձնապես նպաստավոր, միջօվկիանոսյան դիրք, բայց այդ դիրքը նա ձեռք է բերել վոչ

թե պատրաստի վիճակում, այլ Խաղաղ–օվկիանոսյան ճանապարհներ անցկացնելով և Պանամայի ջրանցքի կառուցմամբ։ Բնական հարստությունները մեծ են ու բազմազան։ 100–րդ միջօրեականից դեպի արևելք ու արևմուտք բոլոր բնական պայմանները խիստ տարբեր են։ Հարստությունների օգտագործումը հնարավոր դարձավ միայն շնորհիվ Եվրոպայից գաղթողների հսկայական հոսանքի։ ՀԱՄՆ–ում կապիտալիզմը հասավ ամենաբարձր մակարդակի և նույն յերկրում այժմ ամենածանր ճգնաժամը գոյություն ունի։ Պատմական ու բնական պայմանների համաձայն, տնտեսությունը տարբեր զարգացում ունեցավ արդյունաբերական Հյուսիսում, նախկին ստրկատիրական Հարավում և գաղութաշինաբարական Արևմուտքում։ Տրանսպորտային կապը շատ է զարգացած, բայց անհավասարաչափ է ՀԱՄՆ–ի տերրիտորիայում։ ՀԱՄՆ–ի գաղութները համեմատաբար փոքր են, բայց հսկայական են նրա կիսագաղութների տարածությունները։ Խոշոր ծավալ ընդունեց կապիտալների արտածումը։

Ստուգիչ հարցեր

Վո՞ր զուգահեռականներով են անցնում ՀԱՄՆ–ի հյուսիսային և հարավային սահմանները։ ՀԱՄՆ–ը վո՞ր պետություններին է սահմանակից։ Ի՞նչ օվկիանոսներ ու ծովեր կան նրա շուրջը։ Դեպի ո՞ւր են տանում ծովային ճանապարհները Նյու–Յորկից, Նոր–Օրլեանից, Սան–Ֆրանցիսկոյից (ցույց է տրված համաշխարհային քաղաքական քարտեզում)։ Վորտե՞ղ են գտնվում ՀԱՄՆ գլխավոր ռազմա–ծովային բազաները։ Ինչո՞ւմն են կայանում նրա արևելքի ու արևմուտքի մակերևույթի գլխավոր առանձնահատկությունները։ Վորտե՞ղ են գտնվում հանածոների գլխավոր շերտերը։ Վո՞ր նավարկելի գետերն ու ջրանցքներն են ավելի կարևոր։ Վորտե՞ղ և ինչքա՞ն տեղումներ են լինում։ Ի՞նչ կազմ ունի բնակչությունը։ Ի՞նչ դրության մեջ են նեգրերը։ Ինչո՞ւմն են կայանում ՀԱՄՆ–ի գյուղատնտեսության առանձնահատկությունները։ Վորտե՞ղ են գտնվում գյուղատնտեսական ռայոնները։ Վո–

րո՞նք են գլխավոր արդյունաբերական ռայոնները. Նրանց տարբերությունն ըստ արդյունաբերության կազմի և նրանց տեղը։ Ի՞նչ են ներկայացնում իրենցից ամերիկական տրեստները։ Վորո՞նք են ՀԱՄՆ–ի տնտեսական հիմնական ռայոնները. Նրանց տարբերությունը, նրանց սահմանները։ Ի՞նչպիսի արտաքին առևտուր է անում ՀԱՄՆ–ը։ ՀԱՄՆ–ից կապիտալները գլխավորապես ո՞ւր են արտածվում։ Նա ի՞նչ տերրիտորիաներ գրավեց XIX դարի վերջում։ Վորո՞նք են ՀԱՄՆ–ի գլխավոր կիսագաղութները։ Ի՞նչ նշանակություն ունի Պանամայի ջրանցքը։

II. ԿԱՆԱԴԱ

Կանադան (9,6 միլիոն քառ. կ.մ., 10 միլիոն բնակիչ) գրավում է Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասը։ Նրա հյուսիսային կողմը սարահարթ է, կենտրոնական և հարավային մասը—դաշտավայր, վորի վրա լճեր են գտնվում։ Կլիման ցամաքային է և յենթակա յե Հյուսիսային բևեռային ծովի ու Հուդզոնի ծոցի ցուրտ հոսանքներին։

Հյուսիսային կեսի հողն աղքատ է, հարավային կեսում—սևահող։

Կանադան ունի հանածոների,— քարածուխի, յերկաթահանքերի, նիկելի, ասբեստի, վոսկու, արծաթի, արճիճի հարուստ պաշար։

Կանադան Անգլիայի դոմինիոնն է, վորը հետ–պատերազմյան շրջանում համառ պայքար է մղում իր մետրոպոլիայի դեմ։ Պատերազմի ժամանակ և հետ–պատերազմյան տարիներում Կանադայում խիստ ազդեցություն ունեցավ ՀԱՄՆ կապիտալը։

Զնայելով, վոր Կանադան տվյալներ ունի ինդուստրացման համար, այնուամենայնիվ նա ագրարային յերկիր է։ Գլխավոր կուլտուրաներն են՝ ցորենը, վարսակը, գարին։ Ուժեղ չափով զարգացած են խոշոր յեղջյուրավոր անասունների բազմացումը, կաթնատնտեսությունը, անտառային տնտեսությունը, մորթիների մշակումն ու ձկնորսությունը։

Արդյունաբերության ճյուղերից զարգացած են՝ լեռնահանքային, փայտագործական, թղթի–ցելյուլոզի, մետաղամշակման, նավաշինարարական արդյունաբերությունը։

Գլխավոր քաղաքներն են՝ Օտտավա—մայրաքաղաք, Մոնրեալ (1 միլիոն բնակիչ)—արդյունաբերական խոշոր կենտրոն, Տորոնտո—արդյունաբերական կենտրոն, Հալիֆակս—նավահանգիստ Ատլանտյան օվկիանոսի վրա, Վանկուվեր—նավահանգիստ Խաղաղ օվկիանոսի վրա։

III. ՆՅՈՒ-ՖԱՈՒՆԴԼԵՆԴ

Կանադային կից է մի ուրիշ անգլիական դոմինիոն—Նյու-Ֆաունդլենդը, վորը գրավում է համանուն կղզին և Լաբրադոր թերակղզու հյուսիս-արևելյան մասը (ընդհանուր տարածությունը—421 հազար քառ. կ.մ., բնակչությունը—300 հազար)։ Նյու-Ֆաունդլենդի հողը քարքարոտ է, կլիման ցուրտ։ Նա հարուստ է յերկաթի ու պղնձի հանքերով, ածուխով, արծաթով, արճիճով։ Բնակչության գլխավոր զբաղմունքը ձկնորսությունն է (բրածուկ, տառեխ, խեցգետին)։

IV. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

ՀԱՄՆ-ում և Կանադայում բնակվում են գլխավորապես անգլիացիներ և իրենցից ներկայացնում են մի յերկիր, վորտեղ տիրապետում է անգլիական կուլտուրան և անգլիական լեզուն։ Մնացած Ամերիկան գրավվեց XVI դարում Իսպանիայի ու Պորտուգալիայի կողմից և այնտեղ մինչև հիմա էլ տիրում է իսպանական ու պորտուգալական լեզուն, վորը ծագել է հին հռոմեացիների լատինական լեզվից։ Ամերիկայի այդ մասը կոչվում է լատինական Ամերիկա, անգլո-սաքսոնական Ամերիկայից տարբերելու համար։

Լատինական Ամերիկայի մեջ մտնում են հետևյալ հանրապետությունները.— Հյուսիսային Ամերիկայում—Մեքսիկա, Կենտրոնական Ամերիկայում — Գվատեմալա, Հոնդուրաս, Սալվադոր, Նիկարագուա, Կոստո-Րիկա, Պանամա և արևմտյան կղզիներում Կուբա, Հայիթի, Սան-Դոմինիգո. Հարավային Ամերիկայում— Կոլումբիա, Վենեցուելլա, Բրազիլիա, Արգենտինա, Չիլի, Պարագվայ, Ուրուգվայ, Պերու և Եկվադոր։

Լատինական Ամերիկայի մակերևույթը բազմազան է. Մեքսիկայում կա մի բարձր սարահարթ, վորի արևելյան ու արևմտ-

յան կողմից լեռներ են բարձրանում։ Կենտրոնական Ամերիկայում լեռնային ռայոնները կտրատված են ցածրադիր ձորահովիտներով։ Հարավային Ամերիկայի արևմտյան կողմում գտնվում են Անդեր բարձր լեռները, կենտրոնում—լայնատարած դաշտավայր, արևելքում —վոչ-բարձր սարահարթեր (Բրազիլիական) և լեռներ։

Համարյա ամբողջ լատինական Ամերիկան (բացի Արգենտինայի հարավային ծայրից) գտնվում է արևադարձային և յենթաարևադարձային գոտում։ Շոգը մի փոքր մեղմանում է միայն այն վայրերում, վորոնք ծովի մակերևույթից շատ բարձր են։ Ամազոն գետի մոտ գտնվող կենտրոնական դաշտավայրը ծածկված է արևադարձային խիտ անտառներով։

Լատինական Ամերիկան բացառիկ հանածո հարստություններ ունի,— յերկաթահանքեր, վորի հսկայական շերտերը գտնվում են Բրազիլիայի արևելյան մասում և Կուբա կղզում. նավթ, վորի խոշորագույն հանքավայրերը գտնվում են Մեքսիկայում, Վենեցուելլում, Բոլիվիայում, Կոլումբիայում և ավելի քիչ քանակությամբ—Հարավային Արգենտինայում և Պերույում. պղնձահանքերը—Չիլիում, Մեքսիկայում, Բոլիվիայում ու Պերույում. մարգանեց—Բրազիլիայում և Կուբա կղզում. արծաթ, ինչպես և ցինկ ու արճիճ—Մեքսիկայում, անագ—Բոլիվիայում, պլատինա—Կոլումբիայում, սելիտրա—Չիլիում։ Քարածուխ չկա, սակայն բազմաթիվ ջրառատ և ժայռերի վրայով հոսող գետերը տալիս են հիդրոեներգիայի խոշոր պաշարներ։

Լատինական Ամերիկայի յերկրները XVI-ից մինչև XIX դարը հանդիսանում եյին Իսպանիայի ու Պորտուգալիայի գաղութները։ Իսպանիայի և Պորտուգալիայի տիրող դասակարգը,— ազնվականությունը, կողոպտելով տեղական բնակչության—հնդիկների հարստությունները, հափշտակեց նրանց հողերն և նրանց վրա շաքարեղեգնի ու սուրճի հսկայական պլանտացիաներ կազմակերպեցին։ Այդ պլանտացիաներում աշխատելու համար ոգտագործվեցին Աֆրիկայում գերված և ստրկացրած տասնյակ և հարյուր-հազարավոր նեգրերը։ XIX դարում Յեվրոպայից դեպի Հարավային Ամերիկա գաղթեցին մեծ քանակությամբ իտալացիներ, իսպանացիներ, պորտուգալացիներ։ Նրանք մասամբ խառ-

նըվեցին նեգրերի հետ (մուլատներ), ինչպես նաև հնդիկների հետ (մետիսներ)։

XIX դարի ընթացքում Լատինական Ամերիկայի բոլոր յերկրները բաժանվեցին իրենց մետրոպոլիայից և կազմեցին անկախ պետություններ։ Իրականում այդ բոլոր հանրապետություններն ընկան Անգլիայի կապիտալի իշխանության տակ (մանավանդ Արգենտինան և Բրազիլիան), ինչպես նաև ՀԱՄՆ կապիտալի ազդեցության տակ (մանավանդ Մեքսիկան, Կենտրոնական Ամերիկայի հանրապետությունները, արևմտյան-հնդկական կղզիները, Վենեցուելլա)։ Պատերազմի և հետպատերազմյան տարիներում ՀԱՄՆ-ը վտարեց Անգլիային իր դիրքերից և իր ազդեցության յենթարկեց ամբողջ Լատինական Ամերիկան։

Լատինական Ամերիկայի բոլոր յերկրներն ագրարային են։ Արդյունաբերությունը թույլ է զարգացած, որինակ, հանքահանման արդյունաբերությունը (նավթ, հանքեր), կամ թեթև,— տեքստիլ, սննդի (շաքարի, սուրճի, ծխախոտի) արդյունաբերությունը։

Հողի մեծ մասը գտնվում է խոշոր կալվածատերերի ձեռքին, վորոնք այն տալիս են կապալով հողազուրկ գյուղացիներին, ստանալով բերքի մի մասը։ Կալվածատերերի հողերի մի մասում մշակվում են պլանտացիաներ և ոգտագործվում է բատրակների աշխատանքը։ Այստեղ տնտեսության տեխնիկան և մակարդակը ցածր են։ Միայն միջին Արգենտինայում և Ուրուգվայում, միջին Պերույում և Բրազիլիայի սուրճի ռայոններում է զարգացած կապիտալիստական խոշոր տնտեսությունը, վորը բարձր մակարդակի վրա յե դրված ու մեքենայացված է։ Ամենահետամնացն են Ամազոն գետի ավազանում գտնվող արևադարձային անտառների ռայոնները, վորտեղ սակավաթիվ հնդիկ բնակչությունն ապրում է վորսորդությամբ և պապենական յերկրագործությամբ։

Գյուղատնտեսական գլխավոր կուլտուրաներն են սուրճը (համաշխարհային արտադրանքի 90%-ը)—մանավանդ Կուբա կըղզում,—կակաոն (համաշխարհային արտադրանքի 25 %-ը)—մանավանդ Բրազիլիայում, Վենեցուելլում, Եկվադորում, բանանը — կենտրոնական Ամերիկայում, ծխախոտը—Կուբա կղզում։ Բարեխառն գոտում,—Արգենտինայում ցանվում է ցորեն ու յեգիպտացորեն, բազմացվում են խոշոր յեղջյուրավոր անասուններ և ոչխարներ։ Գյուղատնտեսական արտադրանքն արտածվում է ուրիշ յերկրներ։

Համաշխարհային ճգնաժամը սաստիկ հարվածեց Լատինական Ամերիկայի գյուղատնտեսության։ Ճգնաժամի հետևանքով վոչնչացվեց հսկայական քանակությամբ սուրճ և այլ մթերքներ և կրճատվեցին ցանքերը։ Գյուղացիության ու բատրակության դրությունը վատացավ և այստեղից առաջ յեկավ հեղափոխական շարժման սաստիկ աճում։

ԱՎՍՏՐԱԼԻԱ ՅԵՎ ՈՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐ

I. ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ավստրալիական միությունը (7,6 միլլիոն քառ. կ.մ., 6 միլլիոն բնակիչ) Անգլիայի դոմինիոնն է, բռնում է Ավստրալիայի ամբողջ ցամաքն ու Տասմանիա կղզին:

Ավստրալիայի մակերևույթը վոչ-բարձր սարահարթ է, վորն ավելի բարձր է արևելյան ու արևմտյան ծայրերում: Հարավ-արևելքում գտնվում են միջին բարձրության լեռներ՝ Ավստրալիական Ալպերը: Ավստրալիայի կլիման բնորոշ է նրանով, վոր մթնոլորտային տեղումները չափազանց անբավարար են և յերկիրը չորային է: Կենտրոնական Ավստրալիայում շատ են անապատներն ու կիսաանապատները: Յերկրագործության համար պիտանի է միայն արևելյան և հարավ-արևելյան ափը: Ավստրալիայի գետերը հոսում են միայն անձրևի ժամանակ, այնուհետև ցամաքում են: Միակ մշտական գետը Մուրրեյն է: Ավստրալիան հարուստ է հանածոներով,—վոսկով, արծաթով և քարածուխով:

Անգլիացիք Ավստրալիա գաղթեցին XIX դարի յերկրորդ կեսում: Նվաճողները գրեթե վոչնչացրին տեղական բնակչությունը (սև ցեղ): Ազգաբնակությունը շատ նոսր է (1 քառակուսի կ.մ.-ի վրա 1 մարդուց պակաս): Բնակչության $2/3$ մասը կենտրոնացած է հարավ-արևելքում: Գլխավոր քաղաքներն են՝ Սիդնեյ և Մելբուրն (մեկական միլլիոն բնակիչ):

Ավստրալիայում գերակշռում է գյուղատնտեսությունը: Ֆերմերական խոշոր կուլակային տնտեսություններն աշխատում են վարձու աշխատանքի ոգնությամբ և իրենց արտադրանքն արտածում են արտասահման: Գյուղատնտեսական գլխավոր կուլտուրան ցորենն է, վորի արտածմամբ Ավստրալիան ճգնաժամից առաջ չորրորդ տեղն էր բռնում՝ ՀԱՄՆ, Կանադայից և Արգենտինայից հետո: Հսկայական դեր է խաղում անասնաբուծությունը, վորով Ավստրալիան Արգենտինայից հետո յերկրորդ տեղն է բռնում (վոչխարների թվով և բրդի ու վոչխարի մսի արտածմամբ): Զարգացած է նաև կաթնատնտեսությունը:

Արդյունաբերության ճյուղերից զարգացած են՝ վոսկու, արծաթի, ածուխի հանուրդը և սննդի, տեքստիլ, փայտագործական արդյունաբերությունը:

Ավստրալիայում կա գյուղատնտեսական ու արդյունաբերական պրոլետարիատի մի մեծ միջնաշերտ:

Համաշխարհային ճգնաժամը սաստիկ հարվածեց Ավստրալիայի թե՛ գյուղատնտեսությանը և թե՛ արդյունաբերությանը: Բրդի և մսի գներն ընկան ավելի քան 60 %-ով և ֆերմերները մասսայական քայքայման յենթարկվեցին: Ամբողջ պրոլետարիատի $1/3$-ը գործազուրկ դարձավ և վատացան աշխատանքի պայմանները: Վերջին տարիներս Ավստրալիայում սրվում է դասակարգային պայքարը:

II. ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ

Նոր Զելանդիան (270 հազ. քառ. կ.մ., 1,5 միլլիոն բնակիչ), վորը նույնպես Անգլիայի դոմինիոնն է, գտնվում է Խաղաղ ովկիանոսի յերկու կղզիների վրա:

Նոր Զելանդիայի մակերևույթը լեռնոտ է: Կլիման խոնավ է և փափուկ: Կան նույն հանածոներն, ինչ վոր Ավստրալիայում,—վոսկի, արծաթ, քարածուխ:

Ինչպես Ավստրալիայում, այստեղ ևս գերակշռող դեր է խաղում գյուղատնտեսությունը: Նրա գլխավոր ճյուղն անասնաբուծությունն է և կաթնատնտեսությունը: Նոր Զելանդիան յուղի արտածմամբ աշխարհում առաջին տեղն է բռնում, իսկ բրդի արտածմամբ— չորրորդ տեղը: Արդյունաբերությունը թույլ է զարգացած (հանքերի հանուրդի և սննդի ճյուղեր): Գլխավոր քաղաքներն են Ոկլենդը և Վելլինգտոնը:

Ա Ս Ի Ա

I. Ճ Ա Պ Ո Ն Ի Ա

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճապոնիան գտնվում է Մեծ օվկիանոսի բազմաթիվ (մոտ 4 հազար) կղզիների վրա։

Ճապոնական տերրիտորիայի հիմնական մասը կազմող կղզիները ձգվում են հյուսիսից հարավ, մոտ 4700 կ. մ. յերկարությամբ, Ասիայի մայր-ցամաքի արևելյան ափերով։ Այդ մասը գտնվում է 51° և 22° հյուսիսային լայնության տակ։

Հյուսիսային խմբակը կազմում են Կուրիլյան կղզիները և Սախալին կղզու հարավային մասը (Կարաֆուտո)։

Կենտրոնական, հիմնական խմբակը կազմում են հետևյալ կղզիները.—Հոկկայդո, կամ Իյեզո, Հոնդո կամ Նիպոն, Սիկոկու և Կյու-Սյու։

Հարավային խմբակ. Ռյու-Կյու և Ֆորմոզա կղզիներ (գաղութ)։

Մայր-ցամաքում Ճապոնիային պատկանում են Կորեան և Լյաոդուն (Հարավային Մանջուրիա) գաղութները։ Վերջին ժամանակներս Ճապոնիան գրավել է հյուսիսային Մանջուրիան և հյուսիսային Չինաստանի նահանգները։

Ճապոնական կղզիների արևելյան կողմից գտնվում է Մեծ օվկիանոսը, արևմտյան կողմից Մեծ օվկիանոսի մասերը— նրա առափնյա (համեմատաբար վոչ խորը) ծովերը,—Օխոտյան, Ճապոնական և Արևելյան-Չինական։

Ասիական մայր-ցամաքի վերաբերմամբ Ճապոնիան

Մեծ օվկիանոսի վրա նույնպիսի նպաստավոր դիրք ունի, ինչպես և Անգլիան Յեվրոպայի վերաբերմամբ, Ատլանտյան օվկիանոսի վրա։

Ճապոնիայի աշխարհագրական մերձավորությունը Ասիական մայր-ցամաքին, Չինաստանի տնտեսական հետամնացությունն ու ռազմական թուլությունը վաղուց Ճապոնիայի համար, ըստ Վ. Ի. Լենինի արտահայտության, ստեղծել են «Չինաստանը կողոպտելու մի առանձին հարմարություն»։ Ճապոնիայի տերիտորիան կղզիների վրա յե, նրանից հեռու յեն նրա հետ մրցակցող կապիտալիստական պետությունների (ՀԱՄՆ-ի, Անգլիայի և այլն) գլխավոր բազաները և դրա շնորհիվ Ճապոնիան Չինաստանում ունի մի շարք տնտեսական ու ռազմական առավելություններ։

Ճապոնական կղզիների տարածությունը 385 հազար քառ. կ. մ. է, բնակչության թիվը—65 միլիոն։

Գաղութների—Կորեայի, Լյաոդունի, Ֆորմոզայի, Մարիանյան, Կարոլինյան, Մարշալյան և այլ կղզիների տերրիտորիան կազմում է 297 հազ. քառ. կ. մ., բնակչությունը— 25 միլիոն։

Բնակչության միջին խտությունը բարձր է,— 1 քառ. կ. մ. վրա 169 մարդ։ Բնակչության խտությունն անհավասարաչափ է։ Ճապոնիայի չորս գլխավոր կղզիներից ամենախիտ բնակչություն ունի Հոնդո կղզին—ճապոնական կղզիներից ամենամեծը (230 հազ. քառ. կ. մ.), վորը տնտեսական ամենամեծ զարգացման է հասել։ Այստեղ է գտնվում յերկրի բնակչության $^2/_3$-ը։ Այժմ քաղաքային բնակչությունը կազմում է ամբողջ պետության բնակչության $^2/_3$-ը։ Քաղաքային կյանքը խիստ զարգացած է։ Մայրաքաղաքը, Տոկիոն ունի ավելի քան 2200 հազար բնակիչ, Օսակա քաղաք—2,300 հազար (խոշորագույն գործարանային կենտրոն), Իոկոհամա—նավահանգիստ—530 հազ., Կոբե—նավահանգիստ—600 հազ., հին մայրաքաղաք Կիոտոն—720 հազար բնակիչ։

Ճապոնական խոշոր քաղաքների մեծամասնությունն ունի միանգամայն յեվրոպական դեմք: Ամենուրեք ելեկտրական լուսավորություն, փայլուն վաճառատներ, տրամվայներ, մետրոպոլիտեններ, աշխույժ ավտոմոբիլային յերթևեկություն:

Նկ. 25. Ճապոնիա: Տոկիո քաղաքը:

Բնակչության ամենախոշոր խավը գյուղացիությունն ե (յերկրագործներ, ձկնորսներ և այլն): Ճապոնիայի պրոլետարիատը 10,3 միլիոն ե (նրանցից գյուղատնտեսական բանվորները—4,6 միլիոն): Զգալի թիվ են կազմում արհեստավորներն ու տնայնագործները:

Ճապոնական բուրժուազիան և ֆեոդալական արիստոկրատիան սակավաթիվ են, բայց նրանց ձեռքումն ե գտնվում յերկրի ամբողջ իշխանությունը: Ժամանակակից Ճապոնիան միապետություն ե, նրա գլուխն ե կանգնած կայսրը: Ըստ Ճապոնիայի սահմանադրության, կայսրը կոչվում ե «աստվածային», վորովհետև նա իբր թե աստվածներից ե ծագում: Ճապոնիայում կա պարլամենտ, վորը կազմված ե յերկու պալատներից— վերին և ստորին: Պարլամենտի իրավունքները խիստ սահմանափակված են: Մինիստրները նրա առաջ պատասխանատու չեն:

Միկադոն (կայսրը) և պարլամենտը խոշոր բուրժուազիայի (բանկիրների, կոնցերնների ու տրեստների տերերի) հլու կամակատարն են:

Ճապոնիայում տիրում ե վոստիկանական տեռորը, քաղաքական կյանքը ճզմված ե: Գյուղացիությունը, վորն ահագին հարկեր ե վճարում, կալվածատերերին տալիս ե բարձր կապալավարձ, իսկ վաշխառուներին— փոխատվության տոկոսներ, կիսաքաղց, աղքատ ե ապրում:

Պրոլետարիատի նյութական մակարդակը չատ ցածր ե: Աշխատավարձը չնչին ե, իսկ բանվորական օրը չատ ձեռնարկություններում 12 ժամից ավելի յե: Արդյունաբերության մեջ լայն տարածված ե կանանց և պատանիների աշխատանքի դաժան շահագործումը: Նրանք չնչին կոպեկներ են ստանում [1]): Պրոֆմիությունները բազմամարդ են (300 հազար անդամ): Կապիտալի դեմ նրանց պայքարը դժվարանում ե սոցիալ—ֆաշիստական կուսակցությունների («բանվորական» և «սոցիալ—դեմոկրատական») ղեկավարությամբ:

Ճապոնիայի կոմունիստական կուսակցությունը ղաղտնի յե աշխատում: Նրա անդամներն ամենադաժան հալածանքի յեն յենթարկվում:

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ԿՏՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ: Գլխավոր կղզիները խիստ չատ են կտրատված հազարավոր ծոցերով, նեղուցներով, բնական նավահանգիստներով ու ծովախորշերով: Յերկրում չկա և վոչ մի կետ, վորը ծո—

1) Դեռ վերջերս ծնողներն իրենց դեռահաս աղջիկներին 5 տարով ծախում էին ֆաբրիկաններին: Այդ ժամանակվա ընթացքում նրանք զրկվում էին ֆաբրիկաններից դուրս գալու իրավունքից և աշխատում էին օրական 14 ժամ:

վափերից 100 կ.մ. ավելի հեռու լինի: Մանավանդ շատ են կտրատված արևելյան ափերը: Հոնդո կղզու մեջ մտնող Տոկիոյան մեծ ծոցի ափին գտնվում է կարևորագույն նավահանգստային քաղաք Իոկոհաման: Ճապոնական ծովը, վորը գտնվում է չորս ամենագլխավոր կղզիների արևմտյան կողմում, կլոր տարին չի սառչում:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ: Ճապոնիայի կղզիները լեռնոտ մակերևույթ ունեն: Լեռնախմբերը բարձր չեն, սակայն կան մինչև 4 կ.մ. բարձրություն ունեցող գագաթներ (Հոնդո կղզու վրա, Տոկիոյի մոտ գտնվող հանգած հրաբուխ Ֆուջի-Յաման,—3780 մ. և այլն): Ճապոնիայում շատ լեռնագագաթներ ծածկվում են ձյունով, վորը հալչում է ամառային ամիսներին: Լեռներից շատերը հանգած հրաբուխներ են. մի քանիսն էլ թույլ գործում են (մանավանդ Կուրիլյան կղզիներում):

Ճապոնիայում շատ հաճախ լինում են յերկրաշարժներ: Որվա ընթացքում գրեթե բոլոր կղզիներում ստորյերկրյա թույլ ցնցումներ են զգացվում:

Ամենաուժեղ, ավերիչ յերկրաշարժերն ու ծովի ցնցումները (յերբ ծովը ծածկում է ցամաքը) տեղի յեն ունենում բավական հաճախ, 6—10 տարին մի անգամ: 1923 թվականին այդպիսի յերկրաշարժերից մեկն ավերեց մի շարք քաղաքներ, հազարավոր մարդկային զոհեր տարավ և ավելի քան 2 միլիարդ վոսկի ռուբլու վնասներ հասցրեց: 1933 թվին նույնպես տեղի ունեցավ յերկրաշարժ, վորն զգացվեց Հոնդո կղզու կենտրոնական և Հոկկայդո կղզու հարավ-արևմտյան մասերում:

ՀԱՆԱԾՈՆԵՐԸ: Ճապոնական կղզիները հարուստ չեն ոգտակար հանածոներով: Քարածուխի գտնված պաշարները փոքր են,—մոտ 1 միլիարդ տոնն (համաշխարհային պաշարների 0,1 %-ը): Ճապոնական ածուխի վորակը ցածր է: Ածուխի ամենահարուստ շերտերը գտնվում են Կյու-Սյու և Հոկկայդո կղզիներում: Ճապոնական գաղութներում, Կորեայում և Լյաոդունյան թերակղզում կա մոտ 1,2 միլիարդ տոնն լավ ածուխ:

Նավթի պաշարները սահմանափակ են: Նավթի մեծ մասը գտնվում է հարավային Սախալինում և Ֆորմոզա կղզում:

Բոլորովին չնչին են յերկաթահանքերի պաշարները, վորոնք կազմում են մոտ 60 միլիոն տոնն: Նրանք գտնվում են գլխավորապես քարածուխի պաշարների մոտ: Ճապոնական կապիտալիզմի համար շատ մեծ նշանակություն ունեն այն յերկաթահանքերը, վորոնք գտնվում են նրա գաղութներում— Լյաոդունում ու Կորեայում: Այդ յերկաթահանքերը տասն անգամ ավելի յեն ճապոնականից:

Ճապոնիան ավելի հարուստ է պղնձով, բայց պղնձահանքերը սաստիկ քայքայված են:

Հրաբխային ժայթքումների ռայոնում (Հոկկայդոյի հյուսիսային մասից մինչև Ֆորմոզա) կա շատ ծծումբ: Ճապոնիայում կա մեծ քանակությամբ կաոլինյան կավ, վորը գործ է ածվում ճենապակի արտադրելու համար:

ԳԵՏԵՐ: Ճապոնիայում շատ գետեր կան: Նրանք մեծ չեն և աչքի յեն ընկնում արագահոսությամբ և հեղեղումներով, վորոնք տեղի յեն ունենում անձրևներից կամ ձյան հալչելուց: Ճապոնիայի գետերն ոգտագործվում են փայտեղեն փոխադրելու (առանց նավերի), վոռոգման և եժան եներգիա ստանալու համար: Հիդրոեներգիայի համաշխարհային պաշարում Ճապոնիայի բաժինը 2,5 % է: Այնուամենայնիվ այս յերկրի կյանքում նրա ոգտագործումը հսկայական նշանակություն ունի:

ԿԼԻՄԱ: Հարավային Սախալինը գտնվում է չափավոր ցրտության կլիմայում, Հոկկայդո կղզին—բարեխառն կլիմայի գոտում, Հոնդո կղզու հյուսիսային կեսը—բարեխառն— տաք գոտում, Հոնդո, Սիկոկու և Կյու-Սյու կղզիների հարավային կեսն ունի կիսաարևադարձային կլիմա, Ֆորմոզան—արևադարձային: Ճապոնական կղզիների կլիման ծովային է, նա ավելի մեղմ

ու խոնավ է, քան նույն լայնության տակ գտնվող ցամաքային վայրերի կլիման:

Ծովային տաք ու սառն հոսանքները մեծ ազդեցություն են գործում յերկրի կլիմայի վրա: Հյուսիսային հասարակածային հոսանքի մի ճյուղը, որը հայտնի յե Կուրո–Սիվո անունով, մինչև հյուսիսային լայնության 40°–ը ողողում է Ճապոնիայի արևելյան ափերը և նեղ շերտով, գլխավոր կղզիների արևմտյան ափի յերկարությամբ մտնում է Ճապոնական ծովը: Ճապոնական կղզիների հյուսիսային մասերը յենթակա յեն Կուրիլյան կամ Ոյա–Սիվո ցուրտ հոսանքին: 40° հյուսիսային լայնության տակ նա թեքում է Կուրո–Սիվոյի հոսանքը՝ ճապոնական կղզիներից դեպի Ամերիկայի կողմը:

Մթնոլորտային տեղումները: Ճապոնիայում լինում են թե՛ անձրևներ և թե՛ ձյուն: Անձրևներ գալիս են, յերբ փչում է ամառային հարավ–արևելյան քամին, ձյուն յերբ ձմռանը փչում են հյուսիս–արևմտյան, ցամաքային քամիները: Մթնոլորտային տեղումների միջին քանակությունը 100–ից մինչև 300 սմ. է:

ՀՈՂ ՅԵՎ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Մշակվող դաշտերի հողերը, մանավանդ հրաբխայինները, արգավանդ են:

Ճապոնիայի բուսականությունը կարելի յե բաժանել չորս մեծ գոտիների:

Բարեխառն—ցուրտ գոտում՝ Կուրիլյան կղզիներում, հարավային Սախալինում և Հոկկայդոյի հյուսիսային մասում գերակշռում են փշատերև (սոճու) անտառները: Յերկրի այն մասում, որը գտնվում է բարեխառն կլիմայի գոտում և բռնում է Հոնդոյի հյուսիսային ու Հոկկայդոյի հարավ–արևմտյան մասը, բռնում են յելատինի, յեղևնու և սաղարթավորների խիտ անտառները: Պատահում են յեղևինը և կեչին: Կուլտուրական բույսերից այստեղ աճում են պտղատու ծառեր՝ տանձեր, խնձորենիներ, բալենիներ և հացաբույսերից— ցորեն, գարի, վարսակ և այլն:

Յենթա—արևադարձային գոտին, որի մեջ մտնում են՝ Հոնդո և Սիկոկու կղզիների մի մասը և Կյու–Սյուի հյուսիսային կեսը, հարուստ է բամբակով, ցածլիկ արմավենիներով, սոճու և թզկենու ճապոնական յուրահատուկ տեսակներով և մշտականաչ կաղնիներով: Կուլտուրական բույսերից այստեղ կարևոր տեղ են բռնում բրինձը, թեյի թուփը, թթենին:

Արևադարձային գոտում աճում են կամֆարի ծառը, արմավենիներ, բամբուկ, մոմածառ և այլ հազվագյուտ տեսակներ: Մշակվում է բրինձ և շաքարեղեգն: Տնտեսական կարևորագույն նշանակություն ունի բարեխառն և յենթաարևադարձային գոտու բուսականությունը:

Մեծ ովկիանոսում և ճապոնական կղզիների շուրջը գտնվող ծովերում պատահում են կետեր, փոկեր, ծովարջեր:

3. ՊԱՏՄԱ–ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մինչև XIX դարի կեսը Ճապոնիան իր մեջ պարփակված, ֆեոդալական մի պետություն էր, կենտրոնական թույլ իշխանությամբ: Բնակչության գոյության գլխավոր աղբյուրը յերկրագործական ու արհեստավորական աշխատանքն էր. դանդաղ զարգանում էին ապրանքային–դրամական հարաբերությունները: Ճապոնիայի տնտեսության այդ բնույթը խախտվեց բռնության շնորհիվ. 1853 թվականին Միացյալ Նահանգներն սպառնալով, որ ռազմանավերից կռմբակոծեն Ճապոնիայի ափերը, հարկադրեցին բաց անե մի շարք նավահանգիստներ: Այնուհետև այդ նավահանգիստները բաց էին նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համար:

Այդ ժամանակ արդեն զարգացած բուրժուազիան հին ֆեոդրեցին բաց անել մի շարք նավահանգիստներ :Այնուհետև այդ նագայրույթը, որն առաջ յեկավ ոտարների միջամտությունից: Հեղափոխությունը տեղի ունեցավ կայսերական իշխանությունն ուժեղացնելու լոզունգով և ձևականորեն գլխավորվեց կայսեր կողմից (հեղափոխություն վերևից): Հին ֆեոդալների տիրապետությունը թուլացավ, ստեղծվեց ուժեղ կենտրոնական իշխա–

նություն: Սակայն ճապոնական հեղափոխությունը (վորը շարունակվեց 1860 թվականից մինչև 1868 թվականը) լիակատար հաղթություն չտվեց բուրժուազիային: Ճապոնիայում հաստատվեց մի այնպիսի պետական կառուցվածք, վորտեղ կալվածատերերի դասակարգը մեծ ազդեցություն պահեց:

Հեղափոխությունը, թեև վոչ վերջնականապես, այնուամենայնիվ թուլացրեց գյուղի ֆեոդալական հարաբերությունները և պայմանավորեց փոխանցումն արտադրության ֆեոդալական ձևից դեպի կապիտալիստականը:

Նոր իշխանությունն առևտրական լայն հարաբերություններ սկսեց օտար պետությունների հետ: Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունն արագությամբ սկսեց զարգանալ: Կապիտալներն սկսեցին կուտակվել բանկերում: Սկզբում շոշափելի աջակցություն ցույց տվեց ՀԱՄՆ-ը, վորի բուրժուազիան յերազում եր Ճապոնիան դարձնել իր կիսագաղութը: Սակայն Ճապոնիան չդարձավ կիսագաղութ, այլ և ինքն սկսեց գաղութներ ու կիսագաղութներ գրավել—գլխավորապես Չինաստանում: 1872 թվականին նա Չինաստանից գրավեց Ռյու-Կյու կղզիները, այնուհետև 1874 թվին ժամանակավորապես, իսկ 1895 թվին վերջնականապես գրավեց Չինաստանից Ֆորմոզա կղզին:

1900 թվականին Ճապոնիան մյուս կապիտալիստական պետությունների, նաև ցարական Ռուսաստանի հետ մասնակցեց Չինաստանի կողոպտման:

1904 թվականին Ճապոնիայի իմպերիալիստներն անգլիական իմպերիալիստների աջակցությամբ պատերազմ սկսեցին ցարական Ռուսաստանի դեմ և հաղթեցին նրան: Պատերազմի հետևանքով նրանք ստացան Դայրեն (նախկին Դալնի) նավահանգիստն և ամբողջ Լյաոդուն թերակղզին, Հարավ-մանջուրական յերկաթուղին, Սախալին կղզու հարավային կեսն և բացի դրանից, ճանաչվեց Ճապոնիայի գերակշիռ ազդեցությունը Կորեայում և Մանջուրիայում: 1910 թվականին Կորեան վերջնականապես միացվեց Ճապոնիային, իբրև նրա գաղութը:

1914—1918 թվ. համաշխարհային պատերազմի ընթացքում Ճապոնիայի եկոնոմիկայի մեջ մեծ տեղաշարժեր յեղան: Պատերազմի ժամանակ Եվրոպայի հարաբերությունները Հեռավոր

Արևելքի հետ խիստ դժվարացան և այդ թույլ տվեց Ճապոնիային Հեռավոր Արևելքի և Հարավային Ասիայի շուկաները հեղեղել իր ապրանքներով: Այս առնչությամբ ուժեղ չափով զարգացավ արդյունաբերությունը, մեծ քանակությամբ կապիտալներ կուտակվեցին և սկսվեց սրանց արտածումն ուրիշ յերկրներ:

Պատերազմից հետո, վորին Ճապոնիան փաստորեն վոչ մի մասնակցություն չունեցավ, նրան տրվեցին Գերմանիայի ամբողջ գաղութները, վորոնք գտնվում եյին Հեռավոր Արևելքում և մասամբ Մեծ ովկիանոսի կղզիների վրա:

1918 թվականին ճապոնական բուրժուազիան գրավեց Սախալին կղզու հյուսիսային կեսը և յոթանասուն հազարանոց մի բանակ ուղարկեց Սիբիր: Այն ժամանակ ճապոնացիք գրավեցին մեր ամբողջ ծովամերձ շրջանը, և Արևելյան Սիբիրի մի մասը մինչև Իրկուտսկ: Սակայն 1921 թվին Կարմիր բանակն ու պարտիզանները վտարեցին ինտերվենտներին Խորհրդային յերկրից:

1931 թվականին ճապոնական զորքերը սկսեցին ներխուժել չինական հարուստ մարզերից մեկը,—լայնածավալ (2 միլլոն քառ. կ.մ) Մանջուրիան: Շատ կարճ ժամանակամիջոցում ճապոնական զորքերը գրավեցին ամբողջ Մանջուրիան, հռչակվեց Մանջուրիայի «անկախությունը»: Մանջուրիայում Ճապոնիան նստեցրեց իր գործակալներին, իբրև այդ յերկրի կառավարիչներ: Մանջուրիայի գրավումը Չինաստանի ստրկացման պլանի միայն մի մասն եր: 1932—1933 թվ. ճապոնական իմպերիալիստները ներխուժեցին Հյուսիսային Չինաստանի նահանգները և գրավեցին Բեյպինը:

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այնքան ել վաղուց չե, ընդամենը 70–80 տարի առաջ Ճապոնիան հետամնաց յերկրներից մեկն եր: Ներկայումս նա դարձել ե Ասիայի առաջավոր կապիտալիստական մի պետություն:

Սակայն Ճապոնիային կարելի յե բարձր զարգացած արդյունաբերական յերկիր համարել միայն համեմատելով ասիական հետամնաց յերկրների հետ: Ճապոնիան այս յերկրներն ե արտածում իր պատրաստի ապրանքներն

ու կապիտալները և այնտեղից հումք և պարեն է ներմուծում: Իսկ յեթե Ճապոնիային համեմատենք Յեվրոպայի ինդուստրիալ յերկրների—Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, կտեսնենք, վոր նրա տնտեսությունն ավելի թույլ է զարգացած: Ճապոնիան դեպի այդ յերկրներն արտածում է գյուղատնտեսական մթերքներ, մանավանդ մետաքս և թեյ ու այնտեղից ներմուծում է պատրաստի ապրանքներ ու կապիտալներ: Ճապոնիայի ինդուստրիայում առաջին տեղն է բռնում թեթև արդյունաբերությունը՝ բամբակյա գործվածքների արտադրությունը: Ծանր արդյունաբերությունը,—մետաղագործությունը, մեքենաշինարարությունն ու քիմիան,—համեմատաբար ավելի թույլ է զարգացած: Դեռ այժմ էլ այնտեղ հսկայական նշանակություն ունի մանր արտադրությունը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Սոցիալական և տեխնիկական առանձնահատկություններ: *Մշակվող հողատարածությունները բոլոր հողերի $^{1}/_{5}$-ից պակաս են, մնացած հողերն անմշակելի յեն: Մեկ մարդուն ընկնում է ընդամենը 0,12 հեկտար մշակելի հող: Սրանից մոտ $^{3}/_{5}$-ը պատկանում է գյուղացիներին, վորոնք հողը մշակում են անկախ, իսկ $^{2}/_{5}$-ը պատկանում է խոշոր սեփականատերերին, վորոնք հողի մի մասը կապալով են տալիս:*

Հողը կապալով տվող սեփականատերերը և դրամական փոխատվություններ տվող վաշխառուները գյուղացիության իսկական ցեցերն են: Այդ մակաբույծները կլանում են բերքի և յերկրագործի յեկամուտների մեծ մասը: Ընդհանուր առմամբ կապալառուն կալվածատիրոջը վճարում է բերքի 80 %-ից ավելին: Գյուղացիներն այնքան մեծ պարտքեր ունեն կալվածատերերին, վոր այդ պարտքերի վճարումը տասնյակ տարիներ է տևում:

Գյուղատնտեսության մեջ լայն չափով օգտագործ-

վում է վարձու աշխատանքը (մոտ 400 հազար մշտական և մոտ 1 միլիոն սեզոնային բանվորներ):

Հողի մշակումը, ցանքն ու բերքահավաքը ձեռքով են կատարվում: Ճապոնական դաշտերը նման են բանջարանոցների ածուներին: Հողը պարարտացվում է աղբով, հանքային պարարտանյութերով և օրգանական նյութերով, վորոնք պատրաստվում են նեխված ձկներից:

Ճապոնիայի ամենակարևոր կուլտուրայի,—բրնձի ցանքերն առատ վոռոգումն են պահանջում: Վոռոգումը կատարվում է բրնձի առանձին դաշտերի ճահճացման միջոցով, վորոնք շրջապատված են վոչ բարձր կավե թմբերով: Վոռոգվող հողամասերը հավասար են բոլոր մշակելի դաշտերի կեսին:

Այդպիսի փոքրիկ հողամասերը, յեթե նույնիսկ ամենահամառ և քրտնաջան աշխատանք թափվի, չեն կարող կերակրել գյուղացու ընտանիքը:

Գլխավոր հացաբույսը բրինձ է: *Նա բռնում է բոլոր դաշտերի $^{3}/_{5}$ մասը և ցանվում է բոլոր հարթավայրերում: Սակայն գյուղացիական ընտանիքների մեծ մասում բրինձը գործ է ածվում միայն բացառիկ, հանդիսավոր տոներին և հիվանդների համար:*

Ճապոնիայի ամբողջ բնակչության կարիքները հոգալու համար սեփական բրինձը չի բավականանում և ներմուծվում է ուրիշ յերկրներից—Կորեայից, Հնդկաչինից, Սիամից, Հնդկաստանից և այլն:

Լեռների լանջերում, բացի բրնձից, մշակվում է գարի (Ճապոնիայի յերկրորդ հացաբույսը), ցորեն, վարսակ, հնդկացորեն, կորեկ: Ֆորմոզա կղզու վրա զգալի չափով զարգացած է շաքարեղեգնի մշակումը: Մեծ տարածություններ են հատկացված բանջարանոցային բույսերին, մանավանդ սոյային, կարտոֆիլին: Ճապոնիայում սրանք բնակչության սննդի մի եյական մասն են հանդիսանում:

Տեխնիկական կուլտուրաները թույլ են զարգացած: Առաջ մեծ տարածություններ էին հատկացվում բամբակի համար, բայց այդ բամբակը չկարողացավ մրցել հնդկական ու ամերիկական բամբակի հետ: Բավական կրճատվեց թեյի մշակումը: Թեյը մշակվում է գլխավորապես Հոնդո կղզու հարավային մասի լեռնալանջերում և Սիկոկու, Կյու–Սյու կղզիներում:

Ամենուրեք, մանավանդ Հոնդո կղզու կենտրոնական մասում, տարածված է **մետաքսագործությունը**: Ճապոնական յուրաքանչյուր վեց ընտանիքից մեկը պարապում է շերամի ու բոժոժների բազմացմամբ:

Մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի սկսվելը բոժոժների յեկամուտը կազմում էր գյուղատնտեսության ամբողջ յեկամտի ավելի քան 30 $^0/_0$-ը: Մետաքսի մի մասը վերամշակվում է Ճապոնիայի մետաքսի ֆաբրիկաներում, իսկ մոտավորապես $^3/_4$ մասը արտածվում է: Մինչև ճգնաժամն այդ մետաքսն արտածվում էր գլխավորապես ՀԱՄՆ: Մետաքսն այն միակ հումքն է, վորը մեծ քանակությամբ արտածվում է Ճապոնիայից: Ճապոնական մետաքսը բավարարում էր ամբողջ աշխարհի կարիքի 40 $^0/_0$-ը: Ճգնաժամի տարիներում ընկավ մետաքսի գինը և այսպիսով ծանր հարված հասավ Ճապոնիայի մետաքսագործության:

Անասնաբուծությունը աչքի ընկնող չափով չի զարգացել: Չկան արոտատեղեր՝ խոշոր յեղջյուրավոր անասունների արածման համար: Ձիերը բուծվում են միայն բանակի համար: Վոչխարաբուծությունն էլ չի զարգացած, վորովհետև չկան վոչխարների լավ արոտատեղեր—չոր տափաստաններ և լեռնային արոտատեղեր: Անասնաբուծության նշանավոր ճյուղերն են միայն խոզաբուծությունն ու հավաբուծությունը:

Ձկնորսություն: Բնակչության սննդի մեջ ձուկը կարևոր տեղ է բռնում: Ճապոնիայում ձկնորսության հետ կապված է մոտ 2,5 միլիոն մարդ:

Ճապոնիայի կղզիների յերկար (28 հազար կ.մ.)

ծովափում գտնվում են բազմաթիվ ձկնորսական գյուղեր: Բացի դրանից, ճապոնացիք ձկնորսությամբ են պարապում նաև ԽՍՀՄ, Կանադայի, Կալիֆորնիայի ափերում և Մեծ ովկիանոսի այլ մասերում:

Առաջին տեղն է բռնում տառեխի վորսը: Տառեխը գործ է ածվում վոչ միայն կերակրի, այլև բրնձի դաշտերի պարարտացման համար: Հսկայական քանակությամբ ուրիշ տեսակի ձկներ,—կետեր, սալմոններ, թյուննոսներ, ինչպես նաև խեցգետիններ և կակղամորթեր—ոգտագործվում են բազմաթիվ այլ նպատակներով: Ձկնից և խեցգետնից պատրաստվում են պահածոներ, ձկան ավելորդ մասերից (փշեր, վոսկորներ և այլն) պատրաստվում է սոսինձ, արհեստական մարգարիտ ստանալու առանձին նյութ և այլն: Բազմազան նպատակներով ոգտագործվում են նաև ջրմուռները (ծովային կաղամբ և այլն):

Փայտամշակությունը մեծ նշանակություն ունի յերկրաշարժների այս յերկրի համար, վորտեղ շենքերի մեծ մասը փայտից է: Փայտեղենն ոգտագործվում է գրենական պիտույքների ու թղթի, արհեստական մետաքսի, լուցկու և արդյունաբերական այլ ճյուղերի համար: Զնայելով անտառների հսկայական տարածության, Ճապոնիային չի բավարարում սեփական փայտը: Ճապոնիան փայտեղեն է ներմուծում ՀԱՄՆ-ից, Կանադայից, ԽՍՀՄ Հեռավոր-Արևելյան յերկրամասից (առանձնապես գնահատվում է Սիբիրի յեղևինը):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Ճապոնիայում, ինչպես ասացինք, գերակշռում է թեթև արդյունաբերությունը (տեքստիլ, սննդի, լուցկու): Արագությամբ զարգանում են ծանր արդյունաբերության նոր ճյուղերը (էլեկտրոտեխնիկական, քիմիական, ավտոմոբիլային): Հին ճյուղերը (մետաղագործություն, ծանր մեքենաշինարարություն, հաստոցների շինարարություն) ավելի թույլ են առաջ գնում: Գործարանային արդյունաբերությունից բացի, յերկրում սաստիկ տարածված

է արհեստագործությունն ու տնայնագործությունը (մետաքսյա, գեղարվեստական, կերամիկական իրեր և այլն)։

Արդյունաբերության գրեթե բոլոր կարևորագույն ճյուղերը խմբվել ու կազմում են կոնցերններ (միություններ)։ Բացի մասնաճյուղային միություններից, կան նաև մի շարք կոնցերններ, վորոնք կապված են գյուղատնտեսության զանազան ճյուղերի հետ։

Հանքային վառելանյութերի պաշարի սահմանափակության հետևանքով առանձին ուշադրություն է դարձվում հիդրոէներգիայի վրա։ Ոգտագործվում է նրա ամբողջ պաշարի ավելի քան 40 %-ը։ Ելեկտրոէներգիայի գլխավոր սպառողն արդյունաբերությունն է, ապա կենցաղային սպառումը (տրամվայ, լուսավորություն)։

Արդյունաբերության կարևորագույն ճյուղը տեքստիլն է։ Համաշխարհային ճգնաժամի նախորյակին, 1929 թվականին տեքստիլ ձեռնարկություններում աշխատում էր մոտ 1,2 միլիոն բանվոր։ Առանձնապես զարգացած է բամբակի արդյունաբերությունը։ Նա սարքավորված է տեխնիկայի վերջին խոսքով։ Այն կատարելագործությունները, վոր ճապոնացիք մտցրին բամբակի արդյունաբերության մեջ, այժմ կիրառվում են Ամերիկայում ու Յեվրոպայում։ Բամբակի վերամշակությամբ Ճապոնիան 1929 թվ. յերրորդ տեղը բռնեց։

Բամբակի ամբողջ արդյունաբերությունը գտնվում է Հոնդո կղզու արևելյան ափերին։ Կարևորագույն կենտրոնները գտնվում են Ոսակայում, Տոկիոյում, Նագոյայում։ Բամբակի արդյունաբերության ռայոնները մոտենում են նավահանգիստներին, քանի վոր, նա աշխատումէ գլխավորապես ՀԱՄՆ-ից և Հնդկաստանից բերվող հումքով։

Մետաքսի արտադրությունը Ճապոնիայի տեքստիլ արդյունաբերության ամենահին ճյուղն է։ Բացի խոշոր ֆաբրիկաներից, վորոնք սարքավորված են ժամանա-

կակից մեքենաներով, մետաքսի արտադրության մեջ կան հսկայական քանակությամբ մանր, կիսատնայնագործական ձեռնարկություններ ու մանուֆակտուրայի ճյուղեր։

Մետաքսը մեծ դեր է խաղում արտածման մեջ։ Նատուրալ մետաքսի և նրա հումքի արտադրությամբ Ճապոնիան աշխարհում առաջին տեղն է բռնում։ Մետաքսի արտադրության գլխավոր ռայոնը գտնվում է Հոնդո կղզու արևմտյան ափի միջին մասում։

Բրդե գործվածքների արդյունաբերությունը, վորն աշխատում է ներմուծվող թանգ հումքով, միայն վերջին ժամանակներս է սկսել զարգանալ։

Բավական զարգացել է մետաքսի ու բրդի արդյունաբերության հետ կապված՝ տրիկոտաժ արդյունաբերությունը (գուլպաներ, գործած սպիտակեղեն)։

Հենց տեքստիլ արդյունաբերության մեջ է, վոր անխնայորեն շահագործվում է կանանց և յերեխաների աշխատանքը։ Ճապոնիայի տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատող կանայք տղամարդկանցից հինգ անգամ ավելի յեն։

Սննդամթերքների արտադրությունը Ճապոնիայի արդյունաբերության մեջ արտադրանքի արժեքով և ձեռնարկությունների թվով յերկրորդ տեղն է բռնում։ Ընդհանուր առմամբ սննդամթերքների արտադրության տեխնիկական մակարդակը բարձր չէ։ Կան շատ տնայնագործական ձեռնարկություններ։ Կարևորագույն ճյուղերն են՝ գինեգործությունը, սոյան և պահածոները։ Գլխավորապես արտադրվում են ձկան, խեցգետինների, բանջարեղենի ու պտղեղենի պահածոներ։ Առաջ թեյի արտադրությունը մեծ նշանակություն ուներ թե՛ գյուղատնտեսության և թե՛ արտածման համար։ Հիմա այդ նշանակությունը նվազել է, թեյի արտադրությունը կրճատվել, չկարողանալով մրցել Հնդկաստանի, Ցեյլոնի ու Ճավայի հետ։ Խոշոր չափով զարգացած է շաքարի արդյունաբերությունը։ Նրան

հումք են տալիս Ֆորմոզա, Ռյու-Կյու կղզիները (շաքարեղեգն), Կյու-Սյու և Հոնդո կղզիները (շաքարի ճակնդեղ)։ Շաքարի արդյունաբերության ռայոնները կապված են հումքի ռայոնների հետ։

Հանքային արդյունաբերությունը Ճապոնիայում ավելի սակավ նշանակություն ունի, քան մյուս ճյուղերը։

Արտադրանքի արժեքով առաջին տեղը բռնում ե ածուխի հանույթը, վորը 1929 թվականին տվել ե 32-ից մինչև 35 միլիոն տոնն ածուխ։ Բացի Ճապոնիայում արդյունաբերվող ածուխից, վերջինս ստացվում ե նաև ճապոնական գաղութներից—Կորեայից ու Հարավային Մանջուրիայից։

Պղնձի հանույթը մեծ նշանակություն ունի։ Մինչև համաշխարհային պատերազմը Ճապոնիան պղնձի հանույթով աշխարհում յերկրորդ տեղն եր բռնում։ Այժմ նրա տեսակարար կշիռն իջել ե։ Պղնձի ներքին գործածության աճման և հանույթի կրճատման հետևանքով դադարել ե արտածումը։ Նավթի հանույթը քիչ ե։ Արտածման համար մեծ նշանակություն ունի ծծումբի մշակումը։

Մետաղագործություն և մեքենաշինարարություն։ Ճապոնիային չի բավականանում իր արտադրած մետաղը։ Նա ստիպված ե ուրիշ յերկրներից թուջ և պողպատ ներմուծել։ Ճապոնիայի գլխավոր մետաղագործարանները գտնվում են Կոբե-Ոսակա, Տոկիո-Սենդեյ ռայոններում՝ Հոնդո կղզու, Կյու-Սյու կղզու հյուսիս-արևմտյան և Հոկկայդո կղզու հարավ-արևելյան մասերում։

Ճապոնիայի խոշորագույն մետաղագործական ձեռնարկությունները գտնվում են նրա սեփական տերիտորիայից դուրս, գաղութներում— Կորեայում ու Մանջուրիայում։

Մետաղագործության հետ կապված ե նավաշինարարությունը, վորը Ճապոնիայում մեծ ծավալ

ստացել։ Գլխավոր կենտրոններն են Ոսակա, Կոբե, Տոկիո, Իոկոհամա և Նագասակի քաղաքները։ Զարգանում ե մեքենաշինարարությունը, բայց դեռ չի բավարարում յերկրի կարիքներին։ Մեծ քանակությամբ մեքենաներ են ներմուծվում Յեվրոպայից ու ՀԱՄՆ-ից։ Զգալի զարգացման ե հասել ելեկտրո-սարքավորանքների արտադրությունը։

Քիմիական արդյունաբերությունն ամենանորն ե։ Միևնույն ժամանակ իր արտադրանքի արժեքով նա մյուս ճյուղերի մեջ յերրորդ տեղն ե բռնում։ Առանձնապես ծավալված ե արհեստական պարարտանյութերի, լուցկու և պայթուցիկ նյութերի արտադրությունը։

ՏՐԱՆՍՊՈՐՏ։ Ճապոնիայի ամբողջ բեռնաշրջանառության յերկու յերրորդը կատարվում ե ծովի վրա։ Յերկաթուղիները գլխավորապես ճանապարհորդներ են փոխադրում։

Իր առևտրական նավատորմիղի մեծությամբ Ճապոնիան աշխարհում յերրորդ տեղն ե բռնում։ Սակայն նրա առևտրական նավատորմիղն իր վորակով զիջում ե յեվրոպական ու ամերիկական նավատորմիղներին (շատ են հին նավերը, փոքրերը մեծ տոկոս են կազմում, բազմաթիվ նավեր առագաստավոր են)։ Ճապոնիայի առևտրական նավատորմիղն սպասարկում ե ասիական ուրիշ յերկրներին— Չինաստանին, Ինդոնեզիային, Հնդկաստանին։

Յերկաթուղիների ցանցը բավական հավասարաչափ ե գլխավոր կղզիների տերիտորիայում։ Յերկար, գլխավոր յերկաթուղագծերը ձգվում են Հոնդո և Կյու-Սյու կղզիների ափերի յերկարությամբ։ Շատ տեղերում նրանք խաչադրվում են ուրիշ յերկաթուղագծերի հետ։

Վորովհետև Ճապոնիայում մարդկային աշխատանքը շատ եժան ե և լծկան անասունները քիչ են, ուստի բեռների և մարդկանց փոխադրության համար ոգտագործվում ե մարդկային ույժը։ Բեռներն ու ճա-

նապարհորդները փոխադրվում են ձեռքի սայլակներով, որոնց լծվում են մարդիկ—«ռիկշիները»:

Վերջին տարիներս շոշափելի զարգացման է հասել ավտոմոբիլային տրանսպորտը: 1931 թվականին Ճապոնիայում կար ավելի քան 90 հազար ավտոմոբիլ: Զարգանում է քաղաքացիական օդագնացությունը:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ: Ճապոնական ապրանքների մեկ քառորդից ավելին արտադրվում է Ասիայի արտաքին շուկայում սպառելու համար, մանավանդ ճապոնական գաղութներում, Չինաստանում, Հնդկաստանում և Ինդոնեզիայում: Այստեղ ուղարկվում են գլխավորապես տեքստիլ պատրաստի ապրանքներ: Յեվրոպական ու ամերիկական շուկաներն արտածվում է գլխավորապես մետաքս-հումք (մանավանդ Միացյալ Նահանգները, Ֆրանսիա, Իտալիա): Բամբակյա գործվածքները կազմում են արտածման 20%-ը, մետաքսը և նրանից պատրաստած ապրանքները—45 %-ը:

Ներմուծվող ապրանքների կեսից ավելին արդյունաբերական հումք է. այնուհետև գալիս են մեքենաներն ու պարենը:

5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Ճապոնիայի ժողովրդական տնտեսությունը խոշոր չափով կախված է արտաքին առևտրից, մինչդեռ ճգնաժամի շրջանում սպառման շուկաները խիստ կրճատվեցին: ՀԱՄՆ-ը, Ֆրանսիան և Իտալիան այլևս չգնեցին մետաքսյա ապրանքներ, մետաքսի հումք և պահածոներ: Ագրարային յերկրները—Չինաստանը, Հնդկաստանն ու Ինդոնեզիան չափազանց կրճատեցին բամբակյա գործվածքների ներմուծումը: Պղնձի, ծծումբի, քիմիական ապրանքների արտածումն ավելի քան կիսով չափ պակասեց: Ընկան այդ բոլոր ապրանքների գները:

Արդյունաբերության արտադրանքը խիստ կրճատվեց (թեև 1932 թվականին մետաղագործության և

տեքստիլ արդյունաբերության արտադրանքը նորից բարձրացավ): Առաջ յեկավ սոսկալ գործազուրկների մի հսկայական բանակ: Գյուղատնտեսությունը բոլորովին քայքայվեց: Գյուղատնտեսական մթերքների գների անկումն ու նրանց արտածման կրճատումը քայքայեցին գյուղացիության միլիոնավոր մասսաներին և նրանց սովամահության մատնեցին: Արդյունաբերության մեջ գործազուրկների թիվը հասավ 2,5 միլիոնի, գյուղատնտեսության մեջ—1,5 միլիոնի:

Ճգնաժամի հետևանքով, որն ավելի սուր բնույթ տվեց աշխատավոր մասսաների աղքատության, յերկրում ուժեղացավ հեղափոխական շարժումը: Այդ շարժումն ընդգրկել է ոչ միայն գործարանային պրոլետարիատին, այլև գյուղացիության, մանավանդ բրնձի մշակման շրջաններում: Ամեն տարի մոտ 3 հազար ագրարային խռովություններ են լինում: Գյուղացիները պահանջում են պակասեցնել հիմնական կապալավճարները, վերացնել նույնպիսի լրացուցիչ վճարները, կալվածատերերի հողերը հանձնել կապալառուներին: Խռովությունների ժամանակ հաճախ հրդեհվում ու ավերվում են կալվածատերերի տները և արյունոտ ընդհարումներ են լինում ոստիկանության հետ: Գյուղացիության ամենամարտական կազմակերպություններն են կապալառուների միությունները:

Ճգնաժամից յելք գտնելու համար Ճապոնիայի բուրժուազիան ռազմական հարձակում կազմակերպեց Չինաստանի վրա: Մանջուրիայի գրավումը և Հյուսիսային Չինաստան մտնելը սրեցին Ճապոնիայի միջազգային հարաբերությունները, մանավանդ ՀԱՄՆ հետ:

Հաճախակի պատերազմ մղելով, Ճապոնիան աշխարհիս ամենասպառազինված պետություններից մեկն է: Ճապոնիայի ռազմական նավատորմիղը նավերի թվով և նրանց տոննաժով աշխարհում յերրորդ տեղն է բռնում, զիջելով միայն ՀԱՄՆ-ին և Անգլիային: Ճապոնիան ունի նաև վիթխարի ռազմական օդանավա-

տորմից։ Պատերազմի ժամանակ նրա ցամաքային զորքի քանակը կարող է հասնել 6200 հազար հոգու։ Բանակը զինված է ռազմական տեխնիկայի նորագույն միջոցներով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճապոնիան կղզիների վրա գտնվող պետություն է, բայց միայն վերջերս է սկսել ոգտվել իր նպաստավոր դիրքից։ Կղզիները լեռնոտ են և այս պատճառով գերակշռում են այն հողերը, վորոնք անհարմար են յերկրագործության համար։ Հանածոների պաշարը մեծ չէ։ Լայն չափով ոգտագործվում է սպիտակ ածուխը։ Ճապոնիայի արդյունաբերությունն սկսեց արագությամբ զարգանալ XIX դարի վերջերից, բայց դեռ չի հասել առաջավոր կապիտալիստական յերկրների մակարդակին։

Խոշոր արդյունաբերության մեջ բարձր տեխնիկայի հետ միասին գոյություն ունի բանվորների կիսաճորտատիրական շահագործումը։ Խոշոր նշանակություն է ստացել ծովային տրանսպորտը։ Ոգտվելով Ճապոնիայի նպաստավոր դիրքից ճապոնական ագահ իմպերիալիզմը հետզհետե հափշտակում է չինական տերրիտորիայի հսկայական տարածությունները։

Ստուգիչ հարցեր

Ինչո՞ւմն է կայանում Ճապոնիայի համար «Չինաստանը կողոպտելու առանձին հարմարությունը»։ Ի՞նչ ծովերով է շրջապատված Ճապոնիան։ Ի՞նչ կապեր ունի Իոկոհաման։ Վորո՞նք են Ճապոնիայի գաղութները և վորտե՞ղ են գտնվում։ Կլիմայական ի՞նչ պայմաններ գոյություն ունեն հյուսիսային, միջին և հարավային Ճապոնիայում։ Ի՞նչ բնական հարստություններ կան և վորտե՞ղ են գտնվում։ Արդյոք նրանք բավակա՞ն են խոշոր արդյունաբերության զարգացման համար։ ՀԱՄՆ-ի ճգնաժամը Ճապոնիայի տնտեսության վո՞ր ճյուղի վրա

առանձնապես ծանր ազդեց։ Վորո՞նք են Ճապոնիայի գլխավոր հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաները։ Վորտե՞ղ են նրանք մշակվում։ Ի՞նչ նշանակություն ունի ձկնորսությունը։ Ցույց տվեք արդյունաբերության գլխավոր ռայոններն ու կենտրոնները, թվեցեք նրա ճյուղերը։

II. ՉԻՆԱՍՏԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չինական հանրապետությունը բաղկացած է բուն Չինաստանից, ներքին Մոնղոլիայից, Արևելյան Թուրքեստանից կամ Սին-Ցզյանից։ Մանջուրիան և Ժեհե նահանգը, վորոնք առաջ Չինաստանի մասերն եյին, գրավված են Ճապոնիայի կողմից։

Բուն Չինաստանն ընդարձակ տերրիտորիա յե գրավում Ասիայի արևելքում։

Չինաստանի արևելյան և հարավ-արևելյան կողմից գտնվում են Դեղին, Արևելա-Չինական և Հարավ-Չինական ծովերը։ Չինաստանի սահմանակից յերկրներն են՝ հյուսիսից—ԽՍՀՄ և Մոնղոլիայի ժողովրդական հանրապետությունը կամ «արտաքին Մոնղոլիան», հարավից—Տիբետը, վորը սահմանակից է Հնդկաստանին, անգլիական գաղութ Բիրման և ֆրանսիական գաղութ Հնդկաչինը, հյուսիս-արևելքից—ճապոնական գաղութ Կորեան։ Չինաստանն իր դիրքով, մանավանդ անցյալում, չեզոքացված եր մյուս յերկրներից։ Արևմուտքից նա բաժանված է լեռնախմբերով, հյուսիսից—անապատներով և կիսաանապատներով։ Դեղին ծովի և մասամբ Արևելա-Չինական ծովի ափերը շատ քիչ են կտրատված։ Երկրի հարավային մասի ափերը կտրատված են, բայց նրանց մոտ գտնվող Հարավ-Չինական ծովում հաճախ լինում են ծովագնացության համար վտանգավոր փոթորիկներ— «թայֆուններ»։

Հյուսիսային Մանջուրիայի հետ միասին Չինաս-

տանի տարածությունը 4760 հազ. քառ. կ.մ. (յեթե հաշվենք, վոր Չինաստանի մեջ է մտնում նաև Արևելյան Թուրքեստանը, ապա—6,300 հազ. ք. կ.):

Չինաստանի բնակչության թիվը 400 միլիոնից ավելի յե: Ամենախիտ բնակչություն ունեն ծովամերձ ռայոնները: Մեծ քաղաքներում այնքան շատ բնակչություն է կուտակված, վոր տասնյակ հազարավոր մարդիկ մշտապես ապրում են նավակներում, ջրերի վրա: Հյուսիս-արևմուտքում բնակչությունը շատ նոսր է. անասնապահական ռայոններում նրա միջին խտությունը 1 քառ. կ.մ. վրա յերկու մարդուց ավելի չէ:

Ձևականորեն (1911 թվից) Չինաստանի պետական կառուցվածքը հանրապետական է, նախագահի և պարլամենտի գլխավորությամբ: Սակայն Չինաստանում չկա միասնական կառավարություն:

Չինաստանի առանձին նահանգներ և Մանջուրիան բազմաթիվ տարիների ընթացքում չեն յենթարկվում կենտրոնական կառավարության: Այնտեղ կառավարում են զանազան գեներալներ—զինվորական նահանգապետներ: Նրանք հանդիսանում են տարբեր իմպերիալիստական պետությունների գործակալները: Հենվելով նրանց վրա, այս յերկրում իշխում են օտարյերկրյա կապիտալիստները: Չինաստանի մի շարք նահանգներում հաստատված է խորհրդային իշխանություն: Չինաստանում չի դադարում գեներալների բանակների միջև մղվող քաղաքացիական պատերազմը, ինչպես և խորհուրդների դեմ մղվող հակահեղափոխական պատերազմը:

Բնակչության մեծամասնությունը կազմում է մանր գյուղացիությունը: Կապիտալիստական խոշոր ձեռնարկություններում աշխատող պրոլետարիատի թիվը մոտ 2 միլիոն է: Բավական խոշոր խավ են հանդիսանում մանր բուրժուազիան, արհեստավորներն ու տնայնագործները: Բազմաթիվ են մակաբույծ խավերը, վորոնց պատկանում են խոշոր հողատերերը և խոշոր կապալառուները, կապիտալիստ-ձեռնարկատերերը,

վաշխառուները, առևտրականները, տերտերները (քըրմերը): Չինաստանի տիրող դասակարգը բաղկացած է կալվածատերերից, խոշոր վաճառականներից, բանկիրներից և արդյունաբերական բուրժուազիայից:

Հսկայական դեր է պատկանում ֆեոդալ զինվորականներին և այսպես կոչված՝ «կոմպրադորների» (վաշխառու—վաճառականներ, վորոնք ծառայում են իբրև միջնորդներ օտարյերկրացիների և չին բնակչության միջև) միջնաշերտին:

Ըստ չինական տվյալների, մանր քաղաքներում և գյուղերում ապրում է բնակչության 88 %-ը, քաղաքներում—12%-ը: Ինն քաղաք ունեն միլիոնավոր բնակչություն: Տնտեսական տեսակետից ամենակարևոր չինական քաղաքը Շանհայն է (2 միլիոն բնակիչ)— համաշխարհային նշանակություն ունեցող խոշոր նավահանգիստ, յերկրի կապիտալիստական արդյունաբերության, ֆինանսական կապիտալի, բանկերի և օտարյերկրյա բուրժուազիայի ազդեցության կենտրոն:

Բեյպին (հին անունը—Պեկին)— Չինաստանի հին մայրաքաղաքն է, արվարձանների հետ միասին ունի 1,5 միլիոն բնակիչ:

Նանկին (300 հազ. բնակիչ) այժմյան մայրաքաղաքը, մետաքսի և բամբակի արդյունաբերության կենտրոններից մեկը:

Կանտոն (1 միլիոն բնակ.)—խոշորագույն քաղաք և համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստ է Հարավային Չինաստանում:

Հանկոու (1,6 միլիոն բնակ.)— յերկրի կարևորագույն առևտրական և տրանսպորտային հանգույցներից մեկն է, գտնվում են Յանցզի գետի վրա, գետային խոշորագույն նավահանգիստ է, վորտեղ Արևելա-Չինական ծովի ափերից հասնում են ծովային շոգենավերը, անցնելով 1000 կ.մ. տարածություն:

Խարբին (200 հազ. բնակ.)— Չին-Արևելյան յերկաթուղագծի հանգուցային կենտրոն: Յերկաթուղին

պատկանում է Խորհրդային Միության, բայց կառավարվում է ԽՍՀՄ և Չինաստանի միացյալ վարչությամբ: Խարբինում գտնվում է այդ վարչությունը և այս առնչությամբ քաղաքում ապրում են մոտ 20 հազար խորհրդային քաղաքացիներ (յերկաթուղային պերսոնալ, վերանորոգման բանվորներ, ծառայողներ և այլն): Խարբինը Չինաստանի ռուս սպիտակ-գվարդիական էմիգրանտների կենտրոնն է: Խարբինը Մանջուրիայի պարենային ապրանքների վերամշակման խոշոր կենտրոններից մեկն է:

Մուկդեն (250 հազ. բնակիչ)— Մանջուրիայի նախկին մայրաքաղաքն է, նրա առևտրա-արդյունաբերական գլխավոր կենտրոնը: Այժմ մայրաքաղաք է հայտարարված Չան-Չուն քաղաքը:

Այն կարևորագույն հենակետերը, վորտեղից օտարերկրյա կապիտալիստները տարածում են իրենց ազդեցությունը Չինաստանի վրա, հետևյալներն են.— հյուսիսում ճապոնական նավահանգիստ Դայրենը և հարավում—անգլիական նավահանգիստ Հոնկոնգը:

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ: Չինաստանի արևմտյան ծայրամասի շրջանները, վորոնք փաստորեն բաժանվել են նրանից, Տիբեթը և Սին-Ցզյանը գտնվում են Կենտրոնական Ասիայի բարձր լեռնաշխարհում:

Տիբեթը գտնվում է աշխարհում ամենաբարձր Տիբեթի սարահարթում: Նրա հարավային կողմից գտնվում են Հիմալայան լեռները և հյուսիսից—Հուեն-Լուն լեռնախումբը: Տիբեթի միջին բարձրությունը 4 կ.մ. է, բայց կան շատ լեռնախմբեր, վորոնց բարձրությունը հասնում է 6—7 կ.մ.-ի:

Սին-Ցզյանը հատվում է Տյան-Շանի վիթխարի լեռնախմբով, վորտեղ գտնվում է 7 կ.մ. բարձրություն ունեցող Խան-Թենգրի գագաթը: Մանջուրիայի արևմուտքում գտնվում է Մեծ Հինգան կոչված լեռնախումբը:

Բուն Չինաստանը բաժանվում է յերկու մասի.— Հարավային, լեռնոտ և Հյուսիսային, ավելի քիչ լեռնոտ Չինաստան: Հյուսիսային Չինաստանի արևելյան մասում գտնվում է չինական դաշտավայրը:

ԳԵՏԵՐ: Ամուր գետը բավական յերկար տարածության վրա կազմում է Մանջուրիայի և ԽՍՀՄ սահմանը: Այս յերկար (մոտ 2900 կ.մ.) գետը գրեթե ամբողջովին նավարկելի յէ, իսկ նրա ստորին հոսանքը (գետաբերանից 470 կ.մ.) մատչելի յէ ծովային մեծ շոգենավերին: Ամուրի վտակը, Սունգարին—նույնպես յերկար (1800 կ.մ.) նավարկելի գետ է և հոսում է Մանջուրիայում: Սունգարին ունենում է հսկայական հեղեղումներ:

Հյուսիսային Չինաստանի գլխավոր գետը—Հուանհեն (Դեղին) սկիզբ է առնում Տիբեթի լճերից: Նա շատ մեծ է (4200 կ.մ.), բայց սակավ նավարկելի յէ: Հաճախակի հեղեղումները և հունի փոփոխությունները հսկայական աղետներ են պատճառում բնակչության:

Հարավային Չինաստանում ամենանշանավոր գետն է Յանցզին (Կապույտ): Սա աշխարհիս ամենախոշոր (5300 կ.մ.) գետերից մեկն է: Յանցզին Չինաստանի համար ունի բացառիկ ու մեծ նշանակություն: Նրա գետաբերանից մի քանի հազար կիլոմետր դեպի վեր տեղի յէ ունենում նավերի աշխույժ յերթևեկություն: Ծովային խոշոր շոգենավերը հասնում են մինչև Հանկոու: Չինաստանի բեռնաշրջանառության կեսից ավելին կատարվում է այս գետի վրայով: Նրա ափերին կուտակվել է մեծ քանակությամբ բնակչություն, առաջ են յեկել խոշոր քաղաքներ: Յանցզիի վրա տասնյակ միլիոնավոր մարդիկ ապրուստ են գտնում իբրև բեռնող բանվորներ, մակույկավորներ, ձկնորսներ:

Հարավային Չինաստանում նույնպես մեծ նշանակություն ունի Սիցզյան գետն իր ճյուղավորումներով:

նա նավարկելի չէ և նրա ամբողջ յերկարությամբ աշխույժ հաղորդակցություն է կատարվում:

Չինաստանի բոլոր յերեք խոշոր գետերից անց են կացրած բազմաթիվ վոռոգման ջրանցքներ:

ԿԼԻՄԱՆ: Չինաստանը գտնվում է 43° և 20° հյուսիսային լայնության տակ, այսինքն հյուսիսում—բարեխառն գոտում, իսկ հարավում—յենթա-արևադարձային գոտում: Կենտրոնական մասերն ունեն բարեխառն, տաք կլիմա:

Հյուսիսային Չինաստանի կլիման ցամաքային է: Ձմեռը բավական ցուրտ է լինում, ամառը—սաստիկ շոգ: Մթնոլորտային տեղումները չափավոր են: Հարավային Չինաստանը յենթակա յե մուսսոնների ազդեցության, կլիման շոգ է և խոնավ, մթնոլորտային տեղումների միջին չափը մինչ 200 ս.մ. է:

ՀՈՂԵՐԸ: Բացի կիսաանապատներից և բարձրադիր լեռնոտ վայրերից, մյուս տեղերի հողն աչքի յե ընկնում մեծ արգավանդությամբ, բայց միայն այն դեպքում, յեթե արհեստական վոռոգում լինի: Հյուսիսային Չինաստանի հողերը դեղնավուն են, Միջին ու Հարավային Չինաստանի հողերը—կարմրավուն:

ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ: Չինաստանում կա քարածուխի և անտրացիտի վիթխարի պաշար: Չինաստանն ածուխի հարստությամբ աշխարհում առաջին տեղերից մեկն է բռնում: Քարածուխի ամենահարուստ շերտերը գտնվում են յերկրի կենտրոնական մասում և Մանջուրիայում: Չինաստանում կա նաև նավթ: Կա այրվող թերթաքարերի մեծ պաշար: Ըստ չինական գիտնականների տվյալների, Չինաստանում յերկաթահանքի պաշարները հասնում են մոտ 1 միլլիարդ տոննի: Չինաստանում յերկաթահանքի հանուրդով և նրա արտածմամբ առանձնապես շահագրգռված են ճապոնական կապիտալիստները:

Անտիմոնիայի (ծարիրի)—մետաղագործական ար-

տադրության այդ կարևորագույն հումքի հարուստ պաշարով և նրա հանուրդի ծավալով Չինաստանն աշխարհում առաջին տեղն է բռնում:

Չինաստանում մեծ են նաև անագի պաշարները, վորի հանուրդը ճգնաժամին նախորդած տարիներում կազմում եր համաշխարհային հանուրդի 5 %-ը:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Չինաստանը շատ հին կուլտուրայի յերկիր է: Գրքերի տպագրությունը, ճենապակին, վառոդը հնարվել են Չինաստանում, Յեվրոպայում յերևան գալուց դեռ շատ առաջ: Սակայն չինական կուլտուրան հազարավոր տարիների ընթացքում գրեթե առաջ չի շարժվել: Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում Չինաստանը գոյություն է ունեցել ինքն իր մեջ փակված:

Մոտավորապես XIX դարի կեսերին ամենաառաջավոր կապիտալիստական յերկիրը,—Անգլիան,—Չինաստանում ափիոնի առևտրով գրաված իր վաճառականների շահերը պաշտպանելու պատրվակով հարձակվեց թույլ Չինաստանի վրա, հաղթեց նրան և ստիպեց բաց անել հինգ նավահանգիստ՝ առևտրի համար, վճարել հսկայական (այն ժամանակվա համար) պատերազմական տուգանք—210 միլիոն ռուբլի և գրավեց Հոնկոնգը: Անգլիայի և Չինաստանի միջև կնքված պայմանագիրը մի շարք առանձնաշնորհումներ եր նախատեսում օտարյերկրացիների համար և ստորացուցիչ դրության մատնում Չինաստանին: Այդ առաջին պայմանագրին հետևեցին նույնպիսի մի շարք պայմանագրեր: Անգլիայից հետո Չինաստանում մուտք գործեցին նաև ուրիշ կապիտալիստական պետություններ: Նրանք Չինաստանը բաժանեցին «ազդեցության շրջանների»: Հյուսիսային Չինաստանը դարձավ Ճապոնիայի և ցարական Ռուսաստանի «ազդեցության շրջանը», կենտրոնականը,—ՀԱՄՆ-ի և Անգլիայի, հարավայինը—Անգլիայի և Ֆրանսիայի: Օտարյերկրացիները չինական դատարանի առաջ պատասխանատու չեյին Չինաստանում կատարած իրենց հանցագործության համար:

1865 թվականին անգլիական կապիտալիստները հաջողեցրին իրավունք ստանալ՝ Չինաստանում շոգենավային յերթևեկու-

թյուն կազմակերպելու և յերկաթուղիներ կառուցելու համար։ Սակայն բնակչությունն սկսեց պայքարել օտարերկրացիների կողմից իրենց ձեռնարկությունների համար մեքենաներ ներմուծելու դեմ։ Յերկաթուղային ռելսերը, վորոք նոր եյին դրված, քանդվեցին։ Չինական բուրժուազիան ուզում եր իր ձեռքը վերցնել կապիտալիստական զարգացման գործը։ XIX դարի 80-ական և 90-ական թվականներին չինական կապիտալիստներն իրենք սկսեցին յերկաթուղիներ կառուցել, կազմակերպել իրենց շոգենավային ընկերությունները, իրենց հանքագործությունը, իրենց մետաղագործությունը (Հանյանում)։ Առաջ են գալիս արդյունաբերական յերկու խոշոր կենտրոն—Շանհայ և Հանկոու։

Սակայն արդյունաբերությունից և տրանսպորտից օտար յերկրյա կապիտալիստների վտարումը յերկար չտևեց։ 1894 թվականին սկսվեց յապոն-չինական պատերազմը։ Չինաստանը պարտություն կրեց և հսկայական պատերազմական տուգանք պիտի վճարեր։ Դրա համար դրամ գտնելու նպատակով նա ստիպված եր փոխառություն վերցնել իմպերիալիստներից։ Փոխառությունը տրվեց այն պայմանով, վոր օտարյերկրացիներին թույլ տրվի Չինաստանում կառուցել արդյունաբերական ձեռնարկություններ և մեքենաներ ներմուծել։ Դրանից հետո օտարյերկրացիների ձեռքն է անցնում ծովային ու գետային ամբողջ նավագնացությունը, յերկաթուղիների վերահսկողությունը, Շանհայի խոշորագույն տեքստիլ գործարանները։ Հետագայում ճապոնացիք գրավում են Հանյանում գտնվող մետաղագործական կոմբինատը։ Օտարյերկրյա բանկերը Չինաստանում լայնորեն ծավալում են իրենց գործարքները։

Մինչև 1911 թիվը Չինաստանը ֆեոդալական կայսրություն եր։ 1911 թվին չինական մեծ հեղափոխական Սուն-Յաթ-Սենի գլխավորությամբ կատարվեց հեղափոխություն. հաջողվեց տապալել կայսերական իշխանությունն և հանրապետություն կազմակերպել։ 1912 թվականին Սուն-Յաթ-Սենի գլխավորությամբ կազմակերպվում է բուրժուական-դեմոկրատական մի կուսակցություն—Գոմինդանը։

1920 թվականին, ազգային-ազատագրական շարժմանը բանվոր դասակարգի հարելու, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ Սուն-Յաթ-Սենը առաջադրեց 3 պա-

հանջ.—նացիոնալիզմ, դեմոկրատիզմ, սոցիալիզմ։ Սոցիալիզմը հասկացվում եր միայն իբրև պայքար հողատիրության իրավահավասարության համար և իբրև մասնավոր կապիտալիզմի աճման սահմանափակություն։ Այս պահանջներն արժանացան բնակչության ամենաբազմազան խավերի համակրանքին։ Գոմինդանը խիստ մեծացավ, բայց նրա կազմը շատ խայտաբղետ եր։ Նրա մեջ մտան թե բուրժուազիան, թե՛ պրոլետարիատ և թե՛ գյուղացիությունը։ Գոմինդանի դեմ եյին արտասահմանյան կապիտալին վաճառված գեներալները, վորոնք կազմակերպել եյին խոշոր բանակներ և վերջիններիս օգնությամբ գրավել իշխանությունն առանձին նահանգներում։ Ջլատված Չինաստանը համախմբելու համար Գոմինդանը 1926 թվին սկսեց «հյուսիսային արշավանքը»։ Այդ արշավանքի հետևանքով Գոմինդանն ավելի աճեց ի հաշիվ բանվորների և գյուղացիների։ 1925 թվին Շանհայի ընդհանուր գործադուլը խիստ վախեցրեց Գոմինդանի բուրժուական ղեկավարներին և սրանք բռնեցին հակահեղափոխության ճանապարհ։ 1927 թվականին Գոմինդանի բուրժուական ղեկավարներից մեկը, Չան-Կայ-Շին հակահեղափոխական հեղաշրջում կատարեց Շանհայում, Նանկինում և ուրիշ քաղաքներում։ Այդ ժամանակից Գոմինդանը դարձավ հակահեղափոխական կուսակցություն, վորը, հենվելով օտարյերկրյա զինված ույժերի և վարձկան զորքերի վրա, սկսեց հալածել հեղափոխական զորքերին, ցրել պրոլետարական և գյուղացիական կազմակերպություններին և կոտորել բոլոր կոմունիստներին, ձգտելով այդ կերպ գլխատել հեղափոխությունը։

Գոմինդանականներին չհաջողվեց արյան մեջ խեղդել հեղափոխական շարժումը. Նրանք միայն ժամանակավորապես կասեցրին այդ շարժումը։ Հեղաշրջումից հետո շուտով սկսվեց պարտիզանական ուժեղ պայքար։ Սկզբում հարյուր հազարավոր, ապա միլիոնավոր գյուղացիներ, զինվելով մանգաղներով, գերանդիներով, մահակներով, սկսեցին գյուղերում ջարդել կալվածատերերին, կուլակներին ու վաշխառուներին։ Սկզբում պարտիզանական շարժումը վատ եր կազմակերպված։ Կառավարական զորքերը ջարդում եյին պարտիզաններին, բայց յերբ այդ շարժումը գլխավորեցին կոմունիստները, նա ավելի ուժեղացավ։

Պարտիզանական ջոկատների միջուկից կազմակերպվեց չինա-

կան Կարմիր բանակը։ Վերջինս պարտիզանների հետ միասին հաջողությամբ ջախջախում է Գոմինդանյան գեներալների վարձու բանակների հարձակումները։ Կարմիր բանակի գրաված շրջաններում ամրապնդվել է խորհուրդների իշխանությունը։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Չինաստանը միջազգային բուրժուազիայի խոշորագույն կիսագաղութն է։ Նրա ժողովրդական տնտեսության բոլոր կարևորագույն ճյուղերում տիրող դերը պատկանում է օտարյերկրյա կապիտալին։ Վերջինիս ձեռքումն են գտնվում հանածոների արդյունաբերության ամենակարևոր ձեռնարկությունները, տեքստիլ և մետաղագործական խոշորագույն գործարանները, յերկաթուղային ու ջրային տրանսպորտը, ինչպես նաև գյուղատնտեսության ամենակարևոր ճյուղերը։ Այդ բոլոր ճյուղերում չինական բուրժուազիան ավելի քիչ դեր է խաղում, քան օտարյերկրյա բուրժուազիան։ Չինաստանում ամենամեծ ներդրումներ ունեն ճապոնական կապիտալիստները։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ։ Չինաստանը գյուղատնտեսական յերկիր է։ Բնակչության յերեք քառորդը յերկրագործներ են։ Ամբողջ մշակելի հողը (մոտ 150 միլիոն հեկտար) մշակվում է ավելի քան 50 միլիոն գյուղացիական մանր տնտեսությունների կողմից։ Յերկրագործ բնակչությունը կազմում է ավելի քան 300 միլիոն մարդ։ Միջին թվով մեկ մարդուն ընկնում է կես հեկտարից պակաս հող։ 6 հեկտարից ավելի հողամասերը համարվում են խոշոր, իսկ 1 հեկտարը— միջակ։ Մնացած հողամասերն ամենաչնչին տարածություն ունեն։ Այդպիսի մի չնչին հողակտորով կերակրվելու համար հարկավոր է հողն առանձնապես մանրակրկիտ ու խնամքով մշակել։ Մանր հողամասերը մշակվում են ձեռքով, ինչպես բանջարանոցների ածուներ։ Մինչև մի շարք բույսերի հասունանալը լրացուցիչ ա-

ծուներում աճեցվում են մյուս բույսերի սածիլները։ Վերջիններս տնկվում են այն ժամանակ, յերբ հավաքվում է առաջին բերքը։ Այդ հնարավորություն է տալիս տարեկան յերկու-յերեք անգամ բերք հավաքել, նայած թե ցանքը վոր նահանգում է կատարված։

Հողի արգավանդությունը պահպանվում է արհեստական վոռոգմամբ և պարարտացումով (գլխավորապես մարդկային աղբով, մոխրով, կրով, ձկան մնացորդներով և այլ պարարտանյութերով)։ Մոլախոտերը խնամքով մաքրվում են, բույսերի «բուկը տրվում է», նրանք ջրվում են, վորի համար կան բազմաթիվ առուներ։

Հարավային ու միջին Չինաստանում կարևորագույն հացաբույսն է բրինձը, Հյուսիսային Չինաստանում—ցորենը, յեգիպտացորենը, հաոլյանը, կորեկը, գարին, սոյայի ընդեղենները։ Սեփական բրինձը չի բավականանում։ Նրա ներմուծումը տարեցտարի աճում է։ Մանջուրիան ցորեն է տալիս։ Մեծ առաջադիմություն է ցույց տալիս բամբակագործությունը։ Նա լայն տարածված է Յանցզի-Ցզյանի և Հուան-հեյի ավազանում։ Բամբակի բերքով Չինաստանը 1929 թվին աշխարհում յերրորդ տեղը բռնեց (Միացյալ Նահանգներից և Հնդկաստանից հետո)։ Բամբակը մեծ քանակությամբ արտածվում է Ճապոնիա և քիչ քանակությամբ—Յեվրոպա։

Մետաքսագործության ծավալով Չինաստանն աշխարհում յերկրորդ տեղն է բռնում։ Չինաստանից արտածվող մետաքսագործական ապրանքները կազմում են ամբողջ արտածման $^{1}/_{6}$ -ը։ Մետաքսը մշակվում է գլխավորապես Հարավային ու Կենտրոնական Չինաստանում, ինչպես նաև Հուան-հեյի ավազանում։ Վորպես արտածվող կուլտուրա, մեծ նշանակություն ունի նաև թելավոր մի բույս՝ «ռամի» կոչված չինական յեղինձը։

Թեյի թուփը մշակվում է հարավում և վաղուց է,

ինչ սկսել է կրճատվել նրա մշակումը: Չինական թեյը, որը երկար ժամանակ եղել է արտահանման գլխավոր ապրանք, տեղի է տալիս հնդկական և Ցեյլոնի թեյին:

Բացի բրնձից, Չինաստանում ժողովրդական սննդի մեջ կարևոր դեր են խաղում սոյան (ընդեղեն բույս) և նրանից պատրաստվող բուսական յուղերը: Սոյայի ընդեղենները և յուղն արտածվող կարևոր ապրանքներ են: Յուղի մշակումը կատարվում է օտարերկրյա կապիտալի միջոցով:

Երկրագործության հետ համեմատած՝ անասնապահությունը երկրորդական դեր է խաղում: Լծկան անասունների թիվը քիչ է: Հարավում միայն կուլակությունն ունի լծկաններ (գոմեշներ): Միայն հյուսիս-արևմտյան նահանգներում են պահում բավական շատ խոշոր եղջերավոր անասուններ և ոչխարներ: Մնացած նահանգներում որոշ չափով զարգացած է խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը: Անասնաբուծության մթերքներից ու ապրանքներից արտածվում է գլխավորապես ոչխարի, այծի և ուղտի բուրդ և խոզի մազ:

Չինաստանում հողերի մեծ մասը (50 %-ից ավելին) գտնվում է խոշոր սեփականատերերի—կալվածատերերի ձեռքում: Նրանց «սեփական» հողին պետք է ավելացնել այսպես կոչված՝ «հասարակական ու պետական» հողերը, որոնք նույնպես գտնվում են նրանց տրամադրության տակ: Մնացած հողատարածությունը շատ անհավասարաչափ բաշխվում է կուլակային, միջին, մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունների միջև:

Կալվածատերերը երկրագործությամբ չեն զբաղվում: Նրանք հողը կապալով են տալիս: Կապալի գերակշռող ձևը կապալավարձը նատուրայով վճարելն է (բերքի 50-ից մինչև 60%-ը): Չինական խոշոր հողատերերի և աղքատ կապալառուների միջև գոյություն ունի միջնորդների—վաշխառուների, քրմերի ու առևտրականների մի լայն խավ: Կապալառուները կազմում են երկրի ամբողջ երկրագործական բնակչության առնվազն 70 %-ը: Չինաստանում հողի կապալի պայմաններն իրենց ծանրությամբ եզակի են: Կապալառուն անվերջ պարտք է մնում կալվածատերերին, կուլակներին, վաշխառուներին և այլն, ինչպես նաև այսպես կոչված՝ «ջենտրիներին», որոնց ձեռքին է գտնվում տնտեսական ու քաղաքական իշխանությունը: Չինական գյուղացիության բազմամիլիոն մասսաների առանց այն էլ վատ վիճակն ավելի ևս վատթարանում է հրեշավոր հարկերով, տուրքերով և վաշխառուների— սարդերի գործունեությամբ: Մի քանի նահանգներում գյուղացիների՝ պետության տալիք «պարտքը» արդեն հավաքված է վաղօրոք, 50—60 տարվա համար, սակայն սրանով կանգ չի առնում հարկերի հետագա հավաքումը: Տեղ տեղ վաշխառուները գյուղացիներից գզլում են հրեշավոր տոկոսներ,—տարեկան 60 %, մի քանի տեղերում նույնիսկ 200 և 300 %: Գյուղացիության երկու-երրորդից ավելին բառիս բուն իմաստով քաղցած է:

Իր ստացած բերքի առնվազն 40 %-ը, իսկ հատուկ կուլտուրաների (բամբակ, թեյ) ռայոններում մինչև 60 և 70 %-ը գյուղացին ծախսում է շուկայում: Գյուղատնտեսությունը կախումն ունի շուկայից և այժմ ամենախոր ճգնաժամ է ապրում:

Գյուղացիական մասսաները ծանր դրությունից ելքը համարում են միայն Չինաստանի խորհրդայնացումը, հաստատելով ընկ. Ստալինի հետևյալ խոսքերը. «Չի կարող կասկած լինել այն մասին, որ միայն խորհուրդները կարող են Չինաստանը փրկել քայքայումից և աղքատացումից»:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Չինաստանն արդյունաբերության տեսակետից շատ հետամնաց երկիր է: Համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեջ նրա բաժինը չնչին է: Մինչդեռ Չինաստանի բնակչությունը կազմում է ամբողջ աշխարհի բնակչության

20 %-ը, նրա քարածուխի արտադրանքը կազմում է համաշխարհայինի 2 %-ը, թուջ— 0,35 %-ը, գործարաններում բամբակի գործածությունը մոտ 7,5 %-ը: Չինաստանում գերակշռում են արդյունաբերության մանր ձևերը: Սակայն XIX դարի սկզբից, մանավանդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Չինաստանի արդյունաբերության զարգացման թափն ուժեղացավ: Ավելացավ արտասահմանից ներմուծվող մեքենաների թիվը: Համեմատած մինչ-պատերազմյան շրջանի հետ, կրկնապատկվեց քարածուխի և յերկաթահանքի հանույթը, ինչպես և թուջի արտադրությունը: Ավելացավ պղնձի, անտիմոնիայի, արճիճի, անագի, մարգանեցի և այլ հանածոների քանակը:

Բավական առաջադիմեց թեթև ինդուստրիան, վորը հիմնական նշանակություն ունի Չինաստանի ընդհանրապես հետամնաց արդյունաբերության համար: Տեքստիլ արդյունաբերության մեջ, համեմատած 1914 թվի հետ, 1924 թվին գրեթե $2^1/_2$ անգամ ավելացավ մեքենայական իլիկների թիվը: Աճեց մետաքսի, կաշու, պարենամթերքների և այլ արտադրությունը:

Ամբողջ յերկրում սկսեցին կառուցվել ելեկտրոկայաններ, վորոնցից ամենախոշորները գտնվում են Շանհայում, Հանյանում, Տյան-Ցզինում, Կանտոնում, Մուկդենում և Բեյպինում:

Չինաստանի կապիտալիստական արդյունաբերության մեջ առաջին տեղը բռնում է բամբակի արդյունաբերական ճյուղը: 1930 թվականին Չինաստանում կային մոտ 4 միլիոն գործող, մեքենայական իլիկներ և 280 հազար բանվորներ (Չինաստանի ամբողջ արդյունաբերական պրոլետարիատի 10 %-ը): Բամբակի արդյունաբերությունը գլխավորապես կենտրոնացած է Շանհայում: Շանհայի ռայոնի տեքստիլ արդյունաբերության մոտ 80 %-ը պատկանում է օտարյերկրյա կապիտալին:

Չինաստանի տեքստիլ արդյունաբերության համար հսկայական նշանակություն ունի նաև մետաքսի արտադրությունը (մինչև ճգնաժամը 250 հազար բանվոր): Չինաստանում արտադրվում է մետաքսի հումքի համաշխարհային քանակության անվազն 50-ը, իսկ մինչև ճգնաժամն այդ հումքի արտածումը հավասար եր համաշխարհային արտածման 30 %-ին: Չինաստանում մետաքսի արտադրությունը գտնվում է գլխավորապես ազգային կապիտալի ձեռքում: Ձեռնարկությունների մեծ մասն ունի հին սարքավորանք և կիսատնայնագործական բնույթ:

Արդյունաբերության աչքի ընկնող ճյուղերից է նաև սննդամթերքների արտադրությունը (աղորիքային արդյունաբերություն, բրնձի մաքրում, թեյի մշակում, յուղի, շաքարի, ծխախոտի և պահածոների արտադրություն):

Քարածուխի արտադրությամբ Չինաստանը դեռ 1915 թվին անցավ Հնդկաստանից և ասիական յերկրների մեջ, Ճապոնիայից հետո, յերկրորդ տեղը բռնեց: Չինական հանքահորերի գրեթե կեսի տեխնիկական մակարդակը չափազանց ցածր է և հենց այն հանքահորերը, վորոնք միանգամայն հնացած սարքավորանք ունեն, գտնվում են չինական կապիտալի ձեռքում:

Յերկաթահանքի հանույթը թույլ է և տեղի յե ունենում հնացած յեղանակներով: Ավելի լավ հիմքերի վրա յե դրված գունավոր և հազվագյուտ մետաղների մշակումը: Արտասահմանյան կապիտալն այս ճյուղերում ավելի շատ է ներդրված: Հանքագործության մեջ աշխատում է ամբողջ արդյունաբերական պրոլետարիատի ավելի քան 20 %-ը:

Չինաստանում մետաղագործությունը հետամնաց է: Գոյություն ունեցող ձեռնարկությունները խիստ հնացած են և ցածր արտադրողականություն ունեն: Օտարյերկրյա կապիտալը խոչընդոտում է Չինաստանի սեփական մետաղագործության զարգացումը: Մետաղա-

գործության խոշորագույն կենտրոնը Հանկոուի ռայոնն է: Լավագույն ձեռնարկությունները գտնվում են օտարների (ճապոնիայի) ձեռքում:

Բացի կապիտալիստական ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունից, Չինաստանում դեռ այժմ է, հսկայական նշանակություն ունեն արհեստներն ու տնայնագործական արտադրությունը:

Առանձին նահանգներում գերակշռում է այս կամ այն արտադրությունը.— բամբակյա կամ մետաքսյա հյուսվածքների պատրաստություն, ժապավենների, գորգերի, ծղոտե իրերի, կաշվե ապրանքների, փղոսկրից, կրիայից պատրաստված և լաքած ապրանքների ու կահ-կարասիքի արտադրություն: Յուրաքանչյուր քաղաքում ամբողջ փողոցներ բռնված են խանութների անընդհատ շարքով, որտեղ տնայնագործը գնորդի աչքի առաջ պատրաստում է իր ապրանքները: Շատ տնայնագործներ աշխատում են գյուղերում: Վաշխառուական և առևտրական կապիտալն ընդգրկել է տնային և տնայնագործական արտադրությունը և դաժանորեն շահագործում է նրան:

ՏՐԱՆՍՊՈՐՏ: Այստեղ օգտագործվում է գլխավորապես մարդկային ուժը: Երկրորդ տեղն է բռնում կենդանիների ուժը և վերջին տեղը— մեքենայական տրանսպորտը: Հյուսիսային Չինաստանում, որտեղ չկան նավարկելի գետեր, օգտագործվում են գլխավորապես հասարակ ճանապարհները: Այստեղ բեռների 90 տոկոսը փոխադրվում է սայլերով, մնացածը— ջորիներով:

Հարավային Չինաստանը լեռնոտ երկիր է, անհարմար ճանապարհներով, բայց հրաշալի նավարկելի գետերով: Այստեղ միլիոնավոր մարդիկ աշխատում են իբրև բեռնակիրներ: Հատկապես շատ ապրանք է փոխադրվում գետերով, բայց նավերը երթևեկում են ոչ թե շոգեշարժիչների կամ այլ մեքենայական շարժիչների միջոցով, այլ մեծ մասամբ մարդկանցով (որոնք

գնում են ափերով և քաշում նավերին ամրացված պարանները):

Քաղաքներում մարդկանց և բեռները տեղափոխում են «ռիկշիները»—երկանիվ կառքերին լծված մարդիկ:

Տրանսպորտի այդպիսի բարբարոսական միջոցների գոյությունը բացատրվում է բանվորական ուժի բացառիկ էժանությամբ: Չինաստանի հարավում 1 տոնն բեռը 1 կ.մ. վրա փոխադրելը «կուլիի» (բեռնակիր) մեջքի վրա՝ արժե մոտ 4 կոպեկ, իսկ ջորիով փոխադրելը—10—11 կոպեկ:

Չինաստանի տերրիտորիայի և նրա բնակչության մեծության համեմատությամբ երկաթուղիները շատ քիչ են: Երկաթուղիների երկարությունն

Նկ. 25. Տրանսպորտը Չինաստանում:

ընդամենը մոտ 17 հազար կիլոմետր է, բայց և այնպես, այդ երկաթուղիներն էլ իրենց հնացած վագոններով ու շոգետարներով ահագին նշանակություն ունեն երկրի տնտեսական կյանքում: Նրանք հեռավոր տարածությունների վրա փոխադրում են մեծ քանակությամբ ճանապարհորդներ, զորքեր և ապրանք:

Բուն Չինաստանում գլխավոր երկաթուղագծերը ձգվում են՝ Բեյպինից (Պեկինից) դեպի Հանկոու և

Բեյպինից դեպի Տյան-Ցզին, այստեղից դեպի հարավ—Շանհայ և հյուսիս—Մուկդեն: Մանջուրիայում գտնվում է Չին-Արևելյան յերկաթուղագիծը, վորը պատկանում է Խորհրդային Միության և կառավարվում է ԽՍՀՄ և Չինաստանի միացյալ վարչությամբ:

Չինաստանի յերկաթուղիների մեծ մասը կառուցված է արտասահմանյան կապիտալով: Գեներալները, վորոնք իշխում են Չինաստանի առանձին ռայոններում, գրավում և իրենց տնօրինության տակ են առնում յերկաթուղիները: Յերկաթուղային տրանսպորտը քայքայման վիճակում է գտնվում:

Միջին և Հարավային Չինաստանում մեծ նշանակություն ունեն գետերն և արհեստական ջրանցքները: Նրանց մեջ առաջին տեղը բռնում է Յանցզին:

Ծովափի յերկարությամբ, Հյուսիսային և Հարավային Չինաստանի միջև, Տյան-Ցզին քաղաքից մինչև Յան-Ցզի-Ցզյան գետը կառուցված է աշխարհում ամենախոշոր, այսպես կոչված՝ «Մեծ ջրանցքը», վորի յերկարություն մոտ 1700 կ.մ. է: Ջրանցքը կառուցված է հին դարերում և մինչև յերկաթուղիների յերևան գալը ուներ հսկայական տնտեսական նշանակություն: Ներկայումս այդ ջրանցքն անխնամ է թողնված և շատ տեղերում նավարկելի չէ:

Հյուսիս-արևմտյան կիսաանապատային Չինաստանում մեծ դեր են խաղում ուղտերի քարավանները: Քարավանների կարևորագույն ճանապարհները գնում են Կալգանի միջով դեպի Մոնղոլիա և Սին-Ցզյան: Այս ճանապարհներն սկսում են օգտագործվել ավտո-տրանսպորտի համար:

Ծովային նավագնացությունը թույլ է զարգացած: Ամենանշանավոր նավահանգիստները գտնվում են օտարյերկրյա կապիտալիստների ձեռքում: Այդ նավահանգիստների թվին են պատկանում Շանհայը, Կանտոնը, Հոնկոնգը: Չինաստանի սեփական առևտրական նավատորմիղն սպասարկում է ծովային (գլխավորապես

առափնյա) բեռնաշրջանառության ընդամենը մեկ քառորդին:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ: Չինաստանի արտաքին առևտուրը, համեմատած ներքինի հետ, մեծ չէ: Բայց նա աճել է պատերազմից հետո: Ներմուծվող ապրանքների արժեքն ավելի յե արտածվող ապրանքների արժեքից: Տարբերությունը ծածկվում է այն դրամներով, վորոնք չին եմիգրանները փոխադրում են հայրենիք:

Արտածվող ապրանքների մեջ գլխավոր տեղն են բռնում գյուղատնտեսական ապրանքներ,—մետաքս, ընդեղեններ, հողի ընկույզ, բուսական յուղ, բամբակ, թեյ, կաշի. բացի դրանից—անագ և ածուխ: Ներմուծվող ապրանքների 50 %-ը արդյունաբերական ապրանքներ են, 2,5 %-ը—մեքենաներ:

Չինաստանի հետ կատարվող ապրանքափոխանակության մեջ առաջին տեղը բռնում է Ճապոնիան, յերկրորդ տեղը—ՀԱՄՆ-ը: Այնուհետև ներմուծման մեջ հետևում են Անգլիան ու Հնդկաստանը, արտածման մեջ—Հոնկոնգը, Ֆրանսիան և ԽՍՀՄ-ը:

Չինաստանի հետ խորհրդային առևտուրը բավական արագ ծավալվեց, սակայն այնուհետև կրճատվեց դիվանագիտական հարաբերությունների յերկարատև ընդհատման պատճառով: Հիմա այդ հարաբերությունները վերսկսվել են: Անընդհատ առևտուր է կատարվել միայն Սին-Ցզյանի (Արևմտյան Չինաստան) հետ:

5. ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը մի առանձին ծանրությամբ պայթեց Չինաստանում, մի յերկրում, վորը միջազգային իմպերիալիզմի կիսագաղութն է և քաշված է նրա սիստեմի մեջ:

Գաղութային հումքի գների խիստ անկումը քայքայիչ ազդեցություն ունեցավ Չինաստանի արտաքին առևտրի վրա:

Արդյունաբերության բոլոր ճյուղերում արտադրությունն սկսեց կրճատվել: Արտադրության մի քանի ճյուղեր, մանավանդ վաղեմի ճյուղերը, չափազանց վնասվեցին: Պակասեցին չինական մետաքս-հումքի գնումները և սա կորստաբեր ազդեցություն ունեցավ կոկոնների արտադրության վրա: Կրճատվեց ցանքերի տարածությունը: Հսկայական չափով ընկավ բերքատվությունը: Ճգնաժամի հետևանքով միլիոնավոր մարդիկ սովամահ են լինում: Գործազուրկ պրոլետարների թիվը հավասար է բանվորների ընդհանուր թվի 80 %-ին: Ճգնաժամի հետևանքով ամբողջ յերկրում տարածվում է ստրուկների առևտուրը:

Այդ նույն ժամանակ ոտարյերկրյա իմպերիալիզմը վճռական հարձակում է գործում Չինաստանի վրա: Ճապոնիան գրավում է ամբողջ նահանգներ: Իմպերիալիստական պետությունների միջև ուժեղացել է պայքարը Չինաստանը բաժանելու, նրա առանձին, ամենահարուստ նահանգների վրա բացառիկ ազդեցություն ունենալու համար:

Ժամանակակից Չինաստանում, ընդհանուր քայքայման պայմաններում կա միայն մի հաստատուն ուժ՝ կոմունիստական կուսակցությունը, վորն իր մարտական շարքերում ունի 200 հազար անդամ: Նա ունի պարզ ու վորոշ նպատակ—տապալել ֆեոդալների ու բուրժուազիայի իշխանությունը, ազատագրվել արտասահմանյան կապիտալի լծից, ստեղծել բանվորագյուղացիական խորհրդային Չինաստան:

Չինաստանում հեղափոխական ճգնաժամը, ինչպես ասված է Կոմինտերնի Գործկոմի XI պլենումի բանաձևում, «գաղութային, ազգային-հեղափոխական շարժման մեջ Չինաստանին առաջին տեղն է դասում»:

Բուն Չինաստանի 18 նահանգներից 10-ում կազմակերպվել են խորհրդային ռայոններ: Ամենաուժեղ և հաստատապես ամրապնդված խորհրդային ռայոնները

գտնվում են Հարավային ու Կենտրոնական Չինաստանում: Խորհրդային ռայոնները գրավում են հսկայական տերրիտորիաներ, 50 միլիոն բնակչությամբ:

Խորհրդային իշխանությունը վերացնում է կալվածատիրական հողատիրությունը, վերջ է տալիս արտասահմանյան կապիտալիստների և չինական գեներալների իշխանության, պայքարում է շահագործող— վաշխառուների դեմ: Դրանով նա դեպի իրեն է գրավում բանվորների ու գյուղացիների մասսաներին և, կազմակերպելով ուժեղ Կարմիր բանակ, հաջողությամբ կռվում է Նանկինի հակահեղափոխական կառավարության զորքերի դեմ:

1929 թվականին գոմինդանականները իմպերիալիստների ցուցումով ավազակային հարձակում կազմակերպեցին խորհրդային լիազոր-ներկայացուցչության վրա, ավերեցին խորհրդային հյուպատոսարանները և փորձեցին գրավել Չին-Արևելյան յերկաթուղագիծը:

ԽՍՀՄ Կարմիր բանակը կարճ ժամանակամիջոցում ջախջախիչ հարված հասցրեց Չինաստանի գեներալական բանակներին և ցույց տվեց իմպերիալիստներին, վորոնք կանգնած եյին գոմինդանական փոհմակի թիկունքում, վոր ԽՍՀՄ ամեն րոպե պատրաստ է հակահարված տալու:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չինաստանը հետամնաց գյուղատնտեսական յերկիր է: Համաշխարհային իմպերիալիզմը նրան դարձրել է յերկրագնդի մեծագույն կիսագաղութ: Թե գյուղատնտեսության, թե՛ վերամշակվող արդյունաբերության մեջ և թե տրանսպորտում ոգտագործվում է գլխավորապես մարդկային ուժը: Չինաստանի շատ ռայոններում զարգացել է խոշոր արդյունաբերությունը, գլխավորապես տեքստիլ և հանքագործական: Գեներալական

խմբակցությունների միջև մղվող պայքարը, որին աջակցում են իմպերիալիստները, ձգձգվող բնույթ է ստացել։ Այդ պայքարի և իմպերիալիզմի կատարած կողոպուտի հետևանքով բոլորովին աղքատացել են բնակչության լայն մասսաները։ Իմպերիալիստները, մանավանդ ճապոնական, օգտագործում են Չինաստանի ծանր դրությունը՝ նրան կողոպտելու համար։ Միևնույն ժամանակ լայն ծավալվել է բանվորա-գյուղացիական շարժումը, որի հետևանքով ստեղծվել է չինական վիթխարի խորհրդային տերրիտորիան։

Ստուգիչ հարցեր

Ի՞նչ մասերից է բաղկացած Չինաստանը։ Որո՞նք են ամբողջ Չինաստանի և նրա առանձին մասերի սահմանները։ Ո՞ր գետերի ավազաններում է գտնվում Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Չինաստանը։ Թվեցեք այդ մասերից յուրաքանչյուրի կենտրոնները։ Քարտեզի վրա գտեք Խորհրդային Չինաստանի տերրիտորիան։ Որո՞նք են գյուղատնտեսության բնորոշ առանձնահատկությունները։ Որո՞նք են Հյուսիսային և Հարավային Չինաստանի գլխավոր կուլտուրաները։ Ի՞նչ նշանակություն ունի արհեստավորական արտադրությունը։ Որտե՞ղ են գտնվում գլխավոր արդյունաբերական ռայոններն և արդյունաբերության կենտրոնները։ Ի՞նչ առանձնահատկություններ ունի տրանսպորտը։ Թվեցեք գլխավոր նավահանգիստները և նրանց ծովային կապը։

III. ՀՆԴԿԱՍՏԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնդկաստանը գրավում է Ասիայի համանուն խոշորագույն թերակղզին և սրանից դեպի հյուսիս գտնվող տերրիտորիան մինչև Հիմալայան լեռները։ Հնդկաստանին (որն անգլիական գաղութ է) միացված է Հնդկաչինի արևմտյան մասը՝ Բիրման, որը գրավել են

անգլիացիները։ Հնդկաստանի հարավային կողմում գտնվում են Հնդկական օվկիանոսի յերկու ծոցերը— Ոմանյան ծոցն արևմուտքում և Բենգալյան արևելքում։ Հյուսիսում նա Աֆղանստանից և Տիբետից բաժանված է բարձրագույն Հիմալայան լեռներով, հյուսիս-արևմուտքում, Պարսկաստանից բաժանված է Սոլիմանովյան լեռներով։ Հյուսիս-արևելքում, Բիրմայի վրայով, Հնդկաստանը սահմանակից է Սիամի թագավորության։

Հնդկաստանի ընդհանուր տարածությունը 4,9 միլլիոն քառ. կ. մ. է, բնակչությունը—մոտ 350 միլլիոն։

Հնդկաստանի գլխավոր քաղաքները· արևմտյան ափում—Բոմբեյ, արևելյան ափում—Կալկաթա (յուրաքանչյուրն ունի 1,2 միլլիոն բնակիչ), հյուսիսային մասում—Դելլի, որը Հնդկաստանի վարչական կենտրոնն է։

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հնդկաստանի մեծ մասը, գրեթե ամբողջ թերակղզին, իրենից ներկայացնում է ոչ բարձր (մինչև 250 մ.) սարահարթ, որը կոչվում է Դեկանյան։ Նա թեքված է դեպի արևելք և թերակղզու արևելյան ու արևմտյան ափերի մոտ կազմում է աստիճանաձև լեռներ—Գատեր։ Հնդկաստանի մայր-ցամաքային մասը, որը հյուսիսից անմիջականորեն միացած է թերակղզուն, իրենից ներկայացնում է մի դաշտավայր, որտեղ հոսում են Հիմալայան լեռներից իջնող գետերը— Հինդոս (արևմտյան ուղղությամբ), Գանգիս և Բրամապուտրա (արևելյան ուղղությամբ)։ Հյուսիսից այդ դաշտավայրը յեզերվում է Հիմալայան լեռներով, որոնք մի քանի աղեղնաձև մասերով ձգվում են ավելի քան 2 հազար կիլոմետր։ Հիմալայան լեռների մի քանի գագաթների բարձրությունն 8 կ. մ. ավելի յե (Եվերեստ սարը—8,8 կ. մ.)։ Այս լեռներից իջնում են

մի քանի սառցադաշտեր: Հյուսիս-Հնդկական դաշտավայրը Պարսկաստանի, Աֆղանստանի և Հնդկաչինի կողմից նույնպես շրջապատված է լեռներով:

Հնդկաստանի կլիման մեկ կողմից պայմանավորվում է լայնության աստիճաններով (յերկրի հարավային մասը գտնվում է արևադարձային, իսկ հյուսիսային մասը—յենթաարևադարձային գոտում), իսկ մյուս կողմից նրանով, վոր նա գտնվում է մուսսոն քամիների բնագավառում, սրանք կես տարի (ձմեռը) փչում են ցամաքից դեպի օվկիանոս և կես տարի (ամառը)—հակառակ ուղղությամբ: Ամենացուրտ ամսի (հունվարի) միջին բարեխառնությունը 25° է, ամենաշոգ ամսի (հարավում—ապրիլ, միջին և հյուսիս-արևելյան մասում—մայիս, հյուսիս-արևմուտքում—հունիս) բարեխառնությունը— 30°: Շնորհիվ մուսսոնների, ամառը մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումներ են լինում, բայց Դեկանյան սարահարթի ծայրերի բարձրության պատճառով տեղումների մի զգալի մասը չի հասնում մինչև յերկրի կենտրոնը: Ամենաառատ տեղումները լինում են արևմտյան ափում և Բենգալյան ծոցի հյուսիսային ափերում—մինչև 1200 ս.մ: Դեկանյան սարահարթում այդ թիվն իջնում է մինչև 250 ս.մ., իսկ Հինդից դեպի արևելք, Թարր անապատում—մինչև 10 ս.մ.:

Հնդկաստանի հողերը (բացի Թարր ավազոտ անապատից) մեծ մասամբ շատ բերրի յեն. պատահում է սևահող, կարմրահող և լեռնային տեսակների մնացորդներից առաջացած հող: Կլիմայական ու հողային լավ պայմանները նպաստում են զանազան գյուղատնտեսական կուլտուրաների—ցորենի, բրնձի, բամբակի, ջուտի, կաուչուկատուների, շաքարեղեգնի, թեյի, սուրճի և այլ կուլտուրաների աճման:

Հնդկաստանը հարուստ է հանածոներով, վորոնք դեռ բավականաչափ չեն օգտագործվում և նույնիսկ բավականաչափ չեն ուսումնասիրված, վորովհետև Հնդկաստանի տնտեսությունը հետամնաց, գաղութային մակարդակի վրա յե գտնվում: Քարածուխի գլխավոր շերտերը կենտրոնացած են Թերակղզու հյուսիս-արևելյան և կենտրոնական մասում, յերկաթը—կենտրոնում և ամբողջ արևելյան ծովափի յերկարությամբ, վոսկին—Թերակղզու հարավային մասում, մարգանեցը—կենտրոնական և հարավային մասերում, աղը—արևմտյան ու արևելյան ափերում, հյուսիսում և Բիրմայում, նավթը—Բիրմայում, ադամանդները—Թերակղզու հարավ-արևելյան մասում:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հնդկաստանը հնադարյան կուլտուրայի յերկիր է, վորը զարգացած արդյունաբերություն է ունեցել այն ժամանակ, յերբ յեվրոպական պետությունները ֆեոդալիզմից անցնում եյին կապիտալիզմին: Հնդկական ապրանքները—հյուսվածքներ, արծաթե ու վոսկե իրեր, մարգարիտ, քաղցրավենիք,—դեռ այն ժամանակ հայտնի եյին Յեվրոպային և ցույց եյին տալիս Հնդկաստանի հարստությունը: Ահա թե ինչու XV—XVI դարերում, յերբ Յեվրոպայի առևտրական կապիտալը սկսեց գրավել ու կողոպտել արևելյան և հարավային յերկրները, Հնդկաստանը գրավեց իսպանական, պորթուգալական և իտալական վաճառականների ուշադրությունը: Կոլումբոսի, Մագելլանի և Վասկո-Դե-Գամայի ճանապարհորդություններն ու հայտնագործությունները կապված եյին դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհ գտնելու հետ, մի ճանապարհ, վորն ավելի հարմար, եժան և անվտանգ եր, քան ցամաքային ճանապարհը Փոքր-Ասիայի, Արաբիայի և Պարսկաստանի միջով: Յերբ 1517 թվականին Վասկո-Դե-Գաման հայտնագործեց Հնդկաստանի ծովային ճանապարհը (Աֆրիկայի շուրջը), այնտեղ մուտք գործեցին յեվրոպական վաճառականները և հիմնեցին իրենց գաղութները: Դրանք հոլլանդացիներ եյին, վորոնք բռնեցին Յեվրոպայի առևտրում առաջին տեղը գրավող իսպանացիներին: Նրանցից հետո յերևան են գալիս նրանց հետ մրցող ֆրանսիացիներն և ապա անգլիացիները: Վերջիններս հետզհետե ասպարեզից քշում են բոլոր մյուսներին և իրենց ձեռքն են առնում Հնդկաստանի հետ կատարվող ամբողջ առևտուրը: Այդ

առևտրի համար կազմակերպված՝ այսպես կոչված արևելահնդկական ընկերությունն իրականում իր ձեռքը վերցրեց ոչ միայն առևտուրը, այլև քաղաքական իշխանությունը, կառուցելով ամրություններ իր ապրանքային պահեստների պահպանության համար, օգտվելով անգլիական կառավարության աջակցությամբ և զորքերով, պատերազմներ սանձելով հնդկական իշխանների միջև և միջամտելով այդ պատերազմներին, պայմանագրեր կնքելով այդ իշխանների հետ: Արևելա-հնդկական ընկերության գործունեության և մի շարք պատերազմների արդյունքը եղավ այն, որ 1849 թվականին ամբողջ Հնդկաստանը ենթարկվեց Անգլիային:

Հնդկաստանում Անգլիայի տիրակալությունն իրենից ներկայացնում է այդ հարուստ երկրի համատարած կողոպուտ: Հրոսակային հարկեր, սպեկուլյացիայի նպատակով գների արհեստական բարձրացում, վիթխարի քանակությամբ անգլիական աստիճանավորների պահպանություն, անգլիական իմպերիալիզմի վարած պատերազմներին մասնակցելու ծախսեր, տեղացիների դաժան շահագործում, հնդկական հին տնայնագործական արդյունաբերության քայքայում և բնակչության մասսաների աղքատացում,— ահա հիշյալ տիրակալության հիմնական գծերը, որի ընթացքում անպակաս են եղել ձերբակալությունները, մահապատիժները, սպանությունները, գյուղերի ոչնչացումները և այլն:

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հնդկաստանն իր ժողովրդական տնտեսության բնույթով հիմնականում ագրարային երկիր է: Գյուղատնտեսությամբ ապրում է երկրի ամբողջ բնակչության 90 %-ը, գյուղատնտեսության մեջ աշխատում է 73 %-ը: Այդ մասին է վկայում նաև արտաքին առևտուրը. Հնդկաստանն արտածում է գլխավորապես բամբակ, ջուտ, թեյ, հացահատիկ և ներմուծում է հյուսվածքներ, մետաղներ, մեքենաներ, նավթամթերքներ: Հնդկաստանի ինդուստրացմանը համառորեն արգելակում է

Անգլիան, աշխատելով նրան պահել ագրարային վիճակում, իր արդյունաբերության հումք մատակարարելու համար: Անգլիայի տիրապետությունն իրեն զգալ է տալիս Հնդկաստանի տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Հնդկական գյուղատնտեսության ամենաբնորոշ գիծն այն է, որ մինչև հիմա պահպանվել են ֆեոդալիզմի մնացորդները: Նախ, Հնդկաստանի տերրիտորիայում ցրված են մոտ 600 տեղական իշխանություններ, որոնց ընդհանուր տարածությունը կազմում է հնդկական ամբողջ տերիտորիայի $^{1}/_{3}$ մասը: Այդ իշխանները, որոնք ենթարկվում են Անգլիային, հանդիսանում են խոշոր կալվածատերեր: Նրանց պատկանում է իրենց իշխանության հողերի մինչև 40 %-ը. մնացած հողը նույնպես պատկանում է կալվածատերերին: Իշխաններն ու կալվածատերերը հողը մաս-մաս կապալով տալիս են գյուղացիներին և ստանում բարձր կապալավարձ կամ բերքի մի մասը, կամ դրամ և բացի դրանից, մի շարք գանձումներ են կատարում (օրինակ, կալվածատիրոջ անդրանիկ որդու ծննդյան առթիվ, նրա հարսանիքի առթիվ, կալվածատիրոջ մահվան առթիվ և այլն): Կալվածատերը նաև դատավոր է հանդիսանում իր կապալառու-գյուղացիների վերաբերմամբ: Իշխանը ոչ միայն դատավոր է, այլ և օրենքներ է հրատարակում, ունի իր վոստիկանությունը և հարկեր է գանձում (անգլիական աստիճանավորների հսկողությամբ և ղեկավարությամբ): Հնդկաստանի մնացած մասում չկան տեղական իշխանություններ, այլ գոյություն ունեն նահանգներ, որոնք կառավարվում են անգլիական նահանգապետներով: Կալվածատիրական հողատիրությունը ֆեոդալիզմի մնացորդների և գյուղացիական կապալի հետ գերակշռում է հյուսիս-արևելքում, Հիմալայան լեռնախմբի երկարությամբ մինչև Բիրմա: Մնացած նահանգներում գոյություն ունի գյուղացիական հողատիրու-

թյուն, սակայն այստեղ գյուղացիությունը գրավում է մշակվող հողերի 30 %-ը միայն: Գյուղացիներն ունեն մանր ու մանրագույն հողամասեր, որոնք շատ անգամ չեն կարողանում կերակրել նրանց ընտանիքներին: Մինչդեռ մի քանի կուլակների, կալվածատերերի և վաշխառուների ձեռքում կենտրոնացած է ամբողջ հողի լավագույն ու մեծ մասը,—70 %-ը: Այդ ռայոններում ևս գյուղացին ստրկական վիճակումն է կուլակների ու կալվածատերերի հանդեպ, որոնցից նա լրացուցիչ հող է վերցնում կապալով, և վաշխառուների ու առևտրականների հանդեպ, որոնք նրան դրամական փոխատվություններ են տալիս և ջրի գնով առնում են նրա արտադրանքը: Այսպիսի դրության հետևանքը սիստեմատիկ սովն է և բնակչության մահացության բարձր տոկոսը (10-ը ծնված երեխաներից 7-ը մեռնում են): Գյուղատնտեսության և բերքատվության մակարդակը շատ ցածր է: Մյուս կողմից աղքատ գյուղացիությունը հնարավորություն չունի արդյունաբերական ապրանքներ գնել և այդպիսով վերջիններիս սպառման շուկան չի ընդարձակվում: Գյուղացիությունը, շնորհիվ դաժան շահագործման, հեղափոխականանում է: Ֆեոդալ-իշխաններն ու կալվածատերերն իրենց դաշնակից—անգլիական իմպերիալիզմի օգնությամբ ճնշում են գյուղացիների ապստամբությունները:

Գյուղատնտեսական կուլտուրաները բազմազան են:

Հացահատիկային կուլտուրաներ· բրինձն աճում է այն ռայոններում, որտեղ մթնոլորտային տեղումներն ավելի շատ են—Թերակղզու արևմտյան և արևելյան ափերում, Գանգես գետի երկարությամբ և Բիրմայի համարյա ամբողջ տերիտորիայում: Ցորենը մշակվում է գլխավորապես հյուսիսային Հիդկաստանում (մայր-ցամաքային մասում) և Հինդոս գետի ավազանում: Կորեկն ավելի տարածված է Դեկանյան սարահարթի արևմտյան և հյուսիս-արևմտյան մասերում:

Տեխնիկական կուլտուրաներ, շաքարեղեգն մշակ-

վում է Հնդկաստանի ամբողջ հյուսիսային մասում—Հիմալայան լեռնախմբի ստորոտների և Գանգես գետի երկարությամբ: Բամբակը մշակվում է հարավային ծայրամասում, արևելյան ծովափի միջին մասում, Թերակղզու հյուսիս-արևմուտքում և տեղ-տեղ հյուսիսային (մայր-ցամաքային) մասում: Ջուտը (թելատու բույս, որը հումք է տալիս պարանների համար)—հյուսիս—արևելքում, Գանգեսի գետաբերանի մոտ: Թեյը տարածված է հյուսիս-արևելքում, Բիրմայի սահմանների մոտ, ծխախոտը—արևելյան ափի միջին մասում և հյուսիս-արևելքում, ափիոնը—Դեկանի սարահարթի հյուսիսային մասում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Հնդկաստանի արդյունաբերությունը թույլ է զարգացած: Մինչև պատերազմը գերակշռում էր մանր, տնայնագործական արդյունաբերությունը, որը սաստիկ քայքայվեց անգլիական գործարանային արդյունաբերության մրցակցության շնորհիվ: Հնդկաստանի տնայնագործական արդյունաբերությունն աշխատում է կամ գյուղական շուկայի (դարբնություն, ատաղձագործություն, կարի արտադրություն), կամ արտաքին շուկաների համար (գորգերի, մետաքսյա հյուսվածքների, մետաղյա գեղարվեստական իրերի արտադրություն): Հնդկաստանի գործարանային արդյունաբերությունը գլխավորապես ջուտի մշակմամբ էր զբաղվում և կենտրոնացած էր անգլիական կապիտալիստների ձեռքում: Որոշ չափով զարգացել էին նաև քարածուխի, նավթի և այլ արդյունաբերական ճյուղերը:

Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Անգլիայի արդյունաբերությունն սպասարկում էր ռազմական կարիքներին և հնդկական շուկան ազատ էր անգլիական ապրանքներից, զգալիորեն զարգացավ Հնդկաստանի տեղական, բամբակեղենի արդյունաբերությունը, որն իլիկների քանակությամբ (8,7 միլիոն) նույ-

նիսկ առաջ անցավ ճապոնականից: Անգլիան ռազմադիտական նկատառումներով պատերազմի ժամանակ աջակցեց Հնդկաստանում մետաղագործական և վագոնաշինարարական գործարանների կառուցման, որոնք պատերազմից հետո զրկվեցին կառավարական պատվերներից և շատ ծանր դրության մեջ ընկան:

Բամբակեղենի արդյունաբերության գլխավոր կենտրոններն են Բոմբեյն ու Մադրասը, ջուտ—Կալկաթան: Մետաղագործության կենտրոնն է Ջամշեդպուրը (Հնդկաստանի կենտրոնական մասում), իսկ մետաղամշակման արդյունաբերության կենտրոնները Բոմբեյն ու Կալկաթան:

5. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Լինելով անգլիական գաղութ, Հնդկաստանը կառավարվում է գեներալ-նահանգապետի կողմից, որին նշանակում է անգլիական կառավարությունը և որը կոչվում է Հնդկաստանի փոխարքա: Նրան յենթարկվում են անգլիական նահանգապետները, որոնք կառավարում են նահանգները, ինչպես նաև 600 տեղական իշխանները: Հասկանալի յե, որ փոխարքան և նրան յենթակա բոլոր անձինք յերկիրը կառավարում են հօգուտ անգլիական կապիտալի շահերի: Այդ շահերը, որոնց համար հարստահարվում են աշխատավոր հինդուները և սրանց յերկիրը, զուգադիպում են տեղական ֆեոդալ-իշխանների ու կալվածատերերի շահերին: Այս պատճառով վերջիններն անգլիական իմպերիալիստների դաշնակիցներն են հանդիսանում: Հնդկական բուրժուազիան, ընդհակառակը, անգլիական կապիտալը համարում է իր մրցակիցը, որը գրավում է այն հսկայական յեկամուտները, որոնք կարող էյին հասնել իրեն, և արգելակում է հնդկական արդյունաբերության զարգացումը: Ահա թե ինչու հնդկական

բուրժուազիան դեմ է անգլիական կապիտալին: Վերջապես, հնդկական աշխատավոր գյուղացիության և պրոլետարիատի շահերը դեմ են թե՛ օտարյերկրյա կապիտալի և թե՛ հնդկական ֆեոդալների, կալվածատերերի ու բուրժուազիայի տիրապետության:

Հնդկաստանում դասակարգային շահերի հակասությունները խիստ սրվեցին համաշխարհային պատերազմից հետո, յերբ անգլիական արդյունաբերությունն սկսեց նորից վտարել հնդկականն այն դիրքերից, որոնք գրավել էր վերջինը պատերազմի ժամանակ, Հնդկաստանի ներքին շուկայում: Համաշխարհային ճգնաժամը, որն սկսվեց 1929 թվին, մեկ կողմից չափազանց իջեցրեց Հնդկաստանից արտածվող ապրանքների գները և մյուս կողմից ուժեղացրեց Անգլիայի պայքարըն իր ապրանքների սպառման համար: Համաշխարհային ճգնաժամը, վերջապես, ե՛լ ավելի վատթարացրեց հինդուս աշխատավորների դրությունը:

Պատերազմից հետո դասակարգային հակասությունների սրման հետ կապված է ազգային-ազատագրական շարժման զարգացումը, որն ուղղված է անգլիական կապիտալի դեմ: Այդ շարժումը գլխավորում է հնդկական բուրժուազիան, որը պահանջում է Հնդկաստանին տրամադրել ինքնորոշվող գաղութի (դոմինիոնի) և անգլիական ապրանքների վրա բարձր մաքս նշանակելու իրավունք: Այդ շարժման ներկայացուցիչներից մեկը, Գանդին, կազմակերպեց այսպես կոչված՝ պասսիվ դիմադրություն—անգլիական ապրանքների բոյկոտ, բողոքներ, բանաձևեր:

Սակայն օտարյերկրյա կապիտալի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժմանը միացավ գյուղացիության և պրոլետարիատի հեղափոխական շարժումը, ուղղված թե՛ անգլիական և թե՛ հնդկական կեղեքիչների դեմ: Արդյունաբերական ձեռնարկություններում ու յերկաթուղիներում տեղի ունեցան մի շարք գործադուլներ, ինչպես նաև զինված ապստամբու-

թյուններ: Գանդիին ու բուրժուազիան վախեցան աշխատավորների հեղափոխական մասսայական շարժումից և շտապեցին հաշտվել անգլիական իմպերիալիստների հետ: Այժմ Հնդկաստանում պրոլետարիատն ու հարըստահարվող գյուղացիությունը շարունակում են հեղափոխական պայքարը:

IV ՀՆԴԿԱՉԻՆԻ ՅԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՅԵՐԿՐՆԵՐ

Հնդկաչին թերակղզու վրա գտնվում են հետևյալ յերկրները.—արևելքում—Ֆրանսիայի գաղութ—ֆրանսիական Հնդկաչինը, արևմուտքում—Անգլիայի գաղութ Բիրման, վորը վարչական տեսակետից մտնում է Հնդկաստանի մեջ: Սրանց միջում գտնվում է Սիամի թագավորությունը, վորն Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցության տակ է: Հարավում, Մալակկա թերակղզու և հարևան մանր կղզիների վրա գտնվում են անգլիական գաղութները, վորոնք կոչվում են Մալայան (կամ Մալակկյան) պետություններ:

Հնդկաչինից դեպի հարավ-արևելք և արևելք, Ավստրալիայի ուղղությամբ կան կղզիների մի քանի խմբեր, վորոնց ընդհանուր անունն է Մալայան արշիպելագ կամ Ինդոնեզիա: Այս խմբերից ամենախոշորները Զոնդյան մեծ կղզիներն են, (Բորնեո, Սումատրա, Ճավա, Ցելեբես), վորոնք կազմում են Հոլլանդական Արևելյան Հնդկաստանը (բացի Բորնեոյի հյուսիսային մասից, վորը պատկանում է Անգլիային) և Ֆիլիպպյան կղզիները, վորոնք հանդիսանում են ՀԱՄՆ գաղութը:

Հնդկաչինի և Ինդոնեզիայի մակերևույթը լեռնոտ է: Ինդոնեզիայի կղզիներում կան բազմաթիվ հրաբուխներ:

Հնդկաչինը և Ինդոնեզիան գտնվում են արևադարձային և յենթա-արևադարձային գոտում, ինչպես և մուսսոնների շրջանում: Տեղումներն առատ են: Հողերն արգավանդ են, բուսականությունը՝ հարուստ ու փարթամ: Հսկայական տարածություններ են բռնում անտառները, վորոնք բաղկացած են արժեքավոր ծառերից:

Այս յերկրները հարուստ են հանածոներով. Հնդկաչինը—քարածուխով, ցինկով, անագով, ֆոսֆորիտներով, Բիրման—նավթով, ցինկով, պղնձով, անագով, սուտակով: Մալակկան—

անագի խոշոր պաշարով, ինչպես նաև վոսկով, ածուխով, յերկաթով, մարգանեցով, վոլֆրամով, նիկելով և այլն. Սիամը—վոլֆրամով, ածուխով, վոսկով, անագով, սուտակով. Ինդոնեզիան—նավթով, քարածուխով, անագով, յերկաթով, վոսկով, պլատինով, թանգագին քարերով:

Հնդկաչինի և Ինդոնեզիայի էկոնոմիկան բնորոշվում է իմպերիալիստական յերկրների կապիտալի գիշատիչ տիրակալությամբ, խոշոր, ֆեոդալ-կալվածատիրական հողատիրությամբ, մասսաների բացառիկ աղքատությամբ և ագրարային վիճակով:

Գյուղատնտեսական գլխավոր կուլտուրաներն են՝ Ֆրանսիական Հնդկաչինում և Բիրմայում— բրինձը, վորը ցանքերի 90 տոկոսն է կազմում, և պլանտացիոն կուլտուրաները,—կաուչուկ, շաքարեղեգն, բամբակ, թեյ, ծխախոտ, թթի ծառ, սուրճ. Սիամում—բրինձ և շաքարեղեգն, կոկոսի արմավենի, Մալակկայում—կաուչուկ, վորի արտադրությամբ այս յերկիրն առաջին տեղն է բռնում աշխարհում, ապա կոկոսի արմավենի. Ինդոնեզիայում—պլանտացիոն կուլտուրաներ—շաքարեղեգն, կաուչուկ, սուրճ, կակաո, թեյ և հացահատիկներ—բրինձ և յեգիպտացորեն:

Հողազուրկ և սակավահող գյուղացիության ու բատրակության դրությունը նույնն է, ինչ վոր Չինաստանում և Հնդկաստանում: Յեվրոպական կապիտալիստների պլանտացիաներում լայն չափով գործադրվում է հարկադիր աշխատանքը՝ չսահմանափակված բանվորական որով և մարմնական պատիժներով:

Արդյունաբերությունը թույլ է զարգացած,— գլխավորապես հանքագործական, վորը հանում է վերև հիշված հանածո հարստությունները: Վերամշակող արդյունաբերությունից հիշատակելի յեն սննդի (շաքարի, սուրճի, թեյի), ծխախոտի և մասամբ տեքստիլ արդյունաբերությունը:

Հնդկաչինի և Ինդոնեզիայի յերկրներն իմպերիալիստների համար հանդիսանում են հումքի, սպառման և կապիտալների գործադրության շուկաներ:

Հնդկաչինում և Հոլլանդական Արևելյան Հնդկաստանում հետպատերազմյան շրջանում և ճգնաժամի տարիներում զգալիորեն աճում է հեղափոխական շարժումը:

Գլխավոր քաղաքները. Ֆրանսիական Հնդկաչինում— Հա-

նոյ, Սիամում—Բանկոկ, Մալայան պետություններում—Սինգապուր (կղզու վրա համաշխարհային առևտրական նավահանգիստ և Անգլիայի խոշոր ռազմածովային բազա), Հոլլանդական արևելյան Հնդկաստանում—Բատավիա (Ճավա կղզու վրա), Ֆիլիպյան կղզիներում—Մանիլլա:

V. ԱՎՂԱՆՍՏԱՆ

Ավղանստանը (600 հազ. քառ. կ.մ., 8 միլիոն բնակիչ) գտնվում է Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանի, Պարսկաստանի և ԽՍՀՄ միջև:

Մակերևույթը լեռնոտ է և Հինդուկուշ կոչված բարձր լեռնախմբով բաժանվում է յերկու մասի: Կլիման միանգամայն ցամաքային է:

Հարավային մասը չոր տափաստանների, անապատների և քոչվորական անասնապահության յերկիր է: Հյուսիսում զարգացած է յերկրագործությունը: Յերկրում դեռ ուժեղ են ֆեոդալիզմի և ցեղային կենցաղի տարրերը: Հնդկաստանի անասունները վոչխարներն և ուղտերն են: Գյուղատնտեսական կուլտուրաներն են՝ ցորեն, լեռներում—հաճար ու գարի, հովիտներում—պտուղներ, ինչպես նաև բամբակ ու բրինձ (արհեստականորեն վոռոգվող հողերում): Գոյություն ունի միայն տնայնագործական արդյունաբերություն:

Ավղանստանը վաղուց անգլիական իմպերիալիզմի ձգտումների վայր է: Անգլիական իմպերիալիզմը մեծ ազդեցություն ունի յերկրի տիրող, ֆեոդալական վերնախավի վրա:

Գլխավոր քաղաքները. Կաբուլ—մայրաքաղաքն է և գտնվում է հարավային մասում. Հերատ—հյուսիսային մասում:

VI. ՏԻԲԵՏ

Տիբետը (մոտ 2 միլիոն քառ. կ.մ., մոտ 2 միլիոն բնակիչ) առաջ մտնում էր Չինաստանի մեջ, բայց նրանից բաժանվեց և այժմ Անգլիայից կախումն ունեցող մի յերկիր է:

Տիբետը բարձր լեռների աշխարհ է: Կլիման միանգամայն ցամաքային է: Յերկիրը կիսանապատային բնույթ ունի:

Տնտեսության գլխավոր ճյուղն անասնաբուծությունն է: Պահվում են վոչխարներ, գոմեշներ, ուղտեր և այլն:

Գլխավոր քաղաքն է Լհասսա:

VII. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանը (1,6 միլիոն քառ. կ.մ., 10 միլիոն բնակիչ) գտնվում է արևելքից Հնդկաստանի ու Ավղանստանի և Արևելքից Թյուրքիայի ու Իրաքի միջև: Նրա հարավային կողմից գտնվում է Հնդկական ովկիանոսի Պարսկական ծոցը, իսկ Հյուսիսային կողմից— ԽՍՀՄ, Կասպյան ծովով: Պարսկաստանը բռնում է Իրանի սարահարթը, վորի վրա գտնվում են մի ամբողջ շարք լեռնախմբեր: Կլիման բոլորովին ցամաքային է: Պարսկաստանը, գլխավորապես նրա հարավային մասը շատ հարուստ է նավթի պաշարով: Կան ավելի քիչ քանակությամբ նաև ուրիշ հանածոներ՝ ածուխ, յերկաթի ու պղնձի հանքեր և այլն:

Իր տնտեսական վիճակով Պարսկաստանը հանդիսանում է հետամնաց կիսագաղութային մի յերկիր, մինչև այժմ դեռ չափազանց ուժեղ են ֆեոդալական հողատիրության տարրերը. արդյունաբերություն գրեթե բոլորովին չկա, յերկրում տիրող դեր է կատարում ոտարյերկրյա (անգլիական) կապիտալը:

Տնտեսության գլխավոր ճյուղերն են՝ յերկրագործությունն և անասնապահությունը: Հիմնական կուլտուրաները— ցորեն, բրինձ, գարի. մշակվում է նաև բամբակ, խաշխաշ, ծխախոտ, թթենի, պտուղներ (արմավենի, նուշ, խաղող): Անասնապահության ճյուղերից գերակշռում են վոչխարաբուծությունն և այծաբուծությունը: Մշակվող հողը և, վոր ավելի կարևոր է Պարսկաստանում, յերկրագործության համար անհրաժեշտ վոռոգման կառույցները պատկանում են ֆեոդալներին—կալվածատերերին և հոգևորականության: Գյուղացիությունը սոսկալի տնտեսական դրության մեջ է գտնվում և յենթարկվում է դաժան շահագործման:

Պարսկաստանի արդյունաբերությունը նավթի հանույթն է, վորը գտնվում է անգլիական կապիտալիստների ձեռքում և տնայնագործական արհեստները (գորգեր, տեքստիլ, զենքեր, բրուտագործություն): Համաշխարհային ճգնաժամի նախորյակին

ստեղծվեցին լուցկու, տեքստիլ, շաքարի և ապակու մեծ ձեռնարկություններ, վորոնք ճգնաժամի հետևանքով փակվեցին: Խիստ ծանր է պրոլետարների դրությունը, վորոնք աշխատում են պարսկական տնայնագործական արհեստանոցներում և անգլիական նավթային կոնցեսիայում:

1907 թվականին Պարսկաստանում տեղի ունեցավ հեղափոխություն: 1919 թվականին, հեղափոխական շարժման հետևանքով, Հյուսիսային Պարսկաստանում կազմակերպվեց Խորհրդային իշխանություն: Սակայն անգլիական զորքերի օգնությամբ տապալվեց հեղափոխական շարժումը:

Գլխավոր քաղաքներ. Թեհրան—մայրաքաղաք, Թավրիզ—առևտրա-արդյունաբերական կենտրոն, Բենդեր-Փեհլևի—նավահանգիստ Կասպյան ծովի վրա:

VIII. Թ Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թյուրքական հանրապետությունը գրավում է Փոքր Ասիա թերակղզին (Անատոլիա), վորը հրջապատված է Սև, Մարմարյա, Եգեյան ու Միջերկրական ծովերով, և հարավան Բալկանյան թերակղզու (Յեվրոպա) մի փոքրիկ մասը: Թյուրքիային են պատկանում Բոսֆոր (Կոստանդինոպոլսի) և Դարդանել նեղուցների ափերը, վորոնք հանդիսանում են մուտք դեպի Սև ծովը:

Թյուրքիայի հարևաններն են՝ հյուսիս-արևելքում—Խորհրդային Միությունը (ԱԽՍՖՀ), արևելքում— Պարսկաստանը, հարավում— արաբական յերկրներ Իրաքը (Միջագետք) և Սիրիան, վորոնցից առաջինը յենթարկվում է Անգլիային, յերկրորդը— Ֆրանսիային: Հյուսիս-արեմուտքում, Յեվրոպայում, Թյուրքիային սահմանակից են Հունաստանը և Բուլղարիան:

Թյուրքիայի ընդհանուր տարածությունը 762 հազ. քառ. կ.մ. է, վորից Յեվրոպայում— ընդամենը 24

կ.մ.: Բնակչությունը մոտ 15 միլիոն է, ուրեմն 1 քառ. կ.մ. վրա ապրում է 19 մարդ (միջին թվով):

Գլխավոր քաղաքները. Անգորա, Փոքր Ասիայի կենտրոնում—Թյուրքիայի մայրաքաղաքն է (130 հազար բնակիչ). Ստամբուլ (Կոստանդինոպոլիս)—Բոսֆորի նեղուցի ափին, նախկին մայրաքաղաքը. յերկրի ամենախոշոր քաղաքն է (700 հազ. բնակիչ). Զմյուռնիա, Փոքր Ասիայի արևմտյան ծովափին, խոշոր նավահանգիստ է (200 հազ. բնակիչ):

2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փոքր Ասիան կամ Անատոլիան իրենից ներկայացնում է մի սարահարթ, վորը ծովի մակերևույթից բարձր է միջին թվով 1 կիլոմետր, հյուսիսից, արևելքից և հարավից հրջապատված է լեռնաշղթաներով և միայն արեմուտքում ցածրանում է դեպի Եգեյան ծովը: Փոքր Ասիայի սարահարթը կենտրոնն ունի լեռնախմբեր և հյուսիս արևելքում անցնում է լեռնոտ Հայաստանը:

Փոքր Ասիայի ամբողջ ափը և Թյուրքիայի յեվրոպական մասն ունեն Միջերկրական ծովի ազդեցությունը յենթակա, հավասարաչափ տաք ու չոր կլիմա, Փոքր Ասիայի ներքին մասը—ցամաքային կլիմա: Մթնոլորտային տեղումների միջին քանակությունը 200 մ.մ. է: Անատոլիայի կենտրոնական մասը կիսաանապատ է:

Թյուրքիայի հանածո հարստությունները քիչ են հետազոտված: Գտնված են հետևյալ հանքերի չերտեր. —պղինձ (վորի խոշոր հանքերից մեկը գտնվում է Փոքր Ասիայի արևելյան մասում), արճիճ, քրոմ-յերկաթ, զմռնիտ, ասֆալտ և այլն:

3. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Թյուրքիան ամենամեծ ծաղկման և հզորության հասավ XVI դարում, յերբ նա Յեվրոպայում նվաճեց ամբողջ Բալկանյան թերակղզին, այսինքն այժմյան Հունաստանի, Բուլղարիայի, Ալբանիայի, Հարավ-Սլավիայի տերրիտորիան, Մեծ-Դանուբյան յեր-

կրները—Հունգարիան և Ռումինիան, ժամանակակից Ուկրաինայի հարավային մասը, Ղրիմը, Հյուսիսային Կովկասը. Ասիայում—Անդրկովկասը, Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը և ամբողջ Արաբական թերակղզին, Աֆրիկայում—Եգիպտոսը և ամբողջ հյուսիսային ծովափը:

Այսպիսի ընդարձակ տերրիտորիա ունեցող Թյուրքական կայսրությունը ռազմապես ու տնտեսապես ևս հզոր էր: Ռազմական հաղթանակների շնորհիվ դեպի Թյուրքիա անընդհատ հոսում էին հաղթվածներից գրաված թանգարժեք իրերը, պատերազմական տուգանքներն ու հարկերը, որոնք դրվում էին նվաճված ժողովուրդների վրա, և գերիները, որոնք վաճառվում էին իբրև ստրուկներ: Բացի դրանից, Թյուրքիայի տնտեսական հզորությունը պայմանավորվում էր այն եկամուտներով, որոնք ստացվում էին Հարավային Եվրոպայի (իտալական պետությունների ու Իսպանիայի) և Արևելքի՝ Սիրիայի, Եգիպտոսի ու Հնդկաստանի միջև կատարվող առևտրից, քանի որ Թյուրքիան հսկայական միջնորդական տուրքեր էր վերցնում իր ծովային ու ցամաքային սահմաններով ապրանք տեղափոխելու համար:

XVI դարում հայտնագործվեցին նոր երկրներ (Ամերիկայում) և ծովային ճանապարհը դեպի Հնդկաստան. այսպիսով առևտրի ճանապարհները Միջերկրական ծովից փոխադրվեցին օվկիանոս: Դրանով Թյուրքիան զրկվեց իր եկամուտների կարևորագույն աղբյուրից և իր տնտեսական զարգացմամբ հետ մնաց եվրոպական երկրներից, որոնք ֆեոդալիզմից անցան կապիտալիզմի շրջանը: Տնտեսական զարգացման հետամնացությանը հետևում էր ռազմա-տեխնիկական հետամնացությունը՝ մշտական բանակ կազմակերպելու, հրազենները կատարելագործելու, նոր ճանապարհներ կառուցելու ուղղությամբ: Այսպիսով սկսվեց Թյուրքիայի տնտեսական և ռազմական հզորության անկումը. XVI դարի վերջից Թյուրքիան անընդհատ ռազմական պարտություններ է կրում, հետզհետե փոքրանում է նրա տերրիտորիան, արտասահմանյան առևտուրն արտոնյալ դիրք է գրավում Թյուրքիայում: Այսպես, 1699 թվականին Թյուրքական տիրապետությունից ազատվում է Հունգարիան, XVIII դարում, ռուս-թյուրքական պատերազմների հետևանքով, Ռուսաստանը

Թյուրքիայից գրավեց Հարավային Ուկրաինան, Ղրիմը և Հյուսիսային Կովկասը: XIX դարի ընթացքում Եվրոպայի կապիտալիստական երկրները (Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան), աշխատելով ձեռք բերել «Թյուրքական ժառանգությունը», աջակցում են Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի ու Բուլղարիայի բաժանմանը (Թյուրքիայից): Ռուսաստանը գրավում է Կովկասի Սև-ծովյան ափը և Անդրկովկասը, Ավստրիան—այժմյան Հարավ-Սլավիայի մի մասը, Ֆրանսիան—Աֆրիկայի հյուսիսային ծովափը, Անգլիան փաստորեն իրեն է ենթարկում Եգիպտոսը և գրավում է Կիպրոս կղզին: 1911 թվին Իտալիան գրավում է Հյուսիսային Աֆրիկայում Թուրքական վերջին գաղութը—Լիբիան (Տրիպոլիտանիա), իսկ 1912—1913 թ.թ., Բալկանյան թերակղզու բոլոր պետությունների հետ վարած պատերազմի հետևանքով Թյուրքիան զրկվում է իր եվրոպական տերրիտորիայի մեծ մասից:

Թյուրքական տերրիտորիայի անընդհատ կրճատման հետ մեկտեղ օտարերկրյա կապիտալը տիրող դիրք է գրավում Թյուրքիայում: Ըստ անհավասար պայմանագրերի (այսպես կոչված՝ «կապիտուլյացիաների»), որոնք փաթաթվեցին Թյուրքիայի վզին,—օտարահպատակների համար արտոնյալ դիրք ստեղծվեց Թյուրքահպատակների հանդեպ. առաջինները չէին ենթարկվում Թյուրքական օրենքներին ու դատարաններին, հարկեր չէին վճարում, նրանց ապրանքների վրա չէր կարելի բարձր մաքսային տուրք դնել: Օտար ապրանքների հեղեղը թույլ չտվեց, որ զարգանա Թյուրքական գործարանային արդյունաբերությունը և խեղդեց երկրի մանր, տնայնագործական արդյունաբերությունը: Օտարերկրյա՝ ֆրանսիական, գերմանական, անգլիական կապիտալները լայն չափով ներդրվեցին Թյուրքիայի ժողովրդական տնտեսության մեջ, բայց միայն որպես փոխառություն, որպես ներդրումներ երկաթուղիներում, չոգենավային ընկերություններում, առևտրական ձեռնարկություններում: Այսպիսով Թյուրքիան չուներ իր սեփական զարգացած արդյունաբերությունը և հանդիսանում էր հետամնաց ագրարային մի երկիր, ֆեոդալիզմի մնացորդների շնորհիվ աղքատ գյուղացիությամբ: Երկրի տնտեսության այդպիսի դրության և անընդհատ պատերազմների հետևանքը եղավ Թյուրքական կառավարության հրա-

կայական պարտքն օտարերկրյա կապիտալին, վորը վերահսկողություն ստանձնեց Թյուրքիայի ամբողջ տնտեսական կյանքի վրա։

Յերկրի ներքին քաղաքական դրությունը բնորոշվում եր ֆեոդալիզմի գոյությամբ, վորի մնացորդները կալվածատիրական հողատիրության ձևով մնացին մինչև XX դարը, ինչպես նաև սուլթանի բացարձակ, պառլամենտով չսահմանափակված իշխանությամբ։

XIX դարի վերջում և XX դարի սկզբում աճում ե դժգոհությունն առևտրական բուրժուազիայի, արհեստավորների, բանվորների ու գյուղացիության, ինչպես նաև բանակի և սպայության մի մասի մեջ։ Առաջ ե գալիս այսպես կոչված՝ Յերիտասարդ թյուրքերի կուսակցությունը (գլխավորապես ինտելիգենցիայից, աստիճանավորներից ու սպաներից), վորն աշխատավոր մասսաների աջակցությամբ 1908 թվականին գրավում ե իշխանությունը, մտցնում ե սահմանադրություն և պարլամենտ։ Յերիտասարդ թուրքերի քաղաքականությունը, վորն ուղղված եր աշխատավորության և վոչ թուրք ազգությունների դեմ, զրկեց նրանց մասսաների աջակցությունից և հին ռեժիմի կողմնակիցները յերկու անգամ,—1909 և 1912 թ.թ. տապալեցին յերիտասարդ թուրքերին։ Սակայն 1913 թվականին վերջիններս նորից գրավեցին իշխանությունը։

1914 թվին Թյուրքիան անցնում ե Գերմանիայի կողմը և մասնակից դառնում համաշխարհային պատերազմին։ Նա պարտություն ե կրում և ստիպված ե լինում զիջել Պաղեստինն ու Իրաքն Անգլիային, Սիրիան—Ֆրանսիային, Փոքր Ասիայի մի մասը, վորը միացած ե Զմյուռնիա քաղաքին, անցնում ե Հունաստանին։ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները հանձնվում են Անգլիայի ու Ֆրանսիայի վերահսկողության։ Թյուրքիայի մայրաքաղաքում, Ստամբուլում տեղավորվում են Անգլիայի ու Ֆրանսիայի ռազմածովային ուժերը, վորոնք իրենց ձեռքումն եյին պահում թյուրքական կառավարությունը և փաստորեն դարձել եյին ամբողջ յերկրի տերերը։ Այդ ժամանակ Փոքր Ասիայի խորքերում սկսվում ե առևտրական բուրժուազիայի ու գյուղացիության ազգային-ազատագրական շարժումը, վորը գլխավորում ե Քեմալ-փաշան։ Այդ շարժման հետևանքով Անգորայում կազմվում ե նոր ազգա-

յին կառավարություն և վերսկսվում են ռազմական գործողությունները ընդդեմ հաղթողների,— ընդդեմ Հունաստանի, վորը գրավել եր Զմյուռնիան։ Պայքարը վերջացավ հեղափոխական Թյուրքիայի հաղթությամբ և վերանայվեց հաշտության դաշնագիրը։ Զմյուռնիան մնաց Թյուրքիային, Անտանտայի զորքերը հեռացան Ստամբուլից։ Թյուրքիայում հաստատվեց պետական նոր կառուցվածք—բուրժուական հանրապետություն, իր նախագահով (Քեմալ-փաշա) և պարլամենտով։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մենք տեսնում ենք այս պատմա-աշխարհագրական ակնարկից, Թյուրքիան, չնայելով իր բնական հարստություններին, հետ ե մնացել իր տնտեսական զարգացմամբ։ Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն ե, վորով զբաղվում ե բնակչության մոտ 80 %-ը։ Սակայն գյուղատնտեսության մակարդակն ել ցածր ե։ Դաշտագործությունը, վորը գերակշռող ճյուղ ե հանդիսանում, տարածված ե գլխավորապես Փոքր Ասիա թերակղզու ծայրերում, վորովհետև կենտրոնական ռայոններն ունեն չոր կլիմա և այստեղ դաշտագործությունը հնարավոր ե միայն արհեստական վոռոգման պայմաններում։ Ջոր տափաստանների և կիսաանապատների այդ ռայոններում զարգացած ե անասնաբուծությունը։ Մշակվող հողերը կազմում են յերկրի ամբողջ տերրիտորիայի միայն 10–12 %։ Մշակվող հողերի մեծ մասում (մինչև 90 %) ցանվում են հացահատիկային կուլտուրաներ—ցորեն և գարի։ Թյուրքիայի հացահատիկային տնտեսությունը շատ ցածր մակարդակի վրա յե գանվում և աչքի յե ընկնում սակավ բերքատվությամբ, վորի հետևանքով անհրաժեշտ ե լինում հացահատիկ ներմուծել արտասահմանից։ Տեխնիկական կուլտուրաները, բամբակը, ծխախոտը, կազմում են ցանքերի տարածության 6—7 %-ը։ Բամբակը (վոչ բարձրորակ) մշակվում ե յերկրի հարավ-արևմտյան մասում, Միջերկրական ծովի ափերում։

Ծխախոտը մշակվում է գրեթե ամբողջ յերկրում, բայց գլխավորապես ծովափնյա ռայոններում: Վերջապես, մշակվող հողատարածության մոտ 4 %-ը բռնում են պտուղները՝ ձիթապտուղները, սալորը, ընկույզը, թզենին, նաև խաղողի այգիներն ու բանջարանոցները:

Անասնաբուծությունը կենտրոնացած է յերկրի ներքին մասերում և արևելքում. այստեղ տարածված է գլխավորապես վոչխարաբուծությունն ու այծերի պահպանումը (հայտնի յեն անգորական նրբաստև այծերը): Թյուրքիայում բանող անասուններ են գլխավորապես ավանակները:

Թյուրքիայի արդյունաբերությունը մեծ մասամբ տնայնագործական է, առանց մեքենայական շարժիչների և վարձու աշխատանքի գործադրության: Համաշխարհային պատերազմից հետո, շնորհիվ Քեմալ փաշայի կառավարության քաղաքականության (վորով սահմանափակվեց մի շարք ապրանքների ներմուծումն արտասահմանից և մաքսից ազատվեց մեքենաների ներմուծումը), վարկեր ու արտոնություններ տվեց նոր ձեռնարկություններին և նույնիսկ կառուցեց պետական արդյունաբերական ձեռնարկություններ, վորպեսզի հետո հանձնի մասնավորներին, Թյուրքիայի արդյունաբերական զարգացման մեջ մի քանի հաջողություններ են նկատվում: Սրանց խիստ խանգարում են՝ կապիտալների պակասությունը, արտասահմանյան կապիտալի դեմ մղվող պայքարի անավարտ վիճակը և համաշխարհային ճգնաժամը: Թյուրքիայում ծանր արդյունաբերության ճյուղերից զարգացած է քարածուխի հանույթը, գլխավորապես Զոնգուլդագի ածուխի ավազանում և Սև-ծովյան ափի արևմտյան մասում: Թեթև արդյունաբերության ճյուղերից մեծ դեր է խաղում տեքստիլը, բրդյա գործվածքների արտադրությունը կենտրոնացած է Անգորայի և Ստամբուլի ռայոններում, բամբակյա գործվածքները—արևմտյան ու հարավային ծովափնյա ռայոններում, Զմյուռնիայի և Ադանայի ռայոններում, մետաքսյա ապրանքներինը—Արևմտյան

ծովափում, Բրուսայում և Փոքր Ասիայի կենտրոնում: Ծխախոտի արդյունաբերությունը կենտրոնացած է Ստամբուլում և Սև ծովի ափերի արևելյան մասում (Սամսոն և Տրապիզոն): Կառավարությունը կառուցել է լուցկու յերկու ֆաբրիկա, շաքարի գործարան, գործվածքային գործարան և այլն: ԽՍՀՄ ոգնությամբ կառուցվում է մի մեծ տեքստիլ կոմբինատ:

Թյուրքիայի արտաքին առևտուրը չնչին է: Ներմուծվում են մետաղյա և տեքստիլ ապրանքներ ու քարածուխ: Արտածվում են գյուղատնտեսական ապրանքներ—ծխախոտ, բուրդ, բամբակ, մետաքս, մրգեր, արդյունաբերական ապրանքներից— գորգեր: Առևտուրը կատարվում է գլխավորապես Անգլիայի, Իտալիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի հետ:

5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1920 թվականի հեղափոխությունը տապալեց սուլթանին և իշխանությունը հանձնեց ազգային բուրժուազիային: Թյուրքիայի կայսրությունը դարձավ հանրապետություն, վորի բարձրագույն որգաններն են՝ նախագահը, Ազգային ժողովը կամ մեջլիսը և մինիստրների խորհուրդը: Ամբողջ ապարատը գտնվում է այսպես կոչված՝ «ժողովրդական կուսակցության» ձեռքում, վորին գլխավորում է Քեմալ փաշան և վորն արտահայտում է Փոքր-Ասիայի ներքին նահանգների բուրժուազիայի և կուլակության շահերը: Պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական շարժումը և կոմունիստական կազմակերպությունը դաժան հալածանքների յեն յենթարկվում: Քեմալ փաշայի կառավարման դիկտատուրական մեթոդները թույլ չեն տալիս նաև ուրիշ բուրժուական կուսակցությունների գոյություն: Նա վճռականորեն պայքարում է նաև նավահանգստային քաղաքների բուրժուազիայի դեմ, վորի շահերը կապված են ոտար կապիտալի շահերի հետ և այս պատճառով հակասում են

ներքին նահանգների բուրժուազիայի շահերին: Քեմալ փաշան պայքարում է նաև հոգևորականության և ֆեոդալների մնացորդների դեմ, վորոնք դիմադրում են նրա ռեֆորմներին:

Ոտարյերկրյա կապիտալը, վորը մինչ համաշխարհային պատերազմը Թյուրքիան դարձել եր կիսագաղութ, 1920 թվականի հեղափոխությունից հետո զրկվեց նախկին հրամանատարական դիրքերից. սակայն դեռ ներկայումս ել նա ունի մի շարք միջոցներ՝ Թյուրքիայի տնտեսական կյանքի վրա ազդելու համար: Այդ միջոցներից ամենակարևորներն են՝ դեռ հին, սուլթանական Թյուրքիայի հսկայական պարտքն ոտարերկրյա, գլխավորապես ֆրանսիական ու անգլիական կապիտալին, Թյուրքիայի սեփական կապիտալների պակասությունը և արտասահմանյան վարկերի անհրաժեշտությունը, Թյուրքիայում ոտարյերկրյա բանկերի գոյությունը, վորոնք ազդում են յերկրի ֆինանսների վրա:

Թյուրքիան Խորհրդային Միության հետ բարեկամական հարաբերությունների մեջ է գտնվում, գիտակցելով, վոր նա միակ յերկիրն է, վորը չի նայում Թյուրքիայի վրա գիշատիչի հայացքով, այլ ընդհակառակն, աշխատում է ոգնել նրան՝ արտասահմանյան կապիտալից ազատվելու համար: ԽՍՀՄ կառավարությունը վարկեր է տվել Թյուրքիային և խորհրդային մասնագետներ է գործուղել այնտեղ:

IX. ԱՐԱԲԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

Արաբական յերկրները գտնվում են արևմտյան Ասիայի հարավային մասում: Թյուրքիայից դեպի հարավ, Միջերկրական ծովի ափերում գտնվում են Սիրիան և Պաղեստինը, իսկ դեպի արևելք, Պարսկաստանի սահմանների և Պարսկական ծոցի մոտ— Իրաքը (կամ Միջագետքը): Դեպի ավելի հարավ, Արաբական թերակղզու վրա, Կարմիր ծովի ափի յերկարությամբ տարածված է Հեջազ պետությունը, վորը վերջերս միացել է Կենտրոնական

Արաբիայի Նեջիդ պետության հետ, ապա Ասիրը և Յեմենը, իսկ Պարսկական ծոցի ափին— Ոմանը և Կուվեյտը:

Մինչև 1914—1918 թվականների պատերազմը բոլոր արաբական յերկրները Թյուրքիայի մեջ եյին մտնում: Պատերազմից հետո Սիրիան դարձավ Ֆրանսիայի գաղութը, իսկ Պաղեստինն— Անգլիայի (ձևականորեն նրանք հանդիսանում են «մանդատային յերկրներ», այսինքն Ազգերի Լիգայի մանդատով տրվել են Անգլիային ու Ֆրանսիային, ժամանակավորապես կառավարելու համար): Իրաքը թագավորություն է, վորն ամբողջովին յենթարկվում է Անգլիային ըստ «միութենական դաշնագրի»: Մնացած յերկրները նույնպես յենթարկվում են Անգլիային, կամ գտնվում են նրա ազդեցության տակ (Հեջազ), բացի Յեմենից, վորը պահպանում է իր անկախությունը:

Արաբստանի մակերևույթն իրենից ներկայացնում է միջին բարձրության սարահարթ: Ծովամերձ մասերում կլիման շոգ է ու խոնավ, Կենտրոնական Արաբիայում—խիստ ցամաքային, ամառվա ու ձմեռվա բարեխառնության մեծ տատանումներով (45° տաքությունից մինչև 10° ցուրտ): Ցերեկվա ու գիշերվա բարեխառնությունն ևս ունի մեծ տատանումներ: Մթնոլորտային տեղումները չափազանց քիչ են. անձրևներ գալիս են միայն ծովամերձ շրջաններում: Խոշոր գետեր կան միայն Իրաքում—Տիգրիս և Եփրատ: Արաբական թերակղզու հարավային ու հյուսիս-արևելյան մասերում գտնվում են հսկայական ավազոտ ու անջուր անապատներ, հյուսիսային մասում—տափաստաններ: Ծովամերձ ռայոններում գոյություն ունի արևադարձային կամ յենթարևադարձային բուսականություն:

Արաբական յերկրները հանածոներով շատ հարուստ չեն: Միայն Իրաքի հյուսիսային մասում, Մոսուլ քաղաքի մոտ կա նավթ, Պաղեստինում—գիպսի, ասֆալտի, ֆոսֆորիտների, աղերի, կալիական աղերի հանքեր, ինչպես նաև մարմար և այրվող թերթաքարեր. Նեջիդում գտնվում են ցինկի ու յերկաթի հանքեր:

Արաբական յերկրների եկոնոմիկան բնորոշվում է հետևյալով.—գոյություն ունի ֆեոդալ-կալվածատիրական խոշոր հողատիրություն և գյուղացիների («ֆելլահների») աշխատանքի

շահագործում. պահպանվել է քոչվորական կյանքը, պատրիարխալ–ցեղային կենցաղով (բեդվիններ). այդ երկրներն ագրարային բնույթ ունեն և այնտեղ տիրում է ոտարերկրյա կապիտալը. Սիրիան, Պաղեստինն ու Իրաքն արդեն բռնել են կապիտալիստական զարգացման ճանապարհը:

Սիրիայում և Պաղեստինում գյուղատնտեսական կուլտուրաներից ցանվում է ցորեն, տեղ–տեղ՝ բամբակ: Մշակվում են ձիթենու, նարնջի և թզենի ծառեր, խաղող. Իրաքում, միայն երբեմն միացած Տիգրիսի ու Եփրատի հովիտում կա բուսականություն՝ ձիթենիներ, նռնենիներ, թզենի արմավներ: Եմենում աճում են՝ ցորեն, սուրճ («Մոկկո» բարձր տեսակ), նուշ, արմավ, ծիրան և այլ պտուղներ: Բոլոր երկրներում զարգացած է անասնապահությունը,— ոչխարների, այծերի, ուղտերի, իսկ Նեջդում նաև ձիերի բազմացումը:

Ամենուրեք վերամշակվող արդյունաբերությունը տնայնագործական է: Գործարանային տիպի ձեռնարկություններ կան գլխավորապես Պաղեստինում—ցեմենտի, կաշու գործարաններ, յուղի ֆաբրիկա, ինչպես նաև սննդի արդյունաբերության ձեռնարկություններ, Սիրիայում բամբակեղենի ու մետաքսի ֆաբրիկաներ, սննդամթերքների և կաշու գործարաններ: Իրաքում զարգացած է նավթի արդյունաբերությունը:

Արաբական երկրներում սաստիկ զարգացած է ազգային ազատագրական շարժումը: Սիրիայում, Պաղեստինում, Իրաքում և այլ արաբական երկրներում հաճախ լեղել են ապստամբություններ իմպերիալիստների դեմ: Այդ ապստամբությունները, մանավանդ Սիրիայում և Իրաքում, ճնշվել են մեծ դաժանությամբ և արյունահեղությամբ:

Արաբական երկրներից Եմենը և Հեջազը դիվանագիտական ու առևտրական հարաբերություններ են պահպանում ԽՍՀՄ հետ:

Գլխավոր քաղաքները: Սիրիայում— Դամասկոս, վարչական կենտրոն է. Բեյրութ, նավահանգիստ է. Պաղեստինում— Երուսաղեմ, վարչական կենտրոն, Յաֆֆա, նավահանգիստ է. Իրաքում—Բաղդադ, մայրաքաղաքն է, Մոսուլ— նավթահանման կենտրոն, Բասրա, նավահանգիստ է. Հեջազում—Մեքքա, մայրաքաղաք:

ԱՖՐԻԿԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Աֆրիկան մայր–ցամաք է, որն իմպերիալիստները դարձրել են գաղութ: Այդ գաղութը նրանց տալիս է սննդի և գործարանային հումք և գնում է իմպերիալիստական երկրներից բերված գործարանային ապրանքները: Աֆրիկայի տարածությունը 30 միլիոն քառ. կ.մ., է,—Եվրոպայից երեք անգամ ավելի: Բնակչությունը—մոտ 150 միլիոն:

Աֆրիկայի համարյա մեջտեղից անցնում է հասարակածը: Հյուսիսային ծայրը մի քիչ անցնում է 37° հյուսիսային լայնությունից, իսկ հարավային մասը հասնում է մինչև հարավային լայնության 35°–ը: Աֆրիկայի այն մասերը, որոնք արևադարձերից մի կողմ են գտնվում, ունեն լենթաարևադարձային կլիմա, որը հարմար է Եվրոպայից գաղթածների կյանքի համար: Իսկ Աֆրիկայի մեծ մասը գտնվում է արևադարձային կլիմայի գոտում: Եվրոպացիք միջավայր չոգի պատճառով դժվարությամբ են տանում այդ կլիման, մանավանդ խոնավ ռայոններում: Առանձնապես չոգ է մայր–ցամաքի ցածրադիր մասերում,— Վերին Նեղոսի, Նիգերի և Կոնգոյի ափերում և ավազաններում: Մնացած Աֆրիկան, որը գտնվում է արևադարձային գոտում, մեծ մասամբ իրենից ներկայացնում է սարահարթեր, որոնք ծովի մակերևույթից բարձր են ավելի քան 500 մ.: Այդ բարձրադիր տեղերում մի փոքր մեղմանում է շոգը:

Վայրի և կուլտուրական հարուստ բուսականությունը տալիս է արտածման գլխավոր մթերքները: Արտածման համար հատկապես կարևոր են կակաոն, կոկոսի և յուղի արմավենու ընկույզները և հողի ընկույզները, ինչպես նաև բամբակ և ազավլինի թելեր:

Մեծ են Աֆրիկայի հանածո հարստությունները: Առանձնա-

պես կարևոր են վոսկին և ալմաստը Հարավային Աֆրիկայում, պղինձը նույնպես Հարավային Աֆրիկայում և Կոնգո գետի ավազանում, յերկաթը և ֆոսֆորիտները— Հյուսիսային Աֆրիկայում, Ատլասյան լեռների շրջանում:

Աֆրիկան ունի աստիճանաձև կազմություն: Նրա խոշոր գետերում պատահում են ժայռեր և ջրվեժներ: Իր ջրային էներգիայով Աֆրիկան աշխարհի ամենահարուստ մասն է, բայց միայն քիչ տեղերում է գտնվում այդ էներգիան,—Նեղոս գետը և Զամբեզի գետի Վիկտորիա ջրվեժը: Այդ էներգիան օգտագործվում է էլեկտրոշարժիչների համար:

Աֆրիկայի հյուսիսում բնակվում է սպիտակ ցեղը, գլխավորապես համիտներն ու սեմիտները: Համիտներին են պատկանում բերբերները,—նստակյաց յերկրագործներ Մարոկկոյում, Ալժիրում և Տրիպոլիտանիայում, քաբիլներն ու ֆելլահները (յեգիպտացիք): Մարոկկոյից մինչև Սենեգալ գետը, ծովափերում ապրում են սեմիտները, այն է՝ արաբների սերունդը, վորոնք հայտնի յեն մավր անունով:

Վերջին տասնամյակում այս հսկայական մայր-ցամաք—գաղութի ժողովուրդներն ավելի և ավելի համակվում են այն գիտակցությամբ, թե անհրաժեշտ է հեղափոխական պայքար մղել իմպերիալիզմի դեմ: Պայքարն իսկական հեղափոխական բնույթ ստացավ այն ժամանակ, յերբ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ աֆրիկական ամենաառաջավոր յերկրներում առաջ յեկավ և սկսեց աշխատել կոմունիստական կուսակցությունը:

1925 թվականին Հյուսիսային Աֆրիկայում (Մարոկկոյում) սկսվեցին ռիֆֆ ցեղերի մի շարք ապստամբություններ ֆրանսիական և իսպանական իմպերիալիզմի դեմ: Մարոկկոյում իմպերիալիստները միայն յերկարատև պատերազմից հետո կարողացան ճնշել այդ ապստամբությունը: Այս յերկրներում լայն չափերով մուտք գործեց կապիտալը և առաջ յեկավ ու աճեց քաղաքային պրոլետարիատը: Թունիսում և Ալժիրում մասսայական գործադուլներ սկսվեցին: Հետզհետե մասնակից է դառնում պայքարին նաև այս յերկրների գյուղացիությունը:

Յեգիպտոսում 1918—1924 թվականներին հալածվեց կոմու-

նիստական կուսակցությունը, բայց հետո վոտքի յելավ և 1929 թվականից սկսեց աշխուժությամբ գործել ու կազմակերպել մասսաներին:

Աֆրիկայի մյուս ծայրում՝ Հարավ-Աֆրիկական միությունում աճում է հանքագործների, յերկաթուղայինների և նավահանգստային բանվորների գործադուլային շարժումը: Տեղի յեն ունենում զինված ընդհարումներ (Դուրբան) ֆաշիստների ու բանվորների միջև: Բրիտանական Արևելյան Աֆրիկայում և նույնիսկ Աֆրիկայի ամենահետամնաց մասում—Ֆրանսիայի Հասարակածային գաղութներում սկսվել է ազգային-ազատագրական ուժեղ շարժում: Սկսվել են նեգր ժողովրդների մասսայական ապստամբությունները:

«Ազգային ապստամբությունը և նրա հաղթանակը,— ասված է Կոմինտերնի ծրագրում,—կարող են Աֆրիկայում ճանապարհ բանալ դեպի սոցիալիզմը, առանց ընդհանրապես կապիտալիզմի շրջանն անցնելու, յեթե պրոլետարական դիկտատուրայի յերկրներն իրականում ուժեղ օգնություն ցույց տան»:

2. ԱՖՐԻԿԱՅԻ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Սահարա անապատից դեպի հարավ բնակվում են նեգրերը: Նրանք բաժանվում են բազմաթիվ ցեղերի, վորոնք կազմում են յերկու գլխավոր խումբ,—Սուդանի նեգրեր արևադարձային Աֆրիկայում և Բանտու նեգրեր՝ Հարավային Աֆրիկայում: Նեգրերի ու համիտների խառնուրդից առաջ է յեկել յեթովպացիների (հաբեշստանցիների) տիպը, վորոնք սևամորթ են, բայց ունեն ալիքաձև մազեր, ինչպես սպիտակ ցեղը և վոչ թե բրդոտ մազեր, ինչպես նեգրերը: Աֆրիկայի սակավամատչելի մասերում պահպանվել են նախնական ցեղերի մնացորդները՝ պիգմեյները— Կենտրոնական Աֆրիկայի անտառներում և բուշմենները— Աֆրիկայի հարավային մասերում: Բուշմենների ու նեգրերի խառնուրդից առաջ են յեկել հոտենտոտները:

Յեվրոպացիք XVII դարի կեսից սկսել են խոշոր մասսաներով բնակվել Աֆրիկայում,—միայն նրա հարավային մասերում: Այստեղ սկզբում մուտք գործեցին հոլլանդացիները, վորոնք կոչ-

վեցին բուրեր: Նրանց հետևեցին անգլիացիները, որոնք 1806 թվին գրավեցին Կապյան երկիրը:

1830 թվականին Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիացիք գրավեցին Ալժիրը: Ծովափերում, շատ վայրերում երևան եկան իսպանացիների, պորտուգալացիների, ֆրանսիացիների, անգլիացիների գաղութները: Սակայն Աֆրիկայի խորքերը երկար ժամանակ ոչ միայն չգրավվեցին, այլ և անհայտ մնացին: XIX դարի 40-ական թվականներից կապիտալիստներն Աֆրիկա ուղարկեցին ճանապարհորդներ և միսիոներներ: Այնուհետև եվրոպական առանձին պետություններ սկսեցին գրավել հայտաբերված հողերը:

Ներկայումս Աֆրիկայում կա 3 անկախ պետություն.—Եգիպտոսի թագավորությունը, Հաբեշստանի կայսրությունն ու Լիբերիա կոչված նեգրական հանրապետությունը: Սակայն Եգիպտոսը փաստորեն դարձել է Անգլիայի գաղութը: Հաբեշստանն ու Լիբերիան գրավում են 1 միլիոն քառակուսի կ.մ. մի քիչ ավելի տարածություն, կամ Աֆրիկայի 1/30 մասը և այնտեղ ուժեղ է իմպերիալիստների ազդեցությունը: Եվրոպայի կապիտալիստական պետությունների գաղութները կազմում են գրեթե 29 միլիոն ք. կմ.: Ֆրանսիական ու անգլիական գաղութները գրեթե հավասար են իրար: Ֆրանսիական գաղութների տարածությունը 11,5 միլիոն ք. կմ. է, Անգլիայինը Եգիպտոսի հետ—11 միլիոն ք. կմ., առանց Եգիպտոսի 10 միլիոն ք. կմ: Այնուհետև գալիս են բելգիական գաղութները—2,4 միլիոն ք. կ.մ., պորտուգալականը—2,2 միլիոն ք. կմ, իտալականը—1,6 միլիոն ք. կմ և իսպանականը—0,3 միլիոն ք. կմ:

Ներքին Աֆրիկայից ապրանքներ արտածելու համար իմպերիալիստները կառուցել են երկաթուղիներ: Երկաթուղային ցանցն ավելի խիտ է Հյուսիսային և Հարավային Աֆրիկայում. երկաթուղիներ են կառուցված նաև արևադարձային Աֆրիկայում:

Այդ ճանապարհները մասամբ լրացնում են ջրային հաղորդակցությունը: Նրանք օգտագործվում են գետերի աննավարկելի տեղերում հաղորդակցության պահպանելու համար, կամ ջրային ճանապարհը կրճատելու համար,—այնտեղ, որտեղ գետերը (օրինակ, Կոնգոն) մեծ շրջաններ են անում: Երկաթուղիներով

հաղորդակցությունը պահպանվում է խոշոր լճերի և ծովափերի միջև: Սակայն երկաթուղիները գլխավորապես անկախ են գործում ու կարճ են: Այդպիսի երկաթուղիներից մեկը կտրում է ամբողջ Աֆրիկան—Հնդկական օվկիանոսից (Բեյրի) մինչև Ատլանտյան օվկիանոսը (Բենգուելի): Ավելի շատ են հասարակածին մոտ գտնվող երկաթուղիները բելգիական Կոնգոյում և անգլիական գաղութներում: Անգլիան իրագործել է իր վաղուց մտածված պլանը,—նրա գաղութների միջով, Գահիրեյից մինչև հարավ (Կեպտաուն) ճանապարհ է անցնում: Առայժմ դա համատարած երկաթուղի չէ, այլ հաղորդակցությունը կատարվում է երկաթուղիներով, շոգենավերով ու ավտոմոբիլներով:

Աֆրիկայի հյուսիսում գտնվում են Ֆրանսիայի գաղութները, իտալական գաղութ Լիվիան (Տրիպոլիտանիա) և Եգիպտոսը: Ֆրանսիական Հյուսիսային Աֆրիկայի մեջ են մտնում հետևյալ լեռնոտ երկրները (Միջերկրականին մոտ)—Մարոկկո, Ալժիր և Թունիս, ինչպես և դեպի հարավ գտնվող Սահարան: Առաջին երեքը երկրագործական և այգեբուծական երկրներ են: Ծառերի մեջ առաջին տեղը բռնում են ձիթենիները, ապա նարնջենին, կիտրոնի ծառը և այլ հարավային պտղատու ծառեր: Սահարայի սահմանների վրա գտնվող օազիսներում մշակվում են փյունիկյան արմավենիներ: Եվրոպական գաղութավորների համար շատ կարևոր է խաղողագործությունն ու գինեգործությունը:

Ֆրանսիական կառավարությունը գրավեց բնիկների հողը և մասամբ ձրի, մասամբ էլ էժան գնով բաժանեց ֆրանսիական կապիտալիստներին: Գյուղատնտեսական աշխատանքների համար բատրակներ են վերցվում հողի նախկին տերերից—բերբերներից, ինչպես նաև գաղթած իտալացիներից ու իսպանացիներից: Բնիկները դիտմամբ պահվում են կուլտուրական ցածր մակարդակի վրա: Կիրառվում է ամենախիստ հսկողության սիստեմը: Գոյություն ունեն տեղական կառավարիչներ, սակայն նրանց գործունեությունը գտնվում է ֆրանսիական պաշտոնյաների հսկողության տակ:

Իտալական Լիվիան միայն ծովափնյա դաշտավայրերում է բերրի և այստեղ գոյություն ունի երկրագործություն ու այգեբուծություն: Մնացած տարածությունը կիսաանապատ է (այս-

տեղ գոյություն ունի քոչվորական անասնապահություն) և անապատ։

Եգիպտոսը, որը գտնվում է Աֆրիկայի հյուսիս արևելքում, Նեղոս գետի ափերում, Անգլիայի ամենակարևոր գաղութներից մեկն է։ Եգիպտոսի միջով անցնում է դեպի Հնդկաստան տանող գլխավոր ճանապարհը—Սուեզի ջրանցքը։ Հնդկաստանից հետո Եգիպտոսը բամբակի գլխավոր մատակարարն է (Անգլիային)։Եգիպտոսի իսկական կառավարիչը ոչ թե նրա թագավորն է, այլ Անգլիայից ուղարկված պաշտոնյան, որի իշխանության հենարանն են հանդիսանում Եգիպտոսում գտնվող անգլիական զորքերը։

Եգիպտոսը Գերմանիայից յերկու անգամ մեծ է, սակայն բնակչություն ունի միայն Նեղոս գետի յերկարությամբ մի նեղ գոտի։ Այստեղ մեկ ք. կ.մ. վրա ապրում է մինչև 400 մարդ։ Եգիպտոսում են գտնվում Աֆրիկայի խոշորագույն քաղաքները—մայրաքաղաք Կահիրեն—1 միլիոնից ավելի բնակիչ, Ալեքսանդրիա նավահանգիստը—600 հազար։

Յերկրագործությունը կատարվում է ոռոգելի հողերի վրա։ Նեղոսից պատնեշներով կառուցված է մի հսկայական լիճ, որի ջուրը հոսում է դաշտերը։ Գյուղացիների հողամասերը շատ չնչին են։ Անգլիական կապիտալիստները գնելով ամբողջ բամբակը, գյուղացիներին ստիպեցին գլխավորապես բամբակագործությամբ զբաղվել։ Բամբակն արտածվում է։ Անգլիական բուրժուազիան արգելակել է տեղական արդյունաբերությունը։

Միջին ու Վերին Նեղոսի մոտ, դեպի հարավ գտնվում է անգլո-յեգիպտական Սուդանը։ Սուդանցիք յերկար պայքարել են անգլիացիների դեմ։ Ապստամբությունը ճնշվել է մեծ դաժանությամբ։ Ավերվել են մի քանի քաղաքներ ու հազարավոր գյուղեր։ Պատժիչ եքսպեդիցիաները ոչնչացրել են մի քանի միլիոն մարդ։

Սուդանը վերածվում է բամբակագործության նույնպիսի միակողմանի յերկրի, ինչ-որ Եգիպտոսը։

Անգլո-յեգիպտական Սուդանը կազմում է համանուն յերկրի արևելյան մասը, որը գտնվում է արևադարձային գոտում։ Արևմտյան մասում գտնվում են ֆրանսիական գաղութները—ֆրանսիական Հասարակածային Աֆրիկան և ֆրանսիական Սուդանը։ Գվինեյան ծոցի ափերում գտնվում են ֆրանսիական ու

անգլիական գաղութները և նեգրական հանրապետություն Լիբերիան։ Անգլիական գաղութներից խոշորագույնն է Նիգերիան, որը գտնվում է Նիգերիա գետի ստորին հոսանքի մոտ։ Գվինեյան ծոցի մոտ գտնվող գաղութներում անգլիական կապիտալիստները գցել են արևադարձային կուլտուրաների, մանավանդ կակաոյի պլանտացիաներ։

Լիբերիայում հողերի մեծ մասը գնել են ամերիկական կապիտալիստները, արևադարձային կուլտուրաների պլանտացիաներ գցելու համար։ Դրանով վերացվել է Լիբերիայի անկախությունը։

Արևադարձային Աֆրիկայի ամբողջ արևելքը, Հնդկական օվկիանոսից մինչև աֆրիկական մեծ լճերը, բռնված է անգլիական գաղութներով։ Ինչպես և Սուդանում, անգլիական բուրժուազիան փորձում է այստեղ ընդլայնել բամբակագործությունը։

Թե՛ անգլիական և թե՛ ֆրանսիական արևադարձային գաղութներում գլխավոր հարստությունն արևադարձային բուսականությունն է։ Նա տալիս է արտածման գլխավոր մասը։ Անգլիական գաղութների արտածման կեսից ավելին ընկնում է կուլտուրական բույսերի վրա, ֆրանսիական գաղութների արտածման $\frac{3}{4}$-ը վայրի բույսեր են, $\frac{1}{5}$-ը—կուլտուրական բույսեր։

Կոնգո գետի ավազանում գտնվում է Բելգիայի գաղութը։ Կոնգոյի հարստությունները հսկայական են։ Բացի արևադարձային կուլտուրաներից, կա պղինձ, անագ։ Այդ հարստությունները շահագործվում է ֆրանս—բելգիական և անգլո-ամերիկյան կապիտալը, որը Կոնգոյում յերկաթուղիներ է կառուցել։ Այդ կառուցման գինը յեղել է հազար․ նեգրերի կյանքը, որոնք կոտորվել են սննդի պակասությունից ու համաճարակներից։ Յերկաթուղու վրա և պլանտացիաներում աշխատելու համար նեգրերը տարվում են կապկապած։ Հարկադիր աշխատանքի նույնպիսի սիստեմ է տիրում նաև Աֆրիկայի ուրիշ գաղութներում։

Հաբեշստան։ Հաբեշստանի բարձունքներում, Կապույտ Նեղոսի ակունքի ու վերին հոսանքի վրա գտնվում է Հաբեշստանը, որը դեռ պահպանել է անկախության նշույլը։ Սա կայսրություն է, ֆեոդալական-ցեղային կառուցվածքով։ Գլխավոր հարստություններն են բուսական կուլտուրաներն ու հանածոները։

Սրանք գրավում են ոտարերկրյա կապիտալիստներին: Բելգիական կապիտալիստները գրավել են բամբակի և սուրճի պլանտացիաները: Ֆրանսիական, անգլիական ու իտալական կապիտալիստները գրավել են բանկերը, յերկաթուղիները, փոստն ու հեռագիրը:

3. ՀԱՐԱՎ-ԱՖՐԻԿՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հարավային լայնության 17°-ից դեպի հարավ ամբողջ Աֆրիկան, բացի պորտուգալական գաղութների մի նեղ շերտից (արևմուտքում—Անգոլանես, արևելքում— Մոզամբիկ) բաղկացած է անգլիական գաղութներից: Սրանցից ամենակարևորը Հարավ-աֆրիկական միություն կոչված դոմինիոնն է:

Հարավ-աֆրիկական միության կլիման տաք է և չոր: Մինչև ամենահարավային ծայրն աճում են նարնջի և կիտրոնի ծառերը: Խոնավությունն առատ է միայն արևելքում: Վորքան դեպի արևմուտք, այնքան չոր է կլիման: Չոր վայրերում կան տափաստաններ, վորոնք արևմուտքում միանում են կիսաանապատներին:

Աֆրիկայի հարավային մասի կլիման միանգամայն հարմար է սպիտակների բնակության համար: Առաջին անգամ (XVII դարում) Հարավային Աֆրիկայում հաստատվել են գյուղատնտեսական գաղութները:

Տնտեսության հիմքը յեղել է անասնապահությունը, վորտեղ ոգտագործվել է նեգրերի ստրկական աշխատանքը: Այնուհետև հայտնվել են անգլիացիք: XIX դարի յերկրորդ կիսում այս յերկրով հետաքրքրվեցին անգլիական կապիտալիստները: Նրանց գրավեցին բուրերի հանրապետությունների տերրիտորիայում գտնվող հանքային հարստությունները—ադամանդն ու վոսկին: Ադամանդի հանքերը ձգվում են Քիմբերլեյից դեպի արևելք, մինչև Տրանսվալ: Վոսկու գլխավոր հանքերը գտնվում են Տրանսվալի հարավի լեռնախմբում: Սա աշխարհիս գլխավոր վոսկեբեր յերկիրն է:

Խոշոր կապիտալն ամբողջ գործն իր ձեռքը վերցրեց: Վոսկու շրջանի կենտրոնը Յոհաննեսբուրգն է, Հարավային Աֆրիկայի խոշորագույն քաղաքը:

Հարավ-աֆրիկական միության մյուս հանածոներից գլխավորն է քարածուխը, վոր գտնվում է Դուրբանի մոտ (քարածուխի պաշարն ավելի չէ Դոնբասի պաշարի մեկ քառորդից):

Գրավելով այս յերկիրը, սպիտակները բնիկներին (բանտու) քշեցին բոլոր հողերից, վորոնք նրանց պետքական եյին թվում: Հողատերեր (ֆերմերներ) կարող եյին լինել միայն սպիտակները: Սրանք նեգրերին ստիպում եյին գյուղատնտեսական աշխատանքներ կատարել,—սկզբում իբրև ստրուկներ, հետո բատրակներ:

Ջնայելով բոլոր խոչընդոտներին, նեգրերը Հարավային Աֆրիկայում ստեղծեցին իրենց դպրոցներն և ունեն իրենց ինտելիգենցիան,—ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ: Նեգրերը զրկված են քաղաքական իրավունքներից:

Տնտեսությունը խիստ միակողմանի բնույթ ունի: Առաջին տեղը տրվում է վոսկուն և ադամանդին: Տնտեսության մնացած ճյուղերը յերկրորդական ու յերրորդական տեղ են բռնում:

Արտածման $^{3}/_{5}$-ը վոսկի և ադամանդ է: Արդյունաբերության մյուս տեսակներն առայժմ չնչին են: Թույլ է զարգացած նաև գյուղատնտեսությունը: Միայն մեծ քանակով բուրդ է արտածվում: Ցորենը, միսը, յուղը, պանիրը չեն բավականանում: Պակասը ներմուծվում է:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Արդյունաբերության արտադրանքը 1928 թվականի արտադրանքի %%-ով, որը ընդունվում է իբրև 100 % (ըստ Ազգերի լիգայի տվյալների)

Ամբողջ արդյունաբերությունը

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Անգլիա	100	106	98	89	88
Ֆրանսիա	100	109	110	98	75
Բելգիա	100	100	90	78	57
Գերմանիա	100	101	84	69	57
Լեհաստան	100	100	82	69	54
ՀԱՄՆ	100	107	87	73	58

Տեքստիլ արդյունաբերություն

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Անգլիա	100	99	80	77	84
Ֆրանսիա	100	93	86	72	59
Բելգիա	100	95	78	72	50
Գերմանիա	100	91	88	86	83
Լեհաստան	100	91	71	67	57
ՀԱՄՆ	100	107	85	85	77

Մեքենաշինարարություն

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Անգլիա	100	107	103	84	78
Ֆրանսիա	100	114	114	99	70
Գերմանիա	100	101	83	60	39
Լեհաստան	100	100	76	56	44

Քարածուխ (Հանույթը միլիոն տոններով)

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Համաշխ. հանույթը	1238	1284	1166	1024	895
Անգլիա	241	261	247	223	216
Ֆրանսիա	52	54	54	50	46
Բելգիա	27	27	27	27	21
Սաար	13	13	13	11	10
Հոլլանդիա	11	11,5	12	13	13
Գերմանիա	166	174	146	132	121
Լեհաստան	41	46	37	38	28
Չեխո Սլովակիա	14,5	16,5	14	13	11
ՀԱՄՆ	559	552	480	397	324

Լիգնիտ (թուխ ածուխ)

(Հանույթը միլիոն տոններով)

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Համաշխարհային հանույթը	208	221	186	170	162
Գերմանիա	166	174	146	133	121
Չեխո-Սլով.	20	22,5	19	18	16

Թուջ

(Արտադրութ. միլիոն տոններով)

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Համաշխ. հանույթ	84,5	94,2	76,2	52,7	37,4
Անգլիա	6,7	7,7	6,2	3,8	3,6
Բելգիա	3,8	4,0	3,4	3,2	2,8
Ֆրանսիա	10,0	10,3	10,1	8,2	5,5
Չեխո-Սլով.	1,6	1,6	1,44	1,2	0,5
Գերմանիա	11,8	13,2	9,6	6,0	4,0
Իտալիա	0,5	0,67	0,54	0,5	0,46
ՀԱՄՆ	38,0	43,0	31,9	18,6	9,0

Կապիտալիստական յերկրների ռազմական ուժերը

(Ըստ Ազգերի լիգայի տեղեկատույի)

Յերկրներ	Ցամաքային զորք խաղաղ ժամանակ	Ռազմածովային նավատորմիղ						Օդանավատորմ (սավառնակներ)
		Նավաստիներ (հազարներով)	Նավերի տոննաժ (հազար տոններով)	Կազմը				
				Դրեդնոուտներ և գրահանավեր	Ավիամատկաներ	Հածանավեր	Ականակիրներ և ընդորջրյա նավակներ	
Անգլիա	243	96	1250	18	6	53	228	1434
ՀԱՄՆ	260	110	1252	18	4	33	366	1752
Ֆրանսիա	614	60	630	9	1	33	202	2286
Գերմանիա	100	15	125	6	—	6	26	—
Ճապոնիա	260	90	850	10	4	35	200	1938
Չինաստան	1800	—	40	—	—	6	12	—
Լեհաստան	330	3	6	—	—	—	5	—
Ռումինիա	300	3	6	—	—	—	5	—
Ֆինլանդիա	33	4	9,6	—	—	—	6	—
Լատվիա	24	0,5	0,8	—	—	—	2	—

Պողպատ

(Արտադրութ. միլիոն տոններով)

Յերկրներ	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
Համաշխ. հանուրդ	106,0	116,0	91,3	66,7	48,6
Անգլիա	8,6	9,8	7,4	5,3	5,3
Բելգիա	3,9	4,0	3,4	3,2	2,3
Ֆրանսիա	9,5	9,7	9,5	7,8	5,5
Չեխո-Սլովակիա	1,7	1.6	1,3	0,8	0,7
Գերմանիա	14,4	16,2	11,5	7,7	5.8
Իտալիա	2,1	2,26	1,78	1,45	1,4
ՀԱՄՆ	51,2	55,2	40,0	25 6	13,6

Արտաքին առևտուր

Յերկրներ	Ներմուծումը միլիոն ռուբլիներով			Արտածումը միլիոն ռուբլիներով		
	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.
ՀԱՄՆ	8400	7350	4760	10530	9200	6040
Անգլիա	11540	9875	8145	7930	6290	4280
Գերմանիա	5240	4700	3355	4145	4790	5180
Ֆրանսիա	4490	4040	3240	3850	3295	2340
Ճապոնիա	1880	1315	1050	1825	1230	975
Ֆինլանդիա	203	152	100	186	156	130
Լատվիա	133	110	66	101	92	61
Էստոնիա	64	51	32	61	50	37
Լեհաստան	1060	760	500	960	830	640
Ռումինիա	294	225	—	290	285	—

1932 թ. կապիտալ ներդրումները

ՀԱՄՆ. —17600 միլիոն դոլլար, վորից —
Կանադայում . . . . 4600 միլիոն դոլլար.
Լատինական Ամերիկայում . 5700 » »

Արևմտյան Եվրոպայում	5700	»	»
Ասիայում	1000	»	»
Ավստրալիայում	400	»	»

Լատինական Ամերիկայում ամենամեծ գումարներն ստացան Կուբան—1200 միլիոնից ավելի և Մեքսիկան, Բրազիլիան և Չիլին 600 մինչև 900 միլիոն։

Արևմտյան Եվրոպայում. 1000 միլիոնից ավելի—Գերմանիան, մոտ 1000 միլիոն—Անգլիան, 250-ից մինչև 500 միլիոն—Բելգիան, Ֆրանսիան և Իտալիան։

Անգլիան—մոտ 30,000 միլիոն դոլլար, որից՝

ՀԱՄՆ ում	3000 միլիոն դոլլար,		
Կանադայում	2000	»	»
Լատինական Ամերիկայում	5700	»	»
Արևմտյան Եվրոպայում	3000	»	»
Ասիայում	10,500	»	»
Աֆրիկայում	4000	»	»
Ավստրալիայում	2000	»	»

Լատինական Ամերիկայում մոտ 2400 միլիոն ստացան Արգենտինան և Ուրուգվայը, 1400 միլիոնից ավելի—Բրազիլիան, 600 միլիոն—Մեքսիկան, մոտ 400 միլիոն—Չիլին։

Արևմտյան Եվրոպայում—1000-ական միլիոններից ավելի Իտալիան ու Ֆրանսիան, մոտ 500 միլիոն—Գերմանիան։

Ասիայում՝ Հնդկաստանը—Ցեյլոնը—Մալակկան և Ինդոնեզիան—մոտ 5000 միլիոն, Չինաստանը—մոտ 4000 միլիոն, Ճապոնիան—մոտ 4000 միլիոն։

Պարսկաստան—մոտ 500 միլիոն։

Աֆրիկայում՝ Հարավ-աֆրիկյան Միությունը—2000 միլիոնից ավելի, Եգիպտոսը—մոտ 1500 միլիոն։

Ֆրանսիան— մոտ 10000 միլիոն դոլլար, որից 3000 միլիոնից ավելի—հյուսիսային Աֆրիկայում, 1000 միլիոն դոլլարից ավելի—Ավստրիայում, մոտ 1000 միլիոն Ռումինիայում և 1000-ական միլիոն դ.—Իսպանիայում ու Թյուրքիայում։ 250-ից մինչև 500-ական միլիոն դ. ներդրեց ՀԱՄՆ—ում, Իտալիայում, Շվեյցարիայում ու Չինաստանում։

Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱ

	Եջ
I Անգլիա	3
II Ֆրանսիա	34
III Բելգիա յեվ Հոլլանդիա (համառոտ տեղեկություններ)	55
IV Գերմանիա	58
V Շվեցարիա (համառոտ տեղեկություններ)	80
VI Ավստրիա (« »)	82
VII Հունգարիա (« »)	83
VIII Չեխո—Սլովակիա	84
IX Իսպանիա (համառոտ տեղեկություններ)	88
X Պորտուգալիա (« »)	90
XI Իտալիա	91
XII Բալկանյան յերկրներ (համառոտ տեղեկություններ	100
XIII Սկանդինավյան յերկրներ(« »)	105
XIV ԽՍՀՄ արեվմտյան հարեվանները	107
1) Ֆինլանդիա	108
2) Մերձ-Բալտյան յերկրներ	115
3) Լեհաստան	119
4) Ռումինիա	129

ԱՄԵՐԻԿԱ

I Միացյալ Նահանգներ	137
II Կանադա (համառոտ տեղեկություններ)	171
III Նյու - Ֆաունդլենդ (համառոտ տեղեկություններ)	172
IV Լատինական Ամերիկայի յերկրներ (համառոտ տեղեկություններ)	172

ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՈՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐ

I Ավստրալիական միություն (համառոտ տեղեկություններ) . . . 176
II Նոր - Զելանդիա (համառոտ տեղեկություններ 177

Ա՛ՍԻԱ

I Ճապոնիա 178
II Չինաստան 199
III Հնդկաստան 220
IV Հնդկաչին յեվ Ինդոնեզիայի յերկրներ (համառոտ տեղեկություններ) 230
V Ավղանիստան . . . . (« ») . 232
VI Տիբեթ . . . . (« ») . 232
VII Պարսկաստան . . . . (« ») . 233
VIII Թյուրքիա 234
IX Արաբական յերկիրներ (համառոտ տեղեկություններ) 242

ԱՖՐԻԿԱ

1) Ընդհանուր ակնարկ (համառոտ տեղեկություններ) 245
2) Առանձին յերկրներ (համառոտ տեղեկություններ) 247
3) Հարավ-Աֆրիկական միություն (համառոտ տեղեկություններ) . . 252
4) Աղյուսակներ 254

Հայաստանի Ազգային գրադարան
NL0432010

20803

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

С. Варжанский и Л. Синицкий
География капиталистических стран
учебник для средней школы
ГИЗ ССРА, Эривань, 1938 г.